

# ԷԶՄԻԱԾԻՆ



Է-Ը  
2004



ՀՏԲ-176.



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
 ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ



Յ " - ԼԻ " - Օ Գ " " Դ " "

2004



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

|                                                                                                                                                                |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| <b>Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ</b><br>սրբապատ կոնդակը Վազգեն Առաքինի վախճանման<br>տասնամյակի առիթով .....                                    | 3  |
| <b>ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ</b> կոնդակը<br>Հոգեշնորհ Տ. Զավեն ավագ բախանա Արզումանյանին<br>«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին ..... | 6  |
| <b>ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ</b> կոնդակը<br>Նշան Տևրտրեյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով<br>պարգևատրելու մասին .....                             | 8  |
| <b>ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ</b> կոնդակը<br>Ներսես Վարդանյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով<br>պարգևատրելու մասին .....                           | 10 |
| <b>ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ</b> կոնդակը<br>բանաստեղծ Ժակ Հակոբյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ»<br>շքանշանով պարգևատրելու մասին .....                     | 12 |
| Հայրապետական գնահատություն .....                                                                                                                               | 14 |
| Հայրապետական տնօրինություն .....                                                                                                                               | 14 |
| Գերագույն Հոգևոր խորհրդի նիստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում .....                                                                                                 | 15 |
| Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում .....                                                                                                    | 16 |
| Հոգեհանգիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վազգեն Ա Հայրապետի<br>մահվան 10-րդ տարելիցի առիթով .....                                                                   | 16 |
| Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր<br>վշտակցությունն է հայտնում Իրաքում կատարված ահարեկչության<br>գոհերի ընտանիքներին և Իրաքի համայն ժողովրդին .....    | 17 |
| Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գորակցությունն ու<br>սրտակցությունն է հայտնել Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապին .....                                                  | 17 |
| <b>Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը</b><br>«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց Վիտալի Գրիգորյանցին ....                                        | 18 |
| Հայ Եկեղեցու պարզև՝ Վերապատվելի Մանվել Զինրաշյանին .....                                                                                                       | 19 |
| Տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հիմնովին<br>վերանորոգված շենքի բացման արարողությունը .....                                                               | 20 |
| Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը<br>մրցանակներ հանձնեց տարվա լավագույն ուսուցիչներին .....                                                                   | 21 |

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

|                                                                                                                                         |    |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| S. Արշակ վարդապետ Խաչատրյանի քարոզը խոսված<br>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....                                    | 23 |
| S. Հովհաննես աբեղա Մայիսյանի քարոզը խոսված<br>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....                                    | 27 |
| S. Մակար աբեղա Հակոբյանի քարոզը խոսված<br>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....                                        | 30 |
| S. Շնորհք աբեղա Սարգսյանի քարոզը խոսված<br>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....                                       | 32 |
| S. Տաճար աբեղա Ծափուրյանի քարոզը խոսված<br>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....                                       | 35 |
| S. Վարդան աբեղա Նավասարդյանի քարոզը խոսված<br>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Շողակաթ Ս. Էջմիածնի տոնին<br>մատուցված Ս. Պատարագին .....       | 37 |
| S. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի քարոզը խոսված<br>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Աստվածածնի Վերափոխման<br>տոնին մատուցված Ս. Պատարագին ..... | 40 |
| S. Գաբրիել աբեղա Սարգսյանի քարոզը խոսված<br>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....                                      | 43 |

## Նվիրվում է Վազգեն Առաքինի մշտապայծառ հիշատակին

|                                                                                       |    |
|---------------------------------------------------------------------------------------|----|
| ՄԻԼՎԱԿԱՆ ԿԱՊՈՒՏԻԿԱՅԱՆ - Նա իր գոյությամբ սրբացնում էր մթնոլորտը ..                    | 45 |
| S. ՀՈՎԱԿԻՄ ԱՐԵՂԱՍ ՄԱՆՈՒԿԱՅԱՆ - Վազգեն Առաքին.<br>միջեկեղեցական գործունեությունը ..... | 58 |
| S. ԱՍՈՂԻԿ ՔԱՆԱՆԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏԱՅԱՆ - Վազգեն Վեհափառը<br>որպես տոնախոս .....              | 67 |
| ՀԱՎՈՐ ՈՒՐԱՐԱԿԻՐ ՄՈՎՍԻՍԱՅԱՆ - Վազգեն Ա Շինարար .....                                   | 71 |

## ՊԱՏՄԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

|                                                           |    |
|-----------------------------------------------------------|----|
| ՄԱՐԳԻՍ ՄԻԻԹԱՐՅԱՆ - Գրիգոր Նարեկացու «Յարութեան» տաղը .... | 73 |
|-----------------------------------------------------------|----|

## Արվեստագիտական

|                                                                                                                |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ԱՐԱ ՀԱԿՈՐՅԱՆ - Եվրոպական գիտնականները Կապադովկիայի<br>հայկական եկեղեցիների և եկեղեցական հարդարանքի մասին ..... | 80 |
|----------------------------------------------------------------------------------------------------------------|----|

|                                                                    |     |
|--------------------------------------------------------------------|-----|
| <b>Նվիրվում է Մաշտոցյան գրերի գյուտի 1600-ամյակին</b>              |     |
| <b>ՄԱՆԵ /ԷՌՆԱ/ ՇԻՐԻՆՅԱՆ - Հայոց գրերի գյուտն ըստ</b>               |     |
| «Գիրք պատճառաց»-ի .....                                            | 86  |
| <b>ԳՐԻԳՈՐ ԱՔԱՍԵԱՆ - Սկիզբն եւ պատճառ «Բարձրացուցեաց»</b>           |     |
| ճառի եւ տեսութիւն .....                                            | 89  |
| <b>ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ - Կրօնի դերը 18-19-րդ դդ.</b>                   |     |
| բրիտանական պաշտօնողականների աշխատություններում .....               | 92  |
| <b>ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Թրեդերիկ Ֆարրարի բարոզների</b>                |     |
| թարգմանության արձագանքները հայ մամուլում /1901-1902 թթ./ .....     | 104 |
| <b>ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ - Շահան Շահնուրի «Հարայեցներու</b>           |     |
| դավաճանությունը» պատմվածաշարը .....                                | 111 |
| <b>ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Մարտ Ալազանի հուշերը .....</b>               | 118 |
| <b>ՄԱՐՈ ԱԼԱԶԱՆ - Իմ կյանքի ողբերգությունը .....</b>                | 120 |
| <b>ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ - Հովհաննես Շիրազի «Բիբլիական»</b>           |     |
| պոեմի համամարդկային շունչը .....                                   | 122 |
| <b>Նվիրվում է Երևանի պետական համալսարանի հիմնադրման 85-ամյակին</b> |     |
| <b>ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ - Գրական մկրտության սրբազան ավագանը .....</b>    | 129 |
| <b>ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ - Պետրոս Հովհաննիսյան – 60 .....</b>            | 139 |
| <b>Նվիրվում է Գևորգյան ճեմարանի հիմնադրման 130-ամյակին</b>         |     |
| <b>ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Հակոբ Մանանդյանը Գևորգյան</b>          |     |
| ճեմարանում .....                                                   | 142 |
| <b>ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ</b>                                               |     |
| <b>Հրապարակություններ՝ նվիրված Վազգեն Առաքինին</b>                 |     |
| Հուշագրական գրառումներ .....                                       | 154 |
| Նվիրված Վազգեն Վեհափառի հիշատակին .....                            | 156 |
| <b>ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ - Աննա Արևշատյանի «Հայ միջնադարյան</b>             |     |
| «Ձայնից» մեկնություններ» ուսումնասիրությունը .....                 | 157 |

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

|                                                       |     |
|-------------------------------------------------------|-----|
| Ձեռամբ հայոց հայրապետի օժվեց Խարկովի Ս. հարություն    |     |
| Նորակառույց հայկական եկեղեցին .....                   | 159 |
| Սեմինար-խորհրդածողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ..... | 161 |
| Դասընթացներ Արմավիրի թեմի ուսուցիչների համար .....    | 162 |
| Սեմինար քահանայից լսարանում .....                     | 163 |
| Լուրեր Գերմանիայի հայոց թեմին .....                   | 164 |

## ԱՄՆ ԱՐԽԵԼԵԱՆ ԹԵՄՈՒՄ

|                                                                                            |     |
|--------------------------------------------------------------------------------------------|-----|
| Առաջնորդարանի «Համացուժարների եւ երիտասարդաց<br>«Արարար» կեդրոն»ի պաշտօնական բացումը ..... | 168 |
| Տեղի են ունեցել Դամասկոսի հայոց թեմի ազգային գավառական<br>ժողովի ընտրությունները .....     | 170 |

## ՄԻՋՆԵԿԵՂԵՑԱԿԱՆ

|                                                                                                                                     |     |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Եկեղեցիների համաշխարհային Խորհրդի «Հավաքը և Կարգ»<br>հանձնաժողովի լիազումար նիստը Մալայզիայի մայրաքաղաք<br>Կուալա Լումպուրում ..... | 171 |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

|                                                                                                                              |     |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Փասադենայի<br>քաղաքագլխին և ոստիկանապետին .....                                  | 173 |
| Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Եհեսվ<br>գլխավոր քարտուղարին .....                                               | 173 |
| Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի<br>Հանրապետության ներքին գործերի նախարար Վլադիմիր Նաումովին ..         | 174 |
| Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Երիտասարդական<br>միությունների ներկայացուցիչներին .....                          | 174 |
| Հայաստանում պաշտոնավարությունն ավարտող Գերմանիայի դեսպանը<br>հրաժեշտ տվեց Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսին .....          | 175 |
| Վրաստանի Հանրապետության արքայազնի գործերի նախարարի այցը<br>Մայր Աթոռ Ս. Էջմիածին .....                                       | 175 |
| Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի<br>Դաշնության Կոմի Հանրապետության նախագահ<br>Վլադիմիր Տորոպովին ..... | 176 |




|                                                                                                               |     |
|---------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի նորանշանակ<br>ղեկավարին . . . . .                           | 176 |
| Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հոռմնակաթուղիկ<br>Եկեղեցու Տրենորոյի թեմի ուխտավորներին . . . . . | 177 |
| Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Դանիայի<br>թագավորության արքայորդենախարարին . . . . .             | 177 |
| Վախճանվել է Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Բաղդասյանը . . . . .                                                | 179 |
| Հանգիստը Տ. Ռուբեն ավագ քահանա Սաղոյանի . . . . .                                                             | 180 |
| <b>ՎԱՐԱՋՊԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b> - Մահ ճարպարապետ<br>Արծրուն Գալիկյանի . . . . .                                 | 181 |
| <b>ՊԵՏՐՈՍ ԲԵՂԻՐՅԱՆ</b> - Նա, ավաղ, գնաց: Նա հասարակ մնում է . . . . .                                         | 183 |
| Եկեղեցական բնմ. յուրեր . . . . .                                                                              | 185 |
| “Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . . .                                          | 187 |
| “Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin . . . . .                                                  | 192 |

ՀՐԱՄԱՆԱԲ

**Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ







**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱԹ ԿՈՆԴԱԿ  
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ  
ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱԹԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ ԱՏՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԵՍ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ  
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՅՆԻ**

**ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՄԵՃԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,  
ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՑ  
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ,  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,  
ՔԱՂԱՆԱՅԻՅ ԵՒ ՄԱՐԿԱՒԱԳԱՅ,  
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՄԻՐԵՑԵԱՆ ՀԱՄԱՅՆ  
ՀԱՒԱՏԱՑԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ**

Աղօթքով եւ խորին ակնածանքի ու խոնարհումի զգացումով մեր ժողովուրդը պատանամեակ առաջ հրաժեշտը փութեց երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ամփոփելով նրա մարմինը աստուածաբնական ու ներքու Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի: Լոյս յիշատակի առջեւ երախտարժան Հայրապետի, սիրելի Վեհափառի՝ նրա մահ-

4 Է-Ը

տան 10-րդ պարունիցին. Մեր հոգում վերստին իր ողջ վեհությունը յառնում է նրա մարդկա-  
յին ու հայրապետական մեծության կերպարը:

յի եւ հայրապետական մեծութեան կոթողալի։

Չորս տասնամեակ աջալուրջ եղիւնց իր հօտը շնորհազարդ Նայրապետը՝ Սուրբ Էջմի-  
ածնից հայեացքը յառած յիսկի հեռուն գնացող գայիքները, յիսկի սլալծաւ եղիզոնները  
հայ ժողովրդի եւ նոր արշալոյսը Նայ Եկեղեցու։ Նովոնց մի ժամանակաշրջանում, երբ  
Սուրբ Էջմիածինը չունէր ամբողջ ազատութիւնը իրականացնելու համար իր առաքելութ-  
իւնը Նայրեմիքում եւ աշխարհով սփռուած իր ժողովրդի կեանքում։ Սուրբ Էջմիածինը գոր-  
ծելու ազատութիւնը չունէր, բայց ունեցաւ իմաստուն ու բաշարի Աստուածարեալ Գահա-  
կալ, ով անվարան հաւաքով կանգնած հասարակութիւն վերին Նայ Եկեղեցու եւ հաւաքարիմ  
աւանդներին հայոց մեծագործ Նայրապետների, կարող եղաւ զօրացնել ու բարձրացնել մեր  
Եկեղեցին։

Եկեղեցիները։  
Մագգեն Վեհափառը Հայրապետության եկաւ հայոց կեանքում անհամեմատ դժուարին տասնամակներկից յետոյ։ Մեր ժողովուրդն ու Եկեղեցին Եղեռնն էր ապրել, կրել խոր-հեղուային իշխանության հալածանքները, կորուստներ ունեցել Երկրորդ աշխարհամարտի տարիներին։ Դժնդակ այդ օրերին, երբ, յիրախ բաշտիսն էր Եկեղեցին պահպանելը, շնոր-հի։ Գևորգ Զ Կաթողիկոսի կործամիտ ջանքերի՝ առաջին կարեւոր ձեռքբերումները եկաւ վերստին լուսաւորելու ազգային-եկեղեցական կեանքի ուղին։ Էւ Վագգէն Ա Հայրապետը արժանաւոր շարունակողն ու արգասաւորողը եղաւ Գևորգ Զ Կաթողիկոսի ամուր ձեռքով սկզբնաւորուած ձեռնարկումների՝ տեսնելով նոր յոյսեր եւ ուղենշելով նոր ճանապարհներ։ Նորոգուեցին ու վերաշինուեցին խոնարհեալ եկեղեցիներ ու վանքեր, այլեւ կեանք առան սրբազան արարողութեամբ ու լցուեցին ազօթքով։ Ղօղանջեցին տասնամակներ լոած գանգերը եկեղեցիների, եւ պարտադրուող աթէիզմի պայմաններում եաւարն ու յոյսը ջրեց հայորդեաց հոգիները։ Նոր շնչով ու զարթօնքով լցուեց Սուրբ Էջմիածինը։ Նորոգ տեսիլքով ու հաստատաքայլ ընթացքով գործեց Հոգնոր ճեմարանը, եւ նորոգ ոգեւորութեամբ շարունակեց երապարակուել «Էջմիածին» ամսագիրը՝ Մայր Աթոռի խօսքը տանելով ժողովրդին, Մայր Աթոռից ու նրա լուսամիտ Գահակալից ճառագող հաւարը, յոյսն ու սկըր, որ աշխարհասփիւռ հայութեան հայեացքը պահպանում էր դէպի Հայրենիք, դէպի Արարարն ու Սուրբ Էջմիածինը։ Արդարեւ, Վագգէն Ա Հայրապետը շատ ջանաց, որպէսզի Հայրենիքի նոր օրուայ հաւարով նրա հետ միասնական ապրել հայ ժողովուրդը։ Ապրի Անկարանի ճշմարիտ լոյսը հոգում, հայարը՝ նախնեաց ժառանգութեամբ ու աւսնդով։ Հոգու անհաշտ ընդվզումով ու տառապանքով կրեց Վեհափառը 1956 թուականի եկեղեցական պատակարումը եւ իր ողջ կեանքը նուիրեց ազգային եւ եկեղեցական միասնականութեան պահպանմանը, հայութեան հոգեւոր վերածննդին, հայոց պետականութեան վերածննդնդին։ Այսօր Մենք փառք ենք բարձրացնում երկինք, որ կորովի Հայրապետը իր Աջով օրհնեց վերահաստատումը հայոց ազգային անկախ պետականութեան եւ ազատագրումը Արցախի։ Այդ դժուարին, բայց հերոսական օրերին ձերունագարդ Հայրապետը իր ժողովրդի հետ կրեց բոլոր գոհողութիւնները, վտանգների առջեւ խոհնածութեամբ յորդորեց, վըշտի մէջ միտքարեց ու արիարար հաւար ներշնչեց։ Մեր ժողովրդի համար անսահման ուրախութիւն է անդրադառնալ, որ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Հերոսի կոչումը առաջինը շնորհուեց Վագգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Հայոց Հայրապետը միշտ աղօթող և զուտ աշխարհի խաղաղության համար և Հայ Եկեղեցու մասնակցությունը բերեց քրիստոնեական Եկեղեցիների համագործակցությանը՝ հատկապես ներդրումը միասնական ջանքերի ուժին, հատկապես մարդկության բարի կամ-

քին ու ստեղծագործ առաջագնաց կեանքին: Նա եղաւ իր ժողովրդի խաղաղասէր հոգու արտայայտողը միջազգային հաւաքներում եւ համաժողովներում, արտայայտողը՝ բռնութիւններից զերծ արդար աշխարհի նրա երազի, կամքի ու ձգտումների:

Մայր Տաճարի հովանու ներքոյ, շարքում Ամենայն Հայոց նրանաշնորհ Հայրապետների, հանգչում է Հայոց 130-րդ Հայրապետը, սիրելի Հայրապետը մեր ողջ ժողովրդի համար: Մենք նոյնպէս նրջանկութիւնն ենք ունեցել հոգեւոր մեր կրթութիւնը ստանալու՝ Վազգէն Ա Հայրապետի հայնսցքի ներքոյ, զգալու նրա հայրական հոգածու ձնորի ջնքմութիւնը, տեսնելու լազնուստիքը եւ արդարամիտ հոգու շապուրթիւնը: Մենք, ինչպէս և Հայ Եկեղեցու անդաստանում այսօր իրենց ծառայութիւնը իրականացնող բազմաթիւ եկեղեցականներ, ովքեր հոգևորականի իրենց առաջին քայլերն են սկսել Վազգէն Ա Կաթողիկոսի առաջնորդութեամբ և ծառայակից ու գործակից դարձել սիրելի Վեհափառին, ականաւորեան ենք նաև նրա ամենամեծ նախանձախնդրութեանը Սուրբ Էջմիածնի առաքելութեան հասնելալ և յաւերժացեաց այդ առաքելութեանը ամբողջական, անաճնական սիրով նուիրումին:

Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի յիշատակին որդիական Մեր խոնարհումը բերելով՝ տնօրինում ենք կանգնեցնել մեծագործ Հայրապետի արձանը նրա անունը կրող Վազգէնեան հոգևոր դպրանոցում, որն այսօր հոգևոր մշակների իր հումքն է պարզելում Հայ Եկեղեցուն:

Մայր Տաճարի հովանու ներքոյ խաղաղ հանգչում է Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մեզ աւանդ թողած Աստուածասէր, ազգասէր ու հայրենասէր իր կեանքի պսակազարդ օրինակը: Նրա շիրմին ամեն խոնարհուող կարողում է. «Մէր ոչ երբէք անկանի»՝ Սուրբ Հիւսիսայրանում: Քաւնքմ է նրա մեծ ու անբասիր սիրով կառուցուածը, մեծ ու անբասիր սիրոյ նրա աւանդն ու պապազամբ:

Թող ամենքիս սրտում միշտ անմար մնայ յուսատու յիշատակը Շինարար Հայրապետի, Շնորհազարդ Հայրապետի, Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Եւ թող նրա արդար հոգին երկնային բաղնիքներում Աստուծոյ տեսութեան մէջ շարունակի աղօթել եւ օրհնութիւն հայցել հայրենի մեր հողին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, հայոց նոր կեանքին ու յոյսերին:

*Շնորհք և սէր Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենահաւ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա Կոնդակս ի 18-ն Օգոստոսի  
յամի Տեառն 2004 եւ ի թուին Հայոց ՌՆՊԳ  
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի  
ընդ համարաւ 273



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԿՈՆԴԱԿՆ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԶԱՎԵՆ ԱՎԱԳ ՔԱՂԱՆԱ  
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ «Ս. ՄԱՂԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ»  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ  
ԱՌ ՍԻՐԵՑԵԱՒ ՈՐԴԻՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱՒ ՍՊԱՍԱԲՈՐՆ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԶԱՎԵՆ ԱՎԱԳ ՔԱՂԱՆԱՑ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ,  
ՈՐ Ի ՓԱՍՏԵՆԱՎ, ԱՄՆ**

Համայն հայության հոգևոր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայ-րապետական Մեր օրհնությունն ու շնորհատրանքներն ենք յղում Ձեզ քահանայական ձեռ-նադրության 50-ամնայ յոբելանի առիթով, որը պիտի փոխախմբուի հանդիսատրապետ:

Միքիլի Տեր Հայր,

Քաջածանօթ ենք Ձեր նախանձախնդիր ծառայութանը, որը Տիրոջ օրհնութեամբ ար-գասատրուած է բարի պարտւղներով՝ ճանաչում բերելով Ձեզ և յարգանք ու սէր՝ Ձեր անձի հանդէպ: Տիրոջ Սուրբ Մեղանի սպասատրութեան առաքելութիւնը առաջնորդել է Ձեզ Ե-թովպիայի, Կանադայի և ԱՄՆ հայոց Արեւելեան թեմեր, որպէս Դուք անխոնջ ու անա-թովպիայի նուիրումով հոգեւոր սնունդ էք մատուցել մեր Եկեղեցու բարեպաշտ զաւակներին՝ զօ-րացնելով նրանց հաւաքքն առ Աստուած և հաւաքարմութիւնը հանդէպ ազգային մեր ա-ւանդները: Այսօր էլ նոյն աւիւնով շարունակում էք հովուական Ձեր ծառայութիւնը ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի Փաստարենայի Սուրբ Գրիգոր Լուսատրիչ եկեղեցում՝ Ձեր ջանքե-րը բերելով ծխական համայնքի համախմբմանը, եկեղեցու նոր շենքի կառուցմանը և Ալֆ-րէշ և Մարկրիթ Յովսէփեան Վարժարանի գործունէութեանը:

Մասնատր գոեռեակութեան առիթ է Մեզ համար հասարակել, որ բեղուն է եղել նաեւ Ձեր գրիչը՝ ճանաչողութեան ակունքներ պեղելով ի պայծառութիւն Եկեղեցոյոյ Հայաս-տաննայց և ի լուսատրութիւն ազգիս հայոց: Այսօր Ձեր հեղինակութեամբ ընթերցողի սե-ղանին են հայերէն և անգլերէն լեզուներով ուսումնասիրութիւններ, որ արդիւնքն են բազում փարիսների սրեղծագործական Ձեր նուիրեալ և անյոգնաբիւ աշխատանքի: Ձեր գիտա-կան գործունէութեան պատկն, անշուշտ, «Ազգապարտում»-ն է, որ, շարունակելով երախ-տարժան հոգեւորական և բազմապատրակ գիտական Մաղաքիա արքեպս. Օրմանեանի աւանդները, մանրամասն շարադրանքով ներկայացնում է Հայ Եկեղեցու նոր շրջանի պարմութիւնը:

Միքիլի Տեր Հայր, Մայր Եկեղեցու անդապարտում Ձեր արդիւնաշատ ծառայութեան բարձր գնահատանքով սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ

Գևրաշնորի Տ. Յովնան արքեպիսկոպոս Տերաբեբանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրբի Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ թարգմանիչ մեր մեծ սրբերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ Բարձրեայն Աստուած Իր ամենագոր եւ ամենախնամ Աջի հովանու ներքոյ ընդ երկայն աւուրս բաջառողջ պահի եւ պահպանի Ձեզ՝ շարունակելու Ձեր հովուական ու գիրական գործունեութիւնը՝ ի պայծառութիւն Հայաստաննայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի:

*Ողջ լինուր ի Տէր, զօրացուալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՂԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 14-ն Յուլիսի

յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆՃԳ

ի Մայրական Արքոյ Էջմիածնի

ընդ համարաւ 243

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԿՈՆԴԱԿԸ ՆՇԱՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ  
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ  
ԱՌ ՄԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱԲԱԿՍ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՄՆԻ  
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՆՇԱՆ ՏԵՐՏԵՐԵԱՆ,  
ՈՐ Ի ԳՈՍԹԱ ՄԵՍԱ, ԿԱԼԻՓՈՌՆԻԱ**

Համայն հայության Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատարմոր զաւակիդ:

Յարգարժան պրն Տէրպէրեան, ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաւշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրպէրեանից գոհունակութեամբ փնդեկացաւք, որ Դուք Ձեր Տիկնոջ հետ միասին բարի և աստուածաճանդ գործերում մշտապէս միմեանց զօրակից. Ձեր գովելի աւանդն էք բերում ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շինութեանն ու պայծառութեանը:

Արդարեւ, Ձեր յանձնառութիւնները մեր Սուրբ Եկեղեցու կեանքում, մեծագումար նուիրատւութիւնները Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքութիւններին, ԱՄՆ Արեւմտեան և Արեւելեան թեմերի եկեղեցիներին ու Ազգային հաստատութիւններին խօստն արարայայտութիւնն են առ Աստուած Ձեր հաւատի և առ յուսադրչապսակ մեր Սուրբ Եկեղեցին Ձեր որդիական սիրոյ:

Մեծ է հայորդոյ վաստակը յարկապէս Վէն Նայսի Սուրբ Պետրոս և Գոսթա Մեսայի Սուրբ Աստուածածին եկեղեցիներին կեանքում: Տասնամեակներ շարունակ Դուք յանձն էք առել ինչպէս վարչական ծառայութիւններ, այնպէս և Ձեր նիւթական աջակցութիւնը բերել եկեղեցիներին՝ հաւատարմոր ու ծառայատէր Ձեր ընթացքով արժանանալով եկեղեցու հոգեւոր դասի և հայորդեաց անկեղծ սիրոյն ու յարգանքին:

Ուրախ ենք նշելու, որ ի յաւելումն Ձեր քաղում եկեղեցաշէն գործերի, Դուք մեծագումար նուիրատւութեամբ Ձեր մասնակցութիւնն էք բերել ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի առաջնորդանիսր Մայր եկեղեցու կառուցմանը՝ դառնալով եկեղեցու կնքաւանդներից մէկը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն, սիրով ընդառաջում ենք Ձեր բարեջան առաջնորդի խնդրանքին և Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:



Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ նռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բնակ Մայր Եկեղեցուն եւ հաւատարոք ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաև, որ Բարձրեայ Տէրը գորացնի համայն մեր ժողովրդի եկեղեցասիրութեան եւ հայրենասիրութեան ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ առաջնորդելով մեծարժան գործերի:

*Շնորհք Տեսուն մկրտյ Յիսուսի Զրիստոսի կողիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեւսեաց. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**  
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 13-ն Յուլիսի  
յամի Տեսուն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ  
ի Մայրավանս Արքայ Էջմիածնի  
ընդ համարաւ 242

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԿՈՆԴԱԿԸ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ  
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ  
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՐԱՋԱՏ ԶԱԲԱԿՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾԻՆԻ  
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ,  
ՈՐ Ի ՍԱՆ ՓԱՌԻՈ, ԲՐԱԶԻԼԻԱ**

Նամագգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանատի զաւակիդ:

Բրազիլիայի հայոց թեմ կապարած Նայրապետական Մեր այցելութեան ընթացքին ուրախ առիթն ունեցանք ճանաչել Ձեզ եւ Ձեր ընտանիքին, ինչպէս նաեւ բարի վկայութիւններ լսել հաւաքատուր հայորդուդ եկեղեցանպաստ արգասատու գործունէութեան մասին: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին առանկ շէն ու պայծառ փեսներու նախաձեռնողութիւնը եւ գոհողութեան ու նուիրաբերումի ոգին արժանիօրէն սէր ու յարգանք են բերել Ձեզ Բրազիլիայի հայոց թեմում, որին ականաւորես եղանք նաեւ Մենք:

Նայրապետիս համար գոհունակութիւն է գնահատանքի Մեր խօսքը ուղղելու Ձեզ՝ նաեւ հանդէպ համայն մեր ժողովրդի հոգեւոր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրսեւորած Ձեր ջերմ գգացումների ու որդիական սիրոյ համար: Ազնիւ նուիրաբերութիւններով Դուք Ձեր աջակցութիւնն էք բերել Աստուածակառոյց Մայր Աթոռիս շինութեանն ու պայծառութեանը, եւ այսօր Ձեր անունը արժանիօրէն գեղեցիկ է Վեհարանի մարմարեայ փախտակին արձանագրուած մեր Եկեղեցու պատուարժան բարերարների անուանաշարքում՝ վկայելով հաւատարմութիւնն ու եկեղեցասէր Ձեր ոգին եւ յաւերժացնելով Ձեր անունը՝ որպէս Սուրբ Էջմիածնի բարերար: Երջանկայիշարակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Նայրապետի բարի ցանկութիւնն էր հաւատարմոր հայորդուդ կուրծքը զարդարել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով՝ որպէս գնահատանք մեր Եկեղեցուն ու ժողովրդին մատուցած Ձեր ծառայութիւնների, սակայն անկարար մնաց իր հիւանդութեան եւ անժամանակ վախճանումի պարճառով:

Մեծարգոյ պրն Վարդանեան, ընդատաջելով Գերաշնորհ Տ. Տաթևի արքեպիսկոպոս Ղարիբեանի խնդրանքին եւ բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու հաւատարմոր ժողովրդին, Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք

Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ

պատառոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւաքոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի յարեխօսութեամբ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջութիւն, երջանիկ կեանքի երկար օրեր եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

*Ողջ յերոսք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Տոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջումէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ**

Տուաւ Կոնդակս ի 10-ն Օգոստոսի  
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆՃԳ  
ի Մայրավանս Արքայ Էջմիածնի  
ընդ համարաւ 251



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԿՈՆԴԱԿԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԺԱԿ ՆԱԿՈՐՅԱՆԻՆ  
«Ս. ՍԱՆԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՑ  
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ  
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԺԱԳ ՅԱԿՈՐԵԱՆ,  
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, ԱՄՆ**

Փառք Բարձրեալին, որ օրհնել և օրհնում է մեր ազգը գրի ու գրականութեան անխոնջ մշակներով, ովքեր Աստուածաբան իրենց կեանքը արդիւնաւորում են գրական անմահ յուշարձաններ կերպելով:

Մեծարգոյ Տիար Յակոբեան,

Ծնուելով Տէրունակոյն Երուսաղէմում կայք հաստատած հայ ընտանիքի ծոցում, ապա ուսում և կրթութիւն ստանալով հայ հոգեւոր-մշակութային հարուստ կեանքով ու աւանդոյթներով ապրող Եգիպտահայ գաղթօջախում Դուք բանաստեղծի երկնալուր Զեր տաղանդը շաղախեցիք համամարդկային և ազգային-հայրենասիրական յանձնարարական արժէքների խորը ապրումներով ու գոյներով՝ գրական ասպարէզ մուկը գործելու առաջին իսկ քայլերից արժանանալով ժամանակի հայ մեծանուն գրականագէտների ուշադրութեանը: Կեանքի փոթորկալոյց ալիքները ուր էլ տարագրեցին Զեզ, այնպես Դուք շարունակեցիք մտաւորականի Զեր ընթացքը և սփիւռքահայ իրականութեան մէջ եղաք հայ գրի ու գրականութեան փարածողը, թարգմանը և ուսուցիչը: Արդարև, Զեր գրչին պարկանոց չափածոյ և արձակ բազմաժանր ստեղծագործութիւններով Դուք հարստացրեցիք արեւմտաւոր բանաստեղծական արուեստի գանձարանը՝ դասուելով հայ վաստակաշատ բանաստեղծների շարքին:

Ուրախ ենք, որ այսօր նա ստեղծագործական Զեր գործունէութեանը զուգահեռ Զեր օգտակարութիւնն էք մատուցում ԱՄՆ Արեւմտեան թեմի ազգային-եկեղեցական կեանքում որպէս ուսուցիչ Աստուածաշնչային սերտորոշութիւններ կազմակերպելով տեղի Կիրակնօրեայ դպրոցներում ի նպաստ մատաղ սերնդի հայեցի և հոգեւոր դաստիարակութեան:

Մեծարգոյ Տիար Յակոբեան, ի գնահատութիւն Զեր գրական և մանկավարժական երկարամեայ նուիրեալ գործունէութեան և ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրութեանի խնդրանքին, Նայրապետական

այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ

### ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Լիայոյս ենք, որ սոյն պարգեւը նոր խրախոյս պիտի լինի վաստակեալ մարտորականիդ՝ շարունակելու ազգօգուտ եւ եկեղեցւանուէր Ձեր գործունէութիւնը:

Համայն հայոց սրտագնասուրբ կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ աղօթում, որ Սուրբ Սահակ Հայրապետի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետի բարեխօսութիւնը հանապազ ուղեկից լինի Ձեզ՝ պարգեւելով սրնդծագործական նորանոր ներշնչումներ եւ ամենայն բարիք: Այլեւ մաղթում ենք, որ Աստուած Իր օրհնութեան մէջ բաջառողջ եւ նրջանիկ պահի եւ պահպանի Ձեզ՝ ի պայծառութիւն մեր Եկեղեցւոյ եւ ի բարօրութիւն աշխարհասփիռ մեր մողովորի:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա Կոնդակս ի 10-ն Օգոստոսի

Յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆՃԳ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարս 246

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի սրբապատ կոնդակով հուլիս-օգոստոս ամիսներին

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Փիթըր Պոլուրյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Ճերլուր Լի Սրապյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Մայքլ Գիզիրյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Գրիգոր սարկավազ Անուշյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Բաճր Օհանեսյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է.

Գաբրիել Ինճեճիկյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Օրինության գիր է տրվել.

Գրիգոր Տեր-Ավետիսյան (Ավստրալիայի հայոց թեմ)

Գևորգ Գաբաճրյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Գալուստյան վարժարանին (Եգիպտոսի հայոց թեմ)

Սուրբ Աստվածածին եկեղեցու ծխական խորհրդին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Առաջնորդանիստ եկեղեցու կառուցման հավաքի մասնակիցներին

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է տրվել.

Տ. Եզնիկ քահանա Կյուզելյան (Բրազիլիայի հայոց թեմ)

Տ. Պողոս քահանա Պարոնյան (Բրազիլիայի հայոց թեմ)

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հայրապետական բարձր տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Անուշավան վարդապետ ժամկայանը նշանակվել է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր հովիվ:

Հոգեշնորհ հայր Սուրբ Գերմանիայի Վիլիելմի համալսարանում կանոնական իրավունքի ասպարեզում գիտությունների թեկնածուի ասպիրանտ ստանալուց հետո վերադարձել է հայրենիք՝ իր հոգևոր ծառայությունը շարունակելու Մայր Աթոռում:



## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սույն թվականի հուլիսի 6-7-ը գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Հայաստանի և Սփյուռքի հոգևորական և աշխարհական անդամների:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով և ժողովականներին ուղղված Նորին Սրբության ողջույնի և օրհնության խոսքով:

Օրակարգում բնության առնվեցին հայրենական և Եկեղեցական կյանքին առնչվող հարցեր: Անդրադարձ ունենալով առաջիկային նախադեսվող հոբելյաններին՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը Էական նկատեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասնակցությունը Եղեռնի 90-ամյակի փառելիցին և Գրերի գյուլի 1600-ամյակի հոբելյանին նվիրված միջոցառումներին, որոնց շրջանակում կարևորվեց հոգևոր, եկեղեցական բովանդակությամբ մշակութային, հրապարակչական և մի շարք այլ միջոցառումների անցկացումը: Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունեց նաև երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի վախճանումի 10-րդ փառելիցին նվիրված հանդիսությունների կազմակերպման ընթացքի մասին համապատասխան հանձնախմբի գեկույցը:

Ժողովի կողմից կարևորությամբ բնության առնվեցին նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Էկեղեցու Կանոնադրության, ծխական համայնքների վերակազմակերպման, եպիսկոպոսաց ժողովի գումարման, ինչպես և թեմական կազմակերպական ու այլ հարցեր:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունեց նաև Նորին Սրբության Հարավային Ամերիկայի հայոց թեմեր, Ֆինլանդիա և Մեծ Բրիտանիա կաթարած միջեկեղեցական և հովվապետական այցերի արդյունքների մասին հաղորդումը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխատանքներն ավարտվեցին հուլիսի 7-ին:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

## Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 15-ին՝ Ս. Աստվածածնի Վերափոխման փոռի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց հանդիսավոր Ս. Պատարագ: Պատարագիցն էր Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կնոյանը:

Հընթաց սրբազան արարողության Սրբազան Հայրը հավուր պարշաճի բարոզ խոսեց (լրես էջ 40):

Հավարդ Ս. Պատարագի եկեղեցականաց թափոըը շարժվեց դեպի Ս. Տրդատի բաց խորան, ուր և ձեռամբ Գարեգին Բ Կաթողիկոսի կատարվեց խաղողօրհներբի արարողությունը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի մասնակիցները և բազմաթիվ հավատացյալներ:

## ՀՈԳԵՆԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՆՎԱՆ 10-ԲԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Օգոստոսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգիստ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազեն Ա Կաթողիկոսի մահվան 10-րդ փարելիցի աոիթով:

Տ. Ներսես արքեպս. Պողոսյանն իր խոսքում անդրադարձավ Վազգեն Ա Հայրապետի անցած հոգևոր արդյունաշար ուղուն՝ խոսելով Հայոց Հայրապետի շինարարական գործունեության, հոգևորականների պատրաստության և Մայր Աթոռի պայծառացմանն ուղղված ջանքերի մասին:

Հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբանությունը և մի խումբ ռումինահայեր:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԱԶԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ  
ՎՇՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ԻՐԱՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԱՎԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ԶՈՎԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԱՔԻ  
ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Իրաքի թեմական վարչությունից ցավով տեղեկացավ օգոստոսի 1-ին Իրաքում տեղի ունեցած ահաբեկչության դեպքերի մասին, որոնց հետևանքով կան զոհեր և վիրավորներ, վնասվել են բրիստոնեական չորս եկեղեցիներ, այդ թվում՝ Հայ կաթողիկոս եկեղեցին: Իրաքի հայոց թեմի Առաջնորդարանը և եկեղեցիները հարձակման չեն ենթարկվել:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր վշտակցությունն է հայտնում բոլոր զոհերի ընտանիքներին և Իրաքի համայն ժողովրդին, մաղթում ապաքինում վիրավորներին՝ աղոթելով, որ Արևելքում հաստատված բրիստոնյա ու իսլամ ժողովուրդների դարավոր բարեկամությունը ու խաղաղ գոյակցությունը չվրանգվի նմանօրինակ դատապարտելի բռնարարներով, խաղաղությունը վերականգնվի տարածաշրջանում, և իրաքաբնակ ժողովուրդը ձևեղամուխ լինի իր ապառքով և բարեկեցիկ կյանքի կերպմանը:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ  
ԻՐ ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆԵԼ  
ՀՈՌՄԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԵՊԻՆ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը օգոստոսի 1-ին Բաղդադում բրիստոնեական եկեղեցիների դեմ կատարված ահաբեկչության առիթով գորակցության և սրտակցության գիր է հղել Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապին:

Հայոց Հայրապետի գրության մեջ մասնավորապես ասվում է. «Մենք ցավում ենք, որ որոշ ծայրահեղական տարրեր փորձում են վրանգել դարավոր բարեկամությունը և խաղաղ գոյակցությունը Արևելքի բրիստոնյա և իսլամ ժողովուրդների միջև, և Մեր աղոթքն ենք վերաօտարում առ Բարձրյալն Աստված, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը հաստատվի մարդկանց հոգիներում, և բռնությունն ու պատերազմը վերանան տարածաշրջանից և ողջ աշխարհից»:

Վեհափառ Հայրապետը նմանափալ գրություն է առաքել նաև Հայ Կաթողիկոս Եկեղեցու Պատրիարք Ներսես-Պեպրոս ԺԹ Թարմունուն:



**ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԵՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ  
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆԾԱՆ ՀԱՆՁՆԵՑ  
ՎԻՏԱԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՑԻՆ**

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն, հրապարակապես որի Նորին Սրբազանությունը մոտկվարնակ բարերար Վիտալի Գրիգորյանցին պարգևատրեց Հայ Առաքելական Ս. Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Բացման խոսքով հանդես եկավ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը: Սրբազան Հայրն անդրադարձավ բարերար հայորդու կենսագրությանն ու անցած ուղուին և այն սիրտն ու նվիրմանը, որ լսնի Վիտալի Գրիգորյանցը հանդես էր հայրենիքին ու Ս. Էջմիածնին: Այնուհետև՝ «Էջ Միածինն ի Տօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական սրբատառ կոնդակը, որով Նորին Սրբությունն իր գնահատմանն էր հայտնում եկեղեցանվեր բարերարին:

«Ամենապես ճանաչում ենք Ձեզ ն այսօր առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում Ձեր բարի գործերին, որոնք միտված են Ռուսաստանում բնակվող մեր ժողովրդի գավակների ազգային-եկեղեցական կյանքը զորացնելու ազնիվ նպատակին: Մենք տեղյակ ենք, թե որքան մեծ աջակցություն եք բերում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմին և հարկապես Մոսկվայի Սուրբ Խաչ եկեղեցու կառուցման աստվածահաճո գործին, որ լինելու է առաջնորդանիստ եկեղեցին Տիրախնամ թեմի: Ռուսաստանում և մասնավորաբար Նրա մայրաքաղաք Մոսկվայում բնակվող մեր ժողովրդի բազմաթիվ գավակներ, որ աղոթքի պիտի կանգնեն նորակառույց եկեղեցում, մշտապես նրախորագիտությամբ պիտի հիշեն Ձեզ և պատվարժան բոլոր հայորդիներին, ովքեր ջանք ու ներդրում ունեն եկեղեցու կառուցման ազգօգուտ գործում:

...Ամենակարող Աստուծո օրհնությամբ Դուք Ձեր կարողությունները ծառայեցրել եք նաև Լուսավորչապսակ մեր Սուրբ Աթոռի՝ համայն մեր ժողովրդի հոգևոր նվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը: Դուք, արդարև, բարեգործ և հավատարմոր գավակն եք բարեպաշտ մեր ժողովրդի և արժանի Հայրապետական բարձր գնահատանքի»,- ասվում է Հայրապետական կոնդակում (տե՛ս «Էջմիածին», 2004, Դ, էջ 17):

Պարգևատրումից հետո Վիտալի Գրիգորյանցն իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ հավաստիացնելով, որ իր կարելին պիտի անի Հայրենիքի, Հայաստանյայց Եկեղեցու և Ս. Էջմիածնի պայծառության ու բարգավաճման համար:

Վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ հայտնելով իր գոհունակությունը, որ Վիտալի Գրիգորյանցը մշտապես և անսակարկորեն գորակցում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծրագրերին, ինչպես նաև աջակցում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի, ինչպես նաև Ուկրաինայի հայոց թեմերի առաքելության նվիրական գործին:

Հանդիսությանը գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Ս. Գեղարդ վանքի երգչախումբը:

**ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**



ՄԻԿՐՈՒԹՅԱՆ ԴԵՄՈՍԿՐԱՏԻԿԱՆ ԿՈՄՍՊՈՆԵՆՏԻ ՄԻՓՈՒՐԻ



ՊԻՊԳԵԿԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ՄԱՅԻՍԻԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ



## ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՐԳԵՎԸ՝ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՄԱՆՎԵԼ ԶԻՆՔԱՇՅԱՆԻՆ

Հուլիսի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց Միացյալ Աստվածաշնչային Ընկերությունների թարգմանական խորհրդարանի վերապատվելի Մանվել Զինքաշյանին:

Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ նախ. Պետրոսյանը ներկայացրեց վերապատվելի Զինքաշյանի գործունեությունն ու նրա բերած նպաստը Մայր Աթոռի կողմից հրատարակված Աստվածաշունչ մատյանի խմբագրման աշխատանքներին: Աստվածաշնչի արեւելահայերեն նոր թարգմանությունը, որի աշխատանքներն սկսվել էին դեռևս 1984 թ. նրջանկահիշարակ Վազգեն Ա հայրապետի օրհնությամբ, հայ հավատացյալի սնդանին դրվեց 1994 թ.: Այսօր նա Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի փնտրիչությամբ շարունակվում են աշխատանքները՝ Աստվածաշնչի առավել կատարյալ հրատարակության նպատակով:

Վեհափառ հայրապետն իր խոսքում բարձր գնահատեց վերապատվելի Մանվել Զինքաշյանի՝ Ս. Էջմիածնին բերած ավանդը և հույս հայտնեց, որ նա դեռ երկար փարիներ իր ամբարած գիտելիքներն ու փորձառությունը պիտի ծառայեցնի Մայր Եկեղեցուն: «Դուք այսօր էլ եկել եք Մայր Աթոռ՝ լրումի հասցնելու այն աշխատանքը, որ կյանքի էր կոչվել դեռևս Վազգեն Ա Ամենայն հայոց Կաթողիկոսի օրոք՝ փնտնել Աստվածաշունչ մատյանն աշխարհաբար նոր թարգմանությամբ՝ ավելի կատարյալ և վերախմբագրյալ ձևով: Ձեր օժանդակության և ազնիվ աշխատանքի շնորհիվ է նաև, որ այսօր հայ հավատացյալը հաղորդ է դառնում Տիրոջ կենսատու խոսքին և իր միտքն ու հոգին լուսավորում աստվածաշունչ խոսքերով»,- նշեց հայոց հայրապետը:

Իր հերթին վերապատվելի Մանվել Զինքաշյանը խորին շնորհակալություն հայտնեց Վեհափառ հայրապետին՝ գնահատանքի համար, և վստահեցրեց, որ իր կարելին պիտի անի՝ արդարացնելու համար Նորին Արքեպիսկոպոսի հույսերը՝ ծառայելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն նախ. Ավետիքյանը, դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, լուսարարապետի պաշտոնակատար Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը, հայաստանի Աստվածաշնչային Ընկերության գլխավոր քարտուղար Հրաչ ավ. սրկ. Սարգսյանը:

**ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

## ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՎԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՇԵՆՔԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գալստիոս Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնովին վերանորոգված շենքի բացման արարողությունը: Վերանորոգման աշխատանքներն իրականացվել են ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանների հովանավորությամբ:

Հանդիսության սկզբում Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քին. Սարգսյանն անդրադարձավ 130-ամյա կրթական հաստատության փառապանծ պատմությանը, նրա ունեցած կարևոր դերակատարությանը մեր ժողովրդի կյանքում:

Գևորգյան հոգևոր ճեմարանին վերապահված բացառիկ նշանակության մասին իրենց խոսքն ասացին ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանն ու ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաև բարերար Գևորգ Հովնանյանը՝ ասելով. «Տեսնում եմ, որ Մայր Աթոռի ոսկեդարը նոր է սկսվում, Վեհափառ Տեր: Հուսով եմ, որ նոր սերունդը պիտի հեփուի Ձեր օրինակին՝ առավել գորսցնելով Ս. Էջմիածինն ու մեր Մայր Եկեղեցին, քանզի միայն հայոց Եկեղեցին է, որ իր 1700-ամյա փորձառությամբ կարողացել է մեզ հայ պառնել ու ջերմացրել մեր հոգիները՝ մեր մարմնում և սրտում միշտ վառ պահելով սերը դեպի մեր հայրենիքն ու մեր Եկեղեցին»:

Վերջում ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ուղղեց Ամենայն հայոց հայրապետը՝ անդրադառնալով այն կարևոր առաքելությանը, որ վերապահված է եղել և է Գևորգյան հոգևոր ճեմարանին՝ բարձր գնահատելով ազգային բարերարներ տեր և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանների, ինչպես նաև Հովնանյան գերդաստանի անսակարկ նվիրումը՝ հանդես գալով Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու մեր հայրենի պետությունը:

«Այսօրվա ուրախությունն աղոթք է դարձել մեր հոգում մեր երջանկահիշատակ նախորդ հայրապետների համար, որոնց տեսիլքն ու երազն է եղել տեսնել վերաբացված դռներն այս պատմական հաստատության, տեսնել գորացած ու անշեղ ընթացող մեր Եկեղեցին: Քանզի նրանով են ապրել և պահպանել իրենց ինքնությունը մեր նախնիք, նրանով են հաշտունջ ոգով կրթել ու դաստիարակել իրենց գավակներին»,- նշեց Գարեգին Բ Կաթողիկոսը:

Բացման արարողությանը ներկա էին Հովնանյան գերդաստանի ավելի քան 30 անդամներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Սահմանադրական դատարանի նախագահ Գաղիկ հարությունյանը, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Հովիկ Հովնյանը, ԳԱԱ-ի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ԵՊՀ-ի ոսկերի Ռադիկ Մարտիրոսյանը, մշակույթի և գիտության մշակներ ու բազմաթիվ հյուրեր:

Հանդիսությանը գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Գևորգյան հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն Շարբաթյանի:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ ՀԱՆՁՆԵՑ ՏԱՐՎԱԼ ԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Օգոստոսի 30-ին Վեհաբանի հանդիսությունների սրահում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, րեդի տնեցավ հանդիսություն, որի ընթացքում «Լավագույն ուսուցիչ-2004» մրցույթին մասնակցած տարբեր առարկաների գծով 53 ուսուցիչներ ձևումը Հայոց Հայրապետի սրացան վկայականներ և դրամական պարգևներ՝ մեկնեսասությամբ ամերիկաբնակ Ժիրայր Գաբրիելյանի:

Ներկաներին նախ ողջունեց Ներսես արքեպս. «Պողապալանը՝ նշելով, որ առավել ուշադրություն պետք է դարձնել ուսուցիչների հոգսերին ու ամեն ջանք գործադրել՝ նպաստելով նրանց առաքելության ամբողջական իրականացմանը: Այնուհետև ներկաներին իր խոսքն ուղղեց նաև ՀՀ կրթության և գիտություն նախարար Սևրգո Երիցյանը:

«Միշտ էլ Հայ Առաքելական Եկեղեցին իր բազմադարյան պատմության ընթացքում և՛ ոչ էլ ուշադիր ուսուցչի նկատմամբ, բունգի հենց հայ հոգևորականներն են և՛ ոչ ուսուցիչներն և ուշադիր ուսուցչի նկատմամբ»,- նշեց Սրբազան Հայրը:

Սերգո Երիցյանը նաև հավելեց, որ Վեհափառ Հայրապետի առաջարկությամբ հաջորդիվ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի շրջանակներում պիտի գնահատանքի արժանանան ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքում իրենց առաքելությունն իրականացնող ուսուցիչները, ովքեր իրենց կարևոր նպատակն են բերում հայապահպանության գործին:

Վկայականների և խրախուսական պարգևների հանձնումից հետո, ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց Նորին Սրբությունը՝ իր խոսքում մեկ անգամ ևս նշելով, որ հայ ուսուցչի կերպստոր միշտ էլ սերտորեն կապված է եղել Հայոց Եկեղեցու անվան հետ, և որ Հայ Եկեղեցին իր ամբողջական գորակցությունը պիտի բերի հայ դպրության ծաղկման գործին:

«Գիտենք, որ դյուրին չէ ձեր աշխատանքը, որ այն պահանջում է հանձնառություն, գոհաբերություն, նվիրումի ոգի: Բայց վստահ ենք, որ կարևորությունը ձեր առաքելության գիտակցում էր, որ ձեր ձևերում է կերպվում ոչ միայն այսօրը մեր կյանքի, ոչ միայն վաղվա օրը մեր Հայրենիքի, այլ նաև ընդհանրապես Հայրենիքն ինքնին՝ իր լինելությամբ և հավերժությամբ: Եվ հավատում ենք, որ այս գիտակցությունը ոգի է ներշնչում ձեզ, որպեսզի չբկարանաք դժվարությունների առջև և չբերանաք ձեր աշխատանքների մեջ. գիտության հետ ջամբնե՞ք հայրենասիրության ոգի, ազգային գիտակցություն, որով և պայմանավորված է մեր ժողովրդի լավատեսությունն իր կյանքի նկատմամբ»,- նշեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիսությանը զեղարկեստական հայտազրով հանդես եկավ Մայր Աթոռի և ՀԲԸՄ հովանու ներքո գործող Նոր Նորքի հայորդյաց Կան «Հայկազունք» ազգագրական երգի ու պարի համույթը:

Միջոցառմանը մասնակցում էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության

հարցերի մշտական հանձնաժողովի ամբաստանադատ Հրանտ Վակոբյանը, Համահայկական կրթական առաջին խորհրդաժողովի մասնակիցները և բազմաթիվ հյուրեր:

Հանդիպության ավարտին ՆԱՌՏՏ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համահայկական կրթական առաջին խորհրդաժողովի մասնակիցներին՝ ողնկցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկ անգամ ևս ողջունեց ներկաներին՝ հորդորելով առավել ջանասիրությամբ ու նվիրումով լծվել հայապահպանության սրբազան գործին:

Մասնակիցներն իրենց հերթին շնորհակալություն հայտնեցին Հայոց Հայրապետին Համահայկական կրթական առաջին խորհրդաժողովի կազմակերպմանն ու աշխատանքներին աջակցելու համար՝ վստահություն հայտնելով, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր Հայ Առաքելական Եկեղեցին իր կարևոր նպաստը կբերի հայորդիների կրթության գործին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ մայրենի լեզվին վերաբերող խնդիրներին, կրթական միասնական ծրագրերի համապեղ մշակմանը, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիր իրականացնելու Վեհափառ Հայրապետի նախաձեռնությանը:

ՄԱԹՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՄԱԿԱՐԳ

## Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 հուլիսի 2004 թ.)

*«Հասկերձք գոև քո, լեղ մեղ իշխանս ևս  
կերակուր մեղ յևոյ քեզ լիցի»:*

*«Դու հասկերձնեղ ունես, մեզ իշխանս  
յարձիր, թող մեղ կերակուրդ քո հրամա-  
նով լիևի»:*

(Եսայի Գ 6)

Միրելի բարեպաշտ բույրեր և ևղբայրներ.

Մուրք և անմահ Պապարագի ընթացքին այսօր ընթերցված Ս. Գրային երեք հարված-ներից մեկից՝ Եսայու մարգարեությունից վերցված արտահայտությունն է այս. «Դու հանդերձներ ունես, եկ մեզ իշխան դարձիր և նաև կհայթհալթես մեր կերակուրը»: Այսօր երեք ընթերցվածներ մեր խորհրդածությանը հանձնվեցին, որոնց շուրջ մեր Հայրերը խորհել են Կայսր մեզ այս հոգեպարտ արարողության ընթացքին: Առաջին ընթերցվածը Եսայու մարգարեության երրորդ գլխից էր, երկրորդը՝ Պողոս առաքյալի՝ Հռոմեացիներին ուղղված թղթից, երրորդը, որ հնչեցվեց այս րեմից, Մաթթեոս ավետարանչի ԺԴ գլխից էր, որն անվանվում է, «Հացի բազմացում»: Երեք այս ընթերցվածները ժամանակագրական առումով իրարից բավականին հեռու են և առաջին հայացքից թվում է, թե չեն կարող որևէ աղերս, որևէ առևտրություն ունենալ, սակայն առավել խորամուխ լինելուց հետո հստակ է դառնում նրանց մեջ արտացոլվող ընդհանուր գաղափարը:

Արդ Կեսենեք, թե ինչի մասին էր խոսում Եսայի մարգարեն: Մարգարե, որ հայրնի էր իր խառնաշունչ բնավորությամբ և նկարագրով, մարգարե, որ հայրնի էր իր անհանդուրժող կեցվածքով մեղքերի հանդեպ և իր մտրակումներով: Ահա նա մտայն կանխագուշակումներ է կատարում հրեա ժողովրդի մասին: Մարգարեն խորը ողորկություն է ապրում, երբ Կեսենում է, որ Ասործո սեփական ժողովուրդ կոչված իր ազգը անարդարությունների, գրկանքների, ընկերային հարաբերությունների մեջ Կեսեն գլխից Կեսեն չարած չարիքների ու անարդարությունների գոհ է: Պատժում: Եսայի մարգարեն խորապես ողորմ է, որ իր ժողովրդի դավաճանները կաշառակերությամբ են սնվում, մարգարեները սնույթապաշտությամբ են հագնվում, նրանք, ովքեր արդարադատություն պետք է անեն, անարդարությունն են դարձնում իրենց կարգախոսը. այրիները գրկվում են, որերը՝ անիրավվում, և ահա այս բոլոր անարդարություններին ի Կեսեն նա Ասործո կողմից իրեն հայրնված չարագանց մտայն մարգարեություններն է փոխանցում իր ժողովրդին, ում դիմելով ասում է. «Քանի որ դուք ձեր ամբողջ մտա-



սենտման առարկան դարձրեցիք հացի ելակից վազբը, ձեր նյութական ապահովությունը, պիտի գան ժամանակներ, երբ դուք ամբողջապես պիտի թշվառանաք, պիտի գան ժամանակներ, երբ Խորապելի սիգաճեմ օրիորդները, ովքեր որ զարդարված քայլում էին Սիոնի փողոցներով, պետք է գրկվեն իրենց ամենաուրիշ գարդ ու նախշից և սկսեն Է գրկվեն նույնիսկ հացից»:

Այդ օրերի համար Եսայի մարգարեն ասում է. թե այն անձը, ով մի կտոր հաց ունենա, հնարավորություն ունենա մյուսներին հացով ապահովել, ունի և գան և ասեն նրան, թե դու հաց ունես, հանդերձ ունես ուսերիդ, եկ և մեզ վրա թագավոր դարձիր: Ահա այսպես Եսայի մարգարեն պարզում է մեզ հրեա հասարակության մեջ, և ինչու չէ, ընդհանրապես մարդկանց մեջ պեղ գտած այն մտայնությունը, որ հացը, կեցությունը, հագուստը է առաջնայինը:

Այժմ պետք է, թե ինչ է հաջորդում Եսայու այն ընթերցվածին, որ քիչ առաջ ներկայացրեցինք: Մարգարեական այս փողեքին հաջորդում են Պողոս առաքյալի խոսքերը: Առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթում նրանց է դիմում ասելով, որ այո, դուք քրիստոնյաներ եք, դուք ընդունեցիք Քրիստոսի լույս հավաքը, բայց նաև չի կարելի Քրիստոսի նկատմամբ ունեցած ձեր հավաքը պարծանքի նշան դարձնել, չի կարելի ամբարտաճանալ, չի կարելի մեծամարանալ և նշավակել երեաններին, ովքեր որ մերժեցին Քրիստոսի հավաքը:

Քրիստոսի հանդեպ հավաքը, ասում է Պողոս առաքյալը, դրսևորվում է երկյուղած սիրով, աղոթքով և հավաքով, և մարդ չպետք է ապավինի իր գործերին, այլ Աստծո նկատմամբ հավաքին և այն շնորհին, որով Աստված փրկելու է մեզանից յուրաքանչյուրին: Այսպես, ահա, Պողոս առաքյալը շեշտադրում է, ի տարբերություն մարդկանց մեջ տարածված մտայնության, հավաքի գերակայությունը, մարդկանց համար կարևոր է նկատվում հացը, կեցությունը, իսկ Աստծո կողմից, որ արտահայտվում է Պողոս առաքյալի շուրթերով, էական և կարևոր է նկատվում հավաքը, հավաքը Քրիստոսի հանդեպ:

Եվ ահա Պողոս առաքյալի ասածն ամբողջանում է այսօրվա Ս. Գրային ընթերցվածներից կարևորագույնի՝ Մատթեոսի ԺԴ գլխի այն հատվածում, ուր նկարագրվում է հացի բազմացման հրաշքը:

Այժմ անդրադառնանք այդ դրվագին, երբ Քրիստոս քարոզություններից այլևս հոգնած իր աշակերտների հետ քաշվում է անապար, թերևս փոքր-ինչ հանգստանալու: Ժողովուրդը տակավին չհագեցած Քրիստոսի հրաշագործություններից և կատարած բժշկություններից, մատուցած քարոզներից և ուսուցումներից՝ կրկին հեղձում է Տիրոջը և առաքյալներին ու լեռան շուրջ, ինչպես ասում է ավետարանիչը, վերստին մի մեծ բազմություն է հավաքվում, և Քրիստոս Իր աշակերտների հետ նորից կատարում է բժշկություններ, ուսուցանում և քարոզում, և երբ, ինչպես գրում է ավետարանիչը, օրը տարածամել էր, աշակերտներից մեկը մոտենում է Իրեն և ասում. «Վարդապետ, արդեն ուշ է և պետք է, որ մենք այս ամբողջ բազմությանը թույլ տանք, որպեսզի հեռանա իրեն սնունդ հայթայթելու, իր նյութական կարիքները հոգալու համար»:

Քրիստոս պատասխանում է. «Մի՞թե դուք չեք կարող այդ ամբողջ բազմությանը կեդրակրել»: Աշակերտը անակնկալի է գալիս և պատասխանում, որ «ինչպես կարող ենք այս



ամբողջ բազմությանը կերակրել, որովհետև մեր ունեցածը ընդամենը հինգ հազ է և երկու ծուկ. և հինգ հազով և ձկով բնականաբար չենք կարող այս ամբողջ բազմությանը հագնել»։ Եվ Քրիստոս, որ իրապես ի սկզբանն ցիւրեր, թե ինքը ինչ կերայ է վարվելու, նրանց պարզապես միմիայն պատվիրում է. որ բազմությանը խումբ-խումբ նստեցնեն, և այնուհետև՝ ավելարարանիչը պատմում է. թե ինչպես այդ հինգ հազով և երկու ձկով ամբողջ բազմությունը կերակրվեց և դրանից հետո փակավին փաստերկու գամբյուղ հաց և ձկնեղեն ավելացավ։

Անշուշտ, Ս. Գրայիս բազմաթիվ մեկնիչներ փորձել են անդրադառնալ, թե ինչպես տեղի ունեցավ այդ հրաշքը, Քրիստոս ինչ միջոցով կարողացավ բազմացնել այդ ամենը և կամ արդյո՞ր բազմացրեց։ Որոշ մեկնիչներ ասում են, թե Քրիստոս իրապես բազմացրեց, ուրիշներ ասում են, թե պարզապես մարդկանց հոգևոր բավականության գզացումը այնքան գերակշռող էր, որ նրանց բավարարեց շատ չնչին մեկ հաց, սակայն այստեղ էականը ոչ թե այն է, թե ինչպես տեղի ունեցավ հրաշքը, այլ այն, որ հրաշքը տեղի ունեցավ։ Եվ եթե հնարավոր լիներ այդ հրաշքը բացատրել, բնականաբար այն կդադարեր հրաշք լինելուց։ Այնուհետև Նովիանոս Ավետարանում ասվում է, որ ժողովուրդը հագնալուց հետո, ամբողջ հացի առատությունը տեսնելուց հետո փորձեց մուրեմնալ Հիսուսին և Նրան կարգել իրենց վրա թազավոր։ Եվ վերստին տեսնում ենք մարդկանց մոտ առաջացած այն մտայնությունը, որ ով հաց ունի, ով կարող է, կցցություն ապահովել, նա կարող է նաև թազավոր լինել։

Մտնում են երկնավոր թազավորին և Նրան ցանկանում են երկրի թազավոր կարգել։ Այդ նույն է, որ գնաս և կալվածաիրտոջը առաջարկես իր կալվածքի մեկ մասի վրա տնօրինող լինել։ Ուստի հասկանալի է Հիսուսի խորը հիասթափությունը և հուսախաբությունը, թե ինչպես մի ժողովուրդ, որ այդքան շոտյորեն օգտվել էր Իր բարեգործություններից, վերստին չի ընկալում կարևորը և չի կարողանում կարևորը առանձնացնել, փարբերակել երկրորդականից։ Եվ այստեղ ահա Ինքը արտասանում է հետևյալ խոսքերը. «Սա չէ՛ այն հացը, որին դուք պեպք է նախընտրություն տալ, այն հացը, որը պեպք է փափագելով փափագել՝ Ես եմ, Ես եմ. որ երկնքից իջել եմ, և նրանք, ովքեր կճաշակեն այդ հացից, որ Իմ մտքին է, և նրանք, ովքեր կարենան այն բաժակից, որի մեջ Իմ արյունն է, միայն ներսնք կարող են ունենալ փրկություն, միայն նրանք կարող են արժանանալ փրկության»։ Եզրափակելով խոսքը՝ Հիսուս ասում է, որ հոգին է կենդանարար։

Ամփոփելով այս ամբողջ պատմությունը, թե ինչն է էականը, ինչն է կարևորը նյութի և հոգու հարաբերության մեջ, Տերը վերջնականապես լուծում է այս հարցը՝ ասելով, որ հոգին է առաջնայինը, հոգին է կարևորը և այն էական դերակատարություն ունի մարդու փրկության համար։ Ավետարանի մեջ փարբերակվում է երեք հաց. առաջին հացը, որ նյութական հացն է, մեր մարմնական կարիքները, մեր մարմնական պեպքերը հոգալու համար, այն հացը, որը տրվեց Մովսեսի կողմից Մինայի անապատում հրեաներին, որ կոչվում է նաև մանա-նա։ Երկրորդ հացը, որ Ս. Գրքի մեկնիչների շրջանին ունեւ իմաստը աստվածային գերիմաստության, այսինքն՝ իմացական հացը, այն հացը, որը նաև մեր պատմության ընթացքին մեր հայրերը ճաշակել են այդ հացից և մեզ ավանդել բազմաթիվ ստեղծագործություններ, պատմություններ այնպես, ինչպես այդ հացից ճաշակեցին Խորենացին, Ազաթանգեղոսը և մեր մյուս մարենագիրները ու մեզ այսօր մատուցում են իրենց իմացական գի-

հաց, որ մեր հայրերն առաքարապես ճաշակով են.  
Մեկնենք Հայաստանի ցանկացած շրջան, թե՛ պարմակա՛ն Հայաստան, թե՛ ներկայիս  
Հայաստան և այն բոլոր երկրները, ուր որ հայը ապաստան է գտնել, ուր որ հայը իջևանել  
է, և քսանենք այն անձանց կապարած գործերը, այն անձանց վաստակը, ովքեր կերել են  
է, և քսանենք այն անձանց, որոնց վրա դրոշմված են անունները մեր իշ-  
խանների, մեր հայրերի՝ Խաղա՛կյանք, Պռոշյանք, Օրբելյանք, ովքեր որ առաքարապես  
ճաշակեցին այդ հոգևոր հացից և այդ հոգևոր հացից ճաշակեցին նաև վերջին շրջանի մեր  
նշանավոր բարեգործները, բարեգործներ, որոնց անունը մշտապես պիտի մնա հավաքաց-  
նշանավոր բարեգործները, բարեգործներ, որոնց փառանքը քսաներորդ դարում Ալեք-  
սանդր Մանթաշյանից հասնում է մինչև Ալեք և Մարի Մանուկյաններ, որոնց հոգեհան-  
գըստյան արարողությունը նաև այսօր հավաքո՛ւ Սուրբ և Անմահ Պապարագի, Ահապա-  
հայրապետի բարձր նախազանգությամբ, պետք է կատարենք նվիրական այս Տաճարից  
ներս: Եվ անշուշտ, Ալեք և Մարի Մանուկյաններ ամուլի բարեգործությունների մասին, ի-  
րենց ազգին և Եկեղեցուն բերած նպաստի մասին արժանապես կհիշարակվի հոգեհան-  
գըստյան արարողության ընթացքին, և մեզ մնում է միայն աղոթք և օրհնություն հայցել Տի-  
րոջից բոլոր այն անձերի հոգիների համար, ովքեր որ իրապես ճաշակելով հոգևոր հացից՝  
կարողացան խնկելի հիշարակ թողնել, վաստակ թողնել, որով նաև ապրում ենք մենք ա-  
մենքս այսօր:

Թող Տիրոջ օրհնությունը և զորակցությունը լինի ամենքիս հետ այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն:

# Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՔԵՂԱ ՄԱՅԻԼՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(19 հուլիսի 2004 թ.)

*«Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և տնսանք Նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միսածին՝ ի շնորհով ու ճշմարտությամբ»:*

(Հովհ. Ա 14)

«Յանտուն Հոր և Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելիներ, այսօր մեռելոց է՝ Վարդավառի մեռելոցը: Մեր հայրերն իմաստաբար յուրաքանչյուր տաղավար տոնից հետո հաստատել են ննջեցյալների հիշատակության օր, որը մեր եկեղեցական օրացույցի մեջ գրվում է, արտահայտվում է «մեռելոց» բառով: Բնականաբար, մենք չենք կարող անտարբեր լինել մեր ննջեցյալների նկատմամբ, այն ննջեցյալների նկատմամբ հարկապես, որոնք հավաքով և հույսով իրենց աչքերը փակում են, ննջում են այն հույսով, որ մեկ օր Քրիստոս հարություն պիտի աչքեր է տա իրենց: Ինչո՞ւ պետք է Քրիստոս հարություն տա իրենց, որովհետև Քրիստոս Ինքը՝ ննջեցյալներից անդրանիկը հարություն առավ, հարություն վրեժ թողր նրանց, որոնք ննջած էին մինչև Իր հարությունը, և հարություն պետք է տա բոլոր նրանց, ովքեր ննջելու են ապագայում:

Այսօրվա ճաշու Ավետարանն իր մեջ խտացնում է այն մեծ ճշմարտությունը, որի համար որ, որին որ մենք խոնարհվում ենք, որին որ մենք երկրպագում ենք, որին որ մենք հավատում ենք: Հովհաննես առաքյալն ասում է. «Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ»: Բանը մարմին եղավ, սա ճշմարտություն էր, որ պետք է կատարվեր: Սակայն ինչպե՞ս բնակվեց մեր մեջ: Ձեզանից շատերը, վստահաբար, ուշադիր էին ներկվա ճաշու Ավետարանին, երբ ընթերցվեց Մատթեոսի Ավետարանի Պայծառակերպության հատվածը, թե ինչպես Քրիստոս բարձրացավ Թադոթ լեռ՝ Իր հետ ունենալով առաքյալներից միայն Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, և նրանց առաջ պայծառակերպվեց, այլակերպվեց: Դա Իր աստվածության հայտնություններից մեկն էր: Մեր Տերը, որ մարմին էր եղել, նկատվեց բնակվեց Իր առաքյալների մեջ, սակայն առաքյալների մեջ բնակվելով՝ չընդհատվեց, չըվերջացավ առաքելությունն աստվածային: Մեր Տերը շարունակ իջնում և բնակվում է մեր մեջ, իջնում և բնակվում է հացի և գինու տեսքով, որովհետև մենք, որպես մարդկային տկար էակներ, չենք կարող մեր մեջ ընդունել մարդու միս և արյուն: Հետևաբար, Աստված այնքան սիրեց մեզ, որ արժանացրեց այդ մեծ ողորմությանը:

Մեզանից շատերն այսօր փափագում են հրաշքներ տեսնել, փափագում են տեսնել և նոր հավատալ, բայց միշտ պետք է մեր ականջներին հեցի Տիրոջ խոսքը. «Դուք տեսաք և հավատարացիք»,- ասում էր առաքյալներին.- նրանի նրանց, որոնք չեն տեսնի, սակայն կհա-



վարան» (Նմմա Նովի. Ի 29): Բանը մարմին եղավ, այսինքն՝ Ասարծո միածին Որդին՝ Դիսուս Զրիստոս, մարմին եղավ, առավ մարդկային մարմին, միտք և հոգի, սակայն նաև բնակվեց մեր մեջ: Ինչքան որ մեծ է խորհուրդը Տիրոջ մարմին լինելու, այնքան ավելի մեծ է և շատ ավելի մեծ է խորհուրդը մեր մեջ բնակվելու:

Քրիստոս շոշափելի ներկայությամբ միշտ առաքյալների հետ էր, առաքյալների մեջ էր, բայց նաև շոշափելի ներկայությամբ մեր մեջ է, երբ որ մենք ճշմարտասպես, արժանավորապես մտքենում ենք հաղորդվելու Իր սուրբ մարմնին և աուրբ աղյանը: Բանը մարմին եղավ մեզանից երկու հազար և ավելի տարի առաջ, սակայն բնակվում է մեր մեջ երկու հազար և ավելի տարիներ և պետք է բնակվի մեր մեջ հավիտենապես, մշտնջենավորապես, եթե մենք ցանկանում ենք, փափագում ենք մեր ազատ կամքով ընդունելու մարմնացած Բանին: Օրվա յուրաքանչյուր խորհուրդ և Ավետարանական ընթերցված ունի իր խորհուրդը և իմաստը:

Ամեն մի խոսք կարդում ենք, փորձում ենք հավատալ, խնդրում ենք Տիրոջից, որ այդ հավատքը մեզ շնորհի, որպեսզի չերկմտենք աստվածային ճշմարտությունների առաջ, թերի կամ տկար չհամարենք Ավետարանի խոսքերը, ինչպես որ կարող էին համարել կամ այսօր էլ համարում են շատերը: Աստված հայտնվում է նրանց, Աստված բնակվում է նրանց մեջ, ովքեր որ խոնարհ սրտով, ճշմարիտ և ուղղափառ աստվածաշարությամբ հար և հանապազ դիմում են մարմնացած Քրիստոսին:

Մարմնացած Քրիստոսի խորհուրդը շատ մեծ է: Մեր հայրերը փորձել են մարդկային ամենապարզ բառերով մեզ հասկանալի դարձնել, թե ինչ է նշանակում «Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ» (Նովի. Ա 14): Չմոռանանք, որ այդ Բանը միշտ մեր մեջ է, միայն թե մենք ենք անտարբեր Նրա նկատմամբ: Այն նաև մեր ննջեցյալների հետ է: Այսօր հավաքվել ենք բոլորս այսպեղ մեռելոցի Ս. Պարարագին, և այսօրվա խորհուրդը հարուկ իմաստ և նշանակություն ունի, որովհետև ինչպես որ մենք կարիք ունենք սրբերի բարեխոսության՝ ի գլուխ ունենալով Աստվածամայրը, այնպես էլ մեր ննջեցյալները կարիք ունեն մեր բարեխոսության, չէ՛ որ մենք հոգեհանգստյան աղոթքի մեջ խնդրում ենք՝ ասելով. «Տեր, ներիր, քա՛վի նրանց մեղքերը և աջակողմյան սրբերի դասերի հետ բնակեցրու նրանց»:

Նշանաբար, հոգեհանգստյանը ննջեցյալների համար աղոթելիս մենք, իբրև գինժորյալ եկեղեցու ներկայացուցիչներ, բարեխոսներ ենք յուրաքանչյուրս մեր ննջեցյալների համար: Աստված թող թուր մեր ննջեցյալների հոգիներն իր լուսեղեն, անմար խորանների մեջ բնակեցնի, այն խորանների, որոնց լույսը երբեք չի նվազում: Այդ խորանները միշտ լուսավոր են: Աղոթենք առ Աստված, որպեսզի Նա Իր ողորմությամբ մեր ննջեցյալներին հանգչեցնի Իր սուրբ առաքյալների և սրբերի կողքին, որովհետև արդեն իսկ այդ է մեր խնդրանքը:

«Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ»: Ամբողջ մի իմաստություն, ամբողջ մի ճշմարտություն: Թերևս միայն այս մեկ նախադասության համար բազմաթիվ մեկնություններ են գրվել և շարունակվում են գրվել կամ վերաշարադրվել: Այսօր ինձ համար շատ մեծ ուրախություն և ցնծություն է հոգնոր՝ Ս. Պարարագ մատուցելու այս աստվածակառույց տաճարից ներս, որպեղ որ միշտ կա աստվածային օրհնությունը, Ամենասուրբ Երրորդության ներկայությունը և մեր սուրբ Հայրապետների աղոթքները: Ինձ համար մեծ ուրախություն է գրեմվել միաբանակից իմ եղբայրների կողքին, ճեմարանական մեր սաների կողքին, ինչպես նաև ձեր կողքին, և ձեզ հետ միասին աղոթելու: Քրիստոս ասում է. «Ուր որ երկու



կամ նրեք հոգի հավաքված են հանուն իմ, ևս այնպիսի եմ նրանց մեջ»։ Եկեղեցին արդեն իսկ մեր հավարն է, հավաքացյալների հավաքն է, ժողովն է։ Նկատարար, մեր միասնական աղոթքը կարող է ավելի գորավոր լինել, եթե ճշմարտապես մեր խորհուրդները և մեր աղոթքներն ուղղված են առ Աստված։

Աղոթում եմ Աստծուն բոլորիդ համար և խնդրում եմ ձեր աղոթքը նաև ինձ համար։ Ինչ-պես որ աղոթեք, խնդրեք Աստծուն բոլոր հոգևոր սպասավորների համար և հապկապես նրանց համար, ովքեր որ խնդրում են ձեզ աղոթել։ Այդ աղոթքն է, որ մեզ կապում է, մեզ բոլորիս միացնում է, այդ աղոթքն է, որ մեր նեղեցյալներին և մեզ դարձնում է մեկ։ Թող Աստված օրհնի բոլորիդ, գորացնի ձեր հավաքքը, որպեսզի ճշմարիտ ապաշխարության և խոստովանության մեջ լինեք միշտ, և կարողանանք մեղքից հեռու մնալով՝ մոլորենալ և մերձենալ ճշմարիտ Աստծուն, մոլորենալ և մերձենալ մարմնացած և մեր մեջ բնակվող Բանին։

*«Շնորհք, սէր Տառնե մկրդ Յիսուսի Բրիստոսի ևդիցի ընդ ձեզ ևս ընդ սաեհեհեւեաւս, ամեն»։*

# Տ. ՄԱԿԱՐ ԱՐԵՂԱ ՀԱԿՈՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(25 հուլիսի 2004 թ.)

«Զգոյշ լիբուք, մի արհամարհիցէք  
զմի ի փոքրկանցս յայսցանէ»:  
(Մատթ. ԺԸ 10)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Զգոյշ հղեք, որ այս փոքրիկներից մեկին չարհամարհեք»։ Այս բնաբանը վերցրել ենք այսօր Սուրբ Պատարագի ընթացքում ընթերցված Ավետարանից, որտեղ պատմվում է Կո-րուսյալ ոչխարի առակը։ Մի մարդ հարյուր ոչխար ուներ։ Կորցնելով մեկի՝ թողեց իննսու-նինը և գնաց այդ մեկի հետևից։ Եվ ո՞վ է այն մարդը, որ այդպես չէր վարվի, եթե իր հետ նմանաբան մի դեպք պատահեր։

Սիրելի հավատացյալներ, մեր հայրերի մեկնություններում այս առակը մեկնաբանվում է այսպես. Հովիվը Տերն է, իննսունինը ոչխարները՝ դրանք ինը դասերի հրեշտակներն են, իսկ մեկը՝ Ադամը, որ Տերը, գթալով նրան և նրա սերունդներին, եկավ փրկելու, անկյալ վի-ճակից բարձրացնելու։ Այս առակում փրկությանը զուգահեռ Փրկիչը շեշտը դնում է ողոր-մության, մարդասիրության մեծ և առաքինի գործերի վրա։

«Զգոյշ լիբուք, մի արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ».

Հիսուս երբեմն սպառնալիցով, երբեմն խրաբույով մեզ ասում է՝ մի արհամարհեք փոքրե-րին, և փոքր ասելով Քրիստոս նկարի չունենալով փոքրերին, այլ նրանց, ովքեր աղ-քալ էին, ովքեր արհամարհված էին մարդկանց կողմից, սակայն Աստծո մոտ նրանք ոչ թե անծանոթ էին, այլ՝ ճանաչված։ Դրա համար էլ Տերը ասում է՝ մի՛ արհամարհեք, այսինքն՝ մի՛ նախապրեք, մի՛ ծաղրաբանակի ենթարկեք և ողորմությունից մի՛ զրկեք նմաններին, ինչ-պես որ անում էին փարիսեցիներն ու մաքսավորները։

Սիրելի հավատացյալներ, առաքինության շատ տեսակներ կան, որ մեզ բարձրացնում են Աստծո մոտ և դարձնում արքայության ժառանգորդներ։ Սակայն մեզ Աստծո նման դարձնող ուրիշ առաքինություն չկա, բան ողորմությունը։ Սա նույն ինքը՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս հայրենից՝ ասելով՝ նմանվեք ձեր երկնավոր Հորը, ով Իր արեգակն ծագեց-նում է չարերի ու բարիների և անձրև բերում արդարների ու մեղավորների վրա։

Մի մեծահարուստ մարդ երեք շատ մեծ սիրելիներ ուներ, սակայն երեքից երկուսի հետ ալվիլի հաճախ էր խնջույք կազմակերպում և ուրախանում։ Մի օր հանկարծ եկավ թագա-վորը և կանչեց այդ մեծահարուստ մարդուն, որպեսզի դարի նրան, և նա ընկավ վախի, սարսափի մեջ և դիմեց իր սիրելիներից առաջինին, որպեսզի օգնի իրեն, սակայն առաջին սիրելին պատասխանեց նրան ու ասաց. «Ով մարդ Աստծո, ես քեզ շատ եմ հարգում և քո համար ամեն ինչ կանեմ, բայց այդ թագավորը գործ է, և ես ոչնչով չեմ կարող օգնել քեզ»։

Այս մարդը այնուհետև դիմեց իր երկրորդ սիրելիին՝ իրեն օգնելու համար, սակայն նա էլ պարտախանեց այսպես. «Ես թո սիրելիս եմ, և դու էլ իմ լավ բարեկամը, ցավոք, ես թո համար ոչինչ անել չեմ կարող. որովհետև այդ թագավորը շատ արդարադատ և հզոր է: Ես քեզ կարող եմ միայն մինչև իր պալատի դռան մոտ փանել, նրանից ես վախենում եմ և չեմ կարող նրա առջև բարեխոսել քեզ համար»:

Այս ամենից հետո նա դիմեց երրորդին: Երկմարևով գնաց նրա մոտ և օգնություն խնդրեց: Այս երրորդն ասաց. «Ես կգամ քեզ հետ պալատ և նրա հարկ լինի, անգամ իմ կյանքը վրանցի ենթարկելով՝ կբարեխոսեմ քեզ համար թագավորի առջև»:

Սիրելի հավաքացյալներ, մարդու առաջին սիրելին այս աշխարհն է իր ուրախությամբ և նյութեղենով: Երբ մարդը ավանդում է հոգին, այդ ամենը լքում են նրան: Երկրորդ սիրելին մենք ենք՝ հարազատները, որ նրա մահանալուց հետո ուղևցում ենք նրան մինչև զենգման, այսինքն՝ թագավորի պալատի դռների մոտ, իսկ թագավորը՝ Զրիստոսն է, որ դատարար է արդարորեն ողջերին և մահացածներին:

Երրորդ սիրելին մարդու կատարած ողորմությունն է, որ մարդուն դարձնում է Աստծո նման և դատաստանի ժամանակ պարգևակատ կանգնեցնում Զրիստոսի առջև: Ահա, այս ամենը իմանալով, չանտանանք խելագարների պես, այլ իմաստուն գործվենք մեր կյանքում և Աստծուց մեզ արված հարստությունը նրան վերադարձենք:

Աշխարհում չկա մի բան, որ մեզ համար ավելի օգտակար լինի, քան աստվածային երկյուղն ու ողորմածությունը. որովհետև դատաստանի օրը Տերը նայելու է ոչ թե մեր խոսքերին, այլ՝ գործերին. փայ մի կտող հաց և փոխարենը մեղքերի թողություն ստանալ, մի բաժակ ջուր փայ և աստվածային աղքատից ըմպել, զգեստ հագցնել և փոխարենն սրժանանալ առաջին լուսեղեն պարմուճանին:

Այուս առաքինությունները ճրագ են, իսկ ողորմությունը՝ ձևը, ուստի ով ձևը չունի, ինչ օգուտ նրան դատարկ ճրագից: Հիմար կույսերն էլ անմրացան և փեսայի զալստյան ժամանակ մնացին արտաքին խավարում: Այդպես էլ մենք, եթե դույզն-ինչ չունենք ողորմածության գիտակցությունը մեր անձներից ներս, դատաստանի օրը կմնանք հավիտենական խավարում: Ուրեմն, փութանք բարիք գործել մեր կարողությունների ներածին չափով, չանտեսենք աղքատին, անկյալիս հետևենք: Բարի սամարացին, գթալով, իր կարողությունների չափով օգնեց վիրավորին, մենք էլ ջանալք օգնել մեր դիմաց գործվող կարիքավորներին, որպեսզի ազատվենք չարիքից, որպեսզի մաքրվենք մեղքերից և ողորմածությունը մեզ համար դարձնենք ոչ թե արտաքին մի բան, ձեռքբերովի կամ ստիպողական պարգամ, այլ ներքոստ փոխող հոգևոր վիճակ և բարի առաքինություն:

*«Շնորհք, սէր, խաղաղություն և դիցի ընդ ձեզ և ընդ ամենեւսուսեդ, ամէն»:*



### 3. ՇՆՈՐՀՔ ԱՔԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ (1 օգոստոսի 2004 թ.)

«Ցանտուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Փառք ամենաբարձրյալ Աստծուն այս պահի և ապրումի արձանագրման համար, քանզի տկար ենք և Տիրոջով հզորացանք: Եվ ահա պատրիվ ունենք մեր տկար ձեռքերում ունենալու Տիրոջ Սուրբ Նշանն ու Սուրբ Ավետարանը՝ աղքատներին բարոգելու Աստծո Ավետարանը և հիվանդներին բժշկելու: Այդու, իմ որդիական խոնարհությունը, հավատարմությունն ու սերն եմ հայտնում ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Սրբազնագույն Կաթողիկոսին և Ծայրագույն Պատրիարքին Ամենայն Հայոց: Նորին Սրբությունն իր մականի ներքո մեզ ջամբեց հոգևոր կաթը, իսկ մենք՝ իր ձեռնաստնները, իբրև ճշմարիտ հոգեորականի տիպար ունեցանք իրեն: Նաև իմ որդիական ակնածանքն ու սերը ինձ ձեռնադրող Սրբազան Հորը՝ իմ հոգևոր ծնողին՝ Սյունյաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սրբախմ Եպիսկոպոս Մկրտչանին, որը պատճառ դարձավ ինձ և օծակից եղբայրներիս վրա Սուրբ Հոգու յոթնարփյան շնորհների առաքաբութի հեղման: Իմ սերն ու շնորհակալությունը Մայր Աթոռի ողջ միաբանությանը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական կազմին և լուսարարապետությանը՝ իրենց ազնիվ և հոգածու վերաբերմունքի համար:

Ինչպես ունկնդիր եղանք, օրվա ընթերցվածը բաղկացած էր երեք մասից, որոնցից առաջինը վերցված էր Եսայայ մարգարեության երկերից՝ գլխից, և իր մեջ ամփոփող գլխավոր միտքը հետևյալն էր. «Զի այգի Տնան զօրութեանց՝ փունն Լսրայելի է, եւ մարդն Յուդայ՝ նորափունսկ սիրելի, մնացի գի արասցէ իրաւունս, եւ արար անիրաւութիւն, եւ ոչ արդարութիւն՝ այլ աղաղակ» («Զորությունների Տիրոջ այգին Իսրայելի փունն է, Հուդայի երկրի մարդը՝ նրա սիրած դայսր որթափունսկը: Սպասեցի, որ եւ իրավունքը պահի, առաջ տանի, բայց եւ անիրավություն արեց, արդարության փոխարեն՝ ողբ ու աղաղակ») (Եսայի Ե 7):

Երկրորդ հատվածն ընտրված է Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված առաջին թղթից. «Եթէ ո՛չ գիտէք, գի մարմինք ձեր փաճար են Հոգւոյն որ է ի ձեզ, գոր ունիքն յԱստուծոյ. եւ չէք անձանց փեր, բանգի գնոց գնեցայք. փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր» («Զգիտեք, թե ձեր մարմինները փաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, և որն ստացել եք Աստծուց և դուք ձեր տերը չեք, բունգի մեծ գնով գնվեցիք: Փառավորեցեք Աստծուն ձեր մարմինների մեջ») (Ա Կորնթ Զ 19-20): Եվ երրորդ՝ Ավետարանական հեկոնյալ հատվածը. «Զիցէ՛ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն ի սկզբանէ՝ արու եւ էզ արար գնոսա եւ ասէ. վասն այսորիկ թողցէ այր գեալը եւ գմայր՝ եւ երթիցէ գեալ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի մարմին մի: Այա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին: Արդ գոր Աստուած գուգեաց՝ մարդ մի մեկնեացէ» («Դուք չե՛ք կարդացել, թե եւ, ով սկզբից ստեղծեց, արու և էզ արեց նրանց և ասաց, դրա համար փղամարդը պիտի թողնի հորը և մորը ու պիտի գնա իր

կնոջ և արևից, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն: Այս ուրեմն ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ (Աստված միացրեց, մարդը թող չբաժանի») (Մատթ. ԺԹ 4-6):

Առավասիկ, Սուրբ Գրքի այս երեք հարվածները մեր իմաստուն հայրերի կողմից համադրված և աղերսված են միմյանց: Երբ ընթերցում կամ ականջալուր ենք լինում վերոգրյալ սուրբգրային տեղիքների ամբողջությանը, ականայից հարց ենք տալիս մեզ՝ ի՞նչ առնչություն և կապ կարող են ունենալ միմյանց հետ աստվածաշնչյան այս տեղիքները, և ո՞րն է իմաստն ու նպատակը դրանց համարելով: Սակայն բանիցս ընթերցման և ուշադրության անհոման արդյունքում կարմիր թևի նման մեր մտքում ընդգծվում է այն հիմնարար գաղափարը, ինչն ինքնին կապող օղակն ու հոգևից պարզամեծ է՝ իրրև արդյունք այդ ընթերցվածների համադրման: Այդ բոլորի մաս կազմող առաջին հարվածում փոխաբերական առումով ներկայացվում է դարերի եղավայրում Իսրայելի՝ որպես մոդոկուրդ և Աստծո փոխհարաբերությունը: Աստված այստեղ հանդես է գալիս իրրև ջանք ու նախաձեռնությամբ միմյանց, որ այգում և դամ ծառեր, որոնք իր ըրպիներով էր ջրել, սպասված արդյունքը չեն տալիս, և Աստված այս պարագային, իբրև այգու տեր, պարտավորվում է արդար դատաստանի:

Երկրորդ մասը, ինչպես տեսանք, վերցված է աստվածախոս Պողոսի՝ Կորնթացիներին ուղղված առաջին թղթից, ուր առաքյալը հորդորում է՝ հեռու մնալ և խորշել անբարո կյանքից, փոխառնեն ապրել աստվածադիր պարվիրանների համաձայն: Հիմնական շեշտը այստեղ դրված է ամուսնական կյանքի երկարաժամկետության, հանձնառված ամուսնական պարտականությունների կարարման վրա: Չնայած որ բոլորի՝ իրեն նմանվելն առաքյալը շահ է համարում, այդուամենայնիվ գիտակցում է հարցի դժվար և ոչ ընդհանրաբար կիրառելի լինելը, այդ իսկ պարզառոտ միանշանակ պարտադիր չի համարում ամուրի մնալը: Աստվածախոս Պողոսը, որպես ընդգծված, ցայտուն և համընդհանուր ըմբռնողության ենթակա նյութ, ընտրել է ամուսնական կյանքն իրրև վառ օրինակ՝ դրա միջոցով փորձելով մեզ ցույց տալ երկկողմանի խոստումի, պարտականության և ուխտի գաղափարը:

Անբախտ, երրորդ և գլխավոր հարվածը մեջբերված Մատթեոսի Ավետարանից, ուր փառիսեցիները մուրհմում են Զրիստոսին և փորձելով հարցնում Նրան, թե իրավունք ունի՞ որն, մեկը արձակելու իր կնոջը: Եվ Հիսուս պատասխանում է Նրանց Մովսիսական կրոնի հիմքը հանդիսացող Թա՛մուդից բերված վկայությամբ, ուր ասված էր՝ Աստված սկզբից արու և էգ ստեղծեց մարդկանց, դրա համար փոխադրելով պարբերական թողնելի իր հորն ու մորը և միմյանց իր կնոջը, և երկուսը մի մարմին պիտի լինեն: Սակայն այս իրողության վրա չէ, որ պարբերական առնչություն և բնական, այլ սույն հարվածի շարունակությունն ու անբախտելի մասը կազմող և մյթի ամբողջությունը հանդիսացող մեկ ուրիշ հանգրվանի և նրանից բխող օրվա խորհուրդը իսկապարհ և նշանելի դարձնող հարվածի վրա, ուր ավետարանիչը շեշտադրումը կարարում է մարդու և իր նմանի միջև կայացրած ուխտի վրա, ինչն իր վառ դրսևորումն ստանում է երկրյալ բանաձևում մեջ՝ ուրեմն որն է մեկը թող չբաժանի նրանց, ում Աստված միացրեց:

Այսպիսով, չնայած որ ընթերցվածները միմյանց հետ շաղկապված են գանազան, գուցե մեզ համար ոչ ղյուրըմբռնելի և անհասանելի մտահանգումներով, այդուամենայնիվ մեր գլխավոր նպատակը դրանց մեկնելու իրար հետ խոստուն լինելու և օրվա պարզամեծ մի փոքրիկ մասի վերծանումն է՝ ի գվարճություն մեր հոգու և մյթի, ինչն ինքնին փնդերքում

Հրամանից առաջինն Աստուծո՞ւ փիեզեքքի Արարչի՞ և այդ արարչագործության պսակը  
ոսանդիսացող ապաղ էակի միջև եղած խոստումի, պայմանի, կրոնական իմաստով ուխտի  
զաղապիսին է։ Երկրորդը՝ մարդու և իր նմանի միջև եղած փոխհարաբերության, միմյանց  
հանդեպ դրսևորած վերաբերմունքի, սիրո, որդեգրած պարարականությունների կապա-  
լումն է։ Եվ ի վերջո, երրորդ նախապայմանը, որ ամենակարևորն ու հիմնականն է, իր մեջ  
ունի նաև նախորդ երկու դրսևյունների ամբողջությունը, անհատի՞ ինքն իր ներքին աշխարհի  
ենթա փոխհարաբերության, նյութի և հոգու երկվության հաղթահալումն ու դարերի  
հողովոյթումն առաջացած անջրպետի այդ բացի լրացումն է, այսինքն՝ անհատի խոսքի և  
գործի միջև եղած վիհի վերացումն է՝ իրար հակադիր բնեծների մեղմեցմամբ։

Մյուս կարևոր նախապայմանը՝ մարդու՝ իր նմանի նկատմամբ վերաբերմունքի ճիշտ դրսևորումն է. ինչպես որ Հովհաննես առաքյալն է ասում՝ աուր է խոսում այն մարդը, որ ասում է՝ թե Աստծուն սիրում է, բայց իր եղբորը չի սիրում: Եվ, իրապես, ինչպես կարող է մարդ սիրել Աստծուն, որին չի պեսել, և ալրել իր նմանին, որ նույն Աստծո պարկերով է ստեղծված: Եվ, վերջապես, ամենակարևոր դրույթը, որ այսօր պակասում է յուրաքանչյուրիս. ինքներս մեր անձի հետ հաշվության և խաղաղության հաստատություն է, որ է մեր իսկ արտաբերած խոսքերի և հոգելից ձգտումների իրականացումն ու կյանքի կոչելը:

Եվ թող «Շենորհք, սէր և անսխալական սրբաբարձ գոյություն եղիցի ընդ ձեզ և ընդ մահնեւանանայ, ամէն»:



# Տ. ՏԱՃԱՏ ԱՐԵՂԱ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 օգոստոսի 2004 թ.)

*«Եւ տեսնաւ Յիսուսի զհաւարս նոցա, ասէ  
ցանկամալոյծն. «Որդյակ, թողեալ լիցին թեզ  
մեղք քո»»:*

(Մարկ. Բ 5)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Եվ նա, տեսնելով նրանց հավաքքը, ասաց անդամալուծին. «Որդյակ, քո մեղքերը թեզ ներված են»:

Սիրելիներ, այսօրվա ընթերցումի մեջ ավելարարանական այս հապվածը Տիրավանդ մյուս խոսքերի և մյուս արտահայտությունների պես մեզ նորից ու նորից դնալի Քրիստոսով հավաքքի, հույսի և սիրո կոչ է անում, հորդորում է մեզ մնալ այն հավաքքի մեջ, որ ավանդվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կողմից: Աստուծո Միածին Որդին՝ Բանն Աստված, «ի ժամանակի իջեալ յարգանդն Աստուածածնի սրբոյ կուսին Մարիամու», մարմնացավ, մարդացավ, մտավ մարդկանց մեջ՝ մեզ պես ապրելու, մեր կյանքը վերափոխելու, վերստին եռողջելու համար: Եվ երեսուն տարիներ հետո, երբ Հովհաննես Մկրտչի կողմից մկրտվեց Հորդանան գետի մեջ, որպես սերմանող դուրս եկավ՝ իր երկնային վարդապետության սերմերը ցանելու մարդկանց սրտերի և հոգիների անդաստաններում: Եվ բացի իր բարոգություններից, մեր Տեր Հիսուս Քրիստոս բազում հրաշքներ գործեց՝ կաղերին քայլեցրեց, կույրերին տեսողություն պարգևեց, բացեց ականջները խուլների և բերանները համրերի և այսպես բժշկություններ ու հրաշքներ գործելով և բարոգություններով ապրեց:

Այսօրվա ավելարարանական հապվածի մեջ պարմվում է, թե երբ Հիսուս Կափառնայում եկավ մարդկանց հոգիներն ու մարմինները բժշկելու համար, մի տան մեջ նստած մի ջանի մարդիկ, տեսնելով այդ տան առջև խռնված բազմությանը և չկարողանալով դռնով ներս մտնել իրենց հիվանդին, որը մի անդամալուծ էր՝ պառկած մահճին, բարձրանում են տանիք և երդիկից մահճի վրա պառկած անդամալուծին իջեցնում են և բերում Քրիստոսի ուրբերի առջև: Եվ ահա Հիսուս, տեսնելով այս մարդկանց հավաքքը, ասաց անդամալուծին. «Որդյակ, քո մեղքերը թեզ ներված են»:

Այս խոսքերը, սակայն, գայրացրեցին և տարօրինակ թվացին, որովհետև ըստ Հին Ուխտի հեղինակների ընկալման և ըմբռնման, ո՛վ կարող էր ներս մարդկանց մեղքերը, եթե ոչ՝ միայն Աստված: Բայց ահա իրենց, տեսնելով իրենց առջև նստած Փրկչին, լսեցին նրա բերանից այն խոսքերը, թե՛ «Որդյակ, քո մեղքերը թեզ ներված են», ինչն էլ խորայնացիների համար հայեցողություն թվաց և նույնիսկ ըստ Հին Կտակարանի օրենքի այն մարդը, որ այսպիսի արտահայտություն պիտի աներ, արժանի էր, ենթակա էր քարկոծման: Եվ Հիսուս, ի-

[illegible]

Այսպես ասելով՝ Զրիստոս ցույց տվեց, որ ինքը՝ Նույն մարդու Որդին, իշխանություն ունի երկրի վրա մեր մեղքերը ներելու, և մարդկանց մեղքերը ներելով՝ Զրիստոս նրանց և՛ մարմնին, և՛ հոգուի ամոքություն է պարգևում: Հիսուս երբ Սուրբ Հոգին փչեց ամաբայաների վրա, նրանց ասաց. «Այժմ Սուրբ Հոգին, ում որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում, և ում որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում» (հմմտ. Մատթ. ԺԶ 19):

Ուրեմն աստվածույին այն իշխանությունը, որ, ըստ Իսրայելի հին ժողովրդի, պարկա-  
նում էր միայն Աստվածուն, Տիսուս Զրիստոս առաքյալների վրա Սուրբ Հոգու փչմամբ այդ իշ-  
խանությունը և իրավունքը հանձնում է առաքյալներին՝ նույն մարդկանց որդիներին, որ-  
պեսզի նրանք էլ կարողանան Իր պես մարդկանց մեղքերը ներելով՝ նրանց հոգիներին և  
մարմիններին առողջություն պարգևել:

Այս ամենն ընկալելու համար գորավոր հավաքք է պետք, ասում են մարգարեները: Եսայի մարգարեն, շեփեղծով եավաքքի կարևորությունը, դիմում է մեզ՝ ասելով. «Եթե չհավաքք, չպիտի հասկանաք աստվածային խոսքերը, եթե չհավաքք, չպիտի հասկանաք աստվածային պարզամենքն ու պարզիրանները»: Ուրեմն, այս անդամալուծին բերող մարդիկ հավաքքով, հույսով և սիրով մտքեցան Քրիստոսին, չկարողանալով հասկանալ Նրա ամբողջական իսկությունը՝ հավաքքով մտքեցան Նրան, և նրանց այս հավաքքն էր, որ բուժեց անդամալուծին:

Ըստ մեր հայրերի՝ հավատքն այլ բան չէ, քան ճանաչումն Աստուծո: Ասում են, թե հավատքով միայն կարող ենք Աստված ճանաչել, և ըստ Պողոս առաքյալի՝ հավատքը հիմքն է մյուս երկու առաքինությունների՝ հույսի և սիրո: Արդ, մնում են մեզ այս երեքը, ասում է Պողոս առաքյալը, հավատք, հույս և սեր (Ա Կորնթ. ԺԳ 13): Հավատքն ամեն ինչի հիմքն է, քանի որ հավատքով միայն կարող ենք ճանաչել Աստծուն, հույսով կարող ենք մոտենալ Աստծուն և սիրով, վերջապես, կառող ենք ընկկվել Աստծո մեջ:

Ուրեմն, թող որ այսօր Ջրիսպոսի աստվածախոս այս պատգամը, թե «Մարդու Որդին հշխանություն տւնի նաև երկրի վրա մեղքերը ներելու», այս գիտակցությամբ մոտենանք, մեր անդամալույծ հոգիներն այսօր մեր մարմնի մահիճների մեջ դրած՝ զանք և ծուկնի իջնենք Սուրբ Խորանի առջև, խոստովանենք և մոտենանք Տիրոջ սուրբ և պատվական մարմնին և աղյան այն հավատքով, որ միայն Տերը կարող է մեր մեղքերը ներելով՝ մեր հոգիներին և մարմիններին կենդանություն պարգևել: Թող Աստծո սերը, շնորհը և ողորմությունը միշտ մեզ բոլորիս ուղեկից լինեն և մեզ միշտ փրկեն մարմնի և հոգու փառքեր վրանգներից՝ այժմ և հավիտյան հավիտենից, ամեն:

# Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՇՈՂԱԿԱԹ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ

## Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 օգոստոսի 2004 թ.)

*«Խնդրա յոյժ դուստր լուսոյ, մայր սուրբ կաթողիկէ, զարդարեալ պննեա հարսն պանծալի, երկնանման լուսանեմ խորան, զի Օծեալն Աստուած՝ Էնն ի յէկն անծախապէս ի քեզ միշտ պատարացի՝ Նոր ի հաշտութիւն, մեզ ի քառութիւն, բաշխէ զմարմին եւ զարիւն Իր սուրբ տրօշնութեանն»:*

(Սիմեոն Էրեւանցի)

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգույն Սրբոյ. ամեն»:

Ուրախակից եւ խնդակից եղիք լուսո դուստր, մայր սուրբ կաթողիկէ, սրբություն սրբոց Էջմիածին՝ զարդարված թանկագին քարերով, պննվիր պանծալի հարս եւ երկնանման լուսանեմ խորան, որովհետքն քո հիմնարկությունից մինչեւ այսօր երբեք չդադարեց քո մեջ պապարագով եւ միշտ անծախապէս բաշխվել Բանն Օծյալ՝ Քրիստոս Աստված, որպէսզի միշտ Նոր Աստուծո հետ ապահովվի մեր հաշտությունը՝ մեր իսկ մեղքերի քավության եւ անարար տնօրէնության իրագործումով:

Սիրելիներ, այսօր մեր նախնայաց օրինակով պանծացնում ենք ժամանակներ առաջ ենեց այս վայրում Տիրոջ լուսափառ շողի կաթման հայոց հոգւո ծնող Մայր Աթոռ Սրբություն Սրբոց Էջմիածնի տունը: Այս երկրորդ տունն է հրաշագեղ Սրբություն Սրբոցի: Նախ, Տիրոջ հրաշափառ եարությունից հետո վաթսունհինգերորդ օրը տոնախմբեցինք այս տնօրէնահասարար Սուրբ Կաթողիկէի կառուցման եւ նստակարգաց տունը եւ այսօր՝ Աստվածամոր վերափոխման նստակարգիքին, ի մի խմբված հիշատակում ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ երկարամյա փորձության բովում բազմաթիւսակ չարչարանքներով մաքրվելով եւ ելելով Նայոց աշխարհում երկրորդ անգամ Փրկչի աստվածային լուսը տարածելու ընթացքի մի խորախորհուրդ օրվա հիշատակը, ըստ որի մեր հավարքի հայրը, տեսնելով Աստուծո Միածին Որդուն, ով իջնելով բախեց սանդարամետը եւ ցույց տվեց այն վայրը, ուր քրիստոնեական առաջին տաճարը պետք է կառուցվեր, եւ մանավանդ այն տեղն, ուր քահանայապետության աթոռը պետք է հաստատվեր:

Սիրելիներ, այսօր կցանկանայի, որ խորհիներ այս տեսիլքի խորհրդի մասին, թե հայրնված ճշմարտությունն ինչ է արդոյը մեզ ուսուցանում: Աստուծո շողի կաթման հայրությունը Քրիստոսի համարածումից հետո նդավ այն ժողովրդին, որը Պատրոսի անսասանությամբ իր խոսքն իրականացրեց՝ եսկարքի անխախտություն ցուցաբերելով անգամ



[illegible]

հայ մարդը:  
Ջրիսպոտապետ առաքյալները եկան Հայաստան՝ Աստուծոն թարգմանելու և ճանաչելի դարձնելու մեր ժողովրդին, սակայն Սուրբ Էջմիածնի հիմնադրությամբ ժողովուրդը միավորվեց, և «եկեղեցիս մի անձն եղեւ»: Անավասիկ որքան մեծ և խորն է սրբություն սրբոց Էջմիածնի խորհուրդը հայի համար թե՛ հայրենիքի սահմաններում և թե՛ նրա սահմաններից դուրս կարողա՞ծ սրտով փարաջրվյալ հայոց հոգիներում: Սակայն այսօր ի՞նչ եղավ արդյոք, ի՞նչ եղավ այսօր, միևնույն ժամանակ հայի հավաքեն ու նվիրումը Էջմիածնի և Հայ Եկեղեցու հանդեպ, ո՞ր կորան բազմախոս պապության էջերը: Մենք՝ հայերս, մեր հին Եկեղեցին, մեր հին հավաքը ո՞ր կորան, արդյոք ի՞նչ եղավ, փկարացա՞րկ հայի հավաքը, թուլացա՞րկ հայի նվիրումը. ո՞չ երբեք:

Քրիստոսի էջքի այս խորախորհուրդ պտնին ձեր ուշադրությունը ցանկանում եմ ուղղել երեք կարևոր կետերի վրա:

Երկրորդ՝ Սուրբ Էջիածինը նորացած Նույան փապանն է, որ աշխարհային փարաբե-  
նությոյ ալեկոծութիւններէից մեզ յուրաքանչյուրիս ի մի խմբելով իր թնեքի և հովանոյ ներքո՝  
ղեկի փրկութեան նավահանգիստ է առաջնորդում մեզ երկնային մանանայի բաշխումով  
այս սուրբ սեղանից, ուր Քրիստոս Ինքն է բազմած և կոչ է անում յուրաքանչյուրիս. «Եկայք  
առ Իս» (հմմտ. Մատթ. ԺԱ 29):

Երրորդ՝ Սուրբ Էջմիածնով վերահասարակաց Հայրապետական Մայր Աթոն իր Հայրապետով, ում հաղթական գավազանը միշտ ամացնորդող է ճշմարտության շափիղներով՝ «...ի փրկութիւն անձանց մերոց»:

Մեր աղոթքն է և մեր բարենադթանքը, որ այս սրբություն սրբոցի երկրորդ հրաշապետի Արտակնի միապետ աղոթենք առ Աստված, որպեսզի Տերը անպակաս անի Իր շնորհներն Էջմիածնի միջոցով ազգիս յուրաքանչյուր գավակի, մշտապես հաղթող և գորացած պահի Հայոց Հայրապետությունն իր Հայրապետով և Հայրապետի հաղթանակած գավազանով ինչպես ռոտորմություն անի յուրաքանչյուրիս, որ այսօր հավաքվել ենք այս Սուրբ Պատարագին, որպեսզի միջնորդենք և վերականգնենք Լուսավորչի Կրթիչը մեր կյանքում, կենդանություն դարձնենք և, Տիրոջ շնորհների հորդումով առավել գորացած, առավել կենդանացած և իմաստավորված, բայցևեք Նրա ճանապարհով, որպեսզի արժանանանք Տիրոջ շնորհքին, սիրուն և խաղաղությանը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

**Տ. ՆԱՎԱԾԱՐԴ ԵՊԻՄԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՅՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ  
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**  
(15 օգոստոսի 2004 թ.)

*«Օրինակ էս դու ի կոսույս».*

*Բերկրեալ Տիրամայր եւ Կոյս...»:*

(Շարական)

Սիրելի՛ հավաքացյալներ, բերկրյալ Տիրամոր հանդեպ փածած անսահման սիրով հավաքվել ենք այս Սուրբ Խորանի առջև՝ նշելու Աստվածածնի փոքր, որն ամբողջանում է մեր եկեղեցու հավաքի հոր կողմից հաստատված խաղողօրհներով: Լուսավորչաշունչ այս Տաճարում Սուրբ Հաղորդություն ընդունելով՝ մեր մեջ ընդունում ենք Տիրոջ մարմինն ու արյունը: Վերերկրային, աննյութեղեն ինքնագոյը գոյացալ՝ մարմնանալով մայրերի մայր Սուրբ Աստվածամոր որովայնում:

**Սուրբ Տիրամայր, Սուրբ Մարիամ.**

Մեր աղոթածայն մրմունջների անփոփոխ ունկնդիր, մեր երկնառաջ հայցերի սպասավոր: Բերկրյալ կույս, որ հավիտենական միջնորդն է երկնի ու երկրի, մեր և Իր Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջև:

Աստվածամոր պաշտամունք ունեցող մեր ժողովուրդը Մարիամ Աստվածածնին մարմնավորել է սրբամոտ երգերում, շարականերգության ու ավանդագրույցների մեջ, օրհնության խոսքերում: Մենք Զորավոր Աստվածածին, Կարմրավոր, Ծիրանավոր, Սպիտակավոր Աստվածածին և այլ անուններով սրբաբերդիներ ենք հիմնել՝ Սուրբ Կույսին մեծարելու ու երկրպագելու համար: Ս. Աստվածածին եկեղեցիները հայոց մեջ թվով ամենաշատն են:

Մեր ժողովուրդը սրբառաջ պաշտություններ է հյուսել Տիրամոր գեղեցկության, մաքրության, վեհության ու մայրության մասին: Աստվածամոր նվիրական հիշատակը մշտանորոգ պահելու համար մեր դաստիարակներն Մարիամ, Իսկուհի, Մաքրուհի, Տիրուհի ենք կոչում ակնկալելով Տիրամոր և նրա պահապան հրեշտակների հովանին մեր դուստրերի գլխավերևում: Յուրաքանչյուր ավանդական հայ ընդանիքում անպայման հարազատ մի անկյուն կա, որտեղ գեղեցկված է գեղաթով աչոք մայրը՝ մանկան հետ: Այդ սրբապալկերի առջև ներամփոփվելով անձանձիր աղոթքներով՝ մենք սրբամոտ գրուցում ենք Տիրամոր հետ:

Սուրբ Մարիամը ներշնչանքի անսպառ աղբյուր է մեր ժողովուրդի և նրա սրբազարար գավակների համար: Նրա կերպարը սիրելի է արվեստագետներին և արտահայտվում է արվեստի գրեթե բոլոր ճյուղերում: Նա մեր սրբազարար մրցի խթանիչն է: Մարեմապաշտությունը մեզանում դարձել է մայրապաշտություն: Սուրբ Մարիամ, մայրություն, մարեմություն՝ խորհուրդ է՝ շաղախված մեր նվիրական զգացմունքներին, որը հայոց մեջ



վերածվել է լուրովի մշակույթի: Դա սոսկ սեր չէ անձին՝ ծնող մոր հանդեպ, այլ գեղագիտական հարակա մղիչ ուժ է:

Սուրբ Կույսը Հայ Եկեղեցու սրբերի սուրբն է, այն ընտրյալ կինը, որն իր վեհությամբ, առաքինությամբ ու մաքրությամբ արժանացավ կրելու այն սուրբ Պրուդը, որ Աստված առաքել ներկր՝ որպես համայն մարդկության Փրկիչ և հաղթան կյանքի աղբյուր:

Աստված մարդեղության անոթ Տիրամայրը սրբերից ու հրեշտակներից բարձր է դասվում: Մենք նրան անվանում ենք սրբության խորան և երկնքի դուռ, Աստված Էջը և խաղաղության միջնորդ, կենդանության բաշխիչ ու համապայծառ ծաղիկ, երկնային տաճար, հաստատություն երկնի և երկրի: Աստված երկրի վրա լուսավորեց շողոքեղ կույսին, աստվածության հուրը տվեց նրան ու մարդացավ նրանում որպես Հիսուս Մանուկ: Տիրամայրը, որպես մի երդ անկեզ մոռենի, կրեց աստվածային հուրը, կրեց իր Միածին Ռդդու համար սահմանված տառապանքները և, ինչպես Սիմեոն ծերունին է ասում, ընդունեց իր սրտի միջով անցնող սուրբ: Նա կապալայ մոր տիպար է, որդեսեր, նաև որդուն հասցված տառապանքն անմոռն է կրող: Այդ նվիրումով, կենսատուի այդ օրինակով է ձգտում ապրել յուրաքանչյուր հայ մայր: Նա փոխանցում է մեզ ընտանիքի, օջախի պահպանման ոգին՝ մշտանորդ ու արդիական:

Արդեն շուրջ 2000 տարի վերապատմվում է Ամենասրբունի կույսի Վերափոխման հետ կապված սրբազան ավանդությունը: Մենք ևս այսօր նորոգենք այն ու շաղախենք մեր հավատքով ու սիրով:

Հիսուս Քրիստոսի խաչելությունից շուրջ 15 տարի անց ավարտվում է Տիրամոր երկրային կյանքը: Նրան ամփոփում են Գեթսեմանիում, որտեղ երեք օր անընդմեջ եկում են հրեշտակների օրհնության և փառաբանության մեղեդիների հնչյունները: Բարդուղիմեոս առաքյալը երեսաղն է գալիս ուշացումով և ներկա չի լինում կույսի հուղարկավորությանը: Վերջին հրաժեշտը տալու համար նրա խնդրանքով բացվում է սրբուհու գերեզմանը: Երբ բացում են Տիրամոր գերեզմանը, ականապես են լինում հրաշքի, Կույսի մարմինն այնպես չեն գտնում: Հիսուս, իր խոստումի համաձայն, վերափոխել էր իր մորը և, որպես երկնային արքայության ընտրյալ, փոխադրել երկինք:

Այս ավանդությունն է հիմքն այսօրվա տոնակապալության՝ Վերափոխման տոնի:

Սիրելի՛ հայորդիներ, խաղողօրհներ է այսօր, օրհնվող խաղողն այս իր կենսատու ավիշն առնում է հայ շինականի բազկի ուժից ու աշխատանքի բերկրանքից: Այժմ պիտի ճշմունքն այն և նրա կենսատու հյուրը խառնենք հին գինու: Գինի, որ Տերը բաղարը հացի հետ տվեց առաքյալներին՝ որպես իր հետ հաղորդակցության խորհուրդ, որ կենսատու ներգործությամբ վերափոխում է մեր կյանքը:

«Ես ևս որթն ճշմարիտ, եւ Հայր իմ մշակ է» (Հովհ. ԺԵ 1),- ասում է Հիսուս: Այսօր դարձյալ հնչում է ճշմարիտ որթատունկի ձայնը. «Եկայք առ իս...» (Մատթ. ԺԱ 29): Միաբանությամբ, միակամ սիրով ելնենք Տիրոջ ընդառաջ, բանգի նրանք, ովքեր չեն անսա Տիրոջ ձայնին, պիտի էլովն ու մի կողմ նետվեն:

Օրհնում ենք այս խաղողը, որպեսզի ամենքս ճաշակենք և դառնանք Քրիստոսի նվիրյալ հավատարմորեն: Եկե՛ք ճաշակենք օրհնված խաղողի կենսատու ոգևորագիտությունը և նորոգենք մեր մեջ Քրիստոսով հաստատված Նոր Ուխտը:

Միջոցներ, Աստված երկու Էջը ունի. Բանի մարմնացումը Սուրբ Մարիամի որովայնում ծնունդ տվեց մարդկության Փրկչին, և մարդկության Փրկչի Էջը սրբազնասուրբ այս տեղում ծնունդ տվեց հայ ինքնության նորովի կերպմանը, ոսկեդարյան մշակույթի արարմանը և քրիստոնեական քաղաքակրթության հաստատմանը: Փրկչի Էջքով այսօրեղ հաստատվեց «լուսն աղօթից ամենայն հաւարացելոց եւ Աթոռ քահանայապետութեան»: Այս Աթոռը համափութեւ պահեց ազգը հայկազյան և օրհնեց նրա առաքելությունը հայրապետների օրհնալ սուրբ աջով: Աստվածակառույց այս վայրից են բխում Աստուծո շնորհների պատվիրանները, որով մենք մեկ ազգ ու մեկ մշակույթ ենք՝ մեկ Եկեղեցիով՝ անխառն, անշփոթ և միասկամ:

Այն ազգը, որ մշակույթ չունի, ազգ չէ: Հորհրդանշական է, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագիրը սկիզբ է առնում հայկապետ այս սրբասուրբ վայրից՝ Մայր Տաճարից: Սուրբ Մեսրոպն այսօրեղ վառեց մշակույթի արև-ջահը հայոց մթին երկնակամարում և ասաց, «Եղիցի լոյս»: Եվ «Եղեւ լոյս»: 1700 տարիներ շարունակ հայոց ազգը Ս. Մարիամի լոյսն ամուր բռնած՝ սերնդեսերունդ հասցրեց մինչև մեր օրերը:

Այսօր, ներկա և գալիք օրերին հանդիման, ամենախայ եայլ պարգումում է մեզ բանալ մեր հոգու աջքերը և ներթափանցել ոսկեդարյա ժամանակության մեջ և, վերափոխվելով, այն դարձնել կենդանի առաջնորդող ուժ և ուղեցույց:

Ս. Աստվածամայրը թող պարգևի յուրաքանչյուրիս նորանոր անսպառ ներշնչանքներ, կորով և եռանդ:

# Տ. ԳԱՐՐԻԵԼ ԱՐԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(22 օգոստոսի 2004 թ.)

*«Առեք կերևք, ույս է մարմին իմ,  
որ յաղագս ձեր և բազմազ բաշխի՝ ի  
քաւութիւն և ի թողութիւն մեղաց»:*

(Խորհրդարկեր)

«Յանուն Հօր և Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Այոքբի, հոգևոր խորունկ ապրումի պահ է համակել մեզ: Փառք և գոհություն ենք ընծայում բարձրալի Աստծուն, որ մեզ վերստին շնորհեց երջանիկ պարսկությունը՝ Ս. Պատարագ մատուցելու Զրիստոսանէջ սրբավայրում: Ուսումնառության մեկնած երկարապիս բացակայությունից հետո վերադարձել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, և այս պահին մեր միաբան եղբայրների առաջ մեր ուխտն ենք վերահաստատում համայն հայության ուխտավայրում:

Մարդկության պատմությունը ճշմարտության որոնումի ճանապարհ է, և այդ ճանապարհին անցնելու համար՝ մարդը բազում դժվարությունների և փորձությունների է դիմագրավում: Եթե ըննության առնենք անհատի կյանքը, կրեսնենք, որ ամեն մի անձ ձգվում է բացարձակ ինքնության հաստատմանը, և ահա այդ ինքնությունը կերպելու համար հոգևոր խոսքը մարդու սրտին հասցնում է ջրիստոսանական բարձր ճշմարտություններ, և այդ ճշմարտություններն են, որ անհատի մեջ ցանդում են քարոյական սերմեր, և եթե պահես այդ պարզամտները և կյանքի կոչես դրանք, ապա Ավետարանում պատմվող Մերմնացանի առակի նման պետք է սերմերն արձակի և պղծարների հավաքագրյալ մարդկանց հոգիներում:

Ճշմարտությանը հասնելու համար նախ պետք է հավատալ, քանի որ հավատքը ամենից առաջ Աստծո նախախնամության խորունկ համոզումն ու վստահությունն է նրա հայրական սիրուն, ինչպես սահմանում է Պողոս առաքյալը: Հավատք, որ փոկուն ու անսասան է: պահում անհատին՝ քաջությամբ ապրելու Զրիստոսապատգամ կյանքը՝ ճշմարտության հողի վրա շաղախված, քանզի Աստվածորդին ծայնում է մարդկությանը, «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Հովհ. ԺՂ 6): Ահա այս նրբ բառերով Զրիստոս մարդկությանն ավելում է կյանքն իմաստությամբ ապրելու խորհուրդը, իսկ Աստվածաշունչը գալիս է մեր հոգիներում կառուցելու ճշմարտության այն փաճարը, որի մեջ բնակվում է բարին, հաճելին և կատարյալը:

Ի սկզբանե Աստված մարդուն հաստ դարձրեց ճշմարտությանը: Այդ ճշմարտության ճաշակումը՝ Աստծո պատվիրանների գործադրումն է, սակայն մարդն ուրացավ այդ ճշմարտությունը, և արդյունքը՝ խավարի ճանապարհն էր, որ առաջնորդեց նրան իր անհնազանդության պարճառով: Աստված ճշմարտության իր ուխտը հաստատեց մարդու հետ՝ ասե-



յով. «Պիտի սիրես քո Տեղ Աստվածն քո ամբողջ սրտով. քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մարմնով» (Մատթ. ԻԲ 37), և մնականից էլ պահանջում է, որ մենք էլ մեր ուխտը ամրապնդենք Աստծու հետ՝ ճշմարտությանը հասնող աստիճանով համար: Աստված մեկ անգամ հաստատեց ճշմարտությունը և որպես արարչության Վայր մշտապես Իր հայրական կոչով դիմում է մարդկությանն՝ ասելով. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բռնաւորք. եւ ես հանգուցից գծեմ» (Մատթ. ԺԱ 29):


Նախապայմանների, մարգարեների և ընտրյալ մարդկանց միջոցով Աստված մարդկությանը նախապայտարաստում է այդ ճշմարտությունն ամբողջությամբ ընդունելու և ապրելու: Նա որպես ողորմած և զթափիր իր ձեռքն է պարգում մարդկանց՝ առաջնորդելու այն ճանապարհով, որ մարդկությանը զարդարում է խմաստությամբ և ճշմարտությամբ: Իրեն հավապարհով, որ մարդկությանը զարդարում է խմաստությամբ և ճշմարտությամբ: Իրեն հավապարհով մարդուն առաջնորդելով քաջաբանում է աստվածային շնորհները՝ վկայելու արդարության ճշմարտության մասին: Գործողություն, որ գալիս է մարդու մեջ սերմանելու աստվածայինը. կառուցելու արարչության փառարար, որ մշտապես օգնում է գործացնում է մարդուն՝ ճանաչելու և ընդունելու խաղաղությունը, զարդարելու իր ապրած կյանքը Քրիստոսահասարակ շնորհներով:

Տիեզերական ամբողջությամբ բացարձակ ճշմարտության նախապայտարաստումն է, քանզի Աստված այնքան է սիրում իր ստեղծածը, որ ճշմարտության մարմնացումով է ցանկանում վերագրել կորածին և ընկածին: Քրիստոսի մարդեղացմամբ խաղաղությունն ու ճշմարտությունը բնականություն հաստատեցին մարդկանց հոգիներում. որովհետև ճշմարտության նկարմամբ ունեցած հավատով ու սիրով է, որ մարդ ժառանգելու է հավիտենական կյանքը և երջանկությունը: Գործողության հաստատումն էր՝ երկրի վրա Քրիստոսի մարդեղացումը, քանզի երկինքը հրեշտակների բերանով եղանակում էր. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն...» (Ղուկ. Բ 14) երկնային ավիտիսը: Ուրեմն ճշմարտության աղբյուրն իր հորդառաք ջրերով լվանում է մարդկանց հին մեղքը՝ խավարը. փոխարենը նրանց զարդարելով աստվածային լույսով՝ տալով մարդկությանն իր պարգամն՝ ասելով. «Վերցրու խաչդ և արի իմ երկնից» (Մարկ. Ժ 21): Ներկայացրեց, կյանքի ճշմարտությունն աստվածային խաչն է, խաչի ճանապարհը, որ առաջնորդում է մարդուն ճշմարիտ ժառանգորդը դառնալու հավիտենական փրկության:

Աստվածորդին Իր կյանքով արդարություն և ճշմարտություն սերմանեց մարդկանց հոգիներում սիրելու և այդ սիրով ապրելու բրիստոսական ճշմարիտ վարդապետությունը: Գործողությունը Աստծու պարզապարզության կատարումն է, երկնքի և երկրի Արարչի կամքի իրագործումն է, քանի որ Աստված Իր Միածին Որդու գոհաբերությամբ և մարմնի ճաշակումով մարդկությանն առաջնորդում է տեսնելու և ապրելու խոստացված հավիտենական փրկությունը, որ Քրիստոսի մարմնի ճաշակումն է, և որը մեզ տանում է խաչի ճանապարհով՝ լուսավորելու մեր հոգիները խաղաղությամբ և ճշմարտությամբ:

Մաղթանքս է, որ Աստված Իր ուժն ու գործությունը պարզեցի մեզ՝ ապրելու այն ճշմարտությունը, որ ուրախության և ցնծության գրավականն է:

Թող Աստված Իր սիրով և ճշմարտության լույսով զարդարի մեր հոգիները՝ լինելու բարի մշակներ, լինելու նվիրյալ սերմնացաններ, որպեսզի կարողանանք մեր կյանքով վկայել ճշմարտության մասին այժմ և հավիտյանս. ամեն:



ԳԼԽԱՅԻՆ ՏԵՍԻՍԻԱՆ





ՀԱՎԵՐԺԻ ՇԱՆՊՊԱՐԴԻՆ  
(Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 1991 թ.)



# ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՄՇՏԱՊԱՅՑԱՌ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

## ՆԱ ԻՐ ԳՈՅՈՒԹՅԱՄԲ ՍՐԲԱՅՆՈՒՄ ԷՐ ՄԹՆՈՒՈՐՏԸ (ՆՈՒՇԱՊԱՏՈՒՄ)

Իմ «Երգ երգոց» բանաստեղծությունը սկսվում է «Ինձ շատ բան տվեց բախտը աշխարհում» տողով, և այդ «շատ բանը» միայն Հայաստան երկրի դուստրն ու բանաստեղծը լինելու հպարտությունը չէ, ժողովրդի սերն ու մեծարանքը վայելելու հոգեհորոգ լիացումը չէ, այլ նաև ժամանակի Հայ մեծերի հետ ծանոթարեցեալ լինելը: Իսկ այդ մեծերը շատ էին՝ Ավետիք Իսահակյան և Մարտիրոս Սարյան, Արամ Խաչատրյան և Սուրեն Գոչարյան, Վիկտոր Համբարձումյան և Հովսեփ Օրբելի, Հովհաննես Բաղրամյան, Գառգու, Վիլյամ Սարոյան, Կոստան



Ջարյան, Գրիգոր Գուրդադյան, Եղրաս Հասրաթյան, Սերգեյ Մերգելյան, Արեւ Աղանբեկյան, - ո՞ր մեկն ասես ... Բայց կա մեկը, որ առանձնանում է այս լուսարձակ պատկերասրահում, ինչպես Թորոս Ռոպինի ձեռքով մանրանկարված սրբապատկերը կառանձնանար շրջակա դիմանկարների մեջ: Դա Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինն է, որը բոլորովին նոր երանգ, նոր դուլն է բերում ոչ միայն իմ, այլև ողջ Հայաստանի, մեր ողջ ժողովրդի կյանքում:

1945 թվականն էր. ես հրավիրված էի Ավետիք Իսահակյանի տուն: Երբ Հյուրասենյակի դուռը բացեցի՝ մնացի շփոթված-կանգնած: Չորս կողմը նստած էին

\* Տպագրվում է հատվածաբար: Ամբողջական հուշադրությունը շուտով կհրատարակվի Մայր Աթոռում:

46 Ը-Ը  
 ան սքեմավոր այրեր՝ սե կնգուղով երիզված պատկառազդու դեմքերով, եկած աշ-  
 խարհի տարբեր ծայրերից՝ Չորեքյան Կաթողիկոսի հրավերով։ Շփոթմունքս ա-  
 վելի խորացավ, երբ Հնգվատանի թեմի առաջնորդը Հայտնեց, թե Կալկաթայի  
 Մարդասիրաց վարժարանի սաները նամակ և մի Հնդկական ոսկեհյուս շալ են ու-  
 ղարկել Սիլվա Կապուտիկյանին և խնդրել Հանձնել բանաստեղծուհուն։ Ես շնոր-  
 հակալությամբ վերցրեցի նամակն ու նվերը՝ ներկաների ջերմ հավանության ու  
 Հակալությամբ շնորհակալությամբ։ Շնորհավորողների մեջ էր Ռուսիահայ թե-  
 մի պատվիրակության ղեկավար Վազգեն վարդապետ Պալճյանը, որը առանձնա-  
 խանող առիթնող արտաքինով։

Այդ օրը ինձ համար նշանավորվեց անզուգական այդ նամակով, որի տակ կա-  
րին 48 սաների դեռ դողդոջ ձեռքերով թղթին դրոշմված ստորագրություները և  
որը «խոսք իմ որդու» բանաստեղծության՝ Սփյուռքից եկող առաջին տպավորիչ  
արձագանքն էր։ Այդ օրը նշանավորվեց նաև ծանոթությունս այն անձնավորու-  
թյան հետ, որը հետագայում պետք է դառնար Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մեր  
Կաթողիկոսը։

Ես պատահաբար չչեչտադերեցի «մեր» դերանունը: Մինչ այդ էլ, մինչև 1955 թվականը, խորհրդային շրջանի էջմիածինը ունեցել էր արժանավոր գահակալներ, մեկը՝ դժվար, մյուսը՝ ողբերգական, երբորդը քիչ թե շատ բնականոն ճակատագրով: Բայց ժամանակն ու իրադրությունը նրանց հեռու էին պահել մեզնից ու մեզ էլ՝ նրանցից: Երկրորդ աշխարհամարտը հեղաքեկում բերեց մեր մտածողության, պատմության և նրա շարժիչ ուժերի իմաստավորման ու գնահատականների մեջ: Բացվեցին ճանապարհները ոչ միայն դեպի անցյալ, ոչ միայն ներկանից մինչև Սփյուռք, այլև երևանից դեպի Սուրբ Էջմիածին, որ մինչ այդ ավելի շատ պատմական հուշարժան էր մեզ համար, հայ ճարտարապետության գլուխգործոց, քան հայ հավատի տուն: 1955 թվականից, Վազգեն Կաթողիկոսի գահակալության օրից հետո, էջմիածինը մեզ համար դարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, մտավ մեր կյանքի մեջ որպես ամենօրյա ներկայություն, մեր անպակաս տագնապների և անհապաղ լուծում պահանջող հիմնախնդիրների մասնակից, չադախվեց մեր բարդ ու բազմաճանգույց առօրյային: Եվ այս բոլոր վերափոխությունների մեջ մեծադույն դեր ունեցրեցին հովհապետը, նրա՝ ի բնե տրված շնորհները՝ իրադրությունը հասկանալու, երևույթների խորքը թափանցելու և իրադրությունը համապատասխան եզրահանգումներ գտնելու իմաստությունը: Անհրաժեշտ է չեչտել, որ նորընտիր կաթողիկոսի այս շնորհներին օգնության հկավ նաև ժամանակը, տարեցտարի ընդլայնվող ազգային զարթոնքի և այդ զարթոնքը՝ ազգամերձ գաղափարախոսության պայմաններում իսկ, ներքուստ խթանող դեկավարների ժամանակը...

Այդ երկակի վիճակն ուներ նշված տարրիներին երկրի մշակութային կյանքում որոշակի դեր խաղացող մարդկանցից մեկը՝ Հրաչյա Դրիգորյանը։ Դժվար է ասել՝ Զավախքում ծնված, բայց Թիֆլիսում մեծացած, ուրեմն և Թիֆլիսեցի համար-

վե՞լն էր պատճառը, թե իր մարգամոտ, խաթրաշահ, հարմարվող, համակերպվող բնավորությունը,- Հրաչյա Գրիգորյանը շահել էր Հայաստանի կուսկենտկոմի այդօրյա առաջին քարտուղար, խստաբարո Գրիգոր Հարությունյանի վստահութունը, բայց փաստն այն է, որ 38-39 թվականներին Հրաչյա Գրիգորյանը հանկարծ դարձավ Գրոդների միության ղեկավար, իսկ դրանից հետո՝ Մինիստրների խորհրդին կից եկեղեցական գործերի կոմիտեի նախագահ՝ բոլոր այս պաշտոններում ցուցաբերելով իր խառնվածքի լավագույն գծերը՝ գործի հաջողության մեջ անկեղծ շահագրգռվածություն, նվիրվածություն: Այդ շահագրգռվածության արդյունքն էր նրա հատուկ հոգատարությունը երիտասարդ շնորհալիների նրկատմամբ՝ Գրոդների միությունում, սրտացավ աշխատանքը՝ եկեղեցական գործերը ղեկավարելիս: Երկու հիմնարկներում էլ ես մնացի Գրիգորյանի ուշադրության ծիրում, մնացի նրա բարեկամների շարքում: Ուստի նորընտիր հոգևոր հովիվի հետ մերձ մնալուն օգնեց Հրաչյա Գրիգորյանը, որը անկեղծորեն ուրախանում էր՝ տեսնելով, թե ինչպես երիտասարդ կաթողիկոսը օրըստօրե գրավում էր հարգանքի ու համակրանքի նորանոր տարածքներ:

- Տեսնո՞ւմ եք, ինչ կաթողիկոս ընտրեցինք,- սիրում էր հպարտանալ Հրաչյա Գրիգորյանը՝ չթաքցնելով իր եռանդուն դերը ընտրության մեջ:- Ուրիշ թեկնածուներ էլ կային, օրինակ՝ Երուսաղեմի Պատրիարք Եղիշե Տերտերյանը:

Իմ վերապահությունը, թե Եղիշե Պատրիարքը, տաղանդավոր մարդ լինելով՝ հանգերձ, այնուամենայնիվ բանաստեղծ էր, կարող էր անկանխատեսելի բռնկումներ թույլ տալ, նրա հետ դժվար կլինեք համագործակցել, Գրիգորյանը կտրականապես հերքեց.

- Ընդհակառակը, անհամեմատ հեշտ կլինեք: Բանաստեղծները հեշտ բռնկվող են, հեշտ էլ տեղի տվող: Նրանց հետ ավելի շուտ կարելի է լեզու գտնել... Իսկ Վազգեն Վեհափառը խիստ սկզբունքային է, առանց խորապես համոզվելու՝ ոչ մի բան չի դիջի:

Հիրավի, այդպիսին էր Վազգեն Վեհափառը: Նա կարողանում էր համատեղել հայոց հոգևոր առաջնորդի իր հանդամանքը մշտապես զգալու, դիմացինի նկատմամբ անհրաժեշտ հեռավորությունը ամենուր պահելու բնատուր հատկությունը և մարգամոտությունը, առինքնող պարզությունը, զրուցակցի վստահությունը շահելու մարդկային ջերմությունը:

Այդ համատեղումը զգացվում էր միշտ և ամեն տեղ՝ թե՛ պաշտոնական վայրերում ու ժողովներում, թե՛ առօրյա հանդիպումների ժամանակ:

Հրաչյա Գրիգորյանը՝ կենսասեր ու ընկերասեր մի անձնավորություն, փորձում էր երբեմն իր ընկերական մթնոլորտի մեջ քաշել նաև Վազգեն Վեհափառին: Եվ ի դարմանս շատերի, կաթողիկոսը չէր խուսափում այդ աշխարհիկ շփումներից: Հաճույքով էր այցելում Ավետիք Իսահակյանին, Մարտիրոս Աբրյանին, Հյուր էր լինում Հրաչյա Գրիգորյանի տանը: Հիշում եմ մի այսպիսի հանդիպում, ինչպես ասում են՝ «բնության գրկում»:  
Հայաստանի կանաչադարձ վայրերից մեկում էր, կարծեմ Ծաղկաձորի մեր-



48 Ը-Ը  
ձակայքում: Հրաչյայի ընտանիքն էր՝ կինը, երեխաները, արվեստի մի քա-  
նի գործիչներ, գրողները՝ Անահիտ Սահինյանը և ես: Կովկասահայերի  
համար սովորական երգ ու ծիծաղով, խորովածի բույրով տաքացած սեղան  
շնչից անմասն չմնաց դեռևս երիտասարդ և այս կարգի հավաքույթներին  
վազդեն վեհափառը: Ինչպես միշտ՝ զուսպ ու սակավախոս, ձեռ-  
քին գինու գավաթը, ասաց զգացված:  
Գրիգորյանից, որ երբեմն ինձ հա-

Քին գինու գավաթը, ասաց զգացված:  
- Ես շնորհակալ եմ պարոն Հրաչյա Գրիգորյանից, որ երբեմն ինձ հա-  
մար այսպիսի պատուհաններ կրացն աշխարհի վրա...

մար այսպիսի պատուհաններ կրացն աշխարհը՝ իր  
 ինքնուրեքի վերջերում բոլոր սեղանակիցները խմբվեցին Վեհափառի  
 շուրջը՝ լուսանկարվելու։ Հայկ Առաքելյանը, պարզ ու անհավանական  
 քիֆիսեցի, Հրաչյա Գրիգորյանի ջահելության ընկերներից, որին պաշ-  
 տոնյա ընկերը՝ որտեղ էլ պաշտոնավարելիս լինեք, տանում էր հետը և աշ-  
 խատանքի տեղավորում, այդ օրը խորոփածի գործի վրա էր։

Տեսնելով, որ մենք կաթողիկոսի հետ լուսանկարվում ենք, Առաքելյանը, կիսատ թողնելով խորովածը, քշտած թևերով, ճենճոտ-ծխոտ ձեռքերով, վերնաչապիկը անփութորեն բաց թողած տաքատի վրա, միացավ մեր խմբին: Վեհափառը նկատեց դա և մեղմ, բայց ազդու վրա բերեց.


- Դուք, պարոն Առաքելյան, մի այլ առիթով կ'ուսանկարվե՞ք...


Մենք բոլորս մի պահ տարակուսեցինք, բայց հետո հասկացանք. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր գերի մեջ էր. նա պաշտպանում էր ոչ թե Կարապետ Պալճյանի «ռեհնոմեն», այլ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հանգամանքը...

Հետագա տարիներին Վազգեն Վեհափառը այլևս աշխարհի վրա բաց-  
վող պատուհանների կարիքը չունեցավ: Աշխարհն ինքը՝ էջմիածնի շրջա-  
փակի դարպասներից, դռներից, Վեհարանի մուտք ու պատուհաններից  
խուժեց ներս՝ քչել-տանելով մենակյացություն ենթադրող կրոնավորի ա-  
ռավոր, ցերեկը, երեկոն: Խուժեց հեռու և մոտիկ քաղաքներից ու գյուղե-  
րից եկող ուխտավորների խմբերով, Հայաստան ժամանած սփյուռքահայ և  
օտարազգի պատվիրակությունների և անհատ նշանավորների հոսքով, փո-  
քրը ու մեծ ղեկավարների ոչ այնքան լեզալ այցելություններով, իրենց  
հոգսերն ու ուրախությունները Վազգեն Վեհափառի հետ կիսելու և հու-  
սավորվելու եկող հավատացյալների անվերջանալի շարանով: Խորհրդային  
տասնամյակներում իր հավատի դարավոր ակունքներից արհեստականո-  
րեն կտրված ժողովուրդը հանկարծ բացված տեսավ արդեակիչ փականնե-  
րը և հավատ ունենալու կուտակված կարոտով սեր կապեց Վազգեն Վեհա-  
փառի վրա՝ նրա մեջ վերագտնելով կորցրածը, նրանով շաղկապվելով իր  
ընդհատված անցյալին: Եվ բախտ էր երևի, վերուստ տրված ճակատագիր,  
որ պատմական այդ պահին Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի դահլիճ բազմեց  
Հիրավի ընտրյալ մի անձնավորություն, որը արժանի եղավ այդ համաժող



Հեղինակը (ձախ) և Երևանի Եպիսկոպոս Գևորգ Բ. (1956 թ. Գոյաշենի մեծ հիշատակը)





ՎԵՐԱՓՈՐԸ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ



դուրդական սիրուն ու վստահությունը, եղավ այդ սիրո և վստահության լիովին փոխադարձողն ու հատուցողը: Այս երջանիկ փոխադարձումից բաղադրվեց այն ստեղծագործ ոգին, որով Սուրբ Էջմիածինը կյանքի կոչեց բազում իրագործումներ՝ հուշարձանների վերականգնումից սկսած մինչև խորհրդային շրջանում աներևակայելի համարվող նոր եկեղեցու կառուցում Սուրբ Սարգիս եկեղեցու վերանորոգման անվան տակ:

Սույն ակնարկիս մեջ ես նպատակ չունեմ թեկուզ մասնակիորեն թվարկելու այդ իրագործումները, դրանց մասին դրվել է և դեռ կգրվի: Ես կաշխատեմ թղթին հանձնել այն դրվագները, որոնց անձամբ մասնակից կամ ականատես եմ եղել և որոնք, իմ կարծիքով, արժե հանձնել հանրությանը:

Վաղդեն Կաթողիկոսի գահակալության առաջին երկու տարիները, ինչպես սկզբում ասացի, սերտորեն կապվում են Ավետիք Իսահակյանի և Մարտիրոս Սարյանի հետ: Նրանք էին, որ պարբերաբար ելումուտ ունեին Էջմիածնում, և վանքի շրջափակում ամփոփված Մեծ Մենակյացը նրանց հետ էր կիսում իր մենությունը, նրանցով էր լցնում դեպի արվեստն ու դրականությունը ձգտող իր էությունը: Հետզհետե շփումների այդ նեղ շրջանակը փոքր-ինչ ընդլայնվեց, և ես, որ կին էի և երիտասարդ, բանաստեղծների մեջ այն երջանիկ քաջառությունն էի, որ արժանացել էի Վեհափառ Հայրապետի ղեհատականին և իրավունք էի նվաճել լինելու նրա շրջապատում, մասնակցելու Էջմիածնի հովանու տակ կայացած հանդիսավոր արարողություններին, հրավերքներին ու երբեմն էլ անձնապես հանդիպելու: Այդ հանդիպումներից մի քանիսը առանձնորեն են դրոշմվել իմ հուշաշխարհում:

1961 թվականն էր: Վաղդեն Կաթողիկոսը նոր էր վերադարձել ստամբուլյան իր ուղևորությունից, որի ընթացքում հանդիպել էր ստամբուլաբնակ իմ մորաքրոջը: Այժմ չեմ հիշում ի՞նքն էր ցանկություն հայտնել ինձ տեսնելու, թե ես էի տեսակցություն խնդրել, միայն հիշում եմ, որ մենք՝ ես և Աստղիկ մորաքույրս՝ հետաքրքրասեր, տարեց հասակում էլ ներկայանալի, խանում-խաթուն մի կին, Էջմիածին ուղևորվեցինք Կաթողիկոսարանից ուղարկված մեքենայով: Ամառ էր, շոգ, և կաթողիկոսը մեզ ընդունեց Հին Վեհարանի տարածքում գտնվող բացօթյա տաղավարում: Մի րալիք ողջունից հետո սկսեց պատմել, թե ինչպես Պոլսո Հայոց Պատրիարքարանում, երբ շարան-շարան իրեն են ներկայացել կարոտավառ պոլսահայերը՝ Ամենայն Հայոց Հայրապետի աջհամբույրին արժանանալու, այդ անվերջանալի շարանի մեջ միջին տարիքի մի կին հասցրել է հաղորդել իրեն, որ Սիլվա Կապուտիկյանի մորաքույրն է:

- Աչքերուս չհավատացի,- շարունակեց Վեհափառը,- հարազատ մորաքույրը, հարցուցի, ըսավ՝ «այո, հարազատ մորաքույրը»: Զարմացա՝ ի՞նչ գործ ունի Ձեր մորաքույրը պոլսահայերու մեջ... Գիտե՞ք, Ձեզի շատ կներմանե՞ր՝ մազերը, աչքերը:

Այնուհետև վեհափառը շարունակեց պատմել. թե ինչպես պոլսահայերը՝ իրեն մոտենալով, անխոս խոնարհվում էին և ալը համբուրելիս, ըզ-գույշ, որ ոչ ոք չլսի, շշնջում «կեցցե Հայաստան» և արցունքը աչքեն ին հեռանում:

Հետանում:  
- Ուղղակի հուզվեցի՝... Ամենուր Ձեր «խոսք իմ որդուն» կարտասան-  
եցին, Ձեզի կհիշվեմ: Ափոստ, որ Դուք հետս էիք, թեև ներկա լինելով,  
Հայոց Հայրապետի փառքին կեսը պետք է խլեիք,- ժպտալով ավելացրեց  
կաթողիկոսը:

Կաթողիկոսը:  
Ես, իհարկե, եռանդով հերքեցի վեհափառի այս Հափազանցումը, բայց  
... և հետո հասկացա, որ երանում հիշում եմ այդ Հափազանցումը...

Ձեռն մոռանում ես, թե ինչպես Եզրիպտոս կատարած ուղևորությունից  
Հետո Վեհափառ Հայրապետը նորից ինձ հրավիրեց Եջմիածին և Վեհարա-  
նում Հանձնեց Կահիրեի Գալուստյան վարժարանի աշակերտների 12 նա-  
մակները:

Տիգրան Մաղկունու սաներեն են. սքանչելի ուսուցչուհի է, իրավ նվիր-  
յալ: Ներկա եղա անոր զաստժամին: Օրվա նյութը Ձեր «Խոսք իմ որդուն»  
էր: Աշակերտները այնքան ազվոր արտահայտվեցան Ձեր մասին, որ առա-  
ջարկեցի նամակով հայանեն իրենց զգացումները՝ խոստանալով անձամբ  
ստիպանքե, Ձեզ: Ահա բերած եմ...

Յոթանասունից ավել տարրի կուտակված անթիվ-անհամար թղթերիս մեջ այս 12 նամակները ու մեկ էլ Կալկաթայի Մարգասիրական վարժարանի երեխաների նամակը, ամփոփված առանձին թղթապանակի մեջ, պահում եմ որպես մասունք և ամեն անգամ ձեռքս առնելիս դրանց՝ փոքր-ինչ դեղնած, թանաքը՝ խուռնացած, թերթերը, իմ մեջ արծարծում են իմ Հեռավոր ու երիտասարդ օրերի լույսն ու թրթիռը, որ ապրել եմ դրանք ստանալիս...

Ուրիշ շատ հուշեր ու հիշատակներ ունեմ ես Վազգեն Վեհափառից, զանազան հուշանվերների, փոքր ու մեծ հանդիպումներից մնացած տպավորութիւններ, որոնց ժամանակագրական թվարկումներն անգամ էջեր կ'ազահանջեն: Ուստի ստիպված եմ այդ հիշատակներից թղթին հանձնել կարևորագույնները: Օրինակ, ինչպես չհիշեմ Նորին Սուրբ Օծության առաջին այցելութիւնը մեր տուն՝ իր թանկագին մոր՝ տիկին Սիրանուշի հետ, որին արժանաւորապէս Վեհամայր էինք կոչում: Այս այցելութիւնը ունի իր նախապատմութիւնը:

1969 թվականի հունվարին լրացել էր իմ ծննդյան հիսունամյակը, որը հանդիսավորությամբ տոնվեց Հայֆիլհարմոնիայի մեծ, այժմ Արամ Խաչատրյանի անունը կրող դահլիճում, և որին առանձնահատուկ շուք տվեց Ամենայն Հայոց Հայրապետի ներկայությամբ: Հաջորդ օրը մեր տանը խնջույք էր՝ բավական բազմամարդ և բավական նշանավոր կոչնականներով: Նրանց մեջ էր նաև եկեղեցական կոմիտեի այդօրյա նախագահ, իմ լավ բարեկամ Սերգեյ Գասպարյանը: Մեկ-երկու օր հետո հնչեց նրա հե-

ախոսասային զանգը: Գոհունակություն Հայտնելով նախորդ խնջույքից, նա առտնին տոնով վրա բերեց.

- Բա մեր ժողովրդին չե՞ս հրավիրում:

- Ո՞վ է քո ժողովուրդը:

- Էլ ո՞վ Կաթողիկոսը:

Ես հանկարծակիի եկա:

- Իսկ կարելի՞ է:

- Ինչի չի կարելի. միայն պետք է Համապատասխան «անտուրած» ապահովել: Պատահական մարդիկ չլինեն...

«Պատահական» մարդիկ չեղան, իհարկե: Եղան Պարույր Սեակը, Սերո Խանդադյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, ինքը՝ Սերգեյ Գասպարյանը, և Վազգեն Կաթողիկոսը՝ Վեհամոր և իր փոքրիկ շքախմբի հետ: Մայրս, որ մշտապես մեր սեղանների գլխին էր լինում, իր տեղը զիջեց Կաթողիկոսին, և, կարծում եմ, Համապատասխան «անտուրած» դարձավ Վեհամորը: Իմ ուրախությանը չափ չկար. Իսահակյանի և Սարյանի տներին հետո մեր տունը երրորդ աշխարհիկ տունն էր, որ այցելել էր Վեհափառը: Սրանից հետո ճանապարհը բացվեց: Նոր բնակարան տեղափոխվելուս առաջին իսկ օրերին առաջին Հրավիրյալներից էր Կաթողիկոսը՝ իր ուղեկիցների հետ միասին: Ուղեկիցների մեջ էր Վազգեն Վեհափառի առաջնակարգ սաներից՝ մեր այժմյան Կաթողիկոս Գարեգին Երկրորդը՝ նախ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի օգնականի, ապա արդեն իսկ առաջնորդական փոխանորդի Հանգամանքով: Այնուհետև Հրավերքները դարձան պարբերական, իսկ «անտուրածը» ավելի բազմամարդ. Ալեքսանդր Հարությունյան, Էդվարդ Միրզոյան, Էդգար Հովհաննիսյան, Գրիգոր Գուրզադյան, Սերգեյ Մերգելյան, Էդվարդ Զբաղյան, Անահիտ Սահինյան, Գրիգոր Խանրյան, Վերա Հակոբյան, Խորեն Պալյան, մի խոսքով այդ տարիների մտավորականության ընտրանին... Խեղճ ազգականներս, որ իմանալով Վեհափառի այցելության մասին, առանց Հրավերի սպասելու գալիս էին, գոհանում էին միայն Վեհափառին միջանցքում դիմավորելով և աջը Համբուրելով, մնացյալ ժամանակ մնում էին Հյուրասենյակի դռների մոտ կանգնած «Հեռակայելով» սեղանին ու հեռվից վայելելով Կաթողիկոս Հյուրի խոսքը, Լուսինե Զաքարյանի երգը և, իհարկե, Վարազդատ Հարությունյանի «Դե-յամանը»... Ու միայն թոռնիկներս էին՝ Լիավարդը և Միրվարդը, դեռ մանրիկ ու չարաճճի, ոչ մի կանոն հաշվի չառնելով, շտապ գնում ու տեղավորվում էին «Վեհափառ պապիկի» կողքին:

Ծննդյանս 60-ամյակը դարձյալ նշվեց նույն դաշլիճում, դարձյալ Ամենայն Հայոց Հայրապետի և իր ուղեկիցների փառաշուք ներկայությամբ՝ դրան ավելացած հեռաբնակ բանաստեղծ ընկերներիս՝ բալկար Կայսին Կուլիևի, վրացի Իոսիֆ Նոնեշվիլու, Հայ պոեզիայի Հավատարիմ բարեկամ, թարգմանչուհի Ելենա Նիկոլաևսկայայի, բելյուսթահայ Գառնիկ Ադ-



դարյանի և ուրիշների մասնակցությունը: Տարեդարձը նշանավորվեց նաև շատ անսպասելի, ինձ համար խիստ հոգեհաճ մի ձեռնարկով: Գլխավոր երեկոյից միառժամանակ հետո Վեհարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ էջմիածնի Հոգևոր Ճեմարանի սաների հանդեսը՝ նվիրված նույն տարեդարձին: Հանդեսը ինքնատիպ էր և տպավորիչ:

Բեմում տեղադրված 6 սեղանիկների վրա վառվում էին 6 միանման լուսամփոփներ, և լուսամփոփների մեղմիկ լույսի տակ նստած վեց նորաբեղ սամփոփներ, և լուսամփոփների մեղմիկ լույսի տակ նստած վեց նորաբեղ երիտասարդներ, միանման մուգ հագուստներով, դուստ, բայց ներշնչված դեմքերով, հերթականությամբ կարդում էին իմ քնարական բանաստեղծությունները:

Երեկոյի ամեն մանրամասնի մեջ՝ սկսած քերթվածների ընտրությունից, արտասանության ոճից ու կիրթ արտաբերումից, վերջացրած սեղանիկների ու լույսերի ձևավորմամբ, երեկոն ամբողջացնող երաժշտական լրացումներով, զգացվում էր Բուխարեստի համալսարանի բանասիրականը ավարտած նախկին ուսանողի և Ֆրանց Վերֆելի ու Նարեկացու մասին բանասիրության կարգացողի, արվեստի ու գրականության զիտակի բարձրաճաշակ հսկողությունը:

Պետք է հատկապես ընդգծել, որ Վաղգեն Առաջինը իմաստությունը ունեցավ իր հումանիտար կրթությունը և արվեստասեր հոգու բարեմասնությունները դործի դնելու և Մայր Աթոռի շուրջը հավաքելու ժամանակի մեծանուն մտավորականներին՝ Գոհար Գասպարյանից, Առնո Բարտլանյանից, Ալեքսանդր Հարությունյանից ու էդվարդ Միրզոյանից սկսած մինչև առավել երիտասարդները՝ Էդգար Հովհաննիսյանն ու Տիգրան Մանսուրյանը, Մարո Մարգարյանն ու Գեորգ Էմինը: Իսկ ճարտարապետները՝ Ռաֆայել Իսրայելյանը, Միքայել Մազմանյանը, Արծրուն Գալիկյանը, Վարազդատ Հարությունյանը, Բաղդիկ Արզումանյանը, նրա մշտական խորհրդատուներն էին, ճարտարապետական խորհրդի անդամները: Էլ չեմ խոսում Սեն Արեշատյանի, Պրոն Հակոբյանի, Վլադիմիր Բարխուդարյանի, Վեհափառի հոգեկից բարեկամ Գրիգոր Խանջյանի և շատ ուրիշների մասին: Իսկ հապա հայ իրականության մեծերի հիշատակին մատուցվող հոգեհանգստյան արարողությունները, հորելյանական հանդեսներն ու երաժշտական երեկոները, որ իրացվում էին ժամանակի լավագույն վարպետների՝ Կոմիտասի անվան քառյակի, Հովհաննես Չեքիջյանի, Մետաքսյա Սիմոնյանի, Վերա Հակոբյանի, Արտուր Մեսչյանի և շատ ուրիշների մասնակցությամբ: Հատուկ գիծ ու ծրագիր էր դա, որը տարվում էր հանուն Սուրբ Էջմիածնի հեղինակության բարձրացման ու ազդեցության շառավիղների ընդլայնման և որը տվեց իր փառավոր արդյունքները:

«Անհատի պաշտամունքի» պսակազերծման օրերից, այսինքն 1953 թվականից սկսած ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում ծայր առավ քաղաքական աշխուժության զորավոր մի ա-

լիք, որից դուրս չմնացի նաև ես: Հասարակության մեջ խորացող արատները, որ մինչ այդ էլ արտացոլվել էին իմ պոեզիայում, այլևս անհնար էր պարտակել բանաստեղծության փխրույն տող ու հանգի մեջ: Հարկ էր անցնել հրապարակախոսության ամուր ու դիմացկուն ժանրին: Այդ անցման ամենատևեղ արտահայտությունը եղավ 1971 թվականին Հայաստանի դրոշմների V Համագումարի ամբիոնից ունեցած իմ ելույթը, ուր կրքոտ խոսքով դատապարտվում էին տիրող այսպեսելի երևույթները՝ կաշառակերությունը, հովանավորչությունը պաշտոնավաճառությունը և այլ արատներ: Ելույթն անսպասելիորեն բուռն ընդունվեց հասարակության բոլոր շերտերի կողմից, իսկ Կաթողիկոսը Հարկ էր համարել այն քննարկման առարկա դարձնել Գեորգյան ձեռարանի սաների շրջանում:

Երկրի կյանքին բերած իմ քաղաքացիական մասնակցության երկրորդ նշանակալից քայլը դարձյալ Գրողների Համագումարում հայոց լեզվի անմխիթար վիճակի մասին ելույթս էր 1981 թվականին, որը նույնպես լայն արձագանք գտավ՝ այս անգամ Համագումարին հրավիրված ռուս գրողներից մի քանիսի կողմից ոչ դրական երանգով, և ընդհակառակը՝ հայաստանյան Հասարակության կողմից՝ գոհունակության թանձր գուլյնով: Առանձնապես զոհ էր Վազգեն Վեհափառը, որը անձամբ դանդահարեց և հայտնելով իր գինակցությունը ելույթում շոշափված խնդիրներին, ասաց, որ Հոգեւոր խորհրդի անդամներն էլ բաժանում են իր կարծիքը և այդ առթիվ կուղենային հանդիպել:

Ինչպես միշտ, Վեհափառի հրավերը ինձ համար տոն էր, Մեծարենցի խոսքով ասած՝ «Հոգու կիրակի»: Այս անգամ կրկնապես կիրակի էր, որովհետև նախ՝ իմ ելույթի առիթով էր, և ապա պետք է կայանար կիրակի օրը կաթողիկոսական ամառանոց «Հայկաշենում»:

Նշանակված ժամին ժամանեցինք «Հայկաշեն», Բյուրականից քիչ վերև գտնվող, Արագածի փեշերին բարձրացած գեղեցկանիստ առանձնատուն: Սեղանը բացված էր տանը կից անտառակում, մտերմիկ ծառերի տակ: Հյուրերն էլ մտերիմ մարդիկ էին՝ Հոգեւոր խորհրդի անդամները: Կաթողիկոսի տրամադրությունը զվարթ էր, սովորականից ավելի ընտանեվարի: Երբ առանձնատնից դուրս դալով քայլում էինք դեպի սեղանը, պարտեզում աշխատող գյուղացիները ոտքի կանգնելով հարգալիր ողջունում էին Կաթողիկոսին: Կաթողիկոսը ժպտադեմ ընդունում էր նրանց ողջույնը, զբարթորեն պատմելով:

- Խեղճերը սկզբում չգիտեին, ինչպես դիմեն ինձ... Մեկ՝ «ընկեր Կաթողիկոս» կրսեին, մեկ՝ «ընկեր Վեհափառ»... Հիմա սորված են, «Վեհափառ ջան» կրսեն...

Տեղավորվեցինք ճաշի սեղանի շուրջը, որը, ինչպես միշտ, գուսպ էր ու սակավապետ: Հարուստ էր սակայն զրույցը, որին աշխուժորեն մասնակցում էր Վեհափառը: Նա ջերմորեն շնորհավորեց ելույթս, ապա ընդհա-

Հորդ աղբյուրի կողքի՝ն անդամ մի կռամ ջրի



կարոտ է պետք.  
 Երազներդ պատրույգ արած՝ պիտի այրվե՛ս,  
 պիտի այրվե՛ս,  
 Ամբարների լիության մեջ՝ հաց-նշխարի  
 կարոտ է պետք...

Հայոց նորագույն պատմության մեջ անջնջելի կմնա 1965 թվականի ապրիլի 24-ի ալեկոծ օրը. որ ողջ Խորհրդային Միության մեջ առաջին դիմադիր բռնկումն էր, ազգային վերագարթոնքի, ազգի իրավունքների ու արժանապատվության համար ուղբի ելած բազմահազար մարդկանց առաջին ծառացումը:

Ես եղա ակնանտեսը և մասնակիցը այդ մեծ ծառացումի, տեսա նրա մակընթացությունն ու տեղատվությունը, երբ բորբոքված բազմությունը խուժեց Օպերայի շենք, վայրկենապես լցրեց նրա աստանդակը, միջանցքներն ու դահլիճը, իսկ դահլիճում նախագահությունից դատարկված բեմը կարծրանյութ վարագույրով պատնեշված էր արդեն, և օթյակում Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր միայն կանգնած, որ միայնակ գիմակայեց ցասում-նալից երիտասարդությունը և խաղաղեցրեց նրան:

«Ամիսն ապրիլ էր և օրը՝ արդար»...

Արդարագույն օրը, սակայն, դեռ առջևում էր, 1988 թվականի փետրվարի 20-ը: Ակիզբը դարաբաղյան ընդվզման, որ սկզբնավորվել էր դեռ 70 տարի առաջ, երբ 1921 թվականի դեկտեմբերի 5-ին, Թիֆլիսում նստած մի քանի բոլշևիկ ղեկավարներ թեթև ձեռքով ստորագրեցին այն որոշումը, որով պատմության մեջ, արմատներով, բնակչության մեջ, լեզվով, հուշարձաններով, ամեն ինչով Հայապատկան և Հայակնիք Լեռնային Ղարաբաղը տրվեց Ադրբեջանին:

Ինչ ծա՛նր նստեց այդ «թեթև ձեռքը» ու դեռ շարունակում է նստել պատմության վրա, դեպքերի գալիք ընթացքի վրա, դառնալով սրաժանիք մի թաթ, որ իր մագիլների մեջ է առել ամբողջ մի ժողովուրդ ու չի թողնում հանգիստ սրտով վայելել իր զավակների արյան, իր որդեկորույս մայրերի անանց մորմոքի, իր մանուկների որբության գնով վաստակած ազատությունը:

Թերևս այդ ծանրությունը ամենից շատ զգում էր Ամենայն Հայոց Հոգևոր Հայրը, որը պատասխանատու էր ոչ միայն Հայաստանյան ժողովրդի, այլև Համայն Հայության ճակատագրի համար: Միայն Աստծուն ու մեկ էլ Վեհաբանի մենավոր սենյակների մանրահատակին են Հայտնի գիշերային լուռության մեջ անդադրում ետ ու առաջ քայլող Կաթողիկոսի տազնապներն ու տվայտանքները, կանխագուշակություններն ու հետևանքները հավանական այն աղետների, որ ամեն բացվող առավոտ կարող էր իր հետ բերել Հայոց աշխարհին... Դյուրին էր հանրահավաքների հարթակներից

Դեռ 1994 թվականի դարձանից լուր տարածվեց, որ Կաթողիկոսը ծանր

Հիվանդ է: Գնալով լուրերը ճշգրտվեցին, իսկ օգոստոսին օրեցօր մոտենում էր վախճանը: Բժիշկները արգելել էին Հիվանդին այցելելը: Այնուամենայնիվ ես փորձեցի այցելել և Վեհափառի Հավատարիմ սպասավոր, ողջ ընտանիքով սրտաշարժորեն իր խնամյալին նվիրված Ազատի միջոցով ստացա Վեհափառի Համաձայնությունը:

Հիվանդը պառկած էր առանձնատան առաջին Հարկի փոքրիկ ննջասենյակում: Բարես ընդունեց գլխի Հաղիվ նկատելի շարժումով: Հայացքը մարած էր, անՀաղորդ: Նստել էի մահճակալի կողքին և չգիտեի՝ ինչ խոսեմ: Ինքն էլ չէր խոսում: Ուժեքս Հավաքելով Հաղիվ կարողացա արտաբերել.

- Վեհափառ, ոչինչ չունե՞ք ինձ ասելու:

- Ոչինչ,- եղավ պատասխանը, ու նորից լուռություն:

Հեռանում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մեր Վեհափառը, աշխարհից, մեզնից, ինքն իրենից: Վերմակի վրա անդոր ընկած էր ձեռքը՝ գունատ, գեղեցիկ, աղնվական ձեռքը, որ պահ առ պահ դադարում էր կաթողիկոսի աջ լինելուց...

...Ես այդպես էլ չՀամբուրեցի այդ աջը, երբ ավյուլում լի էր, կենդանի, բարախուն: Ամեն ձեռքսեղմումի խոնարհվում էի, երկյուղածությամբ մի պահ Համենում էի այդ ձեռքի վրա, բայց չգիտես ինչու,- Հակոտնյա դաստիարակություն՝ էր պատճառը, ներքին Հավատավոր մղումի պակասը, ուրեմն և ինչ-որ տեղ ձեռնալու և դրանով իսկ դիմացինին վիրավորելու մտավախությունը,- չէի Համբուրում: Մինչև օրս էլ զգջումի, ամսոսանքի բարակ մի ցավ է երկարում իմ սրտում՝ ինչու՞ և չէի Համբուրում: Մինչդեռ ութսունվեցամյա կյանքիս ընթացքում անթիվ, անհամար ձեռքսեղմումների ու ողջագուրումների մեջ դա այն ձեռքն էր, որ պետք է Համբուրեի:

Միակ Համբուրելի ձեռքը...



Տ. ՀՈՎԱԿԻՄ ԱՔԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Միջնակոհական հայաքերությունների բաժին

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ.

ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
(Համառոտ ակնարկ)

«... Հայր սուրբ, պահես զնոսա յանուն  
Քո, որով եպտուն ինձ զի եղիցին մի՝ որ-  
պես եւ մեր մի հմբ»:

(Հովհ. ԺԷ 11)

Հովհաննես ավետարանի միջոցով մեզ են փոխանցվել Տիրոջ քահանայապետական առաքելի այս պառերը, որոնց հետ հազիվ թե մեկը չհամաձայնվի: Այսինքն՝ քրիստոնյաների միությունը, իրենց Եկեղեցիներով հանդերձ, բխում է ավետարանական ճշմարտությունից:

Եկեղեցիների միջև առկա պարմական տարբերություններն ա տարակարծությունները լուծելուն ի խնդիր, մեր ժամանակները, առավելաբար սկսած 20-րդ դարից, հայտնի է «էկումենիկ» շարժումով, որը կոչված է վերահաստատելու սերը և բարեկամությունը, փոխադարձ հարգանքն ու վստահությունը Եկեղեցիների միջև և մղելու նրանց տեսանելի միության:

Բնական է, Հայ Առաքելական Եկեղեցին իր նվիրապետական Աթոռներով և իր հավատարմալ հոգով ի Հայաստան և ի Ափյուռն աշխարհի չէր կարող անմասն մնալ այդ շարժմանը: Ավելին, Հայ Եկեղեցու պարմության էկումենիկ շերտը հազարամյա հնություն ունի: 20-րդ դարի մեծագույն եկեղեցական գործիչներից մեկի՝ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի խոսքով, չնայած հայտնի պարմական բաժանումներին, «Հայ Եկեղեցին միշտ ազդել և ազդվել է բոլոր Եկեղեցիներից»: Հայոց հինավուրց Եկեղեցին, Օրմանյան Պարրիարքի խոսքերով, «հանդուրժողականության ոգով» առեցուն միշտ ձգտել է համագործակցության, փոխադարձ կապերի հաստատման ու Զրիստոնեական սիրտ դրսևորման ե, Խրիմյան Հայրիկի պարկերավոր բնորոշմամբ, Եկեղեցիների այս բազմազանությունը իրենից ներկայացնում է մի «ծաղկեփունջ, ուր ամեն մի ծաղիկ ունի իր ուրույն գույնը, իր ուրույն երանգը և իր ուրույն բույրը, որոնք բոլորը մեկտեղված են Զրիստոսի սիրտ կապով»:

Երբեմն հարց է տրվում, թե արդյոք էկումենիկ շարժումը վարանգ չի՞ ներկայացնում Հայոց Եկեղեցու ձեսի, դավանանքի և ընդհանրապես հոգևոր ինքնության համար: Ի պատասխան նման հարցադրման, վկայակոչենք երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդում ունեցած ելույթի հետևյալ խոսքերը. «Զրիստոս մեր արյան մեջ առած, իբրև Աստված և իբրև Փրկիչը մեր, Մենք ուխտած ենք առաջնորդել Հայ Եկեղեցին քրիստոնեական սիրտ և միության ճանապարհով, պահելով ու պահպանե-

յով մեր բրիտանական հին դավանանքը և վարդապետությունը, մեր սուրբ կանոնները, մեր ավանդություններն ու մեր ազգային նկարագիրը»<sup>1</sup>:

Վեհափառի որդեգրած այս քաղաքականությունը նաև իր շարունակությունն է գտել իր երջանկաժիշտական հաջորդի՝ Գարեգին Ա-ի (կթղ. 1995-1999 թթ.) գործերում և այժմ շարունակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի անմիջական նախաձեռնությամբ և փեսայությամբ:

Բնական է, որ Հայ Եկեղեցու մասնակցությունն Էկումենիկ շարժմանը երբևէ չի կարող դիպվել Հայ Եկեղեցու դիրքերի գիշում: Ավելին, այն հարստացնող մի փորձառություն է և իր դրական լիցքերն է հաղորդում մեր Եկեղեցու առաքելությանը:

Վազգեն Ա Վեհափառի գահակալության տարիներին միջեկեղեցական հարաբերությունների վերելքը սկսվեց 1960-ական թվականների սկզբից: Այս շրջանին են վերաբերվում երկու կարևոր փաստաթղթեր. դրանցից առաջինը 1962 թվականին Ազգային Եկեղեցական ժողովին Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գեկույցի 16-րդ և 17-րդ կետերն են՝ ի խնդիր թույր Եկեղեցիների և ԵՆՍ-ի հետ երա ծավալած գործունեության, և 1965 թվականի Եկեղեցիների միության հարցի շուրջ Հայրապետական սրբապատ կոնգրեսը:

Հայ Առաքելական Եկեղեցին Էկումենիկ շարժմանն սկսել է մասնակցել որպես դիտորդ դեռևս 1927 թվականի Լոզանի և 1937 թվականի Էդինբուրգի ժողովներին, ինչպես նաև ԵՆՍ 1948 թվականի Ամստերդամի առաջին ընդհանուր ժողովին, 1952 թվականի Լոնդի, 1953 թվականի Էնվաստոնի և Նոր Դեելիի 1961 թվականի ժողովներին:

1959 թվականին ԵՆՍ պատվիրակությունն այցելում է ԽՍՀՄ, այդ թվում՝ Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ գլխավորությամբ ԵՆՍ գլխավոր քարտուղար Վ. Վիսրոդ Զուլփի: ԵՆՍ Կենտրոնական վարչությունը 1962 թվականի օգոստոսի 7-17-ը կայացած նրստաշրջանում, ընդառաջելով Վազգեն Առաջինի դիմումին, Հայ Առաքելական Եկեղեցին ընդունում է որպես անդամ Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի: 1962 թվականին «Էջմիածին» ամսագրում նշվում է, որ «Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը», Հայ Եկեղեցուն ընդունելով որպես իր լիիրավ անդամ, «հանդիսավոր կերպով նշեց ու արձանագրեց, թե մեկ է և անբաժանելի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, հոգևոր վերին իշխանությանը ներքև Ամենայն Հայոց Հայրապետության»<sup>2</sup>:

Թեև ԵՆՍ-ում Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացված է երկու նվիրապետական Աթոռներով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսություն և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, «հնր ստորագրության գրավոր հայտարարության մը, որով Մայր Աթոռիս և Անթիլիասի ներկայացուցիչները կհաստատեն, թե մեկ է Հայաստանյայց Եկեղեցին, թե Ս. Էջմիածնի հոգևոր հեղինակության տակ կգտնվի ամբողջ Հայ Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, և թե Ս. Էջմիածին և Կիլիկյան Աթոռները ունին իրենց իրավասությանց սահմանները»<sup>3</sup>:

<sup>1</sup> Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի Հայրապետական երկրորդ ուղեորությունը, Էջմիածին, 1963 թ., 19-47:

<sup>2</sup> «Էջմիածին», 1962, Ը, 19-10:

<sup>3</sup> «Էջմիածին», 1962, Ժ-ԺԱ, 19-42:

Հայ Եկեղեցու համար պատմական նշանակություն ունեցող ԵՏԱ-ի Կենտրոնական  
Վարչության 1962 թվականի Փարիզյան նիստի ընթացքում Հայ Եկեղեցու պատվիրակությո-  
ւոնը ներկայացված էր Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Ս. Սերովի-  
նայս. Մանուկյանի գլխավորությամբ՝ ընկերակցությամբ Ս. Կոմիտաս Եպիսկոպոս Տեր-  
Ստեփանյանի և Ս. Պարզև վրդ. Գևորգյանի:

Մարտի 1962 թվականից հայ Առաքելական Եկեղեցին ԵՏԽ-ի անդամ է։ Որքանով և  
արդյունավետ այս համագործակցությունը արականին պիտի արժեկորվի, սակայն այդ օրե-  
րի համար այս վախճանը մի մեծ ձեռքբերում էր։

որ համար այս վիստրը մի սննդ ձողքովում էր։  
Եկեղեցիների միությունը մասին հայրապետական սրբապատ կոնդակում ասվում է.  
«Եկեղեցին, իբրև աստվածային նախախնամության գործ, անշուշտ մեկ է և փինգերական  
սակայն այդ աստվածային փնտրիության իրագործումը երկրի վրա գեցեցած է և կգեցնու  
արտաքին փարբեր փարագներ համաձայն ժողովներու հոգեկան դիմագծության և Աստծո  
խոսքը ընկալելուն և ապրելու կերպին. և համաձայն պատմական իրադարձությանց ու  
ավանդություններին, որոնց մեջ ծնած ու աճած են Եկեղեցիները ... Մեր օրերուն, փառք  
Ամենակալին, այլևս չկան ոչ բարեկամական դրսեորումներ Եկեղեցիների միջև։ Այլևս ոչ ոք  
չի մտածեր հին վեճերու և հակառակություններու մասին։ Այսօր բոլոր Եկեղեցիները, բոլոր  
քրիստոնյաները կխոսին փոխանդարձ եաճության մասին, գործակցության մասին, միությու  
յան մասին...»<sup>4</sup>։

ԵՏՆ-ն մի կենտրոն էր, ուր ոչ միայն քննարկվում էին աստվածաբանական հարցեր, այլև այն կրում էր քաղաքական և ընկերային բնույթ: Մա հնարավորություն էր տալիս Եկեղեցիների ներկայացուցիչներին ԵՏՆ ամբիոններից ի յուր աշխարհի ծայն բարձրացնել հանուն արդարության, հավասարության, սիրո ու խաղաղության:

Մեր ժամանակներում, որպես արդյունք փոստ-մոդերնիստական գաղափարախոսության և աշխարհականացման, Ուղղափառ եկեղեցիները ԵՂՄ-ում կանգնած են լուրջ մարտահրավերների առջև: Նույնիսկ 1998 թվականին Զիմբաբվեում տեղի ունեցած ԵՂՄ 8-րդ Ընդհանուր համաժողովից առաջ վրանգը կար, որ Ուղղափառ աշխարհը կգաղարնցնի իր մասնակցությունը ԵՂՄ-ին, որը և տակավին ամկա է՝ պայմանավորված անդամ մի շարք եկեղեցիներում տեղ գտած ոչ ընդունելի երևույթներով: Սակայն իրավիճակը այդպիսին չէր 20-րդ դարի երրորդ քառորդում:

Սա մի ժամանակաշրջան էր, երբ Ուղղափառ աշխարհն իր մասնակցությամբ ԵՂՍ-ն դարձրեց իրապես «Տիեզերական շարժում»: Սա մի ժամանակաշրջան էր, երբ զարգանում էր Եկեղեցիների փոխանցի միության գաղափարը՝ «միություն բազմազանության մեջ» կարգախոսով: Կազմակերպվում էին ասֆալտաբանակալան գիտաժողովներ, ուսումնասիրվում էին տեղում թե՛ հին և թե՛ նոր Եկեղեցիների պատմությունները:

Միջկենդեցական հարաբերություններին զարկ տալու համար Մայր Աթոռում 1967 թվականից բացվում է Միջկենդեցական հարաբերությունների գրասենյակը, որը հաջորդաբար ղեկավարում են Տ. Արսեն վարդապետ Դերպեյանը, Տիար Դարգն Շահրազյանը և Տ.Ներսես եպիսկոպոս Դոզապալանը: Վազգեն Ա Հայրապետի օրոք Հայ Եկեղեցին ան-

<sup>4</sup> Հայրապետյանի Կոնդակ, «Եմիանոս», 1965, Ե-Ձ-Է, 194:



դամ դարձավ ոչ միայն ԵՏՆ-ին, այլև Հայ Եկեղեցու Միյուտքի թեմերն անդամագրվեցին իրենց համապատասխան երկրներում գործող Եկեղեցիների Ազգային Լսորհուրդներին և տարածաշրջանային այլ էկումենիկ կազմակերպություններին:

Վազգեն Ա-ի գահակալության շրջանում տեղի են ունեցել հետևյալ համաժողովները և րանակցությունները, որոնք եեղկայացնում ենք ստորև.

### ԵՏՆ-ի համաժողովներ

ԵՏՆ ընդհանուր ասամբլեաները կամ համաժողովները գումարվում են 7 տարին մեկ: ԵՏՆ առաջին ևրեք համաժողովներին Հայ Եկեղեցին մասնակցել է դիպուդդի կարգավիճակով: 4-րդ ընդհանուր ժողովից սկսած Հայ Եկեղեցու ներկայացուցիչներն սկսում են մասնակցել որպես լիիրավ անդամներ ու պարվիրակներ Հայ Առաքելական Եկեղեցու:

Վազգեն Ա Վեհապետ Հայրապետի գահակալության տարիներին տեղի են ունեցել հետևյալ ընդհանուր ժողովները.

#### 1. 1968 թ. Սուրապյայի (Շվեդիա) 4-րդ ժողով «ԵՍ ԱՄԵՆ ԻՆՉ ԿՆՈՐՈՎԵՄ» կարգախոսով

Հայոց Եկեղեցուց մասնակցել են.

- S. Սերովրե արքեպիսկոպոս Մանուկյան,
- S. Պարզև եպիսկոպոս Գևորգյան,
- S. Մեսրոպ ծ. վարդապետ Գրիգորյան,
- S. Ներսես ծ. վարդապետ Պողոսյան,
- S. Արսեն վարդապետ Պերպերյան:

Այս ժողովի ընթացքում S. Մեսրոպ ծ. վարդապետ Գրիգորյանն ընտրվում է «Հավար և Կարգ» հանձնախմբի անդամ, իսկ Ներսես ծ. վարդապետ Պողոսյանը՝ ԵՏՆ Կենտրոնական Վարչության անդամ: Հետագայում Կենտրոնական Վարչության նիստերին նաև մասնակցում էր Տիար Պարզև Շահբադյանը:

#### 2. 1975 թ. Նայրիորիի (Բենիա) 5-րդ ժողով «ՀԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ ԵՎ ՄԻԱՅՆՈՒՄ Է» կարգախոսով

Մասնակցել են.

- S. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան,
- S. Շահե արքեպիսկոպոս Աճեմյան,
- S. Ներսես եպիսկոպոս Պողոսյան,
- S. Արսեն եպիսկոպոս Պերպերյան,
- Տիար Պարզև Շահբադյան:

Այս ժողովի ընթացքում Հայ Եկեղեցու հեղինակական կոմիտեի անդամներ ընտրվեցին Տ. Շահեն արքեպիսկոպոս Աճեմյանն ու Տ. Արսեն եպիսկոպոս Պերպիրյանը:

### 3. 1983 թ. Վանկուվերի (Կանադա) 6-րդ ժողով «ՆԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՄ ԿՅԱՆՔԸ ԱՇԽԱՐՀԻ» կարգախոսով

Մասնակցել են.

- Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյան.
- Տ. Շահեն արքեպս. Աճեմյան.
- Տ. Վաչե արքեպս. Նովսեփյան.
- Տ. Ներսես եպս. Պողոսյան.
- Տ. Տիրան վրդ. Կյուրեղյան.
- Տ. Եզնիկ քեն. Պերպիրյան:

Այս ժողովին քննարկվեցին Մկրտության, Հաղորդության և Ձեռնադրության խորհուրդներն Էկումենիկ տեսանկյունից դիտված: Նախորդ տարիներին այս խնդիրների շուրջ «Հավատ և Կարո» հանձնախմբում տեղի էին ունեցել մի բանի քննարկումներ և Եկեղեցիներին առաջարկվել «Լիմա դոկումենտը»: Վերջինս կամ BEM (baptism, Eucharist և Ministry) ԵՆՆ պատմության ընթացքում ձեռքբերված կարևորագույն փաստաթղթերից է, որը տրակավին բաց է քննարկման և հետազոտության համար:

Այս ժողովի ընթացքում հայ պատվիրակների առաջարկով քննարկվեց 1915 թվականի Հայոց ցեղասպանության հարցը: Ընդունվեց 4 կետերից բաղկացած մի բանաձև, որով ճանաչվում էր Հայոց ցեղասպանությունը, կոչով դիմում էր արվում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և ԵՆՆ Գլխավոր քարտուղարին, որպեսզի այս հարցը քննարկվի անդամ Եկեղեցիներում:

### 4. 1991 թ. Կաներեայի (Ֆլսպորալիա) 7-րդ ժողով «ՍՈՒՐԲ ՀՈԳԻ, ԱՐԻ ԵՎ ՎԵՐՄՆՈՐՈԳԻ ՍՄԲՈՂՋ ՍՏԵՂԾՄԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ» կարգախոսով

Հայ Եկեղեցու պատվիրակությունը բաղկացած էր 12 հոգուց՝ գլխավորությամբ Ներսես արքեպս. Պողոսյանի: Սույն ժողովի ընթացքին ժողովականներն անդադարձան նաև արցախահայության խնդրին: Ժողովի ընթացքում ընթերցվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուղերձը՝ ի խնդիր արցախահայության իրավունքների պաշտպանության: Ի պատասխան հայ պատվիրակության խնդրանքի՝ ԵՆՆ-ի ժողովական անդամներն արձանագրեցին. «Մենք մտառեցված ենք, Ղաթաթաղի հայ ազգաբնակչությունը զոհ է դառնում խտրականության, ահաբեկչության և բռնությունների»: Նույն հայտարարությամբ ԵՆՆ-ն նաև հայտարարեց.

- անմիջապես միջոցներ ձեռք առնել հայ ազգաբնակչության կրոնական, մշակութային և ազգային շահերը պաշտպանելու,
- ապափովելու Ղաթաթաղի շրջանի թուր բնակիչների մարդկային իրավունքները.

- դիմել անդամ բոլոր Եկեղեցիներին, որ աղոթեն հայության համար, որոնք «պայքարում են հանուն արդարության ու խաղաղության»:

### 1965 թվականի Ադիս Աբեբայի մոդովո

ԵՏՆ-ին Հայ Առաքելական Եկեղեցին անդամագրվեց իր երկու նվիրապետական Աթոռներով: Միևնույն ժամանակ Հայ Առաքելական Եկեղեցին իր դավանանքով և ավանդույթներով պատկանում է Եկեղեցիների Ուղղափառ ընտանիքին, որն իր հերթին բաժանվում է երկու խմբի՝ Հին Արևելյան Ուղղափառ (Oriental Orthodox Churches) և Արևելյան Ուղղափառ (Eastern Orthodox Churches):

Մինչ ԵՏՆ-ում այլ Եկեղեցիների հետ պաշտոնական բանակցություններ վարելը, քնական է, որ Հայ Եկեղեցին իր կեցվածքը պետք է ճշգրտի այս Եկեղեցիների նկատմամբ, որոնց մեջ առաջինը Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիներն էին:

Էկումենիկ շփումների արդյունքում առաջին քայլը եղավ այս Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու դիրքորոշման ճշգրտումը: 1965 թ. Վազգեն Ա-ի ղեկավարած պատվիրակությունը մասնակցեց Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայում Եթովպիայի կայսր Հայլե Սելասիկի հրավերով գումարված այս հինգ Եկեղեցիների գահակալների հանդիպմանը:

Ժողովականները հանդես եկան հայտարարությամբ, որ իրենք «կիսում են միևնույն հավատքը»<sup>5</sup>: Հայ Եկեղեցու կյանքում սա արդի Եկեղեցու պատմության կարևորագույն փաստաթղթերից մեկն է, որն արդյունք է լայնախոհության, և ուր աներկբայորեն թագավորում է «միություն ի կարեորս, զգալություն երկբայելիս և սեր ամենայնում» կարգախոսը:

Պատմությունից հայտնի են դեպքեր, երբ նույնիսկ ծիսական տեղական նշանակություն ունեցող հարցերին տրվում էր սուր դավանարանական բնույթ: Այս նրևույթը պատճառ էր հանդիսանում խորը փարաձայնությունների: Ադիս Աբեբայի համաձայնագրով, ժամանակի պահանջների թելադրանքով, այն հաղթահարված էր: Սա երբ մուտքգում էր և արդյունք՝ առողջ աստվածաբանական մտածողության: 1965 թվականից Հայ Առաքելական Եկեղեցին հաղորդության մեջ է Հին Արևելյան բոլոր Ուղղափառ Եկեղեցիների հետ:

### Հարաբերությունները Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հետ

Էկումենիկ-Միջեկեղեցական հարաբերությունների արդյունքում Հայ Առաքելական Եկեղեցին, որպես մեկը Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիներից, աստվածաբանական 4 ոչ պաշտոնական և 4 պաշտոնական երկխոսություններ ունեցավ Բյուզանդական Ավանդության Ուղղափառ Եկեղեցիների հետ<sup>6</sup>:

<sup>5</sup> Christine Chaillot and Alexander Belopolsky, *Towards Unity The Theological Dialogue between the Orthodox Church and Oriental Orthodox Churches*, Geneva, 1998, 1p 35:

<sup>6</sup> Արևելյան Ուղղափառ (Քաղկեդոնական) և Հին Արևելյան Ուղղափառ (ոչ Քաղկեդոնական) Եկեղեցիների միջև տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները.

Ոչ պաշտոնական հանդիպումները տեղի են ունեցել.

Աստիուս (Դանիա), օգոստոս 11 – 15, 1964 թ., Բրիսբոյ (Ավստրալիա), հուլիս 25 – 29, 1967 թ., Ժնև (Շվեյցարիա).



Այս էկեղեցիների թվին են պատկանում Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքությունը, Անթիոքի և Նամայն Արքեպի Ուղղափառ Պատրիարքությունը, Ալեքսանդրիայի և Նամայն Աֆրիկայի Ուղղափառ Պատրիարքությունը, Երուսաղեմի Ուղղափառ Պատրիարքությունը, Ռուս Ուղղափառ Եկեղեցին, Վրաց Ուղղափառ Եկեղեցին, Բուլղար և Ռումին Ուղղափառ Եկեղեցիները, Կոնստանդին և Նամայն Տելլադայի Ուղղափառ Եկեղեցին, մին Ուղղափառ Եկեղեցիները, Կոնստանդին և Նամայն Տելլադայի Ուղղափառ Եկեղեցին և այլն։ Լեռնասարանի և Ֆինլանդիայի Մեթոդիկությունները, ԱՄՆ Ուղղափառ Եկեղեցին և այլն։ Լեռնասարանի և Ֆինլանդիայի Մեթոդիկությունները, ԱՄՆ Ուղղափառ Եկեղեցին և այլն։

Սյու Եկեղեցիներից սի բանիսի հիտ ճայ Եկեղեցին ունի հարկերը, և ինչպես  
պարտական փորձառություն, որոնց մեջ առանձնանում են հարկապես Լուսարանդուպսի  
Տիեզերական Պարբիարությունը, Ռուս և Վրաց Եկեղեցիները:

Ձեռն Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Է Հայրապետի գահակալության փարիսերին Հայ Եկեղեցին ուղղակի բանակցությունների մեջ չէր այս Եկեղեցիների հետ. սակայն իր անձնական կապերով և փոխադարձ այցելությունների միջոցով բավականին լուրջ հիմքերի վրա էին դրված նրանց հետ Հայ Եկեղեցու հարաբերությունները:

Վազգեն Ա-ի գահակալության շրջանում Նայ, Ռուս և Վրաց եկեղեցիները զարգացրել էին սերպի հարաբերությունների խնդիր խաղաղության հաստատման, եկեղեցականաց սերունդի պատրաստման և կոմունիստական դարաշրջանի մարդասիրականների դեմ լուր պայքարի գործում:

Առանձնակի ուշադրության է արժանի հատկապես Վազգեն Ա Հայրապետի կապերը Ռուս Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքներ Ալեքսի Ա Սիմանսկու, Պիմենի և Ալեքսի Բ-ի հետ: Գրեթե յուրաքանչյուր հայրապետական այցելության ընթացքում (ԽՍՀՄ փառին-րին Հայաստանից միջազգային թռիչքները հիմնականում իրականացվում էին Մոսկվայից) Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետն անձնական համոդիալումներ է ունեցել Ռուս Եկեղեցու պետի հետ:

Որպես հայ-առասական ջերմ, դարավոր հարաբերությունների արդյունք՝ Հայ Եկեղեցու պատվիրակությունը, Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների բոլոր գահակալների մասնակցությամբ, Արարապյան Նախամեծար Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Շապուգույն Պատրիարքի ղեկավարությամբ, ներկա է գտնվում Մոսկվայում և Սերգիև Պոսադում (Նախկինում Զազորսկ) Ռուսիո մկրտության 1000-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին և ի պատիվ այդ նշանավոր իրադարձության տոնական միջոցառումներ իրականացնում Ս. Էջմիածնում:

Ավելին, ձեռքբերված պայմանավորվածությամբ, որը սկսվել էր դեռևս Գևորգ Զ Զորքեյ-  
յան Կաթողիկոսի օրոք, Մայր Աթոռից ուղարկված միաբաններն ուսանում են Մոսկվայի և  
Պետրոբուրգի համալսարաններում:

Ռուս Եկեղեցու հետ հարաբերություններում հաղկապես Ամենայն Հայոց Դպրոցիկոսը խթանում էր ԽՍՀՄ-ում անցկացվող «Խաղաղության միջազգային կոնֆերանսները»:



ԲԵՆԻԴԻԿՏԻՆ ԳԵՐՈՐԳԻՍ ԵՎ ԵՄԻՆԵՆՏԻՆ ԳԵՐՈՐԳԻՍ  
 (ԳԵՐՈՐԳԻՍ, 1970 թ.)







1993 թ. Ռուսաց Պապրիարքի նախաձեռնությամբ փնդի է ունենում Վեհափառի և Աղորեցանի Մուֆտիի հանդիպումը, ուր կոչ է արվում Արցախյան հիմնահարցը լուծել խաղաղ ճանապարհով:

Վերադառնալով Ռուդավառ Եկեղեցիների հետ բանակցություններին, նշենք, որ եկեղեցական երկու ընտանիքների կողմից էլ պարզվորակությունները ներկայացված են նդել առաջադար աստվածարանների կողմից: Բանակցությունների ընթացքում, որոնցից վերջինը փնդի է ունեցել 1993 թվականին, Շվեյցարիայում, Ժնևի մոտ գտնվող Նույն Օրթոդոքս Շամբեցի կենտրոնում, ձեռքբերված համաձայնությունների մեջ ամենակարևորը Քրիստոսարանության հարցի շուրջ է<sup>7</sup>:

### Տարբերությունները Կաթոլիկ Եկեղեցու հետ

1962 թվականին, Տոմի Նովիանենս ԻԳ Պապի գահակալության վերջին փորիններին, սկսվեց Վապիկանի Բ ժողովը, որն ավարտվեց Պողոս Զ Պապի օրոք: Սա նոր իրողություն էր Վապիկանի պատմության մեջ և, ի փարբերություն 1870 թվականի Վապիկանի Ա ժողովի, ավելի միտված էր դեպի Եկեղեցու առաքելության գորացումն ու համաքրիստոնեական միության ձգտումը: Ժողովին դիտորդի կարգավիճակով մասնակցում էին նաև փարբեր Եկեղեցիների աստվածաբաններ, այդ թվում և Նայ Եկեղեցու ներկայացուցիչները՝ Պարզև Եպս. Գևորգյանը, ապա Գարեգին Եպս. Սարցիսյանը (այսուհետ Գարեգին Ա Ամենայն Նայոց Կաթողիկոս)՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից:

Նայ Եկեղեցու ներկայացուցչին Վապիկանում դիտորդ նշանակելու մասին Վազգեն Ա Ամենայն Նայոց Կաթողիկոսը 1963 թվականին հանդես է գալիս հայտարարությամբ՝ ուղղված Նայ Առաքելական Եկեղեցու Գերագույն Տոգևոր Խորհրդին: Կաթոլիկ Եկեղեցու բարեկարգությանը նվիրված հարցերից զատ ժողովն իր 27-րդ նիստում պարզաբանում է Կաթոլիկ Եկեղեցու փնսակետը «Եկեղեցիների միության խնդրում»<sup>8</sup>:

Վապիկանի Բ ժողովից հետո նոր էջ է բացվում Կաթոլիկ և Նայ Եկեղեցիների հարաբերությունների պարմության մեջ, որն արդյունավորվում է մի շարք համաձայնագրերի ստորագրմամբ և վստահության մթնոլորտի ստեղծմամբ<sup>9</sup>: Վապիկանի Երկրորդ ժողովից հետո Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան քահանայապետ և Տոմի Նայիսկոպոս Պողոս Զ-ի հրավերով Վազգեն Ա Ամենայն Նայոց Նայրապետը 1970 թվականի մայիսին մեկնում է Վապիկան<sup>10</sup>:

<sup>7</sup> Smt Christine Chaillot and Alexander Belopolsky, Towards Unity The Theological Dialogue between the Orthodox Church and Oriental Orthodox Churches, Geneva, 1998.

<sup>8</sup> Տնն «Ազգապապում», Լք. 91-97:

<sup>9</sup> Նայ Եկեղեցու պարմության ընթացքում Նայ-Կաթոլիկ եկեղեցական հարաբերություններն սկսվում են 12-րդ դարից: Սակայն երբևէ չի աքանադրվել մեկ փաստ, թույլած բանադիրության մեջ առավա մի բանի ոչ վավարական վաստերի կեղծումի, որ Նայ Եկեղեցու գահակալներն այցելեն Տոմ և որայն հավասարի հավասարի հետ րոնակվեն Տոմի բառանայապետի հետ: Միակ դեպքը, որ փնդի է ունեցել միկել 1970 թվականի Տոմի Սրբազան Զահանայապետ Պողոս Զ Պապին Վազգեն Ա -ի այցելությունը, 1547 թվականի Նայաստանի պարապրության համար փումարված Էմիաննի պարտի ժողովից հետո Ստրվանոս Ե Սպամապեյի Կաթողիկոսի այցելությունն 16-նդարակ ունենալով Նորլյանական՝ 1550 թ. փարում հանդիպել Պապի հետ և Նայաստանի պարապրության համար արմարան փնությունների օրանդակությունը խնդել:

<sup>10</sup> Տնն S. S. Վազգեն Ա Նայրապետի իններորդ ուղևորությունը, Լքմամին, 1970.

Վազգեն Վեհափառի օրոք սկսված հարաբերությունները դրական լիցքեր հաղորդելով երկու Եկեղեցիների բարեկամական հարաբերություններին՝ շարունակվում են մինչև այսօր: Հարկ է նաև նշել, որ Վազգեն Ա-ի գահակալության գարիններին Վապրիկանն Էջմիածնին վերադարձրեց Ա. Թադևոս և Ա. Բարդուղիմեոս առաքյալների մատուցները:

<sup>12</sup> Պապի և Ամենայն հայոց հայրապետի միջև կնքված հռչակագիրը պահ էր նույնը, Իջ 59-60:

*Տ. ԱՍՈՂԻԿ ՔԱՆՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

## ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԸ ՈՐՊԵՍ ՏՈՆԱԽՈՍ

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՀԻՐԱՎԻ, ՇԻՆԱՐԱՐ ԷՐ ԵՎ ԻՐ ԿՅԱՆՔՈՎ,  
ԵՎ ԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ, ԵՎ ԻՐ ՔԱՂՅՐ, ՍԻՐԱԶԵՂ  
ՈՒ ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՍՔՈՎ**

Ամենախնամ Աստծո ողորմությամբ Ի դարի երկրորդ կեսին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելափմն հայրապետական գահին բազմեց մի Ամենավորություն, Ով կոչված էր հոգևոր սխրագործության, քաջագործության, միով րանիվ՝ հրաշագործության: Եվ նա՝ Հայոց Հայրապետը, լի էր շնորհոք ու իմաստությամբ: Նրա անձից ճառագում էր խաղաղարար լույս, քաջայերանք, ներշնչում, հույս, հավատք և իհարկե՝ սեր, և այն էլ Հայոց Հայրապետի սրտին ու հոգուն խոսող ու շար հարագապ աստվածաշնչական վրկայության՝ սեր, որ «...ոչ երբեք անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 8): Եվ բնական է, որ առաքինագարդ Հայոց Հայրապետի ներաշխարհից բխած ամեն մի խոսք, ամեն մի հորդոր ու պատգամ որպես նռաթև ներս սուրալով պիտի ճեղքեր ամենայն պատնեշ ու մխրճվեր այդ խոսքին, հորդորին ու պատգամին ականջալուր յուրաքանչյուր հայորդու հոգու, սրտի ու մարքի մեջ:

Հայոց Հայրապետը հիրավի շինարար էր և՛ Իր կյանքով, և՛ Իր հայրապետագործությամբ, և՛ Իր բա՛ղցր, սիրագե՛ղ ու իմաստուն խոսքով:

... Վազգեն Ա Հայրապետը տոնախոս.

Եկեղեցու անդաստանում տոնախոս է յուրաքանչյուր հոգևորական: Տոնը Եկեղեցու ոգևորության ու գուրեպնդման մշտաբուխ ու հարանորոգ ակունքներից է, իսկ տոնախոսությունն այդ ականակիր ակունքից բխած գուլալ ջրի մատակարարությունն է: Ահավասիկ Հայոց Հայրապետը նաև իմանալի մատակակ է, որ Իր գահակալության 39 տարիների ընթացքում անհոգևաբեկ խնկարկել է Յուր խոսքի, հորդորի ու պատգամի բուրվառը և անուշահոտությամբ պարտուրել հավատալուր հայերին:

Հայոց Հայրապետի տոնախոսություններում գերակշիռ են Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության տոների առթիվ տրված հայրապետական պատգամները, և դա հասկանալի է, քանի որ ընկալալ ավանդույթ է Հայոց Եկեղեցում, ինչպես նաև Ընդհանրական Սուրբ Եկեղեցու մաս եղող մյուս Եկեղեցիներում, որ Եկեղեցու պետերը, մերագկալ կյանքում (Ամենայն Հայոց Հայրապետը, հենց այդ սրբազնասուրբ և ավետավոր տոներին անպայման իրենց մասնավոր պատգամն ավանդեն ի Տեր հուսազալ հոգիներին:


Վազգեն Ա Հայրապետի գահակալության շրջանի՝ Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության ամենամալ 39 պատգամներից յուրաքանչյուրն ինքնատիկ է ու բովանդակալից, հարուստ՝ գեղարվեստական պարկերներով, ինչպես նաև առաա՝ «դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբալ»-ների մատնանշումով: Ծննդյան ու Հարության տոնախոսական պատ-











ԲԱՐՈՋՈՒՄ Է ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ



Սուրբ Ենեղյան և Սուրբ Հարության տոների պատգամներից զար Հայոց Հայրապետի տոնախոսություններում առկա են նաև խոսքեր՝ ասված Կաթողիկե Սուրբ Էջմիածնի, Վարդանանց, Թարգմանչաց և այլ տոների առիթներով, ինչպես նաև տոնախոս Հայրապետ Իր մրաժումներն ու խոհերն է կիսել հավաքավոր հայորդյաց հեծր Պառոկ օրերի խոկումների ընթացքում և, ընդհանրապես, մեր Սուրբ Եկեղեցու տոնական համակարգում առկա այլևայլ տոների ու սրբոց հիշատակությունների առիթներով:

Հարկանշական են Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնի Հայրապետական խոսքերն ու պատգամները: Դրանցում Վազգեն Ա Հայրապետ Իր անհուն սերն ու անմնացորդ նվիրումն է արտահայտել Ամենայն Հայոց աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ, գեղարվեստական գունագեղությամբ ներկայացրել Միածնի հրաշափառ էջքն ի դաշտն Արարապյան, անդրադարձել Սուրբ Էջմիածնի կոչմանն ու առաքելությանը, շնչալի Սուրբ Էջմիածնի գերագահությունը Հայոց Եկեղեցու նվիրապետական համակարգում, վերածայնել Սուրբ Էջմիածնի միջոցով ու օրհնությամբ Հայկյա Տան և մեր առաջին Լուսավորչաց վիճակի փրկագործությունն ու փառավորումը: Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնի առիթով Վազգեն Ա Հայրապետն ի վերջո վկայում է Հայոց Եկեղեցուն. *«Սուրբ Էջմիածնի միշտ կրաշխվի ու չի նվազիր ինչքան բաշխվի, այնքան կշարունակ, ինչքան լույս սփռն՝ այնքան կշողա: Դարերը կուգան, դարերը կանցնեն, և կրաշխուն, կրուսավորեն և կենդանեն միշտ, կյանք տալով՝ կապրի...»:*

Վարդանանց նահապետները Վազգեն Ա Հայրապետի համար եղել են մարմնավորողները քրիստոնեական հավաքի և ազգային ինքնագիտակցության: Իր գահակալության 39 տարիների ընթացքում Հայոց Հայրապետը հաճախ է Իր խոհերն ու մրաժումներն արտահայտել Վարդանանց տոնի՝ Իր իսկ անվանակոչության օրվա առիթով: Եվ ամեն անգամ Իր խոսքում անդրադարձել է Վարդանանց հերոսամարտի խորհրդին և գալիք սերունդներին Վարդանանց նահապետությամբ ավանդված պատգամին. *«Հայրենական վերածննդի մեր օրերին, ազգային վերածննդի առդի իրականության լույսի տակ, Վարդանանց հիշատակը հարցել ու տոնախմբել, մնույ հավատարմիմ նրանց ոգուն ու պատգամին, նշանակում է մեր աշխարհներով, մեր շինարար իրագործումներով, մեր մտքի ու կամեցողության դրսևորումներով, ավելի ու ավելի գորացնել, ամրապնդել առդի հայ պետականության հիմքերը, ավելի ու ավելի համախմբել հայ ժողովրդի զավակները ազատագրված մեր երկրի հողամասի վրա, ավելի ու ավելի ծաղկեցնել մեր ազգային մշակույթը»:*

Ամփոփելով մեր համեստ խորհրդածությունները Վազգեն Ա Հայրապետի տոնախոսությունների վերաբերյալ, նշենք, որ փվյալ տոնի առնչությամբ մատուցված տոնական գիտելիքներից զար, լուսափող Հայրապետ Իր խոսքերում ու պատգամներում առանց բացառության շոշափում է ազգային-եկեղեցական կյանքին առնչվող և այդ կյանքը փոթորկող հարցեր: Եռաշափում է և միևնույն ժամանակ, Իրեն հաղուկ իմաստությամբ ու խորաթափանցությամբ, փվյալ տոնի հոգևոր խորհուրդներից համապատասխան ու անհրաժեշտ հորդորն ու պատգամն է քննելու՝ իբրև հանգուցալուծում ի հայտ եկած խնդրի: Ի վերջո, Հայոց Հայրապետը յուրաքանչյուր տոնի առիթով բաշխած Իր խոսքով հայորդու սերն ու

նվիրումն է ամրապնդում Հայոց Եկեղեցու, Հայոց Հայրենիի և Հայոց նվիրական սրբությունների հանդեպ:

Միով բանիվ, ինչպես Հայոց Հայրապետի Անձն էր ամենքնող, գրավիչ ու սիրելի, այնպես և Նորին Սրբության խոսքը, որ այսօր և ցկապարած աշխարհի, վստահաբար, յուրաքանչյուրը պիտի ղնթեցի հափշտակությամբ և հուզվի ու զմայլվի:

Երջանկաեղբայրակ Վազգեն Վեհափառ մի ամիթով Իր իղձն էր արտահայտել՝ ասելով. *«Մենք չստիպվեցինք միմեքմեք կլինենք, եթե մի կայիլ լույս Մեզանից հեկոտակուհա մեր բազմադարյան Եկեղեցու պատմության գանձարանի մեջ, և մի շողով ավելի ճառագայթի Լուսավորչի անմար կանթեղը»:*

Սիրելի Հայրապետ Հայոց, թույլ տվեք ասել, որ Ձերդ Սրբության հոգու փափագն իրագործվել է, և Լուսավորչի անմար կանթեղը ոչ թե մի շողով, այլ Վեհիդ օրենյալ հայրապետագործությամբ բյուրապարիկ ճաճանքներով ավելի է ճառագայթում Հավուրբ, Հույս, Մեր և Լույս սկտելով ի Տեր ապավինյալ հայ ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս աշխարհի:

Բյուր օրենություն Վազգեն Ա Շինարար Հայրապետի լույս հիշարակին. ամեն:

ՆԱԿՈՒՐ ՈՒՐԱՐԱԿԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՎԱԶԳԵՆ Ա ՇԻՆԱՐԱՐ

*«Քրիստոնեությունը լուր համոզմունքի  
մեջ չէ այլ գործի մեծություն»:*

(Սուրբ Իզնատիոս Ամրիոքացի)

Վազգեն Շինարար... անուն, որ յուրաքանչյուր ժողովրդի արժեքների անդաստանում էլ մեծ կեամարվեր: Այդ անունը նա վաստակեց ամենայն իրավամբ, և մենք էլ նրան այդպես ենք կոչում եպարությունը ու ակնածանքով: Գահ բարձրանալու առաջին իսկ օրվանից սկսեց կառուցել, ստեղծել, հրաշակելու անսպառ նռնադու, անվերջ ու անդադրում, և հենց այդ պարճառով էլ հայ ազգը նրան պարվեց «Շինարար» տիտղոսով: Վեհափառն իր գահակալության 39 տարիների ընթացքում ամենացորդ նվիրվեց հայ ժողովրդին, նրա մշակույթի ծաղկմանն ու հարստացմանը: Նա այն մեծ հոգևորականն էր, որ մինչև կյանքի վերջին րոպեն ապրեց Մսրժոռ հետ, իր հայրենիքի սրտի մեջ և իր հոգում պահեց Սուրբ Էջմիածնի խորհուրդը: Նա իր մեջ կրեց իր Եկեղեցին սիրելու փոփոխ այն փարոհությունը, որն ունեցել էին մեր մեծ Հայրապետները, և իր անձով ու սրբականացող կյանքով Հայոց Եկեղեցուն կապեց հայ ժողովրդի բազում զավակների: Իր անձը ներշնչումի աղբյուր էր և հոգևոր նորոգության հրավիրող մի ներկայություն, նրա համար հայրենիքը խորան էր, Եկեղեցին՝ աղոթք: Երկար տարիների իր գործունեության ընթացքում բազմապատկվել են նրա շնորհները Հայ Եկեղեցու և հավատացյալ ժողովրդի ծառայության ճանապարհին, ճանապարհ, որ հաճախ եղել է փշուր ու փռապալից: Սակայն իբրև բաջ հովիվ՝ նա բոլոր փոթորիկներին դիմադրել է հոգու խաղաղությամբ, մտքի պայծառությամբ, իր լույսի ծարավ հոգով ու անսահման սիրով:

Այսպես ժողովրդի ծոցից ծնված Վազգեն Շինարարն ապրեց ու գործեց հարազատ ազգի համար, և հայրենակիցներն էլ սկսեցին նրան սիրել ու նրան հանձնեցին հայրապետական զավագանը: Նա բաջ գիտակցում էր իր ապրած ժամանակների բարոյությունն ու հակասականությունը: Սակայն ամենակարևորն այն էր, որ հավատք էր ներշնչում մարդկանց: Այդ զգացողությունն առկա է թե՛ հայրենասիրական և թե՛ քրիստոնեական ինքնարտահայտությունների մեջ: Հայոց Հայրապետը երջանիկ էր, որ Մսրժոռ ողորմությամբ կոչված էր լուսարարը լինելու իր ազգի Սրբություն Սրբոցի և որ պիտի տրեք իր նվիրյալ գործակիցների հետ միասին ավելի ու ավելի պայծառացնելու, գորացնելու և փառավորելու այն: Նա երբեք չտկարացավ, բնավ չհոգնեց, ինչքան որ ապրեց՝ աշխարհեց Սուրբ Էջմիածնի համար, ազգի համար, հայ ժողովրդի բարօրության և վերագարթոնքի համար: Եվ չնայած բոլոր դժվարություններին՝ նա կենսորոնացրեց իր բոլոր ուժերն ու գործունեությունը՝ մի ձևով խաղ, իսկ մյուսին՝ Ավետարանը, շննացրեց Մայր Տաճարը, իր գործով, խոսքով դարձավ քարոզիչ, ուսուցիչ, բարոյական սրբառույց նկարագրով եղավ հայրենասիրության և եկեղե-



ցասիրության ճշմարիտ օրինակ: Խորունկ հավատքով և ուժեղ նկարագրով դիմակայեց ու հաղթահարեց բոլոր փորձությունները: Ու թերևս այս արժանիքներն էին, որ տեսավ ու գնահատեց հայ ժողովուրդը:

Հայոց հողի վրա բազում են հկեղեցիները, որոնք հպարտությամբ իրենց հայացքներն են ուղղել առ Աստված, և որոնք երկինք են հառնել հենց Շինարար Հաթոդիկոսի օրոք: Այդ տաճարներից յուրաքանչյուրը մի կենդանի վկա է եկած ու անցած ժամանակների: Դրանք մեզ կապում են անցյալի հետ՝ փոխանցելով մեզ այն բացարձակ իրողությունը, որ մեր ազգը գլխից անշունչ քարից տաճարներ կերտել, քարերի մեջ գնել իր հոգին ու նրան փոխանցել իր շունչը: Հենց այս հանգամանքներն էլ քաջ գիտակցելով՝ Վեհափառը կառուցեց ու նորոգեց եկեղեցիներ ու մատուռներ, որոնց միջոցով էլ երկինք պիտի համբառնային մեր ժողովրդի երազներն ու բարի հույսերը:

Վազգեն Վեհափառի կյանքն ու գործը՝ առաքելության վաստակով, հարուստ և ուսանելի է բոլորիս համար: Այսինքն և գործունեություն, որ գեղեցիկ և կենդանի օրինակ է ճշմարիտ հայրենասիրության, եկեղեցական խոնարհության, վսեմ պարգության, իսկական ժողովրդասիրության, որոնք իսկապես զարդարում են ազգի Հովվապետին:

Ամենամեծ դատավորը և գնահատողը ժամանակն է. անցողիկն ու ամենօրյան մոռացվում են, իսկ խոշոր, գնահատելի արժեքները շրջանցում են ժամանակը և ապրում նրանից դուրս: Վազգեն Վեհափառի գործն այնքան ակնառու և ընդարձակ է, որ գալիք ժամանակներում նրա վաստակն ու տրեւանքը՝ գերակշիռ մասով, կմնան որպես ազգի և եկեղեցու անանց արժեքներ:

Եվ այժմ էլ, երբ լրանում է Ամենայն Հայոց Հաթոդիկոս Վազգեն Առաջինի մահվան 10-րդ տարին, նրա կատարած հսկայական աշխատանքների հիման վրա կարող ենք ասել, որ Հայ Եկեղեցին, հանձին երջանկաեկեղեցարակ Հայրապետի, ունեցավ պայծառ մարքով ու հավատքով, նվիրումով, գործունյա, շինարար Հաթոդիկոս, որն իր ուսերի վրա կրում էր Ամենայն Հայոց Հաթոդիկոսության լուծը՝ պարտքի և առաքելության խորին գիտակցությամբ:

Վազգեն Առաջինի երկրային կյանքի ավարտից թեև արդեն անցել է մեկ տասնամյակ, սակայն Վեհափառի սիրտը մեզ համար այսօր էլ բաբախում է նույն կենդանի շնչով, նույն ջերմությամբ՝ բոլորիս բաշխելով Աստծո շնորհներն ու անսպառ օրհնությունները:

Խուսկ և բյուր օրհնություն Վեհափառի խնկելի հիշատակին. ամեն:

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՅԱՐՈՒԹԵԱՆ» ՏԱՂԸ

Նարեկացի մեծ կարևորություն է տվել կյանքի շարունակականության և հավիտենականության առեղծվածին: Նաև այս պատճառով եմ գրվել այն մի քանի Հարության տաղերը, որոնցից մեկն էլ «Սայլիկ»-ն է: Դրանք բոլորն էլ արտահայտում են հարության, հոգու փրկության և կենդանության<sup>1</sup> գաղափարը:

Թվում էր, թե սայլի մասին այդ փոքրիկ գրուցապատումն առանձնահատուկ որևէ բան չպիտի ավելացնեք եղածին, սակայն փաստերն այլ բան են ասում: Իրականում այն կարևոր նշանակություն ունի և՛ բանաստեղծի աշխարհայացքային համակարգը ճիշտ պատկերացնելու, և՛ ժամանակաշրջանի մտավոր առաջընթացը համակողմանի մեկնաբանելու համար: Տաղում պատկերվում է, թե ինչպես Մասյաց լամբից իջնում է սայլը և ուղղություն վերցնում դեպի Երուսաղեմ:

Ի գիլ գայր, ի գիլ, սայլիկն ի գիլ,

Ի Մասեաց լաջ կողմանեմ

Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ.

Եւ ճողնչալով գայր, մտանէր յԵրուսաղեմ<sup>2</sup>:

Տաղի սկզբնամասում պատկերվում է սայլն՝ իր վրա եղած աթոռներով, զահույքով, դրան բազմած Արքայորդով: Նրա աջ և ահյակ կողմերում վեցթևյա սերովքներ են, բազմաչյա քերովքներ, առջևում՝ գեղեցիկ մանուկներ, ձեռքներին՝ Տերունական խաչը, Սաղմոսարան և քնար: Մանկանց խումբը երգում է. «Փա՛ռըք Քրիստոսի ամենագոր յարութեան», և այս կրկներգային տողը հանդիպում է այլ տների վերջում ևս: Սայլը կանգնած է, մինչև «ճապուկ» ճորտը ձայնում է եզներին և այն տանում հիշված ուղղությամբ (Երուսաղեմ):

Այս ստեղծագործությունը բարձր է գնահատված հին գրականության մեծ գիտակ Մ. Արեղյանի կողմից: Նրա կարծիքով, այն Հայկական վերածնության ամենաբարձր արտահայտություններից մեկն է հայ բանաստեղծության մեջ<sup>3</sup>: Ըստ էության, վերցնելով հայ-

<sup>1</sup> Տես Ս. Ղազմենան, Գրիգոր Նարեկացի (բանաստեղծական արուեստը), Ամթիլխաս-Լիբանան, 1995, էջ 125:

<sup>2</sup> Ս. Մուշեղյան, Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի» մոր մեկնությունը, «Քրիստոնյա Հայաստան» (թերթ), 2003, թ. 22, էջ 2: Մենք հետագա վերլուծությունները կատարել ենք այս քննադրի հիման վրա, քանզի մյուսները պակասավոր են: Հոդվածը տպված է մույն թվականի թ. 22-24 համարներում: Բոլոր հետազոտողներն էլ դժգոհում են գրչական աղավաղումների փաստից: Տաղի քննական քննադրերը կազմել են՝ Ս. Մխիթարյան, Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Ե., 1957. Ս. Զյոչկերյան, Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանգեր, Ե., 1981: Ս. Զյոչկերյանը նշում է, որ տաղը աղբյուրներում համընթաց է գալիս ոչ միատեսակ խորագրով, տե՛ս էջ 253:

<sup>3</sup> Տես Ս. Արեղյան, Երկեր, հ. Գ, Ե., 1968, էջ 625-626:





նկատառումներից ելնելով՝ կարող ենք ասել, որ Ս. Էջմիածինը կապվում է թեմայի հետ մի քանի առումներով.

ա. Քրիստոնեական առաջին սրբավայրն է Հայոց աշխարհում.

բ. Այնտեղ է իջնում Միածինը և ցույց տալիս Հայոց Մայր եկեղեցու կառուցման տեղը.

գ. Այնտեղից է Միածինն իջնում և ավերում սամղարամետը<sup>9</sup>.

դ. Վերջապես՝ Արարատը հետջրհեղեղյան սկիզբ է մարդկության, իսկ Էջմիածինը՝ քրիստոնեության սկզբնավորման: Սայլի խորհրդավոր ընթացքի մեջ կարելի է տեսնել քրիստոնեության սկզբնավորման ու տարածման ընթացքը նաև:

Միածնի և սայլի էջքը ներքին առնչություն անպայմանորեն ունեն: Սայլը կանգնած է այնտեղ, ուր Նոյը տնկեց առաջին որթատունկը: Խոսքը թերևս Ակոռիի մասին է, որն իսկապես գտնվում է Մեծ Մասսի հյուսիսարևմտյան լանջին (այժ Կողմում, երկրաշարժից կործանված 1840 թ.)<sup>10</sup>: Գրիգոր Մագիստրոսը 11-րդ դարում այս մասին գրում է. «Բայց առ Հրէից և յաստուածեղէն մատենից նաև ի Քաղղեաց գՔսիսութեա իմանամք զորթ տնկեալ: Եւ ի ծերոց առասպելաբանեն ասել յԱկոռի, և ստուգաբանեն եթէ Արկ ուռի»<sup>11</sup>: Հրեական Մատյանները և քաղղեացոց՝ Քսյուսթեսի վերաբերյալ առասպելները վկայում են այստեղ խաղողի առաջին որթի տնկելու մասին: Ավելացնում է, թե Նոյը հատելով ջրհեղեղից աղաջ այստեղ եղած ծառերի ճյուղերը՝ հիմնում է նոր այգի, ստանում խաղողի հյութ (գինի), ու այն ըմպելու պատճառով Քամը ծիծաղում է հոր վրա: Ուրեմն այս առաջին բնակավայրն ու այգին և Նարեկացու սայլի կանգնած տեղը, հավանական է, նույնն են:

Թեև պատկերված է իրական սայլ, սակայն նրա գործառույթն իրական չէ, այլ բիբլիական, ինչպես այդ մասին հաստատում է Աս. Մնացականյանը<sup>12</sup>: Ըստ մտահղացման, սայլը պիտի շարժվեր Նոյի իջած ճանապարհով: Հարցը կարծեք ինչ-որ չափով պարզվում է. բոլոր առումներով սայլը իջնում է Սուրբ լեռից՝ իր մեջ ունենալով Հին և Նոր Ուխտի անհրաժեշտ բոլոր խորհրդանշանները: Եվ ոչինչ չի խանգարում բանաստեղծին այդպես վարվել, քանզի նրանք ոչ նույնական, բայց գործառույթով նման են: Սա առավել քան մոտեցնում է Տիրոջ և Նրա Առաջին եկեղեցու իրական և խորհրդանշական կապը: Փաստորեն Նոյի՝ Աստծո մարդու, և Աստծո Որդու իջած ճանապարհները նույն երկրային ճանապարհն են: Բայց դա որքան իրական, նույնքան էլ խորհրդական է հատկապես 2-րդ դեպքում:

3. Տաղում թերևս գործածվել է նաև հին հնդեվրոպացիների և նրանց ազգակից հայերի մեջ վաղուց տարածված արևի առասպելի մի դրվագը՝ որոշ փոփոխությամբ և որոշ քրիստոնեական այլաբանությամբ հաղերձ: Հույները Արև-Հելիոսի մասին պատմում են, որ իր երկանվով շրջում էր երկնքով, իր հատուկ ճանապարհով, կառքին լծած չորս թևավոր ձիերի<sup>13</sup>, «իջնում է դեպի օվկիանոսի սրբազան ջրերը: Այստեղ նրան սպասում է իր ռսկեղեն

<sup>9</sup> Տես Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Ե., 1977, էջ 107:

<sup>10</sup> Տես Թ. Գալոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1984, էջ 136:

<sup>11</sup> Տես Գրիգոր Մագիստրոսի բոլորը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 79-80:

<sup>12</sup> Տես Աս. Մնացականյան, ԺՅ-ԺԷ դդ. մոտացված բանաստեղծ Գր. Վանեցի և նրա անտիպ տաղերը, «Եջմիածին», ք. ժ, 1975, էջ 41: Գիտնականը սայլը իրական համարելու համար հիմքեր չի տեսնում, տես էջ 42:

<sup>13</sup> Տես Ն. Կուն, Գին Գունաստանի լեգենդներն ու առասպելները, Ե., 1979, էջ 76:

<sup>19</sup> Տե՛ս Ա. Մուշեղյան, Նույն թերթի 2003-ի թ. 24, էջ 4: Դժվար է հասաձայնել մեծարգո պրոֆեսորի հետ այն հարցում, թե այլաբանական մասը հետագա զրբական հավելում է:

ցաքանության միջավայրում, և այդ մասին Աս. Մնացականյանը գրում է. «Եղած փաստերից ավելի ուշագրավ են ասորեստանցիների համապատասխան պատկերացումները: Ասորական աստղային... աստվածները չորսն էին՝ Մարդուկը, որին պատկերում էին թևավոր եզ, Ներուն՝ թևավոր մարդ, Ներգալը՝ թևավոր առյուծ, և Նիմուրտեն՝ արծիվ»<sup>20</sup>: Այդ աստվածությունների արտահայտություններն են մարդ-առյուծի, մարդ-եզների, մարդ-թռչունների և մեծ էակների նկարագրությունները գրական հուշարձաններում: Չորս կենդանիների վրա է խարսխված և վարդան Անեցու վասն կառաց հանրահայտ ներքողը, որի Մարդը, Առյուծը, Եզը և Արծիվը խորհրդանշական-հրաշալի էակներ են՝ օժտված Ա. թևերով, Ա. շնչով, Ա. երեսով, Ա. ոտքերով<sup>21</sup>: Դա նշանակում է, որ Մասի լանջին հայտնված սայլը որքան իրական, այնուամենայնիվ աշխատանքային սայլ չէ: Հիշյալ երկնային-առասպելական սայլը արարված աշխարհն է՝ անժամանակյա և ոչ պատմական: Նրա տարածականությունը և նյութական լինելը պայմանական է: Դրա համար էլ հեղինակը որոշակիացումներ չի արել: Նվազաբերությունը, որով հորինված է տվյալ պատկերը<sup>22</sup>, երևան է հանում երևակայական տարածությունը:

Իսկ ժամանակի հարցում արված է մի որոշակիացում. այն խորհրդանշում է մարդկության քրիստոնեական սկիզբը: «Սայլի ընթացքը Մասիսից դեպի Երուսաղեմ, - գրում է Ալ. Մուշեղյանը, - խորհրդանշում է ջրհեղեղից մորոգված մարդկության հոգևոր ընթացքը... Նոյից, մինչև Քրիստոսի հարությունը Երուսաղեմում»<sup>23</sup>: Հետազոտողն այն կարծիքին է, որ պատկերը ժամանակային ընկալում ունի, և դա ճիշտ է: Բայց այս ամենը կրելով իրենում տաղմ ունի և այլ խորքային ենթաշերտեր: Օրինակ այն, որ Ավետարանները քաղովելու են ողջ տիեզերքում<sup>24</sup>: Երուսաղեմի պատկերն ավելի վերաբերում է երկնային, քան երկրային Քաղաքին: Եվ իսկապես. եթե խոսքը երկրային մասին լիներ, ապա Քրիստոս գնում է խաչվելու, իսկ եթե երկնային, ապա հրաշափառ Հարությանը նախապատրաստվում է իր փառքին տիրանալու: Հովհաննու Հայտնության վերջնամասում ասվում է. «Եվ տեսա սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը, որ իջնում էր Աստծու մոտից, երկնքից՝ զարդարված ու պատրաստ, ինչպես հարսն իր ամուսնու համար»<sup>25</sup>: Բայց չի տրվում այն հարցը՝ իսկ հետո\*, որովհետև սայլը և զահույքին մատած Արքայորդին հասնում են իրենց մպատակակետին: Այստեղ ընդհանրացած ձևով արտահայտվում է այն միտքը, որ Քրիստոսը քարոզեց, և նրա ուսմունքը հավատքի մալի (սայլի) ձևով բեռնավորված գնում է ըստ նշանակության:

5. Սայլն ակնհայտորեն խորհրդանշում է և հավատքի «մալը», որ մույն Նոյան տա-

<sup>20</sup> Տես Աս. Մնացականյան, Բանաստեղծ Վարդան Արևելցին և նրա ներքողը, էջ 269:

<sup>21</sup> Տես Նույն տեղում, էջ 281-291: Այս թեմայով է կատարված Ա. Գեղարդի նշանավոր հարթաքանդակը՝ կամարի սյան վերնամասում, ուր պատկերված են եզան գլուխը, քթի օղակից ազուցված զուլգ առյուծները, ներքևից կախված զանգակաթև արծիվը՝ ճանկերով բռնած խոյին (Ռդդուն). ինչպես տեսնում ենք, առկա են կառքի չորս էակները: Տես Ա. Գեղարդ (այլոմ), լուսանկարները՝ Դ. Պողոսյանի, Սայր Սթոն Ս. Էջմիածին, 1978:

<sup>22</sup> Տես նույն տեղում,

<sup>23</sup> Ալ. Մուշեղյան, Եջ. աշխ., ք. 24, էջ 6:

<sup>24</sup> Տես Աստվածաշունչ, Մատ. ԻԴ 14:

<sup>25</sup> Յայտ. ԻԱ 2:





Նարեկացին դրանով արտահայտում է նաև Նրա գործի թաղթանակը: Նոյյան տապանը փոխարինվում է մի այլ «նավով», որը սպասում է Մասյաց լանջին, մինչև մարգարեների ստեղծած «բերքը» թափանցանա, հեծվի, մինչև գա իր ժամանակը: Այլ. Մուշեղյանը ճիշտ է կոաֆում խնդիրը, և բերքով բարձված սայլն այս դեպքում պիտի գնա ըստ նշանակության<sup>24</sup>: Արդեն կարգաբանված աշխարհն է՝ ալվելի է կազմակերպվում: Սայլն ընթանում է կայացած-նյութականացած աշխարհի միջով, որն այդ ժամանակ եմթակա չէ կործանարար ցնցումների: Իսկ Հիսուսի խորհրդանշական մոտքը Մասիսից դեպի Սուրբ Քաղաք հիշեցնում է մի դեպքում երկու սրբավայրերի աստվածային կապը ու մյուս դեպքում՝ պատումի խորհրդանշական բնույթը: Եվ հավանական է թվում այն, որ այս դեպքում Քրիստոսը վերջնականապես է մտնում Սուրբ Քաղաք՝ հաստատելու իր հավերժական թագավորությունը:

Այսպիսով՝ Գրիգոր Նարեկացու «Յարութեան» տաղը բարդ և հետաքրքրական հղացում է՝ լի բանաստեղծական անակնկալներով: Նրա մասին դեռ շատ ուսումնասիրություններ կգրվեն, և առավել կբացահայտվեն այդ երկի ներքին շերտերը: Պարզ է մի բան. Նարեկացին միաժամանակ պատկերում է մարդկության ու քրիստոնեության անցած և երկնային արքայության սերունդների դեռևս անցնելիք ճանապարհը:

<sup>24</sup> Տե՛ս Ա. Մուշեղյան, նշ. աշխ., թ. 24, էջ 6:

## ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

## ԱՐԱ ՀԱՎՈՐՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՊԱՌՈՎԿԻԱՅԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ  
ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Քաղաքական ու տնտեսական ծանր պայմանների հետևանքով շատ ժողովուրդներ՝ հույները, հրեաները, ասորիները և, իհարկե, հայերը, ստիպված են եղել թողնել հայրենիքը և գաղթել օտար ափեր: Հայերը, սակայն, նոր ապաստանած երկրներում կենսականորեն կապված են մնացել ազգային մշակույթի ու հավատի հետ: Թերևս դժվար է գտնել մեկ այլ ժողովուրդ, որը հայի մոտ իր մայր երկրից դուրս՝ գաղթավայրերում՝ Կ. Պոլիս, մեկ այլ ժողովուրդ, որը հայի մոտ իր մայր երկրից դուրս՝ գաղթավայրերում՝ Կ. Պոլիս, Ղրիմ, Նոր Զուղա, Նոր Նախիջևան, Լվով, Կոնստանդնուպոլիսի արվեստի մասն բարձրաժողովրդական ազգային գործեր: Հայ մարդու կողմից որքա՞ն ձեռագիր-մատյաններ են ստեղծվել աշխարհի ամենահեռավոր անկյուններում:

Նման մի հետաքրքրական երևույթ կատարվել է պատմական Հայաստանի արևմտյան սահմաններից այն կողմ՝ Փոքր Ասիայի բարձրադիր մասում, Տավրոս լեռան ու Եփրատ գետի շրջաններում:

Հայերն այստեղ վաղուց են բնակություն հաստատել<sup>1</sup>: Տեղեկություններ կան, որ դեռևս IV-V դարերում, պարսիկների հետ ընդհարումների հետևանքով, հայ իշխանական տների որոշ ներկայացուցիչներ անցել են Կապադոկիա: Մովսես Խորենացին Կապադոկիան անգամ համարում է Հայոց երկրի արևմտյան մասը<sup>2</sup>:

Կապադոկիայում հայերի թիվը մեծացավ հատկապես XI դ. կեսերից, սելջուկյան արշավանքների շրջանում: Սելջուկյան նվաճումներից առաջ էլ բյուզանդացիները տարբեր միջոցներով տիրացել էին Հայաստանի հարավային տարածքներին:

Կապադոկիայի կապակցությամբ հետաքրքրական է պատմիչ Միքայել Ասորու հետևյալ տողերը. «Հայերը բազմացան այս կողմերը (XI դ.) և անկից է, որ տարածուեցան բոլոր Կապադոկիա, Կիլիկիա և Ասորիք»<sup>3</sup>: Նման տեղեկություններ հաճախում են նաև հայկական մի շարք աղբյուրներում<sup>4</sup>:

Խաչակիրների պատմիչները Կապադոկիայի հայաբնակ վայրերը դեռ այն ժամանակ կոչել են *հայկական երկիր*<sup>5</sup>:

<sup>1</sup> Նիկողայոս Աղոնց, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*, Երևան, 1987թ., էջ 80-89, 388-389, 439 և այլն:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, *Պատմություն հայոց*, Գիրք Ա, Գլ. ԺԴ:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Ալպոյաճեան, *Պատմություն հայ կեսարիոյ*, Կաթիք, 1937, էջ 338:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, Արիստակես Լաստիվերտցի, Մատթեոս Ուոհայեցի, Սամուել Անցի և ուրիշներ:

<sup>5</sup> Տե՛ս G. de Jерphanion, *Une nouvelle province de l'ari Byzantin, les églises rupestres de Cappadoce*, Paris, II, 1932, p. 398 (ն. 3).



«Վեց Քարիւր տարիների ընթացքում, որ Կապաղովկիա կը մնար Բիզանդական կայսերության տիրապետության տակ, — գրում է Ա. Ալպոյաճյանը, — շարունակ պետությունը կը լցուէր Քայերով, որոնցմէ ստուար մաս մըն ալ ապահովաբար բաժին կիյնար Կապաղովկիոյ, որուն մէկ կարևոր մասը արդեն Փոքր Հայքի սահմաններուն մէջ մտած էր հռոմէական տիրապետության շրջանին Քայ բնակչության թվին աճումին պատճառով»<sup>6</sup>:

Մաղաքիա արքեպս. Օրմանյանը «Ազգապատում» կոթողային աշխատության մեջ ներկայացնում է Հայոց Եկեղեցու Կապաղովկիայի թեմի գործունեությունը<sup>7</sup>:

Ի. Դյակոնովը Կապաղովկյան լեզուն համարել է «պրոտոհայկակա»<sup>8</sup>: Հույն գիտնական Պ. Կարուիդեսը Կապաղովկյան շատ բառերի և արտահայտությունների ծագումը կապում է Քայերի հետ<sup>9</sup>:



Վիլանյե եկեղեցու արևմտյան թևը և մարտեզը

Ինչպես տեսնում ենք, գրականության մեջ բազմաթիվ փաստեր կան՝ կապված Կապաղովկիայում ապրող Քայերի, նրանց կյանքի ու կենցաղի մասին: Ջարմանայիորեն, սակայն, որևէ Քայ հեղինակի առանձին մի հոդված գոյություն չունի Կապաղովկիայում ապրող Քայերի ստեղծած արվեստի մասին: Դրան վերաբերող աղբատիկ տեղեկությունները ստիպված ենք քաղել օտար հեղինակների աշխատություններից: Ի դեպ, ազգային մշակույթի Ռուշարձանների հետ կապված մեծ վիճակը բացառություն չէ: Այդպես եղել է մասն Հայաստանի տարածքում. օրինակ՝ Վասպուրականի Վարազա վանքի Ս. Գևորգ ժամատան որմնակարների մասին հանգամանորեն խոսել է միայն ֆրանսիացի Միշել Թիեբրին<sup>10</sup>: Նույն հեղինակի ջանքերի շնորհիվ առաջին անգամ տեղեկացանք Վասպուրականի Կապուտկող լեռան բարձրադիր լանջում գտնվող Ս. Հակոբ եկեղեցու ընտիր որմնակարների մասին<sup>11</sup>:

<sup>6</sup> Ա. Ալպոյաճյան, *Պատմություն Քայ կենտրոնի*, Կաթիկոն, 1937, էջ 334:

<sup>7</sup> «Ազգապատում», Կ. Պոլիս, 1912, էջ 101:

<sup>8</sup> *История армянского народа*, Ерewan, 1968, стр. 222.

<sup>9</sup> Հ. Քարեկյան, *Կոստանդին Միրանձիկ*, Բյուզանդական աղբյուրները Հայաստանի և Քայերի մասին, Բ. երևան, 1970, էջ 171-172:

<sup>10</sup> M. Thiberry, *Monastères Arméniens du Vaspourakan le convent de Varagavank*, "Re. Arm.", t. VI, Paris, 1970, p. 150-161.

<sup>11</sup> *Revue des Etudes Arméniennes*, t. V, Paris, 1968, p. 65-79: Այս եկեղեցին կառուցել և մկարագրել է տվյալ Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմը: Եկեղեցու պատերից մեկի վրա մկարված է Սենեքերիմ թագավորը՝ իր շքախմբի անդամների հետ:

Ուրեմն մույն վիճակն է եղել Կապադովկիայի X-XI դդ. հայկական եկեղեցիների և դրանց որմնամկարների պարագայում: Վերջիններիս մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում եվրոպացի գիտնականներ Գ. դը ժերֆանիոնը, Հ. Ռոտտեն, Ն. և Մ. Թիերի-մերը, Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը և այլք:

Առաջին անգամ այս մասին հրապարակումներ եղել են XX դ. սկզբին, երբ Գեզգի բնակավայրի մոտի քարանձավում գտնվող Սուրբ Կարապետ հայկական եկեղեցին հայտնաբերել և ուսումնասիրել է գերմանացի գիտնական Հելմուտ Ռոտտը<sup>12</sup>:



Աղուց-Աղթի եկեղեցու զմբթի որմնամկարները

Հ. Ռոտտից հետո Կապադովկիայի հայկական եկեղեցիներին և դրանց արվեստին անդրադարձել է ֆրանսիացի գիտնական Գ. ժերֆանիոնը: Իր եռաժառոտ աշխատության մեջ, տարբեր առիթներով, նա խոսում է այդ վայրերում հայերի մշակութային գործունեության մասին. «Լիկանդոս և Ծամնդավ քաղաքներում վաղուց ի վեր հաստատվել էր Բարձր Հայքից եկած բնակչության մի հատված՝ Մլեն (Մելիուս) հայի գլխավորությամբ: Նը-

րանք բանակաթեմեր ունեին և եռանդուն մասնակցություն էին ունենում տեղական կյանքին: Նրանք որոշակի դեր խաղացին այդ քաղաքների վերակառուցման գործում. իսկ եկեղեցիների ներսում գտնվող որմնամկարների հունական արձանագրություններն այնքան անկանոն ու սխալներով են զրկված, որ դրանց հեղինակների ոչ հույն լինելը կասկած չի հարուցում»<sup>13</sup>: Գ. ժերֆանիոնն ավելի որոշակիորեն է գրում հատկապես Սպիտակ եկեղեցի անվանված եկեղեցու կապակցությամբ. «Նրա զմբթի ու ներսի դեկորատիվ զարդաձարդարանքի ոճաձևաքանական առանձնահատկություններում դրսևորում է հայկական ոճը»<sup>14</sup>:

Հաջորդ գիտնականը, որն ավելի հանգամանորեն է գրում Կապադովկիայի հայկական եկեղեցիների արվեստի մասին, Ժակլին Լաֆոնտեն-Դոզոնն է: Դեռևս 1963 թ. իր «Նոր տեղեկություններ Կապադովկիայի մասին» հոդվածում<sup>15</sup> նա անդրադառնում է Կապադովկիայի հայկական արվեստի հարցերին՝ խոսքը մասնավորելով եկեղեցիներից մեկում

<sup>12</sup> H. Roll, *Kleinasiatische dankmäler aus Pisiden, Pamphylien, Kappadokien und Lydien*, Leipzig, 1908, p. 200.

<sup>13</sup> Գ. դը ժերֆանիոն, *ճշվ. աղթ.*, հատոր IV, 1942, էջ 398-400 (Կապադովկիայի հայերը գրել են հունարեն, որի պատճառով և՛ սխալներով. մի քան, որն իր արտահայտությունն է գտել որմնամկարներում):

<sup>14</sup> Գ. դը ժերֆանիոն, *ճշվ. աղթ.*, հատոր IV, 1942, էջ 417:

<sup>15</sup> J. Lafontaine-Dosogne, *Nouvelles notes Cappadociennes (Extrait de «Byzantion»)*, in XXXIII, Bruxelles, p.p. 121-183.



հայ Մլխ գորավարի պատկերի շուրջ: Նա գտնում է, որ այդ պատկերը կատարված պետք է լինի հայ վարպետների կողմից X դ. 60-ական թվականներին<sup>16</sup>:

Իր վարկածը հավաստելու համար բեզդիացի գիտնականը կատարողական-ոճական մանրազնիմ համեմատություններ է անցկացնում մույմ ժամանակաշրջանի հայկական մանրանկարչության մոտիվների հետ՝ մասնավորապես Եկատի ունենալով հայոց Գագիկ թագավորի «Կարսի» կոչվող Ավետարանի կերպարները:

Ժ. Լաֆոնտեն-Ռոզոնը ևս, ինչպես Հ. Ռոտտը, որոշ տեղեկություններ է հաղորդում Գեզգիի քարանձավում գտնվող հայկական Ա. Կարապետ եկեղեցու մասին<sup>17</sup>:

Այդ մույմ հոդվածում Ժ. Լաֆոնտեն-Ռոզոնը հայկական ճարտարապետության և հայ արվեստի հետ է առնչում Կապադովկիայի Փյուրեմլե Սեկիի, Դաեի-բլի, Վիլանլե և Կոկարե եկեղեցիները: Ըստ գիտնականի, այդ եկեղեցիների գեղարվեստական հարդարանքը որոշակիորեն կրում է հայկական արվեստի կնիքը<sup>18</sup>:

1973 թ. Մոսկվայում լույս ընծայված «Բյուզանդիա, Հարավային սլավոններ և Հիմ Ռուսիա, Արևմտյան Եվրոպա, արվեստը և մշակույթը» ժողովածուում Ժ. Լաֆոնտեն-Ռոզոնը հանդես է եկել չափազանց ուշագրավ հոդվածով՝ «Չեմլեկչի քելիսե կոչվող եկեղեցու որմնանկարները և հայերի ներկայության խնդիրը Կապադովկիայում»: Հետաքրքրական ու դիպուկ վերլուծությունների շնորհիվ փորձառու գիտնականն ընթերցողին համոզում է այդ եկեղեցու որմնանկարների հայկական պատկանելիությունը: «Այդ եկեղեցու որմնանկարները, - գրում է հեղինակը, - դրսևորում են որոշակի կապեր ոչ միայն Կապադովկիայի մի շարք վանքերի գեղանկարչության հետ, որոնք վերագրվում են հայերին և կամ առանձնաձև հայկական ազդեցությանը, այլ նաև՝ հայկական այն ձեռագրերի մանրանկարների հետ, որոնց են ծանոթացա Երևանի Մատենադարանում»<sup>19</sup>:



«Ավետումը քրիստի մոտ» (Փյուրեմլե Սեկի) եկեղեցի

<sup>16</sup> Մլխ գորավարն այստեղ ներկայացված է բյուզանդական կայսրերի դիմանկարների կողքին բյուզանդական հագուստով:

<sup>17</sup> Եավոթ, այդ եկեղեցու որմնանկարներից այսօր մնացել են միայն առանձին բնկորներ:

<sup>18</sup> Ժ. Լաֆոնտեն-Ռոզոն, *Եզվ. աշխատությունը*, էջ 171-172:

<sup>19</sup> Византизм, Южные славяне и Древняя Русь, Западная Европа. Искусство и культура (сборник статей), М., 1973, стр. 74.





վերոհիշյալ հեղինակներից բացի, հայերի և Կապադովկիայի արվեստի առնչություններին ամդրադարձել են նաև Մ. Ռեյստալը<sup>24</sup>, Ն. Օլկոնոմիդեսը<sup>25</sup>: Ցավոք, նրանց աշխատությունները մեզ մատչելի չեն եղել:

Մեր խոսքը եզրափակենք Եվրոպական մի նշանավոր գիտնականի դիտողությամբ, որն, այսպես ասած, «հակառակ ծայրից» է մտքեցել մեզ հեղաբրբերող խնդրին: Դեռևս 1911 թ. Ա. Բաումշտարկը, ծանոթանալով Հայաստանի հարավային շրջանների մանրանկարներին, գրել է. «Հին արևելյան-միջագետքի, նաև Կապադովկիայի շրջանի գեղանկարչության ավանդները, թերևս, ոչ մի տեղ այնքան անաղարտ ձևով չեն դրսևորվել, ինչպես Վասպուրականի շրջանի ձեռագրերում: Այդ ձեռագրերի շնորհիվ է, որ XV-XVII դդ. հայկական մանրանկարները կամրջվում են գեղանկարչության հին ավանդների հետ»<sup>26</sup>:

<sup>24</sup> Die Byzantinische Wandmalerei in kleinasien, B. d. 1-5, pp. 67-74.

<sup>25</sup> L'organisation de la frontiere Orientale de Byzance aux X-e siecle et Taktikon de Nicetia, "Rapports", pp. 73-90.

<sup>26</sup> A. Baumschlerk, Eine gruppe illustriertes Armenisches Evangelien bucher des XVII-XVIII, j. in Jerusalem. Monisthefte für kunstwissenschaft, 1911, p. 48.

## ՆՎԻՐՎՈՒՄ Է ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ

### ՄԱՆԵ (ԷՌՆԱ) ՇԻՐԻՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

## ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏՆ ԸՍՏ «ԳԻՐՔ ՊԱՏՃԱՌԱՑ»-Ի

Գրիգոր Աբապանի (1150?-1221? թթ.) «Գիրք պատճառաց» ծայրաստիճան ուշագրավ, անսխալ ժողովածուն ասանձանում է իր թեմատիկ լայն ընդգրկմամբ և ծավալով: Այն մեզ է հասել երեք ամբողջական<sup>1</sup> և մի քանի հատվածաբար ներկայացված ձեռագրերով: Դրանցից հնագույնը՝ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1879 ձեռագիրն ունի հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Պատճառ լայն և նորը գրեանց, առեալ ի հարցն աշոոց և ի վարդապետաց, և ի մի հաւսքեալ և հոգսցեալ մեծ յաբոնաւպետին Գրիգորի, որոյ[ւ]մ Մրասաւթ»<sup>2</sup>: 13-րդ դարից մեզ հասած այդ ընդօրինակությունը հետաքրքրական ձեռագրագիտական նյութ է պարունակում, քանզի այդպիսի առկա են գրչության փարբեր ձևեր: Ձեռագրի մեծ մասը գրված է բոլորգրով, սակայն հանդիպում ենք նաև նոտրգրով, շղագրով և, ամենակարևորը, երկաթագրով գրված կտորներ, տողեր և բառեր, ինչը հիմք է հանդիսանում ենթադրելու, որ այդ գրագիրը գրվել է տարբեր գրիչների կողմից<sup>3</sup>:

Ինչպես երևում է արդեն իսկ խորագրից, երկը պարունակում է Աստվածաշնչի և «նորը» գրվածքների մեկնություններ: Այս վերնագիրը պահպանվել է թիվ 1879 ձեռագրում և հավելված է խաչապտուր Կեչառեցու «ձեռամբ» երկի սկզբում, խորանի մեջ<sup>4</sup>: Խաչապտուր Կեչառեցին եղել է այս ձեռագրի երկրորդ ստացողը: Հ. Անասյանը նշում է. «որ այն Խաչապտուր Կեչառեցու ձեռքն է անցել քայքայված, միջից ու վերջից որոշ թերթերի պակասով, իսկ առաջին թերթը նույնպես կորած, բայց մի ուրիշի կողմից նորից գրված վիճակում: Խաչապտուր Կեչառեցին «Գիրք պատճառաց»-ի մի ուրիշ օրինակի հիման վրա իր ձեռքով ավելացրել է գրքի վերնագիրը...»<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՄՄ, թիվ 1879, Երուսաղեմի Արքեպիսկոպոսի Հակոբյանց վանքի ձեռագրատան թիվ 3325 և Վիեննայի մատենադարանի թիվ 47, որը պատճենված է ՄՄ, թիվ 1879 գրչագրից: Վիեննայի թիվ 47 ձեռագրի մամուլամասն Ոկարագրությունը տե՛ս՝ Տաշեան, Ցուցակ, էջ 213-213:

<sup>2</sup> ՄՄ, թիվ 1879, տե՛ս Ցան՝ Հ. Ամասյան, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, Ա, էջ XIII-XVI:

<sup>3</sup> Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1879 ձեռագրի առաջին Ոկարագրությունը կատարել է Էջմիածնի մատենադարանապետ Սահակ վարդապետ Ամատուծի (Ոկարագրությունում առանձին թերթով փակցված է ձեռագրի կազմի): Նա է կազմել Ցան գրչագրի վերջում Քալելված «ցանկը ըստ գլխավարությունաց», ինչպես նաև որոշ ընդմեջեր է արել ձեռագրի լուսանկարներում: Հետագայում այս ձեռագիրը ճակարագրել են Մ. Տեր-Մովսեսյանը և Հ. Կարենյանը: Համառոտ և միևնույն ժամանակ համապարփակ այն մեղակայացված է Ցան Հ. Ամասյանի «Հայկական մատենագիտություն» գրքում, Երևան, 1959, Բ, էջ XIII, թ. 3:

<sup>4</sup> ՄՄ, թիվ 1879, 3ա, Բմմ. Ցան Վիեննայի մատենադարանի թիվ 47, 6ր:

<sup>5</sup> Հ. Ամասյան, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, Ա, էջ XIII:



Արդյոք նդե՞լ է այս անվանումը Գրիգոր Աբախյանի գրվածքում դժվար է ասել, քանզի նրա ինքնագիրը մեզ չի հասել: Փաստորեն խաչատուր Կեչառեցու այս հավելման շնորհիվ է նաև, որ պատկանվել է երկի հեղինակային պատկանելության հանգամանքը: Ելնելով նույն այս խորագրից, կարելի է ասել, որ գիրքը բաղկացած է երկու բաժնից՝ «նուրբ» և «լայն» գրվածքների «պատճառ»-ներից: Սակայն դրանք ներկայացված են երեք մասերով, հետևյալ հաջորդականությամբ՝ Հին Կտակարանի գրքերի «պատճառ»-ներ, հայրաբանական ու իմաստասիրական երկերի «պատճառ»-ներ և Նոր Կտակարանի «պատճառ»-ներ:

Վերնագիրը հուշում է նաև, որ ժողովածուն պետք է դասել ն՝ մատենագիտական բնույթի, ն՝ մեկնողական երկերի շարքում, քանզի այն պարունակում է ուսուցման համար անհրաժեշտ թե՛ Աստվածաշնչի և թե՛ «ներշնչական» նյութերի պատճառները: «Պատճառ»-ները՝ մեկնության տեսակ են կամ, ավելի ստույգ ասած, մեկնություններին նախորդող ներածական բացատրություններ են: Ուստի դրանցից կազմված ամբողջ երկը պետք է համարել նաև մեկնողական բնույթի գրվածք: Այս առումով բնորոշել գիրքը որպես «գիտություն գրոց»<sup>7</sup> կամ «մատենագիտություն»<sup>8</sup> ճիշտ չի թվում: Այս գործը կարելի է անվանել հայերեն թարգմանված աղբյուրների մեզ հասած առաջին հայկական միջնադարյան հանրագիտարան:

Նկատելնք նաև, որ «Գիրք պատճառաց»-ը ներառում է հիմնականում թարգմանական նյութը, դրանց «պատճառ»-ները մեծով մասամբ նս թարգմանված են:

Այսպիսով, ձեռնարկը ներածական նյութ էր տրամադրում ուսումնական ծրագրի երկու կարևորագույն բաղադրիչ մասերի համար՝ Աստվածաշնչի և հայրաբանական աստվածաբանության ու հունական փիլիսոփայության հիմնական երկերի բացատրություններ:

«Լայն» և «նուրբ գրեանք» անսովոր բնորոշմամբ տրամադրված միասին առաջին անգամ վկայված են «Գիրք պատճառաց»-ում: «Լայն» եզրով բնութագրված է Ս. Գիրքը, իսկ «նուրբ գրեանք»-ը մատենագիտական և մեկնողական որոշակի երկերի տեսակ մատենադեղ (ըստ իս, կրոնի փիլիսոփայությանը վերաբերող կամ առնչվող) արքայապետություն է: «Գիրք պատճառաց»-ի Բ բաժնի՝ «նուրբ գրեանք»-ի արժեքավոր տեղեկությունները կարևորվում են ոչ միայն հայագիտության, այլև նշանակալի են դասական բանասիրության ու բյուզանդագիտության համար:

Առանձին բնության կարիք ունի և բացատրության է կարող «Գիրք պատճառաց»-ում ընդգրկված գործերի նշված հերթականությունը, կարգը՝ սկզբից ներկայացված են Հին Կտակարանի գրքերի «պատճառ»-ները, հետո հայրաբանական ու իմաստասիրական երկերինը և վերջում Նոր Կտակարանինը: Թե ինչո՞ւ են ընդմիջարկված Հին և Նոր Կտակարանները «նուրբ գրեանք»-ով տրամաբանական հարցին կարելի է առաջարկել հետևյալ պատասխանը: Նյութի հաջորդականությունը պատահական չէր. Հին Կտակարանը, որը «լայն» է կոչվում, ընդհատված է «նուրբ գրեանք»-ով, քանի որ գրանք հիմնականում աստվածաբանության փիլիսոփայությանը վերաբերող մեկնողական բնույթի երկեր են, որոնք

<sup>6</sup> Մ. Շիրիմյան, Մեկնողական ժամրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Աշտամակ Գ, Հայագիտական պարբերագիրք, Երևան, 2000 թ., էջ 36-64: Հարկ է նշել, որ «Գիրք պատճառաց»-ում Քաղիպոս է մաս «սկիզբ» մեկնողական ձևը:

<sup>7</sup> Ն. Ակիմեան, Մատենագրական հետազոտություններ, Ռու. Ա., Վիեննա, 1922, էջ 58:

<sup>8</sup> Հ. Ամասյան, Հայկական Մատենագիտություն, Երևան, 1959, Ռու. Ա., էջ XIV:

օրգանական կապ ստեղծելով հին և Նոր Կտակարանների միջև, անհարաժեշտ օղակ էին հանդիսանում հին Կտակարանից Նոր Կտակարանին անցնելու համար:

Պարզ է նշել նաև Դավիթ Ջաբայրեցու գործունեությունը, որի ավանդը «Գիրք պատճառաց»-ի ստեղծման գործում հայտնի է, սակայն դեռևս ըստ արժանվույն չէ ուսումնասիրված: Նրա գրչին են պատկանում այդ բնագրում ամփոփված երկերից շատերի պատճառները, լուծմունքներն ու մեկնությունները:

«Գիրք պատճառաց»-ի հարուստ նյութը լրացնում է մյուր գիտելիքները բազմաթիվ չուսումնասիրված հարցերի վերաբերյալ (օրինակ՝ Գրիգոր Նյուսացու երկերի թարգմանություն կամ «Vita Homeri»-ի տարբեր խմբագրությունների մասին): Առանձին ուսումնասիրություն հարց է, թե ինչ ճանապարհով են անցել անտիկ ավանդույթներից սերող բրիտանացիական ուշագրավ օրինակները Գրիգոր Աբասյանի երկի մեջ:

Խնդրո առարկա գրվածքի հրապարակությունը հայագիտության այսօրվա առաջնահերթ խնդիրներից է: Այդ բացառիկ երկը, մտնելով շրջանառության մեջ, կլրացնի ոչ միայն հայկական, այլև համամարդկային մշակութային գանձարանը: Այդ պատճառով է, որ քրեական բնագրի պատրաստումը (ներածությամբ ու մանրամասն ծանոթագրություններով), որի աշխատանքն արդեն կիսով չափ արված է, կհամալրվի նաև անգլերեն թարգմանությամբ: Նշենք նաև, որ այդ ծրագիրը հնարավոր դարձավ իրագործել շնորհիվ ՀՕՖ-ից ստացած դրամաշնորհի, որի համար «Գիրք պատճառաց»-ով զբաղվող աշխատանքային խմբի անունից իմ շնորհակալությունն եմ հայտնում այդ կազմակերպությանը, հանձնաժողովի անդամներին և ընդդիմախոսներին, ներկայացված նախագծի բարձր գնահատականի ու այս կարևորագույն աղբյուրի հրապարակության ընձեռված հնարավորության համար:

«Գիրք պատճառաց»-ից ստորև ներկայացվող հատվածը նվիրված է Մաշտոցյան գրերի արարմանը: Այն, իհարկե, մեծապես եիմնված է և որոշ չափով կրկնում է Կորյուն վարդապետի «Պատմութիւն վարուց և մահուան ամեն երանելոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի» երկի վկայությունները, սակայն միաժամանակ պարունակում է ոսկեդարյան շրջանի պատմիչների տեղեկություններից շեղվող, հավելյալ և ուշագրավ մի շարք այլ մեկնաբանություններ:

## ԳՐԻԳՈՐ ԱՐԱՍԵԱՆ

## ՍԿԻԶԲՆ ԵՒ ՊԱՏՃԱՌ- «ԲԱՐՁՐԱՑՈՒՑԵԱՑ»-Ն ՃԱՌԻ ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հրաշագործողն\* արարածոց Աստուած, որ ի սկզբանէ գոյացոյց գամնայն, յետոյ հոգացեալ վասն մարդոյն, որ ի պարկեր Իւր արար, եւ Տէր եւ թագաւոր այլոց արարածոցն կացոյց ի դրախտին վայելչութեան: Իսկ յանկանել Նորա յարագուարճ կենացն, մահ թագաւորեաց ի մարդիկ, մինչ յերեւել երկրորդն Աղամա[յ] ի կերպարանս նախանարն, որով փրկեցաք ի մահուանէ:

Եւ յցան տիեզերք փառաք Նորա, եւ շնորհաւք ամենասուրբ Հոգւոյն, որ հեղաւ ի դասս առաքելոցն եւ նոքաւք յամենայն ազգս եւ թագաւորութիւնս, որ եւ ի ձեռն Գրիգորի Պարթևի, որ յետ Թադէոսի առաքելոյ մեծաւ նեղութեամբ յուսաւորեաց զՀայաստան աշխարհ եւ ի նմին հաւաքոյ հաստատութիւն անշարժ կացին մինչ ի ժամանակս մեծին Սահակայ եւ Մեսրոբայ<sup>9</sup>:

Եւ մինչեւ ցայն ժամանակ նշանագրաւք ասորոց եւ յունաց վարէին հայք, զի թելալք եւ ունէին զիր, այլ ոչ զօլով ի նոսա ձայնաւոր, յաղագս այնորիկ ոչ կատարէր բան, այլ խնցրեկելով իմն, անկատար մնացեալ լինէր: Իսկ ի ժամանակս Սահակա[յ] եւ Մեսրոբայ եւ Վռամշապիոյ թագաւորի Հայոց<sup>10</sup>, խնդիր արարեալ մեծաւ ջանի սրբոյն Սահակայ եւ Մեսրոբայ, գնացեալ Մեսրովք ամ ասորիս եւ ամ յունականսն, ոչ ինչ ազգութեան:

Յայնժամ յԱստուած ապաւինեալ, աղաթից պարապէին անդադար, մինչեւ ի Հոգւոյն Սրբոյ, որպէս առաքելոցն հրով, նույնպէս եւ աստ, իբր թաթ ձեռին երեւէր գրելով ի վերայ, եւ հաստատելով ի սրտին իբր ի ձեռն: Եւ այնչափ մեծագոյն էր պարգեւն, մինչ ոչ միայն հայոց, այլ եւ վրաց եւ աղտանից արար զիրս հաստատունս: Բայց մարթ է զիտել ըստ կար[ի], թէ ուստի<sup>11</sup> քուսաւ այս շնորհ ազգի մարդկան, զի անշունչ մեղանաւ իբր կենդանի բանականաւ խաւսին: Յետ եւիցն Աղամա[յ] ի դրախտին վայելչութենէ, ասի թէ ունէին ամենայն ազգն, որ աճեաց ի Մեթայ, եւ ի քանէն Հայկնի զմի զիր, ոմանք թէ զեբրանցին: Եւ այլք՝ թէ զարաբացի զիրն: Իսկ յորժամ լեզուքն բաժանեցան յաշտարակին քակիլն, որով եւ քակեցաւ ի միմեանց միարանութիւն ամենայն ազգաց, յետ [1282] քայնորիկ եւ առանձին ամենեցուն զիր քուսաւ, կիսոց ազգաց լի եւ պատարտն, որպէս եբրայեցին, եւ յոյն, եւ արաբն, որ կոչի պարսիկ, իսկ կիսոցն այնպէս իբրեւ զմերն, որ ոչ յաղաւոր էր, բան կատարուն: Իսկ ահա յետ առկոյն Սրբոյն Մեսրովքայ զաստուածաբար ձիրն, սկսան ժողովեալ մանկունս փափկածայնս, երկարոցիս եւ քաջամիտս, հրամանաւ Թէոդոսի կայսեր, եւ Վռամշապիոյ թագաւորի Հայոց:

\* Դավիթ Աճառաբի «Ներդրողեամ ի սուրբ խաչմ» ճառի «Պատմառ»-ից վերցված այս ճառովածը տպագրուելով է ըստ Մաշտոցի ամված Մատենադարանի թիվ 1879 ձեռագրի, 281բ-284բ:

9 ՄԼՄ, N1879, Մեսր1282ա որպայ:

10 Այսպէս յօրիմակիւմ, Ռմմտ. Օան տտորն:



<sup>13</sup> Այսպես յօդիմակիմ, ՌՖՄՍ. թիվ 3325 (Երուսաղեմ) 38ա, որտեղ առկա է մույմ սխալը:

ուսկալի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւ վերադիտողի, գասարածաւորաման խնդիր  
հարկապահանջ հոգեւորական հարկին, եկեղեցական գործնառութեան, գոր հրամանեցէր  
մննում կրօններութեանս գրով դրոշմել ի քարտիսի մալ284ա տննագրութեան, զի կազմեց  
մնասցէ յարձանագրի անջնջելի յիշարակ ազգաց յազգ զկնի մեր եկելոցն, գոր ոչ այլ ազգ  
ինչ ինձ գմբաւ ւսնել, բան թէ իշխանականդ քո ըստ գերագանցութեան պաշտիդ, նկարել  
զհարկեցուցիչ եւ զանհնարին հրամանաց ծանրութիւնդ, յաղագս որոյ սարսափել սարսնմ եւ  
երկիւղ ոչ դուզնաբնա բերեմ յիս»:

Եւ էր մեծն Դաւիթ փիլիսոփայ ւսգաւ ի Հարթալ, ի Ներթնն գեղջէ, աշակերտ Մովսէսի  
քերդողի, ի ժամանակս Վահանայ որդոյ Մազնոսի, որդոյ Վարդանայ, եւ ի ժամանակս  
Յովհաննոյ Մանդակունոյ: Եւ սկիզբն առնէ, յասելն այսպէս. „Բարձրացուցէ զՏէր Աստ-  
ուած մեր, Մարգարէն ծայնէ, երկրպագեցէ պատուանդանի սրբոյ ուրից նորա,,: Ասի յո-  
մանց թէ վասն գերակաւոր իմաստութեանն կամեցաւ ինքնախաւառութեամբ դնել սկիզբն եւ  
ոչ ուսրեք առնուլ վկայութիւն: Եւ մինչ գայս ած գմբաւ, արգելաւ իմաստութիւնն եւ ոչ  
կարաց խաւսել: Այլ ոչ է կարծել ի դէպ այս նմա, զի որպէս յայլ ամենայն կեանսն իւր խո-  
նարիութեամբն էր պայծառ, առաւել այստ: Այլ այսպէս իմաստութեւ, զի որպէս Աստուածա-  
բանն Գրիգոր ի մարգարէնն սկսանի ի Յննդեան ճառին յասելն. „Ուրախ լիցին երկինք եւ  
ցնծասցէ երկիր,,: Նոյնպէս եւ սայ առնէ, յասելն՝ „Բարձրացուցէ զՏէր Աստուած մեր,,:  
284բ Եւրես դարձնալ, զի Նոր Կրակարանքս հիմնացեալք են ի մարգարէից, գնոյն եւ սայ  
ախորժելով եղ: Եւ թէ որպէս նոցա հրամայեցաւ ի մարգարէնն բարձրացուցանել զՏէր Աստ-  
ուած, մեզ գիա՛րդ այնպէս հրամայցի նոցա երկրպագութեամբ[\*բ] եւ պատարագաւք փա-  
ռաւորել եւ պատուիրանին պահպանութեամբ եւ յիշարակաւ երախտեացն:

Իսկ մեք փառաւորեմք, հավատովք եւ սրբութեամբ, խոնարիութեամբ, ոգորմութեամբ եւ  
չարչարակցութեամբ փրկութեանն մերոյ կատարողի, ըստ այնմ, թէ „Փառաւոր արարէք  
զԱստուած ի մարմինս ձեր,,: Եւ չարչարանացն կցորդութեամբ, փառացն հաղորդիցիք: Յա-  
ւելու զՏէրն եւ զԱստուածն անուն ի վերայ Զրիստոսի, զի Արարիչ եւ Խնամիչ է ընդ Հաւր,  
տիրական իշխանութեամբ փրկեաց զմեզ եւ տանջէ զթշնամին մեր: Մարգարէն ծայնէ ի հե-  
ռաստանէ, զոչնաց գայտոսիկ Դաւիթ այլովքն հանդերձ:

## ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՁՅԱՆ

## ԿՐՈՆԻ ԴԵՐԸ 18-19-ՐԴ ԴԴ. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՏՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել 18-19-րդ դդ. բրիտանական պահպանողականության ներկայացուցիչների և մասնավորապես Էդմունդ Բյորքի, Սամուել Քուրիջի և Բենջամին Դիզրայելիի՝ կրոնի և Եկեղեցու մասին արտահայտած հայացքները: Վերածընդության դարաշրջանի և դրան հաջորդող Լուսավորականության տիեզերքի մարդակենտրոնության զաղափարները բուռն ձևով արտահայտվեցին ֆրանսիական հեղափոխության ժամանակ: Այդ երևույթը ճիշտ հակառակ ազդեցությունն ունեցավ Անգլիայում: Մյուս կողմից՝ Անգլիայում Եկեղեցու դիրքերը բավականին թուլացել էին: Եվ այս համագամաքը մեծ նշանակություն ունեցավ պահպանողական քաղաքական փիլիսոփայության ձևավորման ժամանակ՝ կրոնին կենտրոնական դեր վերապահելու գործում:

Այսպես, ըստ Սեմուել Ջոնսոնի, թորիական է նա, ով «հավատարիմ է պետության հին սահմանադրությանը և Անգլիայի Եկեղեցու առաքելական նվիրապետությանը»<sup>1</sup>:

Ելնելով Ջոնսոնյան այս սահմանումից՝ Բվինտոնը անգլիական պահպանողական մտքի ներկայացուցիչներին բաժանում է երկու խմբի: Առաջինը, ըստ նրա, կրոնական թեև է (կրոնական ասելով՝ ի նկատի ունի Ջոնսոնյան սահմանումը):

Այս թևի ներկայացուցիչները պահպանողական իրենց փիլիսոփայությունը սահմանում են՝ ելակետ ընդունելով կրոնական դրույթները և հատկապես մարդու նախնական մեղքն ու բարոյական անկատարելությունը: Այս ուղղության ներկայացուցիչներ են Ռիչարդ Հուկերը, Էդուարդ Հայդը, Սեմուել Ջոնսոնը, Բյորքը, Քուրիջը, Նյումանը:

Հաջորդը պահպանողականների (թորիների) աշխարհիկ թեև է, որին են պատկանում Ջորջ Սավիլը (Հոլիֆաքս), Լորդ Բոլինգբրոքը և Դեվիդ Հյումը<sup>2</sup>: Վերջիններս առավելապես շեշտում են մարդու մտավոր անկատարելությունը:

Դիզրայելին գտնվում է այս երկուսի միջև :

Անհրաժեշտ է նաև նշել, որ այդ բաժանումը խիստ հարաբերական է, քանի որ և՛ կրոնական, և՛ աշխարհիկ պահպանողականների հայացքներում շեշտվում են թե՛ մարդու բարոյական և թե՛ մտավոր անկատարելությունը (իհարկե, ոչ հավասարապես):

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչ նկատի ունենք «կրոնական պահպանողականներ» ասելով, դիմենք Լինքոլն Ալիսոնի հետևյալ մեկնաբանությանը: Ըստ Ալիսոնի, գոյություն ունեն կրոնի երկու մոտեցումներ: Առաջինը «յուր» կրոնն է, երկրորդը՝ «պաշտոնական»:

«Լուր» կրոնի համաձայն, գերբնականը գոյություն ունի այնպես, ինչպես բնականը, կամ՝ ավելի պարզ՝ Աստված ավելի իրական է, քան, ասենք՝ ծառը: Աստծո պատվիրանները պետք է գերակայեն ցանկացած իրավիճակում:

<sup>1</sup> Samuel Johnson . Dictionary of the English Language – Tory.

<sup>2</sup> Quinton . p. 10.



Միմչդեռ «պաշտոնական» կրոնը տարանջատում է կրոնական մեկնաբանությունները գիտականից կամ քաղաքականից: Աստված «գոյություն ունի», բայց դա այդ նույն «գոյությունը» չէ, ինչ որ այլ էակներին: Էվոլյուցիայի տեսությունը և դրա հետևանքները ամենահին էլ չեն բախվում Աստծո դերի և գոյության խնդիրների հետ: Նրա արարումը պետք է հասկացվի որպես միանգամայն առանձնահատուկ երևույթ և պետք է տարանջատվի երկրի ու տիեզերքի առաջացման գիտական մեկնաբանություններից: Այսինքն՝ սա կրոնի այն տեսակն է, որտեղ քաջակայում են «գիտելիքը», դոկտրինային մոտեցումները և «Աստծո» օգնողի գիտական մեկնաբանությունները:

Այսպես, այս մեկնաբանությունները միգրացի արժեքավոր են 20–21–րդ դդ. պահպանողականների համար, երբ գիտությունն ու տեխնոլոգիական ծրագրերը հեղափոխական առաջընթաց են ապրում և անհրաժեշտ է դառնում համատեղել այդ ամենը կրոնական պատկերացումների հետ: Սակայն 18–րդ դարի վերջում և 19–րդ դարի սկզբում նման զանազանումը նվազ քննադատելի կլիներ, քանի որ հենց ինդուստրիալ հեղափոխության առաջ բերած փոփոխությունները ստեղծեցին հասարակական–քաղաքական մի իրադրություն, որին ի պատասխան առաջ է գալիս պահպանողական քաղաքական միտքը և արդեն 19–րդ դարի սկզբում ձևավորվում պահպանողական կուսակցությունը Անգլիայում: Եվ այդ ամենի համար ելակետ է ընդունվում Աստվածային մախախճանությունը, Աստծո կամքը, «լուրջ» կրոնը:

Բյուրքը և Քուլիջը (այստեղ ներկայացվող հեղինակները) հենց այդ տեսանկյունից են հանդես գալիս: Եվ անհիմաստ կլիներ պնդել, թե թուրք պահպանողականները հանդես էին գալիս որպես «պաշտոնական» կրոնի ջատագովներ: Խորը կրոնական աշխարհայացքը հիմնարար սկզբունք է Բյուրքյան մտքի համար: Ժամանակակից տեսաբաններից շատերն անգամ գտնում են, որ պահպանողականների թուրք մյուս դրույթները պետք է մեկնաբանել՝ ելնելով հենց այս կրոնական աշխարհայացքից<sup>3</sup>:

20–րդ դարի պահպանողական մտածողներից Քուլմսոն Հոգը, արձագանքելով Բյուրքին, Քուլիջին և Դիգրայելիին, հենց կրոնից էլ սկսում է իր պահպանողական փոփոխությունը: «Շշմարիտ պահպանողականություն չի կարող լինել, եթե այն չի հենվում քաղաքացիական պարտականության կրոնական տեսակետի վրա, և չի կարող լինել ճշմարիտ կրոն, երբ քաղաքացիական պարտականությունը դիտվում է որպես զուտ աշխարհիկ երևույթ»<sup>4</sup>:

Բրիտանական պահպանողականության (18–րդ դարի վերջ - 19–րդ դար) կրոնական ուղղվածությունը կարելի է ամփոփել ըստ երեք դրույթների՝ կոսմոլոգիական սկզբունքի, աստվածակենտրոն մարդկության և դրանց սոցիոլոգիական մաքսիմի համադրությամբ: Բյուրքի և Քուլիջի մոտ առավելապես, Դիգրայելիի մոտ մի փոքր ավելի պակաս, առկա են այդ երեք սկզբունքները:

Տիեզերքի և նրանում մարդու տեղի մասին պահպանողականների պատկերացումները էապես տարբերվում են լիբերալների և արմատականների տեսակետներից: Պահպանողականները ընդունում են տիեզերքի աստվածակենտրոն բնույթը՝ հավատալով, որ

<sup>3</sup> Dwight Murphy . Burkean Conservatism and Classical Liberalism . Washington D.C. 1982 . p. 65.

<sup>4</sup> Quentin Hogg . The case for conservatism . Middlesex . 1948 . p. 16.

«Աստված է ամեն ինչի չափանիշը»<sup>5</sup>։ Եւ իհարկե Ռակադորութեան մեջ է մտնում լիբերալ-  
 անքի և ռադիկալների այն տեսակետին, որ «մարդն է ամեն ինչի չափանիշը» (սոփիստոնե-  
 րից վերցրած)։

Ըստ էության Բյորքը և մյուս պահպանողականները հակադրում են Լուսավորության և  
 ֆրանսիական հեղափոխության հակաստովածային, հակակրոնական դրույթներին։  
 Նրանք (պահպանողականները) փորձում են վերահաստատել մարդկության պատմութե-  
 ան սակրալ (սրբազան) բնույթը։

Այն է՝ հասարակության և պատմության ըմբռնման ելակետը Աստված և աստվածային  
 կարգն են, այլ ոչ բնական վիճակը<sup>6</sup>։ Սա ճշմանկում է, որ պահպանողականները դեմ էին  
 մրանց, ովքեր քննադատում էին կրոնական հավատը և փորձում ձևավորել իրենց տե-  
 սությունները՝ մարդկային բնությունը քննարկելով Աստծո մկատմամբ մարդու ենթակա-  
 լությունից դուրս։

Բյորքի կարծիքով Բանականության (Լուսավորության) դարաշրջանը տգիտության  
 դարաշրջան էր։ Եթե (ինչպես մարդկանց մեծ մասն է հավատացել մարդկային պատմութե-  
 ան սկզբից) մարդկային բարեկեցության ճիշդը աստվածային մախախմատությունն է, ա-  
 պա քաղաքականությունը և բարոյականությունը սահմանափակել զուտ բանականության  
 շրջանակներում, անստություն է։ Բյորքը կարգ (order) ասելով ի մկատի ունի աստվածա-  
 յին կարգը։

Բյորքը չի պաշտպանում կրոնը այն բանի համար, որ վերջինս կարգն է պահպանում,  
 այլ, ըստ մրա, աշխարհի կարգը ծագում է և մնում է մասը աստվածային կարգի։ Կրոնը ժո-  
 դովրդական կրքերը զսպելու համար հարմար միջոց չէ միայն։ Նա համաձայն չէ Պոլի-  
 բիուսի այն կարծիքին, որ կրոնը հմարել են, որպեսզի մարդկանց փրկեն անարխիայից<sup>7</sup>։

Բյորքի աշխատություններում շեշտվում է, որ մախախմատության մկատակը և տիե-  
 զերքի բանական ուղղվածությունն իրական են։ Մարդկության հավերժականության  
 համընդհանուր բնագրը, գիտակցության հարկադրանքները, անմահության հավատը,  
 մարդկանց մոտ այն խորը գիտակցությունը, թե մրանք մասնակիցներն են ինչ-որ մի մեծ  
 շարունակականության ու էության և համաման գաղափարները մկատելի են մրա գրեթե  
 բոլոր աշխատություններում, բայց Բյորքը չի փորձում ապացուցել իմչ-որ բան՝ թողնելով  
 ապացուցումները միայն աստվածաբանական դարոցներին։ Նրա մոտ ակնհայտ են ան-  
 տիկ շրջանի ըմբռնումների և քրիստոնեական հավատի համադրելի արժեքներ։ Հունա-  
 կան բարեպաշտությունը, գրեթե Պլատոնյան իր հնչեղությամբ, անփոփում է Բյորքի այն  
 միտքը, թե պետությունը աստվածային է։ «Նա, ով մեզ տվեց բանականությունը, որպեսզի  
 մեր առաքինությամբ այն կատարելագործենք, կամեցավ մաև դրա կատարելագործման  
 անհրաժեշտ միջոցները, մա, հետևաբար, կամեցավ պետությունը։ Նա կամեցավ ցանկա-  
 ցած կատարելության կապն իր աղբյուրի և մախմական արքետիպի հետ»<sup>8</sup>։

<sup>5</sup> Harbour William . The Foundations of Conservative Thought . London . 1982 . p. 12.

<sup>6</sup> Nisbet Robert . " A Note on Conservatism " in The Works of Joseph de Maistre . ed. Jake Lively . New - York .  
 1971 . p. 14.

<sup>7</sup> Russell Kirk . The Conservative Mind . p. 32.

<sup>8</sup> Burke, Works 2, p. 370.

Մարդասիրական հատկանիշները կամ համընդհանուր բարեփոխությունը չեն կարող փրկել հասարակությանը, որը մերժում է իր աստվածային ենթակայությունը: Ցանկացած պետություն ճախախմամբության արարչության հետևանք է, անկախ նրանից, թե այդ երկրի կրոնը քրիստոնեություն<sup>9</sup> է, թե՞ մեկ այլ կրոն: Քրիստոնեությունը կրոններից բարձրագույնն է, բայց ցանկացած կրոն ճանաչում է տիեզերքի աստվածային բնույթը, և ցանկացած աշխարհիկ իրավակարգ կախված է նախ և առաջ տվյալ ժողովրդի դարերով ժառանգություն ստացած կրոնի նկատմամբ ունեցած խորը հարգանքից: Այս հավատն ավելի է խորացնում Բյուրքի քննադատությունը Հեյսթինգզի նկատմամբ: Վեյքիմս, որ Հնդկաստանում Անգլիայի կառավարիչն էր, անտեսում էր և անգամ ոտնահարում տեղական կրոնական ավանդույթները և ծեսերը:

Երբ Բյուրքը քննարկում էր եվրոպական հասարակարգերը, նա դա անում էր «ժողովուրդների իրավունքի» (ius gentis) եվրոպայի իրավական ավանդույթների (որոնք ծագում են հիմնականում քրիստոնեությունից), հռոմեական քաղաքացիական իրավունքի և գերմանական ավանդական իրավունքի կոնտեքստում: Սրանք, իհարկե, Հնդկաստանում չէին կազմում իրավունքի աղբյուր: Սակայն Բյուրքը «ժողովուրդների իրավունքը» բխեցնում էր բնական իրավունքից (ius naturalis), արդարության այն սկզբունքներից, որոնք մենք բնական ենք համարում մարդկային պայմանների համար և որոնք մարդու համար նախատեսվել են Աստծո կողմից<sup>9</sup>:

Բյուրքը հավատում էր, որ բնական իրավունքը հավասարապես կիրառելի է ինչպես Հնդկաստանում, այնպես էլ Անգլիայում: Նրա կարծիքով Հեյսթինգզը Բրիտանիայի պատիվը անարգել էր՝ խախտելով Ասիայի ժողովուրդների իրավունքը, և նա մշտում է, որ Օնյո Սինգը, մերժելով հարկեր վճարել Հեյսթինգզին, ճիշտ էր վարվում, ըստ ժողովուրդների բնական իրավունքների և բարոյականության տեսանկյունից<sup>10</sup>:

Այստեղ անհրաժեշտ է մշել, որ Բյուրքի համար բնական իրավունքն այլ իմաստ ուներ, քան բնական իրավունքի մյուս տեսաբանների և մասնավորապես Ջոն Լոկի համար: Այն իրավունքը, որի մասին Բյուրքն է խոսում, ռացիոնալացված բնական իրավունք չէ, այլ Աստծո կողմից տրված, բանականից վեր գտնվող իրավունք, իրավունք, «որով մենք միավորված ենք տիեզերքի հավերժական շրջանակներում, որոնցից դուրս մենք չենք կարող շարժվել»: Նույն ձևով էլ նրա համար դաշինքն այն մույն Հասարակական դաշինքն չէ, ինչ որ Լոկի կամ Ռուսսոյի համար, այլ «հավերժական հասարակության ճախնական դաշինքը, որը միավորում է ստորին և վերին բնությունները, տեսանելի և անտեսանելի աշխարհները»<sup>11</sup>:

Քուլիջի պահպանողականության ելակետը հանդիսանում են ոգին և Աստվածը՝ անհատական գիտակցությունը և Բացարձակը: Գիտական մոտեցումները կոչված են բացահայտելու ճախիկը, իսկ իդեալիստական փիլիսոփայությունը՝ կրոնական ներշնչմամբ պետք է բացահայտի վերջինս և այդ ամբողջը պետք է միավորված հանդես գա քրիստոնեության ներքո: Քուլիջյան այս նախագիծը երբեք չէր իրականացալու: Ավելին, չկա

<sup>9</sup> «Natural Law” in “The Dictionary of Historical Terms” (ed. Joseph Denner), New York, 1967.

<sup>10</sup> Peter Stanlis, Edmund Burke and the Natural Law, p. 88 – 89.

<sup>11</sup> Cobban, p. 42.



որևէ վկայություն, որ նրա ընկերներից կամ համախառններից գեթ մեկը հասկանաք նրան: Նրա փիլիսոփայությունը շատ քչերն էին համակրում, և ոչ ոք չէր հասկանում: Իդեալիզմը ծաղկում պիտի ապրեր ավելի ուշ, երբ Բրեդլին և նրա աշակերտները պետք է «փրկեին» ամբողջական մտավոր աշխարհը ուսիլիստացման գերիշխանությունից<sup>12</sup>: Նրա կարծիքով, դարաշրջանի մեծագույն թերություններից մեկն այն էր, որ փիլիսոփայությունն ու կրոնը տարանջատվել էին քաղաքականությունից: «Քուրիջը ելնելով այն ըմբռնումից, որ բոլոր տարակազմիկ հեղափոխությունները համընկնում են և անկասկած հետևանք են մետաֆիզիկական սխառեմների ծագմանն ու անկմանը՝ հիմնականում մշակում է մի քաղաքական փիլիսոփայություն (հատկապես իր «Սահմանադրությունում»), որտեղ փիլիսոփայությունը, քաղաքականությունը և կրոնը փոխկապակցված են:

Ինչպես և մյուս պահպանողականները, նա ևս առանձնացնում է մարդու «նախնական մեղքի» գաղափարը, և ըստ էության սա էլ հանդիսանում է բարոյական անկատարության մեղքի» գաղափարը, և ըստ էության սա էլ հանդիսանում է բարոյական անկատարության մեղքը»<sup>13</sup>: «Նախնական մեղքը» նա քննարկում է իր «Ընկերը» աշխատության առաջին մասում: Բայց 1810-11 թթ. ունենալով ամենական (ընտանեկան) դժվարություններ և պարբերաբար թմրադեղերը ընդունելով, նա հուսահատության գիրկն է ընկնում և «մեղքի» մկատմամբ նրա մոտեցումներն ավելի սուր և քննադատական տեսք են ընդունում: «Ես հավատում եմ և ընդունում որպես քրիստոնեության կարևորագույն դրույթ, որ ես մեղավոր աղարած եմ, որ ես ունակ եմ բարոյական չարիքի... և որ մեղքը շատ արդարացիորեն գործում է իմ մկատմամբ, նախքան ես կանեմ որևէ բան...»<sup>14</sup>:

Նա համադրում էր կրոնը և գիտությունը: Վերջինիս զարգացումը ամենևին էլ չէր բացառում աստվածային կարգը: Նա հավատում էր, որ գիտությունը և կրոնը համագոյակցում են: Նա իր ընթերցողներին փորձում էր համոզել, որ մերժեն Լուսավորության շրջանի սկեպտիցիզմը: Նա գտնում էր, որ բնության մեջ մարդու դերի մասին սառը և լուրջ մտորումները տրամաբանորեն մեզ առաջնորդում են աստվածային մասին հավատին, որն ամբողջովին համադրելի է գիտական ռացիոնալիզմի հետ:

Իր աֆորիզմներից 36-րդում, օրինակ, նա խոսում է «էվոլյուցիայի» մասին, որպես հոգևոր ուժի, որը մեծացնում է բարոյական գիտակցությունը:

Առավել հասկանալի է կրոնի և նախախնամության օգտակարության շեշտադրումը նրա կողմից: «Լավ գործերը կարող են գոյություն ունենալ առանց լավ սկզբունքների, բայց լավ սկզբունքները երբեք գոյություն չեն ունեցել և չեն կարող ունենալ առանց լավ գործերի»: Հետևաբար «եթե մենք հավատանք նախախնամության ծրագրին, մեր բոլոր գործերը դեպի բարին ուղղված կլինեն»<sup>14</sup>:

Կոսմոլոգիական տեսությունը, որը պահպանողականների մոտ համարվում է առաջնային, օգնում է պայմանավորել ամհատի կարևորությունը և առաքինությունները, որ նա պետք է զարգացնի: Այստեղից էլ պահպանողականությունն ամհատին դիտում է հոգևոր

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 161.

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 218:

<sup>14</sup> Coleridge, vol. 2, p. 289

տեսանկյունից՝ առաջնություն տալով անհատի հոգու առողջությանը: Պահպանողականությունն իրենց ներկայացնում է հումանիզմի որոշ տեսակ<sup>15</sup>:

Այս դիրքորոշումը հաճախ կոչվում է աստվածակենտրոն (թեոցենտրիկ) հումանիզմ: Մարիտենը շատ արտահայտիչ ձևով է տարբերակում «աստվածակենտրոն հումանիզմը» «մարդակենտրոն հումանիզմից»: Աստվածակենտրոն հումանիզմը, ըստ նրա, ճշմարիտ քրիստոնեական է, իսկ մարդակենտրոնը ուժ է ստանում վերածնունդից և Ռեֆորմացիայից:

«Հումանիզմի առաջին տեսակը ընդունում է, որ մարդու համար կենտրոնը հանդիսանում է Աստված և շեշտում է քրիստոնեական այն սկզբունքը, որ մարդ միաժամանակ և՛ մեղավոր, և՛ փրկված է, ինչպես նաև առանձնացվում են քրիստոնեական գթասրտությունը և ազատությունը: Հումանիզմի երկրորդ տեսակը ենթադրում է, որ մարդն է իր և, հետևաբար, ամեն ինչի կենտրոնը: Այն ենթադրում է մարդու և ազատության մատուրալիստական հայեցակետ»<sup>16</sup>:

Իհարկե, թե՛ անտրոպոցենտրիկ (սոֆիստների մոտ) և թե՛ թեոցենտրիկ (հատկապես Պլատոնի՝ «Աստված է ամեն ինչի չափանիշը») հումանիզմի դրույթները հիմնականում ծագում են անտիկ փիլիսոփայական մտքից: Սակայն արդի պայմաններում քաղաքական փիլիսոփայություններից պահպանողականների մոտ է, որ աստվածակենտրոն հումանիզմը մեծ կարևորություն է նորից ստանում:

Պահպանողականների կոսմոլոգիական սկզբունքից և աստվածակենտրոն հումանիզմից ծնվում է սոցիոլոգիական սկզբունքը, ըստ որի հասարակությունում կրոնը հանդիսանում է անկյունաքար:

Բյուրքի մոտ շատ հաճախ կարելի է հանդիպել աստվածակենտրոն հումանիզմի և սոցիոլոգիական սկզբունքի դրույթների: Բյուրքը շատ կարևոր ներդրում է ունեցել պահպանողականության կրոնական ուղղվածության մեջ նախ և առաջ ի նկատի ունենալով այն թեզը, ըստ որի մարդն իր բնությամբ կրոնական է: Սրանով նա նախ փորձում է ցույց տալ, որ մարդու հոգեկան առողջության համար անհրաժեշտ է կրոնական հավատ, որ վերջինս անհրաժեշտ է մարդուն իր մարդկային հնարավորություններն իրականացնելու համար: Նա ի նկատի ունի, որ մարդիկ հասարակությունում պետք է կարգավորեն իրենց կյանքը համաձայն որոշ կրոնական սկզբունքների, որպեսզի հասարակությունը լինի կայուն, և որպեսզի անհատի համար առողջ միջավայրը հնարավոր դառնա:

«Լինքն գիտենք, և դա մեր հպարտությունն է իմանալ, որ մարդ իր բնույթով կրոնական էակ է, որ աթեիզմը ոչ միայն մեր բանականությանը, այլ նաև մեր բնագոյներին է դեմ և որ այն երկար չի կարող իշխել: Բայց եթե... մենք բացահայտենք մեր մերկությունը՝ մի կողմ թողնելով քրիստոնեական կրոնը, որը մինչ այժմ մեր պարծանքն է եղել և մեր քաղաքակրթության աղբյուրը, մենք պետք է զգուշանանք (տեղյակ չիմելով, որ միտքը չի հանդուրժում դատարկություն), որ մի կոպիտ, կործանարար և այլասերող մախապաշարմունք կգրավի դրա տեղը»<sup>17</sup>:

<sup>15</sup> Harbour . p. 13

<sup>16</sup> Jacques Maritain, True Humanism . London .1938, p. 19.

<sup>17</sup> Reflections . p. 91.





«Մարդկանց բոլոր օրենքները դեկլարատիվ են: Դրանք կարող են փոխել մախնական (բնական) արդարության կիրառման ձևերը, բայց ամենևին էլ իշխանություն չունեն դրա քովանդակության մկատմամբ»<sup>23</sup>:

Մարդիկ իրավունք չունեն փոփոխելու օրենքներն ըստ իրենց քամահրանքի: Գերագույն օրենքը չի գտնվում որևէ քաղաքական համայնքի իշխանության ներքո, որպեսզի այն հարմարեցվի կամ փոփոխվի: Մեր օրենքները ծագում են հավերժական բարոյական օրենքներից: Գերագույն երջանկությունը՝ բարոյական երջանկությունն է, ըստ Բյորքի, և տառապանքների պատճառը՝ բարոյական չարիքն է (moral evil): Հպարտությունը, փառամոլությունը, ազահությունը, վրիժառությունը, կիրքը, սանձազերծ վարքը արատներ են, որոնց իրականում խնդիրներով լի կյանքի հետևանքներ են: «Կրոնը, բարքերը, օրենքները, արտոնությունները, ազատությունները, մարդկանց իրավունքները, առիթներ են հեղափոխության համար, որոնք օգտագործվում են «սենտիմենտալ հումանիտների» և դժբախտ դեմագոգների կողմից, որոնք կարծում են, թե մեր դժբախտությունների պատճառները ավանդական հաստատություններն են:

Բայց իրականում մարդու սիրտն է չարիքի աղբյուրը: «Չի կարելի վերացնել չարիքը՝ վերացնելով միապետին, պետության մախարարներին և կամ արգելելով Ավետարանը... Խմաստուն մարդիկ պետք է փորձեն դարմանել արատները և ոչ թե անումները»<sup>24</sup>: Ոչ ոք իրավունք չունի կասկածելու, թե արդյոք «Ամենակարողը ի գործ» է վերափոխել ճշտի և սխալի էական բաղադրամասերը»<sup>25</sup>:

Բյորքը առանձնացնում է առաքիցության երկու հատկանիշներ, որոնք էական են անձնական բավարարվածության և հասարակական խաղաղության համար: Դրանք են՝ խոհեմությունը և հնազանդությունը: Առաջինն առավելապես անտիկ հասարակական-փիլիսոփայական դրույթ է, երկրորդը՝ քրիստոնեական ուսմունքների դրույթներից: Առանց դրանց, մարդիկ խղճալի են, իսկ բարեգթությունից զուրկ մարդիկ հազիվ թե կարողանան ըմբռնել այդ հազվագյուտ առաքիցի հատկանիշները:

Բյորքյան կրոնական պահպանողականության մեջ շեշտվում է իշխանության և մրադեկավարի անձեռնմխելիությունը: Կրոնն ինքնին ենթադրում է հիերարխիա հասարակության մեջ: «Ցանկացած ճշմարիտ կրոնի էական մասն է այն, որ լինի հնազանդություն տիրոջը, վստահություն մրա հայտարարություններից և ընդօրինակման ձգտում մրա կատարելություններից»<sup>26</sup>:

Բոլոր մարդիկ, ովքեր իշխանություն ունեն, պետք է հասկանան, որ իրենց վստահված է մի բան, որ «իրենց վարքի համար պետք է պատասխանատու լինեն միակ մեծ Տիրոջը, Արարչին և հասարակության հիմնադրին»:

Բյորքը պաշտպանում էր ոչ թե ընդհանրապես բոլոր կրոնները, այլ Անգլիկան և Կաթոլիկ եկեղեցիներին՝ ընդդեմ աղանդների<sup>27</sup>:

<sup>23</sup> Burke . Works . 4 . p. 22.

<sup>24</sup> Burke . Works 6 p. 32 - 33.

<sup>25</sup> Burke . Works 6 p. 21 - 22.

<sup>26</sup> Reflections . p. 159.

<sup>27</sup> Clark. English Society . p. 252.

ի տարբերություն Բյորքի. Քուրիքը առավելապես հետաքրքրված էր Անգլիայի եկեղեցու տիրող իրավիճակով: Նա առանձնապես չի խորանում կրոնական խնդիրների մեջ, բայց իր առաջարկած իդեալական ծրագրից երևում է, որ նա ևս հավատում է աստվածաբայց իր առաջարկած իդեալական ծրագրից երևում է, որ նա ևս հավատում է աստվածապետոսն հուսմանիզմի և հասարակության աստվածային ծագման դոկտրինան: Ըստ Քուրիքի, կոռնը գտնվում է հասարակության գոյության հիմքում: «Ըշմարիտ թե սխալ, կոռնը միշտ եղել է և դեռ հանդիսանում է հասարակության -առաձգական կենտրոնը», որի մասնն ինչ հարմարեցվում է կամ ստիպված է հարմարվել»<sup>28</sup>:

Ըստ նրա ազգային եկեղեցին պետության մասը պիտի կազմի, և հիմնականում երկու նպատակ է նրա առջև դրվում: Առաջինը՝ ժողովրդի մոտ հույսի զգացողության ամրապնդումն է (հիմարկե կրոնի միջոցով), որը կնպաստի երկրի առաջադիմությանը, իսկ երկրորդը՝ մարդկանց իսկական քաղաքացի դարձնելն է, քաղաքակրթելն ընդհանրապես<sup>29</sup>: Միաժամանակ եկեղեցին չի փոխարինում պետությանը, այլ ամրապնդում է այն և չպետք է միջամտի ամեն խնդրով պետության գործերին: Հակառակը «եկեղեցին պետք է պաշտպանվի պետության կողմից», և պետությունն էլ իր հերթին չպետք է միջամտի կրոնական - եկեղեցական հարցերին<sup>30</sup>:

Ահրաժեշտ է նշել, որ Քուրիքը տարբերակում է Ազգային և Քրիստոնեական եկեղեցիներ հասկացությունները: Քրիստոնեական եկեղեցու հիմնական ֆունկցիաները կրոնական են: Այն ավելի մեծփակ է և գործում է ամենուր, աշխարհի մեծ մասում: Միջնդեռ Ազգային եկեղեցու նրա ծրագիրը վերաբերում է զուտ Անգլիային և իր մեջ է ներառում մեծ թվով աշխարհիկ ֆունկցիաներ:

Քրիստոնեական եկեղեցին ինքնամիտի է: Այն, ի տարբերություն Ազգային եկեղեցու, կարող է կապ չունենալ պետության հետ: Քրիստոնեական եկեղեցու Քուրիքյան մեկնաբանությունը և՛ հաստատություն է, և՛ գաղափար: Այսինքն, ցանկացած քրիստոնյա հավատացյալ մասն է կազմում Քրիստոնեական եկեղեցու: Եվ այստեղ կարևորվում է կրոնը, հավատը: Հավատը առավելապես անհատներից է պատկանում, և հավատացյալների համայնքը չենք կարող նույնացնել տեսանելի եկեղեցու հետ: Այսինքն այն մի անտեսանելի և հոգևոր եկեղեցի է, որը ճանաչելի է միայն Աստծուն: Այսպիսով Քրիստոնեական եկեղեցին առավելապես մերառում է իր մեջ քրիստոնեական հավատը և հավատացյալներին:

Ազգային եկեղեցուն գործում են եկեղեցականները: Վերջիններս Ազգային եկեղեցու հետ միասին կազմում են չորս գլխավոր հաստատություններից մեկը Անգլիայում (թագավորը, համայնականները և լորդերը): Նա, ըստ երևույթին նկատի ունենալով միջնադարյան եկեղեցին՝ ճշում է, որ Ազգային եկեղեցին միջնորդելու է հարուստների և աղքատների, պետության և ժողովրդի միջև: Միջնդեռ Անգլիկան եկեղեցին ճակատագրական սխալ է թույլ տվել՝ սկսած Ռեֆորմացիայից իրեն կապելով միայն միապետի և արքունիքի հետ, օտարանալով ժողովրդից:

<sup>28</sup> Calveridge. Works. vol. 6 p. 67.

<sup>29</sup> Works. vol. 6. p. 70.

<sup>30</sup> Works. vol. 6. p. 98.

Ըստ էության, առանձնանալով Հոմեական Եկեղեցուց, այն դադարեց լինել վերագրային, բայց փոխարենը վերածվեց թագավորական Եկեղեցու: Այսպիսով, Անգլիկան Եկեղեցին (Established Anglican church) ծախողվել է ի կատար ածել իր հաստատման (establishment) առաջնային նպատակը<sup>31</sup>, այն է՝ դառնալ ազգային և պատկանել բոլորին:

Ազգային Եկեղեցին իր միջոցները (որոնք նա ստանում է ժողովրդից) պետք է ուղղի 4 նպատակների՝ 1) համալսարանների և դպրոցների պահպանում, 2) բոլոր ծխերում քահանաների և ուսուցիչների ներկայության ապահովում, 3) եկեղեցիների և դպրոցների կառուցում կամ վերանորոգում, 4) ծերերին և հիվանդներին օգնություն: Այս ծրագիրն այժմ կարող է հասարակ, թեև մի փոքր իդեալիստական թվալ, բայց Քուրիջի ժամանակաշրջանում դրանք մոռույթ էին և դրանց կարիքը խիստ զգացվում էր: Ինչպես տեսանք, չափազանց հետաքրքիր են մեր մեկնաբանությունները «Եկեղեցու» վերաբերյալ ընդհանրապես: Նրա համար կրոնը կազմում է կյանքում ամեն լավ բանի և գեղեցիկի ամբողջությունը<sup>32</sup>:

Ռեֆախտաբար, քուրիջյան ծրագիրը երբեք չիրականացավ: Եկեղեցին մասնավորապես չկարողացավ հաստատել իր ազդեցությունը պետական կրթական համակարգում, ինչպես նաև ընդհանրապես պետության հետ կապը երբեք այնպիսին չդարձավ, որը ցանկալի կլիներ Քուրիջի և բազմաթիվ պահպանողական մտածողների համար:

Ռեգրայելին թեև չուցի կրոնի մասին առանձնահատուկ մոտեցումներ, բայց նա, իհարկե, սկսած իր երիտասարդ տարիներից գրած հոդվածներից, մինչև իր քաղաքական գործունեության հասուն շրջանը, միշտ առանձնացրել է կրոնի և Եկեղեցու կարևոր դերը անգլիական հասարակության համար: Օրինակ, դեռևս 1834 թ. նա գրում է, որ «ժողովրդի շահերից է բխում Եկեղեցուն աջակցելը, քանի որ Եկեղեցին իր հայրենակալվածքն է (պատրիստիան), մեր միակ ժառանգական սեփականությունը: Եկեղեցին իշխանության հասնելու միակ դարպասն է, ուսման պատվի արժանանալու իր ճանապարհը»<sup>33</sup>: Նրա կարծիքով (ի տարբերություն Քուրիջի) Եկեղեցին միշտ պաշտպանել է ժողովրդին:

Իր երիտասարդ շրջանում գրած վեպերից մեկի նախաբանում նա այն կարծիքին է, որ շատ քիչ լավ բաներ են պահպանվել Անգլիայում և Եկեղեցին դրանցից մեկն է: Իսկ այդ ժամանակաշրջանում ստեղծված ծանր բարոյական պայմաններում միայն Եկեղեցին է «դարմանիչ հաստատությունը» (remedial agency): Եվ ոչ մի հասարակություն չի կարող լինել հարատև, եթե «այն չի ընդունում հավատարմության և կրոնական պատկառանքի սկզբունքները»<sup>34</sup>:

Նա միշտ այն կարծիքին է եղել, որ Եկեղեցին լորդերի և համայնականների հետ միասին կազմում է Անգլիայի ներկա երեք դասերից և հաստատություններից մեկը: Նրա կարծիքով Եկեղեցին միջին տեղ է գրավել, կապող օղակ եղել լորդերի և համայնականների, վերնախավի և ժողովրդի միջև: Հետաքրքիրն այն է, որ այնտեղ, որտեղ Քուրիջը տեսնում էր որևէ լուրջ հիմնախնդիր (Եկեղեցին միավորվել էր արքունիքին և կտրվել ժողովրդից),

<sup>31</sup> Cobban, p. 242.

<sup>32</sup> Նույն աշխ., p. 244.

<sup>33</sup> Disraeli, Whigs and Whiggism, p. 26.

<sup>34</sup> Disraeli, Tancred, General Preface, 14, 1870 ed. London.





սակայն, բարեբախտաբար, այն պետությամբ էր հանձնել ջաղաքացիական իշխանությունը, և այսպիսով երկուսով միասին կազմել են ընկերությունը, որն ավելի շատ հասարակական բարեկեցությանն է ուղղված, քան գերիշխանության ձգտող ավերիչ մրցակցությունը<sup>39</sup>:

Այսպիսով, Բյորքը և մյուս պահպանողականները կրոնը համարում էին եվրոպական ջաղաքակրթության անկումաքարը: «Քննարկելով այն «վտանգավոր» խնդիրը, որ քրիստոնեության անկում է տեղի ունենում իրենց ժամանակներում, պահպանողականները զգուշացնում էին խաղաղությանը և կայունությանը սպառնացող երկու հնարավոր վտանգների մասին: Առաջին, նրանք կարծում էին, որ կրոնական հավատի փոխարեն կառաջանա անկանոնություն: Նրանք վախենում էին, որ հասարակության մեջ կտարածվի միհիլիզմը՝ կայուն հասարակական կյանքը դարձնելով անհնարին մի բան: Երկրորդ, հավատալով, որ մարդ իր էությանը կրոնական էակ է, նրանք այն կարծիքին էին, որ միհիլիզմը ժամանակավոր երևույթ է, և որ մոր աշխարհիկ և ջաղաքական կրոններ կտարածվեն և կփոխարինեն քրիստոնեությանը՝ հասարակությանը կործանման եզրին հասցնելով:

Բյորքը սարսափած էր ֆրանսիական հեղափոխության, ինչպես ինքն է ասում, «կրոնական եռանդից»: Պահպանողականները ընդգծում էին տիեզերքի, անհատի և հասարակության աստվածակենտրոնությունը: Այդ երեքի առկայությունն առանձնացնում է պահպանողական ջաղաքական միտքը մյուս ջաղաքական փոխադարձություններից: Սակայն պահպանողականները, խուսափելով անհավատությունից և սկեպտիցիզմից, որոնք վերջին հաշվով մարդուն և հասարակությանը դարձնում են միհիլիստ, միաժամանակ խուսափում էին կրոնական դոգմատիզմից ևս: Պահպանողական միտքը, ինչպես վեգելիան է ասում, գործում է «միջին գոտում» («the realm of the in-between»): Նրանց կրոնական ուղղվածությունը նշանակում է, որ պահպանողականները հավատում են գոյի աստվածային բնույթին և փորձում են կարգավորել իրենց կյանքը և մտածելակերպը որոշակի տրամսցանդեմտալ ճշմարտությունների համաձայն: Բայց նաև ընդունելով գոյի սահմանափակությունը (վերջավորությունը) «միջին գոտում», նրանք հասկանում են, որ իրենց դաշինքը Արարչի հետ շատ սահմանափակ է: Անհրաժեշտ է գործ ունենալ ամենօրյա կյանքում այսերկրային երևույթների հետ: Եվ դրա համար անհրաժեշտ է ունենալ այսերկրային մասին համապատասխան գիտելիքներ: Այսպիսով, պետք է հավասարակշռություն ստեղծել մարդու և տիեզերքի մասին գիտելիքների միջև: Նախ պետք է համապատասխան ուշադրություն դարձնել անհատից և իր միջավայրից անդին գոյի մասին, ինչպես նաև ամենօրյա աշխարհի խնդիրների և գիտելիքների վրա:

Բյորքը, Քլոյրիքը և Դիգրայելին համապատասխանաբար արձագանքելով իրենց ժամանակ տեղի ունեցող իրադարձություններին, փորձում էին ապահովել այդ հավասարակշռությունը: Բյորքի մոտ առավել շեշտադրվում էր քրիստոնեական կրոնը, Դիգրայելիի մոտ՝ Եկեղեցին, իսկ Քլոյրիքը փորձում էր այդ երկուսն էլ միավորված ձևով ներկայացնել:

<sup>39</sup> Monypenny . 4, p. 362.

## ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

## ՖԻԵԴԵՐԱԿ ԿԱՐՐԱՐԻ ՔԱՐՈՋՆԵՐԻ ԸՄԲԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԶԱԳԱՆՔՆԵՐԸ ՆԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1901-1902 ԹԹ.)

20-րդ դարասկզբի հայ մամուլում զգալի տեղ են գրավում մշակութային կյանքը լուսաբանող հրապարակումները: Մասնավորապես թերթերն ու ամսագրերն ունեին «Գիտություն» և «արվեստ», «Պարբերական հրատարակություններ», «Մատենագրություն» և այլ բաժիններ, որոնցում ընթերցողին տեղյակ էր պահվում նոր լույս տեսած գրական և գիտական երկերի, հայերեն թարգմանված ստեղծագործությունների մասին: Ընդ որում, դրանք սուս տեղեկություններ չէին: Հոգվածագիրները հաճախ գնահատում էին տվյալ գործը, վեր հանում բովանդակային, լեզվաոճական շերտերը, մշում դրական կողմերն ու թերությունները: Մի շարք դեպքերում գրախոսությունն առաջ էր բերում արձագանքներ, թեր և դեմ կարծիքներ, որոնք հանգեցնում էին մեկ գրական բանավեճերի ու բանակոխվելների:

1901 թ. մշակավոր մանկավարժ և հոգեբան Սեդրակ Մանդինյանի թարգմանությամբ վաղարշապատում լույս տեսավ անգլիացի հոգետրական գործիչ Ֆրեդերիկ Ֆարրարիի քարոզների գիրքը («Ֆարրարի քարոզներ»):

Առաջին գրախոսությունը թարգմանության մասին տպագրեց «Նոր-Ռարը» 1901 թ. հունիսին (N 93), էմմ. քաթ. Նազարյանի ստորագրությամբ: Պատասխան հոդվածով («Նամակ խմբագրության») մույմ թերթում (N 109) հանդես եկավ Ս. Մանդինյանը:

Այսպիսի բանակոչին արձագանքեց Գարեգին վրդ. Հովսեփյանը, այնուհետև իրենց հիշգրտողները կրկին ներկայացրեցին առաջին գրախոսը և թարգմանիչը:

1901 թ. հուլիսին «Մուրճի» 7-րդ համարում տպագրվեց նոր գրախոսություն «Ֆարրարի քարոզների» մասին: Հեղինակը՝ Լ.-ն (Լեոն - Դ.Պ.), որն այդ ժամանակ հավասարապես թղթակցում էր «Մուրճ»-ին և «Մշակ»-ին, շեշտում է թարգմանության ժամանակավրեպ լինելու հանգամանքը՝ համապատասխան բացատրություններով: Գրախոսի դրույթները հանգամանալից վերլուծությամբ և հակափաստարկներով անմիջապես համդես են գալիս «Արարատ» և «Լուսն» ամսագրերը:

Վեց ամիս տևած բանավեճի (բանակոչի) ընթացքում լույս են տեսնում շուրջ 15 հրապարակումներ, քննարկումներին մասնակցում էին «Նոր-Ռարը», «Մուրճը», «Մշակը»,

<sup>1</sup> Ֆրեդերիկ Ֆարրարը 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին մեծ հեղինակություն էր վայելում եվրոպայում ու Ամերիկայում: Նա հոնտորական ծիրք ունեցող քարոզիչ էր, մի շարք ուշագրավ աշխատությունների հեղինակ: Դրանց զգալի մասը 1870-1880-ական թվականներին թարգմանվել էին մեկ հոտսերին: Ավելի մանրամասն տե՛ս Брокгауз Ф. А., Эфрон И. А., Энциклопедический словарь, т. 35, стр., 325.



«Արարատը», «Լուսման»։ Թարգմանված գրքի առիթով մամուլի լայն արձագանքը վկայում էր ազգային կյանքին հուզող կարևոր մի մտահոգության մասին, որ ի հայտ էր եկել մոր ժամանակներ-ազգային բարոյականություն-հասարակական-քաղաքական հարաբերություններ համատեքստում։

Բանակտիվը ըստ էության ներառում է երկու փուլ. առաջինում վեճերն ու քննարկումներն ընթանում էին «Նոր-Գար» թերթի էջերում, երկրորդ փուլում հակադիր տեսակետներով միմյանց դեմ դուրս էին եկել մի կողմից՝ «Մուրճը», «Մշակը», և մյուս կողմից՝ «Արարատ» ու «Լուսման»։ Առաջին փուլում քննարկումը ծավալվում է հիմնականում թարգմանական խնդիրների շուրջ, երկրորդ փուլում առաջնային են դառնում մասնակիցների գաղափարական տարաձայնությունները։ Բանակտիվն անդրադարձող վեճին հոդվածը՝ Ս. Մանդինյանի «Թարգմանության ծաղիկները» («Լուսման», N 1, 2, 1902), փորձ է՝ ընթերցողների ուշադրությունը վերստին սևեռելու թարգմանական հիմնախնդիրների վրա։

Առաջին փուլի բանավիճային քննարկումներին հիմնական տոն տվողը էմմ. քաթ. Նազարյանն էր։ Ընդ որում, ապրելով և գործունեություն ծավալելով Մոսկվայում՝ նա «Նոր-Գար» լրագրի միջոցով մասնակցում էր արևելահայ գրական-մշակութային կյանքին։

Նազարյանը ողջունում է «Ֆարրարի քարոզների» լույս ընծայումը հայերեն լեզվով, վեր հանում դրանց բովանդակային շերտերից բխող գաղափարական արժանիքները, մասնաւորապէս այն քարոզները, որ կարող են ներգործություն կունենան հայ հոգևոր մտածողության վրա («Նոր-Գար», 1901, 6 հունիսի, N 93)։ Գրախոսն առանձնակի ուրախությամբ ընդգծում է թարգմանչի՝ հոգևորականներից գիրքը ձրի քաժանելու պատրաստականությունը։ Այնուհետև անդրադառնալով թարգմանության լեզվական թերություններին՝ հանգամանորեն (12 կետով) մշտում է դրանք և ապա եզրակացնում. «Բայց, Աստված սիրեք, խնայեցեք հայոց լեզուն։ Խոչ ու խութեր մի ստեղծեք թնազրի գեղեցկությունները, ինչպես հարկն է, վայելելու դեմ»։

Սովորաբար քննադատության հանդեպ կանխակալ տրամադրված հեղինակներն իրենց պատասխաններում հատուկ ուշադրություն են դարձնում գրվածի այն տողի կամ տողերի վրա, որոնք հակառակորդի կողմից համեմատաբար խիստ են ասված, բայց և մեր ասելիքը ներկայացնող հիմնական դրույթը չեն։ Հիմնական դրույթի նմանատիպ ձևափոխումը հանգեցնում է մասնականակորդի ասելիքի խեղաթուրման<sup>2</sup>։ Ս. Մանդինյանն իր պատասխանն հոդվածում, կամա թե ակամա, մասն կենցվածք էր որդեգրել, քանզի անտեսելով գրախոսության հիմնական դրույթն ու փաստարկները, իր մտքերը զարգացնում է Նազարյանի «Աստված սիրեք, խնայեցեք հայոց լեզուն» ձևակերպման շուրջ։ Այդ իսկ պատճառով Մանդինյանի փաստարկներն առավելապես քննադատությունից վիրավորված հեղինակի ինքնապաշտպանական խոսքեր են։ Նշված 12 թերությունների դեմ ոչ մի կոնկրետ հակաճառություն։

<sup>2</sup> Բանավեճի տեսության մեջ այս հարցն անվանում են թեզի (դրույթի) ընդգափոխում, որը դասվում է անթույլատրելի հարցման շարքը. տե՛ս մասնավորապես **А. А. Язын, Искусство правильного мышления, М., Просвещение, 1986, М. Селемев, В. Васильков, Диалектика спора, Минск, 1990, К. Г. Лаврова, Психология спора, логико-психологические аспекты, Владивосток, 1988** գրքերը։

խնդրին ուրույն դիտարկելուով է մոտենում Գարեգին վրդ. Հովսեփյանց իր «Ֆարքարի քառոզները (Ճամակ խմբագրությամբ)» փոքրիկ հոդվածում («Նոր-Դար», 1901, 6 հուլիսի, N 113): Նա ևս չի անդրադառնում Նազարյանի նշած թերություններին, ավելի՛ց՝ զիրքը համարում է «հայոց թարգմանական գրականության մեջ լավագույններից մեկը», գտնում է մատուցում է «հայոց թարգմանական գրականության մեջ լավագույններից մեկը», գտնում է, որ Մանդինյանից ավելի արժանավոր թարգմանիչ հնարավոր էլ չէր գտնել: Թարգմանչի հասցեին ուղղված գովեստի խոսքերը խորքում թերևս ներքին մի մտահոգություն ունեին: Հովսեփյանցն ուրախ էր անգլիացի հոգևորականի բարձրակարգ ստեղծագործությունները հայերեն թարգմանված տեսնելու համար և առաջնայինը տվյալ դեպքում համարում էր ընթերցողների հնարավորինս մեծ լսարան ապահովելը: Այնինչ Նազարյանի նշած լեզվաբանական թերություններն ընթերցողին կարող էին շեղել թույլ խնդրից և զրկել նրան հեղինակի «մուրք և վնաս մտածությանը եղանակը» վայելելուց:

«Նոր-Դարի» հուլիսի 27-ի համարում (N 121) իր դիտարկումներով կրկին հանդես է գալիս Էմմ. քահ. Նազարյանը: Ուշագրավ մի համզամանք, իրավացիորեն մշելով, թե Մանդինյանց իզուր է նեղացել իր «Աստված սիրեք, խնայեցեք հայոց լեզուն» խոսքից, Նազարյանցն ինքն էլ ընկնում է նմանատիպ մի ծուղակի մեջ: Նա մեջ է բերում Մանդինյանի «Ես իմն ասեցի. հիմա դուք էլ ձերն ասացեք, տեսնեց, թե բանից ինչ բան է դուրս գալիս» մարտահրավեր խոսքը և իր դատողությունները հիմնականում հանգուցում է դրա շուրջ: Այլ խոսքով՝ երկուստեք նեղացնում են բանականի շրջանակները, անձնական համակրանք-հակակրանքի հոգեբանական օղակը մասնակիցներին հնարավորություն չի տալիս ծավալվելու թարգմանական խնդիրների, այդ ընթացքում ի հայտ եկած լեզվաբանական թերությունների և նմանաբնույթ այլ հարցերի շուրջ: Ուստի «Նոր-Դարի» N 131-ում (18 օգոստոսի, 1901) Ս. Մանդինյանի տպագրած «Իմ կրիտիկոսներին» պատասխանը, Էմմ. քահ. Նազարյանի հետ կապված, նախորդ ասածներին մոր բան չի ավելացնում: Հոդվածի երկրորդ մասում հեղինակը բանավիճում է «Մուրճի» քննադատի դեմ: Բայց սա արդեն վերաբերում է երկրորդ փուլին:

Նոր փուլի առաջին հրապարակումը «Մուրճ» ամսագրի 1901 թ. 7-րդ համարում Լ.-ի տպագրած «Ֆարքարի քառոզներ» գրախոսությունն է: Բանակոխվել տեղափոխվում է այլ հարթություն: Երկրորդ պլան են մղվում թարգմանության լեզվի հետ կապված քննարկումները, քանի որ «Մուրճի» գրախոսը մախ և առաջ քննում է գրականություն-ծողովուրդ փոխհարաբերությունների համատեքստում մեր գրականության մպատակի, քովանդակության և ուղղվածության հետ կապված խնդիրներ:

Լեոն լիբերալ-թուրքական հոսանքի հետևողական ներկայացուցիչներից էր և 20-րդ դարասկզբին դեռևս շարունակում էր հավատարիմ մնալ գրականությունը, գրական երկերը «հասարակական օգուտի» տեսանկյունով քննելու արծրունիական դիրքորոշմանը<sup>3</sup>: Այս մոտեցմամբ էլ նա փորձում է արժեկորել Ս. Մանդինյանի թարգմանությունը: Որպես թիրախ ընտրելով «Ֆարքարի քառոզների» հայերեն հրատարակությունը՝ Լեոն փորձում է

<sup>3</sup> Ի դեպ, Լեոն դեռևս 19-րդ դարի վերջին իր ուսուցչի՝ Գ. Արծրունու հետ միասին գաղափարական հոսանքների ներկայացուցիչներին մամուլի էջերում քննադատում էր իրեն առաջադիմականներ և խավարամիտներ. մեծ մոտեցումը զգալիորեն նեղացնում էր հասարակական գործիչների հայացքների և գործունեության շրջանակները:

վեր հանել հայ ժողովրդի «հետամնացության» պատճառները և գլխավորներից մեկը համարում է այն, որ մեր գրականությունը ժողովրդի զարգացմանը համընթաց չի գնացել, շարունակ ի հայտ են եկել աստվածաբանական բազմաթիվ գրքեր, որոնք խանգարել են հայ մարդուն «հասկացող, ինքնաճանաչ քաղաքացի» դառնալու: Այնուհետև եզրակացնում է. «Մեր հոգու համար անթիվ ու անհամար գործեր, իսկ մեր մտքի, մեր խելքի համար - գրեթե ոչինչ...» («Ֆարարի քարոզներ», «Մուրճ», 1901, N 7, էջ 163):

Հոգու և մտքի գործառույթների նման առանձնացումն ինքնին հակասական եզրակացության արդյունք է, քանի որ տրամաբանական իմաստավորում չի ստանում. գիրքն իր թվաճադակությամբ պետք է բավարարի հոգու և մտքի պահանջները միաժամանակ: Ուստի պարզունակ է հնչում հեղինակի «Մի» թե մեր ընթերցող հասարակությունը այդպիսի գրքերի է կարոտ» հոետորական հարցը: Իր չհիմնավորված դրույթին և փաստարկներին Լեոն այնուհետև հուզական երանգ է հաղորդում՝ փորձելով ազդել խոսքի հոգեբանական ուժով. «Ափսոս՝ աշխատանք, ափսոս՝ վատնած փող»: Գրախոսի փաստարկումները շարունակվում են այս մակարդակով՝ ի ցույց դնելով նրա մտածողության ցերքին հակասությունները:

Լեոյի հոդվածի առաջին պատասխանը տպագրվում է «Արարատ» ամսագրի 1901 թ. է և Ը համարներում: Այն անստորագիր է և վերնագրված է՝ «Հակասություններ»: Հեղինակը հիմնավոր քննության է ենթարկում Լեոյի բերած փաստարկները: Դրանց կապակցությամբ արված դիտողություններն ու եզրահանգումներն ավելի համոզիչ են, քանի որ հիմնը վում են հետևյալ հակափաստարկների վրա.

ա) Եթե Անգլիայի պես «լուսավոր ու առաջադեմ աշխարհում» նման «հարոգողները ժողովրդի մեջ մեծ պահանջարկ ունեն, ապա բնական է, որ կհետաքրքրեն նաև հայ քրիստոնյա ընթերցողին:

բ) Լեոն ճշում էր, որ «կարդացող և հասկացող տերտերներ չունենք»: Այդ դեպքում, ըստ «Արարատի» հոդվածագրի, նրանք էլ ումի՞ց քարոզել պետք է սովորեն, եթե ոչ Ֆարարի նման եկրոպական բարձրակարգ քարոզիչներին:

գ) Վերջին տարիներին հայ իրականության մեջ տնտեսական կյանքի աշխուժացումն առկա է, արդյունաբերության զարգացումը, կապիտալի մուտքը փոխել են հայ գյուղի դեմքը, ըստ այդմ մեծացել է նյութական շահի նկատմամբ ժողովրդի ձգտումը, որը դրական առումով կենսամակարդակի փոփոխությունն առաջ բերելով, նաև բարոյական լուրջ վճառներ է հասցրել հայ մարդուն: Նման պայմաններում, շարունակում է հոդվածագիրը, «ավելի գործնական և անհրաժեշտ խնդիր կա՞ միթե մեր ժողովրդի համար, քան նրա բարոյապես և հոգեպես բարձրացումն ապաստելը» («Հակասություններ», «Արարատ», 1901, N է և Ը, էջ 352): Ուստի կենդանի, ճշմարիտ ավետարանական խոսքից բացի նման «հարոգողների թարգմանությունը նույնպես անհրաժեշտություն է:

Լեոն, իհարկե, անպատասխան չի թողնում «Արարատի» հոդվածագրին: «Մուրճի» 1901 թ. N 9-ում տպագրվում է նրա «Կղերական սովետություններ (երկու խոսք «Արարատին»)» հոդվածը: Այն, ինչ ասվեց թեզի նենգափոխման մասին բանակովի առաջին փուլում, Լեոյի այս պատասխանի մեջ ի հայտ է եկել տարաբնույթ դրսևորումներով: Ավելին, դրանք նա «համեմել է» հակառակորդի հասցեին ուղղված վիրավորական պիտակներով:





Այս մեղադրանքը ստիպում է Լեոյին կրկին հանդես գալու «Մուրճում»։ «Պարբերական հրատարակություններ» խորագրի ներքո ամերիադաժնալով «Լուսնային» և հիշյալ հոդվածին՝ Լեոն այս անգամ ինքն է բողոքում, որ «Արադատը» և «Լուսն» դուրս են եկել գրական վայելչության կանոններից, այնուհետև առանձնակի վրդովմունքով կանգ է առնում «Լուսնայի» կողմից հիշատակված դրամական գումարի (900 ռուբլի) փաստի վրա։ «Հոդվածը ամստորագիր է և պատասխանատվությունը ընկնում է Գյուտ քառանայի վրա։ Ուստի մենք էլ հրավիրում ենք նրան պատասխանի, պահանջում ենք հայտնել, թե ի՞նչ էն նշանակում այդ խոսքերը» («Մուրճ», 1901, N 11, էջ 262)։ Մեզ հայտնի չէ, թե ի՞նչ պատասխան է ստացել Լեոն Գյուտ քառանայից, սակայն տվյալ դեպքում առավել մտահոգիչը երևույթի տգեղ դրսևորումն էր. բանակոփվն իջել էր անձնական փոխադարձ մեղադրանքների մակարդակին և դրանով իսկ սպառել իրեն։

Վերջին արձագանքը Ս. Մանդիմյանի «Թարգմանության ծաղիկներ» հոդվածն է, որը տպագրվեց «Լուսնայի» 1902 թ. առաջին, երկրորդ համարներում։ Հեղինակն այստեղ առաջ է քաշում թարգմանության հետ կապված մտահոգություններ, մշտն, որ հայ ինքնուրույն և թարգմանական գրականության վիճակը մեր մտավորականներին չի հետաքրքրում։ Ավելին, նրանցից շատերն ընթերցում են հիմնականում ռուսերեն գրքեր ու պարբերականներ, այդ պատճառով էլ, ըստ Մանդիմյանի, «Մենք ունինք ինտելիգենտ գրող, բայց չունենք ինտելիգենտ կարդացող» («Լուսն», 1902, N 1, էջ 181)։ Թարգմանության ոչ բարվոք վիճակը ի ցույց դնելու նպատակով հոդվածագիրը վերջում ընթերցողներին է ներկայացնում «Մշակում» տպագրված թարգմանական մի հատված և դրան զուգահեռ դնում նույն հատվածը՝ իր սրբագրությամբ։

Բանակոփվը և հատկապես նրա առաջին փուլը թերևս այլ ընթացք ունենային, եթե Մանդիմյանը, բանավիճելով Էմմ. քահ. Նազարյանի հետ, ընդուներ կամ հերքեր նրա մշած 12 դիտողությունները համապատասխան պատճառաբանություններով։ Ինչևէ։ Տարածայնությունների արդյունքում թեև կողմերն ընդհանուր հայտարարի չեկան, սակայն հստակվեցին մի շարք խնդիրներ, որոնք բնորոշ էին թե՛ հայ հոգևորական և մտավորական խավերի մտածողությանն ու գաղափարական դիրքորոշումներին ընդհանրապես և թե՛ բանակոփի կոնկրետ ընթացքին ու նրա դրսևորումներին մասնավորապես։

Նախ, տվյալ ժամանակահատվածը, այսինքն՝ 20-րդ դարասկիզբը, հայ ժողովրդին վերջստիճ առնչում էր հոգևոր և մտավոր ինքնահաստատման գործընթացներին։ Մի դեպքում ֆիզիկական գոյատևման հրամայականն արևելահայ իրականության մեջ արձագանքում էր տնտեսական և արտադրական հարաբերությունների մոր դրսևորումներին, մեկ այլ դեպքում ազգի՝ բարոյական ավանդույթներով ձևավորված հոգեբանությունը ծառանում էր գաղափարախոսական մոր հովերի դեմ։

«Ֆարդարի քարոզներ» հայերեն թարգմանության բուռն արձագանքները, հատկապես բանակոփի երկրորդ փուլում, վկայում էին, որ ազգային ինքնության մորոշ «չափորոշիչներ» կրկին հաստատելու անհրաժեշտություն էր առաջացել։ Իհարկե, առիթը Լեոյի՝ ծայրահեղության միտված քննադատական դիտողություններն էին, բայց հոգևորի հանդեպ «ոտնձգությունը» վրդովել էր հատկապես հոգևորականներին։ Նրանց դիրքորոշումը տվյալ դեպքում առավել սթափ էր, հավասարակշռված, գաղափարական առումով՝ զեղծ

ծայրահեղություններից: Բանակովի ընթացքում Լեռնի կողմից մեծապիտիված իր միտքը վերադաստատելու նպատակով «Արարատի» հողվածագիրը գրում էր. «Հետևի՛ր քո նյութական բարօրությանը, աշխատի՛ր յուրացնել քաղաքակրթության բարիքները և խոհեմությամբ ու հետախոսությամբ բարեկեցիկ կյանքի պայմաններ ստեղծել քեզ համար, բայց առանց քո ազգային-Ռոզետր ինքնուրույնությունը կորցնելու...» (Կ. Վ., Լուրջ դիտողություններ, «Արարատ», 1901. N Թ և Ժ, էջ 447):

Բանակովի առաջին և երկրորդ փուլերն ունեին իրենց ընդհանուր կողմերն ու տարբերությունները: Առաջինում գերիշխող է թարգմանությունների հետ կապված խնդիրների բանավիճալին քննարկումը, երկրորդում՝ գաղափարների, մտեցումների պայքարը: Առաջինում մտքերի բախումը ծայրահեղ շիկացման չի հասնում, երկրորդում՝ բախումը ոչ միայն շիկանում, այլև իջնում է անձնական փոխադարձ վիրավորանքների, մահ մեղադրանքների մակարդակի: Առաջին փուլում ակտիվ է թարգմանության հեղինակը՝ Սեդրակ Մանգիճյանը, երկրորդում առավել գործում են «Արարատ» և «Լուսն» ամսագրերը:

Երկու փուլերի ընդհանրության մեջ առավել ուշագրավն այն ոգևորությունն է, որ դրսևորում են գրախոսները թարգմանության առիթով: Առաջին փուլում ոգևորված գրախոսի (Գարգին վրդ. Հովսեփյան) տրամադրությանը համահունչ են երկրորդ փուլում «Արարատի», «Լուսնայի» հողվածագիրների դատողությունները: Ի դեպ, մրանջ համամիտ էին մահ այն բանում, որ թարգմանությունը լեզվական առումով գերծ չէ որոշ թերություններին:

Մեկ այլ հետաքրքիր իրողությունն է: Թեև թարգմանված գիրքը մերառում էր անգլիացի հոգևորական գործչի քարոզները, սակայն գրախոսություններից և հողվածներից ոչ մեկում խոսք չկա վերջինիս կրոնական դավանանքի մասին (նկատենք, որ Ֆարրարն Անգլիկան եկեղեցու ներկայացուցիչ էր): Հատկապես երկրորդ փուլում ուշադրության կենտրոնում գրքի արդիական կամ ժամանակավրեպ լինելու հանգամանքն է, որի շուրջ բանավիճում էին հողվածագիրները՝ սևեռելով իրենց մտորումներն ազգային մտածողության և հոգեբանության առանցքային խնդիրների վրա: «Հարկավո՞ր են մասնատիպ գրքերը հայ ընթերցողին» հարցին հոգևորականները, մահ պահպանողական մամուլը («Արարատ», «Լուսն») միանշանակորեն դրական պատասխան էին տալիս, հակառակն էին պնդում լիբերալ-բուրժուական մտածողության տեր գործիչները (Լեո և համախոհներ):

Ի վերջո, ակներև էր հետևյալ փաստը. թարգմանության շուրջ ծավալված բանակովի մասնակցում էին մամուլի առնվազն հինգ օրգաններ: Սրանցից յուրաքանչյուրն ընթերցողների իր լսարանն ուներ, որոնք մտքերի փոխանակության և բախումների ամուղղակի մասնակիցներն էին: Նրանց հետաքրքրությունը գրքի նկատմամբ և այն ընթերցելու ցանկությունը, տպագրվող բանավիճալին հրապարակումների հետ կապված, բնական է, որ պետք է մեծամար: Եվ մահ պարագայում թերևս ժամանակավրեպ է դառնում Լեռնի հուզական բացականչությունը՝ «Ափսո՛ս աշխատանք, ափսո՛ս վատմած փող»: Թեկուզև այս բանակովի միջոցով «Ֆարրարի քարոզների» համար ընթերցողների որոշակի լսարանն արդեն իսկ ապահովված էր...



## ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

Բաևաստիրական գիտությունների թեկնածու

## ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ «ՀԱՐԱԼԵԶՆԵՐՈՒ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ՊԱՏՄՎԱԾԻՆԵՐԸ

«Հարաշուք թափահարումներով չաստվածները ճամփա կելլեն մուրթի մեջ, արշալույսեն առաջ ու կմեկնեն: Հարալեզները կդավաճանեն ու կմեկնեն: Միմյեռ մեր երեսուն տարիներում մոտերը կկարծենք բարձրանալ, հակառակ մեր վստահության կկարծենք համբառնալ, մարմնեղենը ետև ձգել ու վեր ելլել, հասնիլ արշալույսին: Եվ ահա դավաճանությունը՝ ու կզգամք թե շատ մը բաներ կանգ կառնեն: Հարալեզները կլիզեն և Գեղեցիկը պիտի արթննար: Բայց ամ այլևս պիտի չելլեն ոտքի»:

(Շահան Շահնուր)

Ֆրանսահայ արձակույմ Շահան Շահնուրն առանձնանում է ինքնատիպ տաղանդով և թողած նշանակալից հետագծով: Սփյուռքի ձևավորման առաջին իսկ օրերից նա դարձավ «Նահանջի» դեմ անլուրջ մարտիկը: Ֆրանսահայ երիտասարդ արձակագիրը ցավով նկատեց, թե ինչպես ժամանակի գործոնները հետացնում են հային ազգային խնդիրներից, ինչպես են օտար բարքերը և կենցաղն աստիճանաբար դառնում բնական կենսաձև, ինչպես է աղճատվում և օտարվում մայրենին:

«Շահան Շահնուր իր գրիչը թաթախեց մեր ժողովուրդին տառապանքին, իր իսկ տառապանքին մեջ ու գրեց, գրեց անիծելով, ոչ ուրանալով ինչպես ոմանք հետևեցողին, գրում է Թորոս Թորամյանը,- գրեց արիւնելով իր եւ ուրիշներում հոգին, մտածելով թե այդ է ձեռն տառապանքէն թմրած հոգիները արթնցելու, հարուածեց ու հարուածուեցաւ, բայց մահուան սննին անգամ ցած չդրաւ իր գրող մարտիկի գրիչը, իր բոցավառ հայրենասերի գրիչը»<sup>1</sup>:

Շահան Շահնուրի հարաճում, ազգային դիմորոշ դարձող հարցադրումներին են արձագանքում «Նահանջ առանց երգի» (1929) վեպը և «Հարալեզներու դավաճանությունը» (1933) պատմվածաշարը:

«Նահանջ առանց երգի» վեպի լույսընծայումից չորս տարի անց գրողը հրատարակեց իր պատմվածքների անդրամիկ ժողովածուն՝ «Հարալեզներու դավաճանությունը», որն արժանացավ ընթերցողների և քննադատների բարձր գնահատականին:

«Հարալեզներու դավաճանութիւնը»,- գրում է Արշակ Չոպանյանը,- թանկագին հատոր մըն է, ուր «Նահանջ առանց երգի» վեպին տաղանդաւոր հեղինակը կը յայտնուի աւելի եւս խտացած, գոտած, սուրցած արուեստով մը»<sup>2</sup>:

Ֆրանսահայ գրողը պատմվածաշարը ձոնել է իր լավագույն ընկերոջը՝ գրող-հրապարակախոս Հարություն Ֆրենկյանին:

<sup>1</sup> Թորոս Թորամյան, Վերստիճ կարդալով Շահան Շահնուրը, Հալեպ, 1971, էջ 11:

<sup>2</sup> «Ամսօր», Փարիզ, 1933, թիվ 3-4, էջ 80:

Պատմվածաշարի մեջ են մտնում յոթ պատմվածքներ՝ «Առավոտյան շեփոր», «Հոսանքին երգը», «Մանուկ մը տարեցներում մեջ», «Դերձակ մը, իր երկու հյուրերը և զանազան ռեսպեք», «Ջաթոսթե», «Պճեղ մը անուշ սիրտ» և «Հարսիւններու դավաճանությունը», որոնք պատկերում են հայի երեկվա և այսօրվա կյանքը՝ իր հոգսերով ու տագնապներով:

«Նորավելները» հավաստում է Արշակ Չոպանյանը, հեղինակին ծննդավայր Պոլսին մեջ երեկուան ու մանաւանդ հեռաւոր օտարութեան մէջ այսօրուան՝ թրջաճաղ կենքի պատկերներ են քնայքոտ երգիծանքի սրտազէտ, չարաճճի ու կենդանի մկարումով մը իրականացած:

Պատմվածաշարի երեք պատմվածքները մերկայացնում են դարասկզբի պոլսահայ կյանքը՝ իր անհանգստություններով և մտահոգություններով: Ի տարբերություն վազգեն Շուշանյանի և Շավարշ Նարդուհու, Շահան Շահնուրը անցյալը չի գումազարդել: Նրա պատկերած անցյալ կյանքն իրական կյանքն է՝ իր բնական ընթացքով, սովորական մարդկային հարաբերություններով: «Բացառիկ արիություն», գրում է Ա. Թոփչյանը, բյուրեղյա խիղճ և անսահման մեծ սիրտ պետք է ունենալ սեփական ժողովրդին, ծանր և դժվարին պահերին դառը, բայց սթափեցնող ու անհրաժեշտ խոսքեր ասելու համար»<sup>3</sup>: Միտումնավոր կերպով երիտասարդ գրողն իր պատմվածքների միութեամբ դարձրել ինչպես պոլսահայ, այնպես էլ փարիզահայ կյանքը՝ ընդգծելու համար հայի դժվարություններով ու փորձություններով հարուստ կյանքը: Պոլսահայ կյանքի պատկերումը մախադուտ է հանդիսացել փարիզահայ կյանքը պատկերելու համար: Եվ դա, մեր կարծիքով, հաջողվել է գրողին:

«Հարսիւններու դավաճանությունը» պատմվածաշարը բացվում է «Առավոտյան շեփորով», որի թեման Ավետիսի և Աղավմիի սիրո գողտրիկ պատմությունն է: Թվում է՝ ոչ ոք և ոչինչ խոչընդոտ չի կարող հանդիսանալ այս մեծ սիրուն: Սակայն տխուր մի միջադեպ խորտակում է այդ սերը: Այդ միջադեպի բացահայտումով էլ Շահնուրը մերկայացնում է թուրքական բանակի խժոժությունները, մրա ծանր վիճակը, ամոթի զինվորների կյանքը, ինչպես նաև օսմանյան բանակի դաժան անմարդկային օրենքները: Ավետիսը, որ զինվորական խոհանոցի աշխատող էր, զարման մի երեկո, անչափ անոթի լինելով, գաղտնի մի մեծ մսի կտոր է առնում բերանը, սակայն տեսնելով մերս մտնող ենթասպային՝ փորձում է թաքցնել գողացած մսապատառը կուլ տալով՝ դաժան և միտադաճող պատժից խուսափելու համար: Սակայն չարաբաստիկ այդ պատառը կանգնում է կոկորդիս, և մա հրաշքով է փրկվում մահվան ճիրաններից: Թուրք թելի կարգադրությամբ մրան դաժանորեն ծեծի են ենթարկում, ավելից՝ ստիպում են կատարել սեփական անձը ստորացնող արարքներ:

Շահնուրի հերոսները սովորական մարդիկ են, սովորական մի միջադեպը գրողի գրչի տակ վերածվում է գեղարվեստական պատկերի: Շահնուրը գրում է իր տեսածի, զգացածի մասին, մտացածին ոչինչ չի գրում: Այդ է թերևս պատճառը, որ մրա կերտած հերոսներն իրական են և կենդանի:

«Շահնուր», հավաստում է Արշակ Չոպանյանը, իր գործերում մեջ ընդհանրապես հասարակ տիպարներ, հասարակ դեպքեր կ'առնէ իրենց միտք, եւ կը յաջողի՝ իր տարօրի-

<sup>3</sup> Ալեքսանդր Թոփչյան, Ապագայի մերկայությամբ, Երևան, 1987, էջ 220:

նակ տաղանդի՞ն շնորհի՞ւ՝ այդ լաճախ ամենշան դեպքերն ու մարդիկը բարձրացնել մինչեւ տուամ, մինչեւ նոյն իսկ տեսակ մը դիցազգներգութիւն»<sup>4</sup>:

«Հարալեզներու դավաճանությունը» ժողովածուի պատմվածքները միազիծ չեն: Ծառ-նուրն այստեղ երբեմն երգիծական հմտությամբ ներկայացնում է կյանքի զավեշտական կողմերը և լիաթոք ծիծաղում իր հերոսների վրա: Նա օժտված է երգիծական տեսողությամբ: Կյանքի դրամատիկ երևույթների ու հոգեկան աշխարհի քննությանը զուգընթաց զրոյդը շարունակում է Ե. Օտյանի գեղարվեստական փորձը, սակայն միանգամից ասեմք, որ այն տիրապետող հատկանիշ չդարձավ Ծառնուրի երկերում:

Պոյսահայ կյանքն է պատկերված «Հոսանքի՞ն եզրը» և « Մամուկ մը տարեցիներու մեջ» պատմվածքներում: Վերջիցիս հիմքում ընկած է Ալեմտաղյի կնոջ և Սրապիոնի պատմությունը՝ ներկայացված տեղական, կենցաղային գույներով: Նրանք կողջ կողջի հարևաններ են, սակայն անհաշտ են. անվերջ կոիվ, խոտվություն, հայրիայնք, անեծք: Երկու հարևանների համար կյանքը դարձել է դժոխք, անտանելի օրերի անվերջաճալի շարան: Եվ դրանից բավականություն են ստանում դրացիները՝ անընդհատ թորթոքելով չմարող վեճը: Ի վերջո, տարեց հարևանները գիտակցում են այն և հաշվեհարդար տեսնում նրանց դեմ, ովքեր հրճվանք են ապրում իրենց այս վեճերի համար: Եվ սա պոյսահայ կյանքն է՝ իր մանր ու մեծ հոգսերով, զավեշտական պատմություններով, ուր սակայն չկա նահանջի վտանգը:

Ծառնուրն իր մյուս պատմվածքներում արդեն պատկերում է փարիզահայ կյանքը՝ իր տազնապներով, ուժացմամբ և նահանջով:

«Դերձակ մը և իր երկու հյուրերը և զանազան դեպքեր» պատմվածքը երիտասարդ դերձակ Տիրանի, նրա տարեց վարպետի՝ Տազես Պալապանյանի դառնություններով լի կյանքի պատմությունն է: Մեծ արհավիրքից հետո նրանք շատերի մամն ապաստան են գտել Փարիզում, ուր բարքերն ու սովորույթներն այլ են:

Տիրանը կարճ ժամանակահատվածում ընտելանում է օտար բարքերին և հաճախ տրվում է հարաճուն հաճույքներին, իսկ հին նրա վարպետը՝ Տազես Պալապանյանը, ոչ մի կերպ չի ցանկանում հաշտվել փարիզյան բարքերի հետ: Նա շանում է ընտանիքն ու աղջկան գերծ պահել նորի հրապույրներից: Սակայն աղջիկը՝ Ալիսը, որն ունի ազատ վարքագիծ, հակադրվում է հորը՝ ընդունելով գայթակղող նորը: Ծառնուրը սրությամբ է ընդգծում երեցների և կրտսերների բախումը: Երեցները չեն ցանկանում ապրել նոր ձևով, բայց և չեն կարողանում ապրել հին ձևով՝ իրենց ազգային ավանդապաշտ կյանքով, իսկ կրտսերները պարզապես չեն ցանկանում ապրել հին ձևով՝ դյուրությամբ ընդունելով նորը: Ահա այս ողբերգության հասնող հակասությունն է ընկած պատումի հիմքում:

Տազեսն իր փրկությունը, փախուստն այլանդակող նորից տեսնում է Պոլիս վերադարձի մեջ: Նրան թվում է, թե այդ ձևով ինքը կկարողանա պահպանել իր ազգայինը: Անցյալն այն եղակետն է, այն հողը, որը չնայած կորել է ուղի տակից, բայց իր հարաքերություններով և բարոյական արծեքներով, իսկ ամենակարևորը՝ իր իդեալներով պարզ էր, հասկանալի և հարազատ: Նա խոր վիշտ է ապրում, երբ գիտակցում է, որ ետդարձ ճանապարհ չկա, և ուժացումն ու նահանջը անխուսափելի է: Գաղթական հայը չափազանց դժվարությամբ, բարոյական գերլարման գնով կարողանում է ընդհանուր եզրեր

<sup>4</sup> - Անահիտ, Փարիզ, 1933, թիվ 3-4, էջ 80:



գտնել հին (Պոլիս) և նոր (Փարիզ) իրականությունների միջև: Ուշագրավ է պատմվածքի ավարտը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ նախնային գույքը - Սկսավ երգել «Տեր ողորմեան», արեւելեցիներու պես գլուխը երերցնելով, ձայնը դողդողացնելով, և աշխատանքը լցվեցավ խոր հուզումով: Վարպետը չէր լար իր անկումի համար: - «Տեր ողորմեան» է, որ լալազին է: Վարպետը չէր աղաչել կյանքին, երիտասարդներին - «Տեր ողորմեան» է, որ պաղատագին է: Խոր արցունքներ կային, բայց հիմքած կոկորդն է հանցավոր: Տիրամն ալ հետեցավ մարդուն և բնավ չմայեցան իրարու...»<sup>5</sup>:

Եաֆնուրի պատմվածաշարի լավագույն ստեղծագործություններից է «Պենդ մը անուշ սիրտը», որի մասին Գեղամ Սևանը գրում է. «Սփյուռքահայ գրականության դասականի իրավունքը մվածած պատմվածքներից է, զարմանալի իրագործումներից մեկը և բարեբախտաբար ոչ եզակին»<sup>6</sup>:

Ֆրանսահայ գրողն ինչպես իր նախորդ պատմվածքներում, այստեղ ևս պատկերում է հայի դժվարին կյանքը, իր տեղը չգտած մայրու ողբերգությունը, հայ մարդու, հայ երիտասարդի առանց երգի նախանքը: Նախանքում են թուրքը, սակայն ամեն մեկը յուրովի: Այսպես՝ Եպրաքսն հանումի որդիները լքում են մորը, մեկը նոր միջավայրում հեռանալով մորից, ազգային, նորովի է սկսում իր կյանքը, մյուսը, որը ապականող նորի հակառակորդն է, չգտնելով պայքարի ուղի, չտեսնելով նախանքին դիմակայելու ոչ մի շող, ինքնապաշտպանություն է գործում՝ հանրակառքի անիվների տակ կցնելով իր մահկանացուն, անձնապաշտպան է դիմում նաև մեկ այլ երիտասարդ հայորդի՝ Նորիկ Կարապետյանը:

Պատմվածքի առանցքը հայ մայրն է՝ Եպրաքսն հանումը, որը մայրական սիրով և անթաքնույց ջանքերով է լցնում պատմվածքը: Նա «պենդ մը անուշ սիրտ» է, նրա համար ամեն մի հայ երիտասարդ իր հարազատ զավակն է, նա ցավում է յուրաքանչյուրի համար և յուրաքանչյուրին պատում է իր մայրական անկեղծ սիրով: Եպրաքսն հանումը մեծ ողբերգություն է ապրում, երբ իմանում է, որ Նորիկ Կարապետյանն անձնապաշտպանություն է գործել, և չի կարողանում հասկանալ, թե ինչու են հայ երիտասարդներն այդ քայլին դիմում, չէ որ դեռ երիտասարդ են, կարող են ապրել, սիրել: Պատմվածքը հարցադրումների մի ամբողջ շարք է՝ ուղղված նախանքի և ուժացման դեմ: Նախանքում են թուրքը, տարբեր են նախանքի ճանապարհները, սակայն վախճանը մեկն է՝ նախանք, այն էլ՝ առանց երգի:

Եաֆնուրն իր պատմվածքներում արտացոլում է տեսածն ու ապրածը: Լինելով իրապաշտ գրող՝ նա, սակայն, ազդվել է եվրոպական մշակույթի նորագույն ուղղություններից և հատկապես գոյափոխության և ուղղություններից:

Սփյուռքահայ գրականության մեջ գոյափոխության և ուղղությունների ենթահանդիսակցությունը 20-30-ական թթ. գրողների՝ Վ. Շուշանյանի, Ջ. Որբունու, Հ. Ջադարյանի, Ե. Եաֆնուրի ստեղծագործություններում: Փոխափայլանում ուղղության որոշ ներթափանցումը հայ գրականությունում առաջին հերթին բացատրվում է Սփյուռքի անօրինակ ծանր վիճակով, նրա հանդեպ իրատես տագնապով: Ֆրանսահայ գրողները եղում էին ազգային ճակատագրի հանդեպ մտահոգությունից: Նրանք առավելապես որոնում էին գոյության փոխափայլան խորհուրդը, որը մի սահման է, որ ներառում է ազատ կյանքը և պատասխանատվությունը հավաքական ազատ մղումների հանդեպ, ինչի տակ պետք է միա-

<sup>5</sup> Եաֆնուր Եաֆնուր, Երկեր, Քառորդ առաջին, էջ 254:

<sup>6</sup> Գեղամ Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուղղագծեր, Երևան, 1986, էջ 177:

վորել նաև անհատի անընկճելիությունը, տառապանքի վեճությունը, դիմակայելու ուժը, հատկանիշներ, որ տեսնում են իրենց ժողովրդի նոր, դժվարին կյանքի մեջ:

«Զաթոսթե» պատմվածքը գրված է գոյապաշտական սկզբունքների հետևողությամբ, որտեղ, սակայն, պահպանվում է իրատեսական հատիկը, այն լրացնում է ֆրանսաֆայ կյանքը պատկերող պատմվածքների շարքը: Ծափնուրի այս ստեղծագործությունը պլուտոկրատիկ է - ապրելու պարտադրությամբ՝ բանաձևի շուրջ, որին գրողը մոտենում է երկու մեկնակետով, նախ՝ փոխոսփայական հայեցողությամբ, ապա՝ ազգային ճակատագրի մտահոգությամբ: Պատմվածքի հիմքում ընկած է մարդու միայնություն, առանձնություն, մահվան դատապարտվածությանը վերաբերվող հարցերը: Սյուժեի ընձեռած սեղմ հնարավորություններում Ծափնուրը իրեն դրսևորել է Ռոգեբաճական խորաթափանց վերլուծական կարողությամբ, ներապրումի հանընդգրկում բացահայտումով:

Պատմվածքի դեպքերը տեղի են ունենում մարդկանց կողմից արհամարհված, լքված «Զաթոսթե» բուժարանում: Պատմվածքի հերոսն է հայ սափրիչ Միշելը, հանձին որի, սակայն, դժվար չէ ճանաչել հեղինակին: Այս քայլին դիմում են շատ գրողներ, երբ ցանկություն ունեն վերականգնել իրենց կյանքի դեպքերն ուրիշի անվան տակ: Դա նպաստում է պատմվածքի անկեղծությանը:

Պատմվածքի հիմքում երիտասարդ հերոսի հիվանդանոցային կյանքի պատմությունն է. նրա սիրտ, կրած պարտությունների, տարած հաղթանակների պատմությունը: Միշելի կյանքը հարուստ չէ արտաքին իրադարձություններով, սակայն նրա ներաշխարհը, Ռոգեբաճական տեղաշարժերը հավաստի ու պատկերավոր են: Բուժարանում կյանքը ծանծաղի ու տաղտկալի է, սակայն մեցություն և լքվածության դատապարտված հերոսները ստեղծում են իրենց փոքրիկ երջանիկ անկյունը, իրենց անխաթ միասնությամբ առօրյան դարձնում հետաքրքիր:

Միայնության և օտարացվածության, գլխավորապես մահվան դեմ, որն օրական խլում է կյանքեր, նրանց պայքարում են միմյանց մկատմամբ տաճած պարզ և մեծ սիրով, հարգանքով ու վստահությամբ: Այստեղ՝ բուժարանի մոյլ պատերի մեջ, շնորհիվ իրենց, տիրում է ջերմ և բավականին հաճելի մթնոլորտ: Այստեղ՝ աշխարհից կտրված, արհամարհված «Զաթոսթե» բուժարանում, բժշկվում են տարբեր ազգերի մարդիկ, սակայն սա չի խանգարում, որ նրանց ստեղծեն իրենց երջանիկ անկյունը: Պատումի հիմքում ընկած է հայ Միշելի և ֆրանսուհի Ֆաննի սերը, որը կյանքից հիասթափված հերոսների հոգում սեր է արթնացնում դեպի կյանքը, նրանց մղում պայքարի՝ ընդդեմ օտարացվածության և միայնության, ընդդեմ մահվան:

Հերոսների համար հավերժական սիրտ դիմաց մահն այլևս սարսափելի չէ: Իրենց գոյության խորհուրդը Ծափնուրի հերոսները տեսնում են ապրելու, ուրիշին նցնուկ լինելու մեջ: Նրանք ընդվզում են մահվան դեմ՝ իրենց անխաթ միասնությամբ, թեև գիտակցում են նրա անխուսափելիությունը: Ծափնուրը չի բավարարվում միայն մարդկային հարաբերություններ պատկերելով, նա նաև մտահոգված է իր ազգի ճակատագրով և վաղվա օրով, և այդ վաղվա օրը կապում է Մայր Հայաստանի հետ: Պատմվածքն ունի փոխաբերական և խորը խոհափոխոսփայական իմաստ: Հանձին հերոսուհի Պիաթրիսի, որը պատմվածքի Ռոգեբաճական վառ կերպարներից է, գրողը ներկայացնում է օտարության քառուղիներում հայտնված ցաղթահայությանը, որի առջև զոհ են իր տան դուռերը:

Շահմուրի իդձն է՝ բոլոր տարագիրներից տեսնել Մայր Հայրենիքում. «Ռոգեկան հայրենիքը» վերածել իսկական հայրենիքի. «Իմ փափագս է հոգ երթալ,- գրում է Շ. Շահմուրը,- իմիճեցուս մոտ, խմբովից»<sup>7</sup>:

Պատմվածաշարը եզրափակվում է «Հարալեզներու դավաճանությունը» ստեղծագործությամբ. ուր Շահմուրը սրությամբ է հնչեցնում մահաճշի անխուսափելիության զաղափարը: Այն, ինչպես «Ջաթոսթե» պատմվածքը, ունի գոյափիլիսոփայական խորք:

«Հաւաքածուից կարեւորագոյն երգը՝ վերջինն է,- գրում է Արշակ Չոպանյանը,- որուն տիտղոսը տուած է ամբողջ հաստորից: Թորքահայութեան ամառոր փութումէն յետոյ՝ օտար երկիրներ տարազնուած անոր մնացորդներուն, մանաւանդ երիտասարդներուն, օտար միջավայրէ կլանման վտանգից հանդէպ զգացուած վրդովմունքի, վախի, տրտմութեան, ընդվզման Ռոգեկան փոթորիկն է որ կ'արտայայտուի հոգ՝ խոր յուզմունքով մը. մեծապէս ու հզորապէս ինքնատիպ ոճի մը մէջ: Տոամն է իրենց բնիկ հողէն արմատախիլ եղած այն դեռատի Հայերուն, զոր ամէն օտար հող կը ձգտի իւրացնել, որ չեն ուզեր ալլափոխուիլ ու կորսուիլ, բայց որ – չըմբռնելով թէ խորհ. Հայաստանը միակ փրկութեան մահաճգիստն է,- անտուգութեան այնպէս ծովուն մէջ կը թափառին եւ շուարած, խելայեղ կը գալարուին, իրենց յոյսի ու երագի ճիգերուն մէջ միշտ պարտուած»<sup>8</sup>:

Պատմվածքը երիտասարդ գրող Համբարձումի ներքին մեծախոսությունն է: Այստեղ գործողությունները նկատելիորեն զիջում են Ռոգեբաճական հետախուզումներին: Կարելի է ասել՝ պատմվածքը Ռոգեբաճական մի փոքրիկ էսյուդ է: Պատումը հյուսված է հերոսի հետահայց զգացումների, գործողությունների, հիշատակների ոգեկոչման միջոցով: Պատմվածքի սյուժետային զարգացումն անցյալի ու ներկայի համադրված քննությունն է՝ բացված հերոսի ներքին տեսողությամբ: Դիպաշարի ընձեռած սեղմ, սահմանափակ իր հնարավորություններում Շահմուրը իրեն դրսևորում է Ռոգեբաճական խորաթափանց վերլուծական կարողությամբ, ներաշխարհի համընդգրկուն բացահայտումով: Նա երևան է բերում անհատի Ռոգեբո նկարագրի լիությունը, ապրած կյանքի փիլիսոփայական իմաստավորումը, և դա այն դեպքում, երբ նրա հարազատները, անգամ նրա հեթանոս աստվածներն անհաղորդ են մնում նրա ներաշխարհի լույսերին, չեն պատկերացնում նրա զգացմունքների «տիեզերական» խորությունը: Դաժամ ու անգութ հարված է սա: Ազգային հեռանալու տրամադրությունն այնքա հեռանկար չէ, այլ իրական ծրագիր, որն ուր որ է՝ գործողության կորվի, ու վերջ ազգային: «Ընդունեցավ իր տկարությունը, իր ուժացումը ու սուտը, քանի որ հարալեզները դավաճանած էին և ինք պարզապես մարդ էր, ինչպես ես, ինչպես դու»<sup>9</sup>:

Լքվածությունը, առանձնությունը նոր-նոր է բացահայտում անցյալում պատահած դժբախտության Ռոգեսահմանը: Հերոսը խորությամբ հասկանում է, որ եղեռնը դեռ ողբերգության վերջին կետը չէ, որ այն շարունակվում է լքումով, ուժանմամբ և մահաճշով, որից մինչև կործանում, Ռոգեբո թե ֆիզիկական վախճան, ընդամենը մեկ փոքրիկ քայլ է: Հերոսի դատողությունները լցված են ցավի անթաքույց մեկնումով: Մեծության, լքումի զգացումը միջավայրի թողած «նստվածքներ» են: Իր օտարության, օտարացվածության

<sup>7</sup> Շահան Շահմուր, Երկեր, հատոր առաջին, էջ 274:

<sup>8</sup> «Առաջիտ», Փարիզ, 1933, թիվ 3-4, էջ 80:

<sup>9</sup> Շահան Շահմուր, Երկեր, հատոր առաջին, էջ 304:



խնդիրը հերոսը փորձում է լուծել՝ ոգեկոչելով իր հեթանոս աստվածներին: Շահնուրի երիտասարդ հերոսը զարմանալի հապճեպ կողմնորոշումով փորձում է մոր հույս վառել հուսաբեկ իր սրտում: Եվ այդ մոր հույսը հարալեզներն են՝ հեթանոս աստվածները, որոնք մոր ուժ և կորով պետք է հաղորդեն հերոսին՝ դիմակայելու մահացից<sup>10</sup>:

Հերոսի հույսն աղոտ է և գնալով մարում է: Ինքնամխիթարությունը, կամքը, ինքնատիրապետման հավատը պարզապես հոգու առաջին ենթագիտակցական արձագանքն են, որ որոշ ժամանակ անց բեկվում է: Չէ որ մարդու դիմակայությունն էլ իր վերջնագիծն ունի. կամային-զգացմունքային լարվածության սահմանը: Նա, ինչպես հազարավոր հայորդիներ, ևս մահացում է, օտարվում հայությունից: «Համբարձումիմ համար անհրաժեշտ էր հեռանալ վատառողջեն, ազգայինեն, հայեն: Պետք էր լքել հայը: Որքան ատեն որ կըսեր, սեր չկա մեր մեջ, այսինքն հայը իր ազգակիցը չի սիրեր, որքան ատեն որ հայը իր ազգային փրկությանը մասին այլևս հույս չունի և ատով իսկ ոչինչ կընեն, պետք է հեռանալ հայեն: Քամի որ ինք փրկությունը կտեսներ սիրո և հույսի մեջ...»<sup>11</sup>:

Հերոսի վերջին «սեր, հույս» բառերը ոչ այնքան սրտաբուխ, առարկայական լավատեսություն են, որքան, մեր կարծիքով, գոյության խորհուրդը պարզող պատգամ, խարնսխված քրիստոնեության հույս, սեր և հավատ հիմնարար հասկացության վրա, որը, ըստ երևույթին, դուրս է գալիս անձնական ընդգրկում ուրտից և մերառում Սփյուռքի գոյության մերհակ, առանցքային խնդիրները: Իսկ տարաշխարհիկ գրեթե բոլոր հորիզոններում ազգայինի պահպանման բնագոյն ամդառնալիորեն շարունակում է իր մահացը, հայը և հայկականը լուծվում են օտար միջավայրին, խորթ գաղափարներին, լեզուներին՝ ի շահ հասարակական կեցության, սոսկ գոյության բարեկեցության, որի մեջ ազգային պահպանողականությունն ուղղակի «խանգարիչ» հանգամանք է: Սփյուռքի անհեռանկարայնությունը, մրա վաղ թե ուշ մահվան գաղափարը, որ միշտ Շահնուրի ազգային-հասարակական մտածումների կենտրոնում է եղել, անցնում է մի ստեղծագործությունից մյուսը՝ դառնալով շիկացման ազդակ, տարողունակ հարցադրում, ելակետային հայացք:

<sup>10</sup> Տե՛ս մույժ տեղում, էջ 304:

<sup>11</sup> Նույժ տեղում, էջ 304:

## ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

### ՄԱՐՈ ԱՆԱԶԱՆԻ ՆՈՒՇԵՐԸ

Հայ տաղանդավոր բանաստեղծ ու հասարակական գործիչ Վահրամ Ալազանի ծնունդն էր 100-ամյակին նվիրված հանդիսավոր հիստի ժամանակ, որը կայացավ Հայաստանի Գրողների միության դահլիճում, ելույթ ունեցավ նաև տողերիս հեղինակը: Իմ պարտքը համարեցի երախտագիտության խոսքեր ուղղելու նաև շնորհաշատ բանաստեղծի կնոջը՝ Մարո Ալազանի, որը բացառիկ անձնավորություն էր եղել՝ խելացի, գեղեցիկ, համարձակ, ինքնամոռաց կերպով նվիրված իր ամուսնուն: 1936 թվին, երբ շատերի հետ ձերբակալվում է Վ. Ալազանը, Մարոն չհրաժարվեց նրանից: Երբ նրանից պահանջում էին դատապարտման խոսքեր ասել իր անմեղ ամուսնու հասցեին, նա ոչ միայն հրաժարվեց, այլև մեղադրական խոսքեր չպոտեց բերական դահլիճների հասցեին:



Բայց դա էժան չնստեց Մարոյի վրա: Օռնտով, մի շարք պատասխանատու աշխատողների կամանց մման, նա էլ ձերբակալվեց և բանտ նետվեց: Սկսվեցին մղձավաճչային օրեր Մարոյի համար: Բայց նա չվհատվեց և հենց բանտում եղած ժամանակ կարողացավ գրավոր կապ հաստատել Վ. Ալազանի հետ. Մարոն հուսադրում էր իր ամուսնուն և նրա ընկերներին: Մի քանի տարի անց նա ազատվում է բանտից, բայց և հայտնվում չափազանց ծանր վիճակում. նա զրկվել էր բնակարանից, ունեցվածքից, նրա հետ խզել էին կապերը իր ծանոթներից ու հարազատներից շատերը:

Տասը տարի ստալինյան զննանքերում տառապելուց հետո բանտից ազատվում և երևան է վերադառնում Վ. Ալազանը: Բայց նրան չեն թողնում ապրել մայրաքաղաքում: Ստիպված նա մեկնում է Աշտարակ, որտեղ, շատ չանցած, հիմնադրում է Պերճ Պոռչյանի թանգարանը: Մարոն էլ, ի հարկե, նրա հետ էր: 1948 թ. Ալազանին կրկին ձերբակալում են և անժամկետ աքսորում Սիբիրի խորքերը:

Իմանալով Ալազանի տեղը՝ Մարոն որոշում է մեկնել ամուսնու մոտ: Տանջալից և խիստ վտանգավոր այդ ուղևորությունը տևում է ավելի քան երկու ամիս: Հաղթահարելով հազար ու մի դժվարություններ, նա կարողանում է գտնել Ալազանին, իրավունք է ստանում ապրել նրա հետ և հավասարապես կիսում աքսորի անավոր դժվարությունները:

Ստալինի մահից և Բերիայի գեղակաճարումից հետո Վ. Ալազանը, ինչպես նաև Գուրգեն Մաճարից ու Վաղարշակ Նորենցը հրաժիրվում են Մոսկվա՝ իրենց գործերը քննելու համար: Նրանք բոլորն էլ լիովին արդարացվում են: Շուտով նրանց է միանում Մարոն, և միասին վերադառնում են հայրենիք:

Բայց բանտերում և աքսորներում կրած ահալոր տառապանքներն անհետևանք չեն մնում: Որոշ ժամանակ անց Վ. Ալազանը կաթվածահար է լինում և մինչև մահ՝ տասը տարի, զամվում անկողնում: Մարոն ամեն ինչ անում է՝ նրան խնամելու, նրա գործերը հրատարակության պատրաստելու, նոր երկերը գրի առնելու գործում:

Մարոյին ճանաչողները՝ Ավետից Իսահակյանը, Ստեփան Զորյանը, Գուրգեն Մաճարից, Վաղարշակ Նորենցը, Սիրասը և ուրիշներ, խորհուրդ էին տալիս նրան գրի առնել իր հուշերը: Ալազանի մահից հետո (1966 թ.) Մարոն ձեռնամուխ է լինում այդ գործին: Գրում է, ավարտում, մեքենագրում, բայց չի կարողանում տպագրել տալ:

Գրողների միության դահլիճում կայացած նիստից հետո ինձ մոտեցավ Ալազանի դուստրը՝ տիկին Հասմիկ Ալազանը, և պատմեց Մարոյի հուշերի մասին: Շուտով, ծանոթանալու համար, նա ինձ հանձնեց Մարոյի հուշերի երկու հատորից բաղկացած ձեռագիրը (ընդհանուր 940 էջ): Հուշերն ընդգրկում են Մարոյի կյանքի պատմությունը վաղ մանկությունից (նա ծնվել է Վանի ափին գտնվող Արծկե գյուղում) մինչև Վ. Ալազանի մահը:



## ՄԱՐՈ ԱԼԱԶԱՆ

## ԻՄ ԿՅԱՆՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

(հատված)

Մի օր, գիշերվա ուշ ժամի, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Աղասի խանջյանը Ալազանին իր մոտ կանչեց։ Մի ժամից նա տուն վերադարձավ և պատմեց հետևյալը. «Փարիզում վախճանվել է մեր պայծառ Կոմիտասը։ Նրան խնամող հանձնաժողովը դիմել է ընկեր խանջյանին, որ նա ընդունի Կոմիտասի դին և Երևանում կազմակերպի թաղման արարողությունը։ Իհարկե, Աղասին տալիս է իր համաձայնությունը։ Սակայն Բերիայի երևանյան գործակալները այդ մասին հաղորդում են Բերիային։ Մյուս օրը Բերիան հետախուսով կապվում է Աղասու հետ և ասում.

- Աղասի, լսել եմ, որ Փարիզից ինչ-որ հոգևորական, ինչ-որ տերտեր ես բերում Երևանում թաղելու համար։ Ես կտրականապես արգելում եմ. հեռացիր թող չուղարկեմ, մեզ հոգևորականներին թաղելու համար զույմարներ չունենց։

Այս դեպքից Աղասին անսահման հուզվել ու վրդովվել է, անհարմար է զգում հեռացիր տալ, ուստի ինձ խնդրեց, որ ես այդ անեմ։ Ես ցավով մրա խնդրաճքը կատարեցի, բայց տա Աստված, որ հեռացիրս ուշ տեղ հասնի և Կոմիտասի դին ետ չուղարկեն։ Խեղճ Աղասի, դու տեսնում ես, Մարո ջան, թե ինչպիսի պայմաններում է աշխատում այդ պայծառ մարդը։

Մյուս օրը Ալազանը Կենտկոմ է գնում՝ իմանալու հեռացրի պատասխանի մասին։ Խանջյանը ուրախ-ուրախ մրան ցույց է տալիս մի հեռացիր՝ հետևյալ բովանդակությամբ. «Նավը երեք օր է, դուրս է եկել և գտնվում է Միջերկրական ծովում։ Ետ դարձնել չենք կարող։

Կոմիտասին խնամող հանձնաժողով։

- Այդ շատ լավ եղավ, - ասում է Ալազանը։

- Լավը լավ է, Ալազան ջան, բայց ցավային այն է, որ Կոմիտասին ներկայացնում եմ որպես «ինչ-որ տերտեր», - ասում է խանջյանը վրդովված։

Այս դեպքից մեկ թե երկու օր հետո մեր տուն եկավ Չարենցը և ասաց.

- Այ՛ տղա, Ալազան, մի «պագոռնի» քան եմ լսել, բայց ականջներին չեմ հավատում։ Ասում են, որ Փարիզից հեռացրել են Աղասուն, որ նա Կոմիտասի դիակը ընդունի և Երևանում թաղի։ Աղասին համաձայնել է, բայց Բերիան իր երևանյան «սիշիկներից» այդ մասին իմանալով՝ կտրականապես արգելել է՝ ասելով, թե «Մենք ինչ-որ տերտեր թաղելու համար զույմար չունենց»։

- Այո, դժբախտաբար ճիշտ է, բայց բարեբախտաբար հեռացիրը ուշ է տեղ հասել, և Կոմիտասին քերող մավը արդեն Միջերկրականի ջրերում է, և շուտով Կոմիտասը Երևանում կլինի, - ասաց Ալազանը։

- Այ տղա, ճիշտ ե՞ս ասում, էդ ի՞նչ լավ բան եղավ: Թող Ռիմա Բերիայի «սիշիկները» տրաքվեն,- ասաց Չարենցը ուրախությամբ:

«Ի՞նչ հետո մորից լրջացավ, մոռացվեց և հուզված ասաց. «Ի՞նչ-որ տերտեր: Մի՞թե Կոմիտասը հայ ժողովրդի համար «ի՞նչ-որ տերտեր» է: Ողորմելիներ, տգետներ, թո՛ւ ձեր երեսի՞ն, անամոթներ: Վա՛յ քեզ, հայ ժողովուրդ, որ քո երկրի ու կուլտուրայի ղեկավարները դրանք են: Մարո ջան, մի կոմյակ բեր, խմենք Կոմիտասի հաղթանակի և հիշատակի կենցաղ»:

Թեև Չարենցը Կոմիտասի հաղթանակի կենցաղը խմեց, բայց էլի մնաց մուլը խոտվա՝ հույզը: Փողոցում ում որ հանդիպում, ասում էր. «Ի՞նչ-որ տերտեր»:

Վերջապես Կոմիտասի դիմ հասավ Երևան: Կազմվեց նրան ընդունող և թաղող հանձնաժողով, որի կազմում ընդգրկված էին՝ Գրողների միության կողմից՝ Ալազան, Լուսավորության մինիստրության կողմից՝ Արտո Եղիազարյան, Ներքին գործոց մինիստրության կողմից՝ Բերիայի ներկայացուցիչը, և այլ մինիստրությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ցերեկվա ժամը 12-ին հանձնաժողովի անդամների հետ ուղևորվեցինք դեպի Կուլտուրայի տուն: Արոսյան փողոցում մեզ միացավ մահ Չարենցը: Միտանք Կուլտուրայի տան դահլիճ: Բեմի վրա դրված էր Կոմիտասի գեղեցիկ, խնամքով պատրաստված դագաղը, որի գլխամասում կար ապակեպատ մի պատուհանիկ, որտեղից երևում էր Կոմիտասի պայծառ դեմքը: Բոլորը լուռ, տխուր և գլխահակ խոնարհվում էին Կոմիտասի առջև: Այդ ժամանակ Բերիայի գործակալը իր ծամպրուկից հանեց լոմիկ ու կացին, բացեց դագաղի կափարիչը և սկսեց շոշափել Կոմիտասի կողքերն ու գրպանները: Այս արարքը բոլորիս սաստիկ հուզեց ու զայրացրեց: Չարենցը հուզմունքից իրեն զսպել չկարողացավ և ուղղակի գոռալով ասաց. «Մի բան գտա՞ք, անամոթներ, խայտառակներ, մեռելին անգամ հանգիստ չեք թողնում. թո՛ւ ձեր մամուսին»: Ապա համարյա իրեն կորցրած, օրորվելով, ինքն իր հետ խոսելով դուրս եկավ դահլիճից: Նրան հետևեցին մահ հանձնաժողովի անդամները, Կոմիտասի հետ թողնելով միայն Բերիայի ներկայացուցիչը:

Մյուս օրը Ալազանը գնում է Կենտկոմ և խանջյանին պատմում այդ խայտառակ արարքի մասին: Խանջյանը անսահման հուզվում է, մի պահ լուռ, ապա Ալազանին դառնալով ասում է.

-Ալազան, ես կարևոր գործով պիտի քաղաքից բացակայեմ, խնդրում եմ, Արտոյի և մյուս անդամների հետ միասին մեծ շուքով թաղեք մեր պայծառ Կոմիտասին:

*Նրսիսարարական պատրաստեց  
Նասմիկ Ալազանը*

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԲԻԲԼԻԱԿԱՆ» ՊՈԵՄԻ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈՒՆԶԸ

Այս ստեղծագործությունը թեև գրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, սակայն իր արծարծած գաղափարներով միանգամայն արդիական է, քանի որ այնտեղ առաջնայինն է մարդկային բանականության գովքը, բնության կույր ուժերի դեմ ստեղծարար մարդու հաղթանակի փառաբանումը և, ամենակարևորը, հավատը մարդու անսահման կարողությունների նկատմամբ: Այդպիսի հավատը պայտնական որոշակի հանգամանքների արդյունք է, որ դրսևորվում է ճան այժմ՝ զարգացման մեր ուղի մտած ժողովրդի առաջընթացն ապահովելու համար:

Պոեմի հերոսը՝ ստեղծագործական ուժերով լցված, ցավը հաղթահարած մարդը, որն իր ձգտումներով գալիս է իր ժամանակի էությունից և զմուռ դեպի հավերժություն, լավատեսորեն է տրամադրում ընթերցողին:

Հովհաննես Օիրազի «Բիբլիական» պոեմում աշխարհի ստեղծման աստվածաշնչական հեքիաթի վրա խոհա-փիլիսոփայական խոր թուվանդակությամբ բացահայտվում են մարդու ծագման ու զարգացման, կյանքի ու մահվան, մարդկային կեցության, գոյության իմաստի և կատարյալից հասնելու բնական ձգտման կարևոր ռիմնահարցերը: Պատահական չէ, որ պոեմը գրվել է այն ժամանակ, երբ ֆաշիզմը մոլեգնում էր ողջ աշխարհում, և մարդկության բախտի վրա սև ամպեր էին կախվել: Օիրազը դիմեց աստվածաշնչային թեմային՝ մի կողմից ցույց տալու համար, որ «բերանն արնոտ մարդակերը ... հեռու է մինչև մարդը իր ճանփան», մյուս կողմից՝ բացահայտելու մարդու հարատևության ու կենսունակության, առողջ ոգու և հզորության ակունքները:

Համաշխարհային գրականությունում շատերն են դիմել աստվածաշնչային թեմաներին: Գրականության պատմության համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մուսլամանական սյուրաներից ու թեմաներին դիմելու փաստը: Դա վկայում է, որ տարբեր դարաշրջաններում կյանքն առաջ է քաշում մեր խնդիրներ և պահանջում մոռոպի մեկնաբանություն: Արտաքին մտանության ներքո այս դեպքում թաքնված են ներքին խոր թուվանդակությունը և տարբերությունը:

Սուրբգրային և ավանդական թեմաների գեղարվեստական մշակման ժամանակ յուրաքանչյուր արվեստագետ աշխատել է մի մեր խոսք ասել և մի մեր մեկնաբանություն տալ: Հ. Թումանյանից և Ավ. Իսահակյանից մշտապես հուզել են տիեզերքի զաղտնիքները ու աշխարհի առեղծվածը, մարդու և մարդկային պրոբլեմը: Դեռևս 1890 թ. «խորհրդրդածություն» բանաստեղծության մեջ Հ. Թումանյանը գրում էր.



*Ձգտեցի պարզել քո աստվածային  
Անհասանելի, անմեկին զաղտմի՛ն<sup>1</sup>:*

Օիրագին տարիներ շարունակ զբաղեցրել եմ մարդկային կյանքի, հավերժական գոյի ու տիեզերքի անծայր առեղծվածները, «գոյության զաղտմիքն ու քե՛նը մահվան»։ Նա անընդհատ ընդլայնում է իր ճանաչողության սահմանները, պեղում տիեզերքի ու իմաստության ցորանոր աստիճաններ և ձգտում հասնել նրա զաղտմիքներին.

*-Չեմ մեջի երբեք,  
Քանի զաղտնալից տիեզերքն այս սեզ՝  
Չի բացել իմ դեմ ծալքերն իր բոլոր<sup>2</sup> ...  
(«Բիրլիականի» վերջաբանը)*

Եվ պատահական չէ, որ «Բիրլիականը» եղավ մախնական կուտակումների արդյունք։ Իմչպես «Արու-Լալա Մահարին» Իսահակյանի տարիների հոգեկան տվայտանքների խտացված արտահայտությունն է, այնպես էլ Օիրագը միմչև «Բիրլիականը» ստեղծել էր խոհա-փիլիսոփայական բնույթի մի շարք բանաստեղծություններ, պոեմներ ու քառյակներ։ Ժամանակի ու տարածության մեջ մատերիայի շարժման դիալեկտիկական օրենքների գեղարվեստական արտացոլման ճանապարհով բանաստեղծը հանգում էր այն մտքին, որ միայն մարդն է ընդունակ աշխարհին վերաբերվելու որպես իրեմից տարբեր իմչ-որ բանի, և այդ պատճառով էլ միայն մարդն է դառնում իրականության սուբյեկտը։ Բայց միաժամանակ մարդն այդ իրականության օբյեկտն է այնքանով, որքանով այս կամ այն սոցիալական կառուցվածքի անբաժանելի մասն է։ Միայն այն իմաստով է մարդը մարդ, իմչ իմաստով նա ստեղծող է։

Լինելով միաժամանակ սոցիալական կյանքի և՛ օբյեկտը, և՛ սուբյեկտը, մարդը գործում կերպով մասնակցում է հասարակական ու բնական երևույթների վերափոխմանը, որի ընթացքում վերափոխվում է ինքը՝ շրջապատող աշխարհը յուրացնելով որպես անհատ և իմաստավորելով այն գեղեցկության օրենքներով.

*Մարդ անդաստանից փուշը քաղհանեմ,  
Աշխարհից տատասկն հավիտյան հանեմ,  
Սենմ մարդ-ոգու մանուշակները,  
Խոնարհվեմ իր դեմ ողջ աստվածները<sup>3</sup> ...*

«Բիրլիականը» պատերազմի ծանր տարիներին քարձրացնում էր ուժեղ, կատարյալ և իմաստուն մարդու գոյության խնդիրը, նրան հակադրում արյան ու կոտորածի վայրենա-

<sup>1</sup> Տ. Թումանյան, Երկ. Վոդ., հ. 2, Ե., «Հայաստան», 1969 թ., էջ 34:

<sup>2</sup> Շիրազ, Երկ. Վոդ., 5 հատորով, հ. 2, «Սովետ. գրող», Ե., 1982 թ., էջ 15:

<sup>3</sup> Շիրազ, Ջևար Հայաստանի, գիրք III, «Հայաստան», Ե., 1974 թ., էջ 226:

բառոտ կրողներին: Ի տարբերություն ավստրիացի ճշմարտոր գրող Ֆ. Կաֆկայի «Պրոցես» վեպում առաջ քաշված այն հարցադրմանը, ըստ որի աշխարհը դատապարտված է. որովհետև նա հակամարդկային է, իսկ անհատը չի կարող մարտնչել չարի և անհատին խորթացած ուժերի դեմ, Շիրազը ցույց տվեց, որ մեծ եմ մարդու ներքին հմարավորություններում, ու դիմադրելու ընդունակությունը, նա կարող է գոյատևել անգամ բռնության ու տառապանքի ամենահրեշավոր պայմաններում:

Բանաստեղծները սովորաբար պոեմի ժանրին են դիմում այն ժամանակ, երբ մեծ անելիք ունեն և ձգտում են վերարտադրել կյանքի «բարձրագույն բանաստեղծական պահերը» (Վ. Գ. Բելիմսկի), երբ «գրողի հոգում բույն դրած կյանքի և իր ժողովրդի ճակատագրի մի քանի էական շերտերը դառնում են կենսական ճշմարտություն, միտք, հայացք, զգացմունք» (Թոմաս Էլիոթ):

Ինչպես որ Հ. Թումանյանը «հոգու խաղաղության» հասնելու գաղափարի ստեղծման հիմնական միջոցը դարձնում է «վերև-ներքև» հակադրությունը («Վայրէջք»), որն աշխարհի փիլիսոփայական իմաստավորման հիմնական սողեղներից մեկն է, այնպես էլ Շիրազը մարդու կատարելության ընթացքը դիտում է «բարձրի» ու «ցածրի», տիեզերական անսահմանության գաղափարի տեսանկյունից: «Վայրէջքում» Թումանյանը ցույց է տալիս, որ մարդը հասել է հոգու կատարելության, բայց ըմբռնում է տիեզերական գաղտնիքների ամենկենդիությունը: Այդ վիճակը ոչ թե նրան անցործության կամ հուսախաբության մատնում, այլ ավելի է մեծացնում իմացության ձգտումը և մղում դեպի մարդկային հոգու ազատագրում ու կատարելագործում: Բանաստեղծին գրավում է անհուն վշտի և տառապանքների դեմ մարդկության անվերջ մաքառման հարցը, և նա պոեմում տիրապետող քնարական հզոր տարերքը օրգանապես միահյուսում է սյուժետային որոշ գծերի հետ տալիս Արարչագործության պատմությունը և սյուժեին ծառայեցնում պոեմի ընդհանուր քնարական մտահղացումներին:

«Բիբլիական» ժանրի ընդունված իմաստով չունի նախերգանք և վերջերգ, սակայն քնարաբան իր մեջ խտացնում է ընդհանրապես մարդկության և մասնավորապես հայ ժողովրդի ուժի ու ապրելու կամքի կենսափիլիսոփայությունը:

Պոեմն սկսվում է Արարչագործության գեղարվեստական պատկերով:

Շիրազը մեծարում է մարդու ծագման, նրա լինելության ու առաջընթացի վճռական անփոխարինելի գործոնը հանդիսացող աշխատանքը, որը դիտում է որպես մարդկային ստեղծագործ ոգու և հանճարի արգասիք, կենցության աղբյուր:

Բանաստեղծը ցուցադրում է մարդու ձեռքի ու մտքի շարժման դիալեկտիկական, բացահայտում ֆիզիկական ու մտավոր աշխատանքի թոփաշը և բանականության հաղթանակը:

*Բայց ինչքան շատ է մարդն իմաստնանում՝  
Իր ցավերն այնքան հեշտ է դարձնում:  
... Ու մտքի ձեռքը աստղերին մեկնեց՝  
Եվ լուսնի վրա մահերը նշմարեց՝ ...*

<sup>4</sup> Լույսն տրոհում, 199-10:

Ընդարձակվում են մարդու ճանաչողության հորիզոնները, իմացությունը զնում է դեպի մամանակի ու տարածության մշտական հոլովություն գտնվող մատերիայի ամհուց խորքերը: Այդ առումով Օիրագի պոեմի տիրապետող գաղափարը դառնում է անվերջ որոնման մեջ գտնվող և կատարելության ձգտող մարդու հրաշագործ էության քացահայտումը: «Ահեղ բնության» «ազնիվ կերտվածքը»՝ մարդը, այժմ էլ պիտի պայքարի «ոգու մերդաշնակության» հասցեղու համար, մի կարևոր գաղափար, որն իմշ-որ տեղ աղերսվում է Գր. Նարեկացու «Մատյամ ողբերգության» պոեմի ոգուն: Օիրագին մշտապես հոգեհարազատ է եղել Նարեկացու ձգտումը՝ պատկերել ամեն տեսակ թերություններից ու արատներից մաքրված և իր մաքրությամբ դեպ աստվածայինը ձգտող մարդուն: Դա բանաստեղծի այն հումանիզմն է, համաձայն որի

*Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանաւր,  
Թիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝  
Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհիմ  
Եւ ընդ հաստողիդ միանալ<sup>5</sup> ...*

Եթե Նարեկացու քնարական հերոսը «Բարձրյալի դատաստանին» է ներկայանում իր թերի, պակասավոր կողմերի աստիճանական քացահայտման ճանապարհով և իրեն անվանում «հավիտեանական մոլորյալ», դրանով իսկ հետզհետե բարձրանում դեպի «կատարելության գագաթը», ապա Օիրագին առավելապես հետաքրքրում է մարդկային ցավի ու վշտի հաղթահարման գերխնդիրը: Մաքառումների երկարածից ճանապարհին մարդը ձեռք է բերում հոգե-բարոյական ներքին հսկայական ուժ և հաստատում իր էությունը.

*Եվ մահվան ահից իմաստանալով՝  
Գտալ հյուսիսի հոլովումն անմահ,  
Շարժմունքն անընդմեջ ու դարեր խորհեց,  
Զգաց, որ երկու անգամ չի կարող  
Անցնել մուկն ջրով մուկն գետի՝ անցնող<sup>6</sup>:*

Գյոթեի կարծիքով արվեստագետի հանճարելությունը որոշվում է աշխարհի ընկալման ուժով և մարդկության վրա ներգործությամբ:

Օիրագը խորությամբ է ընկալում մարդու և աշխարհի վիշտը, նրա տողերում «մեր ժամանակի չչակն է անշեջ» (բանաստեղծի բառերն են): Օիրագի նպատակն է՝ պեղել մարդու էությունը և հասկանալ ու ըմբռնել նրան: Պոեմում հախուռն տարեղջով պատկերվում է «այրող վերքերի ցավին» դիմացող մարդը, որը վիշտը դարձրած «հուսիս օթեան»՝ ելավ «մահվան դեմ մահով» և դիմացավ «որդոց ամհետ կորստին»: Պատահական չէ, որ պարսիկ քննադատ Ահմեդ Օամվուն, բարձր գնահատելով պոեմի արժանիքները, ասում է.

<sup>5</sup> Գր. Նարեկացի, Մաղյան ողբերգության, ՀՀ ԳԱ, Ե., 1985 թ., էջ 453 (Բան ԾԲ, Գ):

<sup>6</sup> Հ. Շիրազ, երկերի մոտ., 5 հատորով, հ. 2, «Սովնք. պոեղ», Ե., 1982 թ., էջ 10:





Բոլոր դարերի մեծ մտածողները երազել են կատարյալ մարդու և ցավերից ու հոգսերից ազատ աշխարհի մասին, ուր կյանքը լինի -թեթև ու անուշ-, -լիքը սիրով, ուրախ երգով- (Հ. Թումանյան): Երազանքը հոգու լուսավոր պատուհան է՝ աշխարհի դեմ բացված, որ բարությանը է լցնում մարդու սիրտը և իր թևերով տանում մրան դեպի քաղձալի հեռուները: Իր մեջ սպանելով գազանին, մարդը զգում է վսեմ երազների ուժը և, «լուսը դարձնելով իր սպեղանին»՝ անցնում է դաժան ցավերի ահավոր ճամփաներով:

Շիրազը հաստատում է կատարյալ կյանքի ու «աղավմացած մարդու» դրական իդեալը.

*Եվ իմաստնացած կգնաս այդպես,  
Դարերի անտես սանդուղքով կելնես  
Դեպի կատարը կատարելության<sup>10</sup> ...*

«Վայրենի տաղանդով» գրված «Բիբլիական» (Ավ. Խաթակյան) ունի լեզվական բարձր կուլտուրա: Իրականության գեղարվեստական արտացոլումն այստեղ զուգակցվում է լեզվա-ոճական անկրկնելի ձևերով և ի հայտ բերում մեր «արքայական լեզվի» մոռացած, տրամաբանությունն ու պատկերավորման միջոցները: Գր. Նարեկացու «Մատյանը»՝ Մ. Մեծարենցն ընկալում էր իբրև «ալեկոծություն մը». մուլցը որոշ վերապահումով կարելի է ասել մահ «Բիբլիականի» մասին:

Պոեմը հարուստ է փոխաբերություններով և համեմատություններով, չափազանցություններով և այլաբանական պատկերներով:

Ինչպես հայտնի է, քնարական բանաստեղծությունում փոխաբերությունը մտածողության յուրահատուկ ձև է և բանաստեղծական լեզվի գրավչության պայմաններից մեկը: Պայմանական, փոխաբերական պատկերները խորումն իմաստ են հաղորդում պոեմին, ընդլայնում բանաստեղծի պատկերային մտածողության սահմանները. շարժումը դարձնում տեսանելի և շոշափելի:

Ահա մի օրինակ՝

*Աստղերն այն օրից ասուպներ դարձած  
Թռան ու մեռան իրար գրկի մեջ,  
Եվ դարեր ցավը երկնքում մնաց՝  
Ցրեց աստղերի դաշնությունը պերճ<sup>11</sup>:*

Շիրազը զուգաբեղ պատկերաստեղծման բնածին վարպետ է և հմտորեն է օգտվում դրանից: Արխատուելն իր «Պոետիկայում» մշում է, որ «պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է (մետաֆորը), որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի մշան է,

<sup>10</sup> Շ. Շիրազ, Երկ. մոդ., 5 հատորով, հ. 2, «Երկեր. գրող», 1982 թ., էջ 11:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 7:

քամի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է՝ կարողանալ բնության մեջ նկատել առարկաների մասնությունը»<sup>12</sup>:

«Բիբլիականում» Օիրազն ընդգրկում է կյանքի լայն հորիզոններ, համայն տիեզերքը, նրա միտքը թաչում է երևույթի և երկնքի ամհում տարածություններով, բառ-պատկերները հաջորդում են միմյանց և բնության հիպերբոլիկ նկարագրությունների միջոցով դառնում յուրատեսակ ասք ու լեզունը:

Գուցե դա է նկատի ունեցել «Բիբլիականի» լեհ թարգմանիչ Բ. Գեմբարսկին, որ պոեմը վերնագրել է «Լեզունը», լեզունը մարդու մասին, վշտին դիմակայող, ազգային և համա-մարդկային ցավին հապտող մարդու մասին:

«Միայն մեծ վշտից հառած ազգի զավակը,- գրում է Բ. Գեմբարսկին,- կարող է երկնել «Բիբլիականը»: Պոեմի սքանչելի երեսը համամարդկային խոհն է, աստառը՝ խորունկ ազգային ցավը ...»<sup>13</sup>:

Օիրազի գրչի տակ բառերը կենդանանում են, դառնում մտածողության ձև, շարժում ու փոփոխական իրենց հատկություններով իմաստը դարձնում որոշակի, ձևոք բերում նկույնություն:

Հեզելը բառը համարում էր անմիջականորեն հոգում պատկանող գեղականություն: Օիրազի համար բառն այն է, «ինչ որ վարարած գետի վրա կամուրջը», «ինչ որ շիկացած երկաթի վրա իջնող կռանը», որը կերտում է և՛ խոփ, և՛ սուր» (Օիրազի խոսքերն են):

Մ. Մեծարենցի հիացմունքը, թե Նարեկացին «գիտեր ծիծաղախիտ ժպտացնել բառերը», վերաբերում է նաև Օիրազին: Իրոք, ամբողջ պոեմը «ջնչում» է պատկերավորության բուռն տարերքով, ռոմանտիկ գույներով, նուրբ ու համաչափ երաժշտականությամբ:

Բանաստեղծը գրչի աննկատ շարժումներով շնչավորում է առարկան ու երևույթը՝ հասկանալի դարձնելով անըմբռնելին ու դժվարին:

*Լույսի հրմվանքը տվեց երկնքին,  
կապույտ ծիծաղը ծովին ծավալեց:  
Մերմակ ժպիտը սփռեց ձյունների,  
վեհության խիճը լեռների տվեց*<sup>14</sup>:

Առարկաների արտաքին հատկանիշներից վերացարկելով, բանաստեղծը ստեղծում է գույների ու լույսի մի սքանչելի գամմա, որն ըմբռնողի սրտի ու մտքի վրա ազդելով՝ նրան տանում է դեպի բառերի կախարդական աշխարհը:

Օիրազի պոեմը համաշխարհային չափանիշներ ունի և մտել է անմահության երթի մեջ:

<sup>12</sup> Արիստոփան, Պոնտիկա, Ե., Նայակոբիապո, 1955 թ., 19 202:

<sup>13</sup> Տ. Օիրազ, երկերի ժողովածու, հ. 2, Ե., «Սովետ. գրող», 1982 թ., 19 344:

<sup>14</sup> Լույս արևոյն, 19 6:



ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ

ՎԱՏԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ

Բաևապիտակյան գիտությունների թեկնածու

## ԳՐԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱԶԱՆԸ

Երևանի պետական համալսարանում իր գոյության ութսուցինգ տարիների ընթացքում ոչ միայն նպաստել է Հայաստանի տնտեսության վերելքին, այլև լուրջ ներդրում կատարել բարձրագույն կրթության, գիտության ու մշակույթի անդաստանում: Նրա դերը մեծ է եղել նաև հայ մորագույն գրականության, գրականագիտության ու գրաքննադատության ծնավորման ու զարգացման գործում:

Հիմնադրման առաջին իսկ տարիներին, այլ գիտությունների ներկայացուցիչների հետ մեկտեղ, նրա հարկի ներքո համախմբվեցին հայագիտության ու հայ մշակույթի աշխարհասփյուռ երևելի դեմքեր, որոնց թվում մեծանուն պատմաբաններ Հակոբ Մանանդյանն ու Լեոն (Առաքել Բարախանյան), Հակոբ Զորյանն ու Վահան Ռշտունին, ակադավոր հայագետներ Հրաչյա Աճառյանն ու Մանուկ Աբեղյանը, Գարեգին Հովսեփյանն ու Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Ստեփանոս Մալխասյանցն ու Գրիգոր Ղափանցյանը, ճարտարապետներ Թորոս Թորամանյանն ու Ալեքսանդր Թամանյանը, քանդակագործ Արա Սարգսյանն ու գեղանկարիչ Հակոբ Կոչոյանը, ազգագրագետ Ստեփան Լիսիցյանն ու իրավագետ Խաչիկ Սամուելյանը, տնտեսագետ Թադեոս Ավդալբեկյանն ու փիլիսոփա և գրաքննադատ Հայկ Գյուլիքեկյանը և շատ ու շատ ուրիշներ, ովքեր այնուհետև, մինչև իրենց կյանքի վերջը, մնացին համալսարանում և ծառայեցին հայ գիտության ու մշակույթի զարգացման և երիտասարդ մասնագետների պատրաստման հայրենաձևեր գործին:

Այս կարկառուն դեմքերի կողքին համալսարանում գիտամանկավարժական աշխատանք էին կատարում մույնպես խոշոր գիտնականներ Արսեն Տերտեղյանը, Յուլա Սանգաղյանը, Սիմոն Հակոբյանը, Երվանդ Տեր-Մինասյանը, Տիգրան Հախումյանը, Խորեն Սարգսյանը, բանագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը, աղբյուրագետ Լեոն Մելիքսեթ-Քեկը, արևելագետ Գևորգ Ասատուրը և այլք: Նրանք, իրենց հիմնական մասնագիտությունից բացի, կատարում էին ստեղծագործական լուրջ աշխատանք և գրականությանն ու արվեստին ծառայելը համարում իրենց կոչումը:

Այդ առումով երախտագիտությամբ պետք է հիշենք Լեոյի անունը, որը, պատմագիտական կոթողային մեծաթիվ աշխատություններին ու գրքերին զուգընթաց, ստեղծել է բազմաթիվ գեղարվեստական մնայուն երկեր ու գրաքննադատական հոդվածներ: Հայտնի է, որ ստեղծագործական, գրաքննադատական աշխատանքով զբաղվել են նաև Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ստ. Լիսիցյանը, Ն. Աղբալյանը և մեր մյուս մեծերը: Մ. Աբեղյանը գրական ասպարեզ է իջել որպես բանաստեղծ՝ 1888 թ. Ծուշիում հրատարակելով «Նմուշներ» ինքնուրույն ու թարգմանական չափածո գործերի ժողովածուն: Նա մույն տա-

րում «Նոր դար» օրաթերթում տպագրել է նաև «Գալլ Վահան» պատմական վիպակը, իսկ 1889-ին, դարձյալ Օուշիում, լույս է ընծայել «Դավիթ և Մհեր» ժողովրդական դյուցազնավեպը:

Հուլիսավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը մանկությունից մեծ սեր է տածել գրականությանը: Նրա արխիվում պահպանվում է մի տետր, որի մեջ ամփոփված են շուրջ հինգ տասնյակ բանաստեղծություններ: Նա դեռ Պոլսի Կեդրոնական վարժարանի աշակերտ եղած ժամանակ գրական փորձեր է արել:

Հետագա իր ողջ կյանքի ընթացքում մեծամուց լեզվաբանը կապված է մնացել գեղարվեստական գրականությանը, հանդես է եկել քննադատական հոդվածներով, գրել է հուշեր, առաջիններից մեկն է եղել, որ կազմել է խմբագրել է Պետրոս Դուրյանի երկերը, որ առանձին հատորով լույս է տեսել 1948 թ. Երևանում:

Ազգագրագետ Ստ. Լիսիցյանը ևս զբաղվել է գեղարվեստական գրականությամբ, մշակել ժողովրդական մի շարք հեքիաթներ ու առասպելներ, լեգենդներ ու գրույցներ, գրել մանկական պատմվածքներ, որոնք տպագրվել են ժամանակի գրական մամուլում, իսկ հետագայում հրատարակվել են առանձին գրքով (տե՛ս «Ծաղկաքաղ», Երևան, 1960):

Նույնիսկ Վահան Արծրունին, որ եղել է հայ բժշկագիտության ակնառու ներկայացուցիչներից մեկը և հայ իրականության մեջ հայտնի է որպես «Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական բառարանի» ու մի շարք այլ արժեքավոր մեծագրությունների հեղինակ և հայ բժշկական մամուլի հիմնադիրներից, իր ուժերը փորձել է նաև գեղարվեստական գրականության բնագավառում: Նրա գրչին են պատկանում «Պատրանք» վեպը և «Աղջիկ» վիպակը, որոնք ժամանակին ընթերցողների կողմից ընդունվել են ջերմությամբ:

Պրոֆ. Գ. Ասատուրը մույմպես լուրջ աշխատանք է կատարել գրականության ասպարեզում: Նա առաջին անգամ հիմ վրացերենից ամբողջությամբ հայերեն է թարգմանել վրաց միջնադարյան մեծ բանաստեղծ Օրթա Ռուսթավելու «Վազրենավորը»: Այն տպագրվել է 1937 թ., հիշյալ պոեմի ստեղծման 750-ամյակի տոնակատարության օրերին, Երեվանում: Նա վարպետորեն հայերեն է թարգմանել նաև Ֆիրդուսու «Օմար-Կամ»-ից մի հատված («Ռոստամ և Սոհրապ»), որը լույս է տեսել 1934-ին: Նրա գրչին են պատկանում նաև թագմաթիվ այլ թարգմանություններ ռուս և վրաց գրականություններից, ինչպես և ինքնուրույն գործեր, որոնք տպագրվել են առանձին գրքերով: Գ. Ասատուրը ժամանակին համալսարանի ուսանողների ուժերով պատրաստել է մերձարևելյան գրականության մի ժողովածու ևս, որը լույս է տեսել 1931 թվականին Երևանում:

Այդ շրջանում թարգմանական-ստեղծագործական աշխատանքով զբաղվել են արևելագետ Ռուբեն Աբրահամյանը, գրականագետ ու լեզվաբան Սարգիս Մանուկյանը, քաղաքականագետ Գևորգ Ղարաջյանը (Ս. Տ. Արկունտ), երաժշտագետ Հակոբ Հարությունյանը, գրաբարագետ Հարություն Պետրոսյանը և ուրիշներ: Վերջինս եղել է նաև ճանաչված բանաստեղծ: Նա հայերեն է թարգմանել Գյոթեի, Շիլլերի, Հայնեի մի շարք բանաստեղծություններ, ռուս գրականությունից՝ արձակ ու չափածո գործեր, ինչպես և Հոմերոսի «Իլիական»-ից մի հատված, որոնք լույս են տեսել ժամանակի պարբերական մամուլում: Ս. Մանուկյանի թարգմանական գործունեությունը մույմպես հիշատակելի է: Հայնեի «Երգերի գիրքը» բնագրից նրա տողացի թարգմանությամբ և Գ. Սարյանի ու Վ. Նորենցի մշակ-

մամբ լույս է տեսել 1935 թ., իսկ 1936-ին Ե. Չարենցի հետ համատեղ սկսել է թարգմանել Գյոթեի «Ֆաուստը»: Սակայն այդ աշխատանքը նրանց ձեռքակալության հետևանքով մնացել է անավարտ: Ինչպես շատ-շատ համալսարանականների, այնպես էլ այս տաղանդավոր գիտնականի ու թարգմանչի կյանքն ընդհատվել է 1938-ին:

Թարգմանական գրականության բնագավառում իր ուժերն է փորձել նաև լեզվաբան Գուրգեն Սևակը: Առաջինը նա է ամբողջությամբ հայերեն թարգմանել Ա. Ս. Պուշկինի «Եվգենի Օնեգին» չափածո վեպը, որը լույս է տեսել մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյակի օրերին: Հայերեն այդ շքեղ գիրքը, որը լույս է տեսել 1949-ին, այսօր դարձել է մատենագիտական հազվագյուտ նմուշ: Գ. Սևակն իր թարգմանությանը կցել է Պուշկինի մեծությունը վերհանող և նրա վեպը արժեվորող ընդարձակ առաջաբան և միաժամանակ հրատարակությունն օժտել հարուստ ծանոթագրություններով: Գրքի ձևավորումը և նկարագարողումը կատարել է տաղանդավոր նկարիչ Միքայել Արուտչյանը, խմբագրել՝ բանաստեղծ Գեղամ Սարյանը: Այս հրատարակությունը, որ հոբելյանական է և համատեղ ուժերով իրականացրել են Մոսկվան ու Երևանը, այսօր էլ հրատարակչական իր բարձր որակով մնում է հայ գրատպության մի կատարյալ նմուշ, որն իր արժեքը չի կորցրել նաև որպես բնագրի մոտ ու հարագատ գեղարվեստական թարգմանություն:

Արվեստի ու գրականության նկատմամբ ունեցած մեծ սիրով, իրենց դասախոսական ու գիտաստեղծագործական աշխատանքով և հասարակական-մշակութային գործունեությամբ երիտասարդ ստեղծագործողների աճին, նրանց կրթության ու դաստիարակության գործին նպաստում են նաև ճանաչված իրավաբան Գրիգոր Չուբալը, հոգեբան-մանկավարժ Գուրգեն Էդիսյանը, ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանը, քաղաքականագետ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, գեղարվեստաբան Գարեգին Լևոնյանը (Աշուղ Զիվանու որդին), տնտեսագետ Զաքարե Բաշինջաղյանը (գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանի որդին), պատմաբաններ Աշոտ Հովհաննիսյանը, Ստեփան Ներսիսյանը, Հովհաննես Հակոբյանը, Վահան Ռշտունցին և այլ անվանի դասախոսներ:

Առաջին տասնամյակների գրական-ստեղծագործական ջերմ ու դեպի իրեն ձգող համալսարանական մթնոլորտի մոտավոր պատկերն անգամ տված չենք լինի, եթե չխոսենք ժամանակի մյուս ճանաչված դասախոսների մասին, ովքեր իրենց բառ ու բանով, գեղեցիկ ու հարուստ լեզվով, համով-հոտով զրույցներով ու ամփոփականությամբ ստեղծում էին մի հարուստ գրական թոհեմա: Այդ թոհեմայի աչքի ընկնող ներկայացուցիչներից էին մեխանիկայի դասախոս Աշոտ Մոխսենիչը (Տեր-Մկրտչյան), որը հայտնի է նաև «Մեծ դարբաղցի» մականունով, ֆիզիկոս Հարություն Ամթուրը, Հրաչյա Աճառյանը և շատ ուրիշներ: Պատմում են, որ վերջինս իր մասին սուր անեկդոտներ ու ծիծաղաշարժ պատմություններ էր հորինում ու դրանք տարածում ուսանողության շրջանում: Մյուսները ևս ունեցել են իրենց զարմանալի «տարօրինակությունները»: Այդ առումով հատկապես հայտնի է Աշոտ Տեր-Մկրտչյանը, որի անեկդոտներն ու առակախառն զրույցներն իր սաների միջոցով շուրթից շուրթ անցնելով, այսօր էլ «թափառում» են ամենուր:

Այն հեռավոր տարիներին այս պայծառ համաստեղության մեջ տեսնում ենք և անվանի գրողներ Վահան Թորթվենցին, Զապել Նսայանին, Կոստան Զարյանին, որոնք ճույն-պես նվիրվում են համալսարանական կրթության կատարելագործման ու երիտասարդ





Այսպիսով է Հայրենական մեծ պատերազմը, ռազմաճակատ են մեկնում հարյուրավոր համալսարանականներ, որոնք թվում և՛ մի խումբ գրողներ ու գրականագետներ: Սակայն նրանց մի մասիմ բախտ չի վիճակվում վերադառնալ խաղաղ ստեղծագործական աշխատանքի: Ռազմի դաշտում զոհվում են բանաստեղծներ Դերենիկ Զարխյանը, Թևան խաչյանը, Սերյոժա Ռոստոմյանը, գրաքննադատներ Գրիգոր Կուլոդյանը, Գառնիկ Ոսկանյանը (Հմայակ Սիրասի եղբայրը), Տոնական Գալստյանը, Ռուբեն Փորսուդյանը և ուրիշներ:

Պատերազմի շրջանում դարոցն ավարտում և ուսանելու է գալիս արդեն իսկ գրական անուն հանած պատանի բանաստեղծ Պարույր Սևակը, ռազմաճակատից վերադառնում և կիսատ թողած ուսումն են շարունակում Հրաչյա Հովհաննիսյանը, Վահագն Դավթյանը, Օահեն Թաթևկյանը, Բաղիշ Հովսեփյանը և այլք, ովքեր շուտով մյուս անվանի գրողների հետ իրենց ուսերին են առնում հայ նորագույն գրականության նտպատերազմյան տարիների գարգացման ծանրությունը:

Այստեղ անհրաժեշտ է մշել նաև Երևանի համալսարանի այն շրջանավարտ գրողների ու գրականագետների անունները, ովքեր տարբեր ժամանակներում մեկնել են Վրաստան, Ռուսաստան, Ադրբեջան և այլուր, որտեղ էլ տարածել հայ գիրն ու գրականությունը: Քիչ չեն նրանք: Հիշենք, օրինակ, Սամվել Գրիգորյանին, Աբրահամ Բախշունուն, Աթանես Սեմալին, Արշավիր Զիդարյանին, Հակոբ Գուրուդյանին, Նազարեթ Կիրակոսյանին, գրականագետ, պրոֆ. Գուրգեն Անտոնյանին և մյուսներին:

Սերնդափոխությունը շարունակվում է. 1950-ականներին տարբեր ֆակուլտետներում սկսում են ուսանել գրական ծիրքով ու ակնհայտ կարողություններով օժտված մի խումբ պատանիներ ու աղջիկներ, ովքեր շուտով իրենց տեղն են գրավում մեր նոր շրջանի գրականության մեջ: Ահավասիկ նրանցից մի քանիսը, արձակագիրներ Զորայր խալափյան, Ռաֆայել Արամյան, Նորայր Ադալյան, Սերգեյ Ումադյան, Արտաշես Քալանթարյան, Էդուարդ Ավագյան, Վարդգես Պետրոսյան, Ստեփան Ալաջաջյան, Գրիգոր Քեշիշյան, Մարգո Ղուկասյան, Ժիրայր Ավետիսյան, Ռուբեն Հովսեփյան, Հովհաննես Մելքոնյան, բանաստեղծներ Միքայել Հարությունյան, Լևոն Միրիքյանյան, Նանսեն Միքայելյան, Ալեք խաչումց, Հարություն Հովնաթան, Սասուն Գրիգորյան, Սուրեն խոջոյան և այլք:

Նույն տասնամյակում էլ, ուսանողական գիտական ընկերությանը կից, պաշտոնապես սկսում է գործել գրական ստուդիա, որն, ի դեպ, սկզբնավորվել էր համալսարանի բացման առաջին իսկ տարիներից: Ծնորդայի ուսանողների ստեղծագործությունները քաջալերվում էին հեղինակավոր գրականագետներ Մ. Մկրյանի, Էդ. Զորբաշյանի, Հր. Թամրազյանի և Ռ. Հարությունյանի կողմից:

Հաջորդ տասնամյակի առաջին կեսին արդեն համալսարան են ընդունվում նոր, շնորհալի երիտասարդներ, ովքեր ուսումնառությանը զուգընթաց լրջորեն զբաղվում են գրական-ստեղծագործական աշխատանքով: Նրանցից հետագայում աչքի են ընկնում Թաթուլ Բոլորչյանը, Ալեքսան Մելակլանը, Յուրի Սահակյանը, Լևոն Ադյանը, Կարո Մելիքսեթյանը, Հրաչյա Մաթևոսյանը, Հենրիկ Բաթախանյանը, Արևշատ Ավագյանը, Ալվարդ Պետրոսյանը, Գևորգ խաչատուրը, Վահան Մաղալյանը, Անահիտ Պարսամյանը և ուրիշներ: Գրական ստուդիայի պարապմունքները, որոնք այդ շրջանում վարում էր պրոֆ. Էդ. Զորբաշյանը, լինում էին մարդաշատ և ուղեկցվում ստեղծագործական բուռն բանավեճե-

րով ու քննարկումներով: Այդ տարիների շրջանավարտներից են մահ սպիտուքահայ քաղաքացիներ Նշան Ծառենը, Վահրամ Հաճյանը, Կարիկ Պասմաճյանը, որոնք, մեկնելով արտերկիր, շատ թան են անում հայապահպանության և սպիտուքահայ գրականության զարգացման համար:

Այս խմբից հատկապես ուզում ենք առանձնացնել Հենրիկ Բախչինյանին ու Հրաչյա Բալյաճյանին, որոնք վերջին երկու տասնամյակներում թարգմանչական լուրջ աշխատանքներ կատարեցին ֆրանսիական և վրացական գրականությունների հին և նոր շրջանների գրողների գործերը հայ ընթերցողների սեփականությունը դարձնելու ուղղությամբ: Նրանց թարգմանությամբ լույս տեսան մի շարք արժեքավոր անթուղգիաներ ու ժողովրդական: Նրանց է ավելացնենք մահ, որ Հ. Բախչինյանը բանասիրական գիտությունների դոկտոր է, իսկ Հր. Բալյաճյանը՝ թեկնածու:

Այսպես 1970-ականների սկզբից ստույգիս, որի գիտական ղեկավարներն են դառնում երիտասարդ գրականագետներ Գ. Անանյանն ու Վ. Գաթրիելյանը, այնուհետև՝ Կ. Աղաբեկյանն ու Ս. Աթաբեկյանը, համալրվում է նոր անդամներով՝ Էդուարդ Միլիտոնյան, Հովհաննես Հարությունյան, Վառդ Սիրադեղյան, Հրաչյա Թամրազյան, Վառլեն Ալեքսանյան, Վրեժ Իսրայելյան, Ղուկաս Սիրունյան, Սամվել Կոստյան, Լևոն Բլրտյան, Վահագն Մուղնեցյան, Արտաշես Ղազարյան, Նորայր Բաղդասարյան, Իգմաստ Մամյան, Դավիթ Պետրոսյան, Աղվան Վարդանյան և շատ ուրիշներ: Այս երիտասարդները մալորդ սերնդի հետ լուրջ որոնումներ են կատարում գրականության ասպարեզում, աշխատում քննարկությունում ու արձակը դուրս բերել նոր հորիզոններ, հարստացնել հանրապետության գրական-թարգմանչական կյանքը:

1980-ականներից ի վեր, ընդհուպ մինչև մեր օրերը, Երևանի համալսարանի տարբեր ֆակուլտետների հազարավոր շրջանավարտների շարքերից գրական ասպարեզ են մտել երկու տասնյակից ավելի խոստումնալից գրողներ: Արդեն հրապարակի վրա են մրանցից շատերի առաջին գրքերը, թարգմանական ու գրաքննադատական ստեղծագործությունները: Վերջին շրջանում հատկապես աչքի են ընկել արձակագիրներ Վարուժան Ալվազյանն ու Հասմիկ Դարյանը, Տիգրան Նիկողոսյանն ու Անահիտ Թարյանը, բանաստեղծներ Թադևոս Տոնոյանն ու Սուրեն Տավրոսը, Գառնիկ Մկրտչյանն ու Սամվել Թուրյանը, Հակոբ Սրապյանն ու Ծանթ Մկրտչյանը, սպիտուքահայ Անուշ Նազգաշյանը և այլք: Այսօր էլ համալսարանում ուսանում են մի խումբ խոստումնալից պատանիներ ու աղջիկներ, որոնք իրենց ստեղծագործական առաջին քայլերն են կատարում պոեզիայի ու արձակի ասպարեզներում:

\*\*\*

Մեծ է հանրապետության Մայր Բուրի դերը մահ գրականագետների ու գրաքննադատների պատրաստման գործում, առանց որոնց անհնար է պատկերացնել գրականության պատմությունն ու ընթացիկ գրական կյանքը: Առաջին շրջանավարտներից են Նորայր Դաքադյանը, Գուրգեն Վանանդեցին, Արամ Ղաճալանյանը, Ռուսեթ Հովհաննիսյանը, Մկրտիչ Մկրյանը, Արշալույս Բաքալյանը, այնուհետև՝ Սողոմոն Սողոմոնյանը, Հովհաննես Մամիկոնյանը, Արամ Ինճիկյանը, Հրայր Մուրադյանը, Էդվարդ Թոփչյանը, Ասատուր Ասատրյանը, Ռուբեն Զարյանը, Հաջին Զնդին, Սահակ Բազյանը, Հովհաննես



յանալանջանը, Միմաս Հյուսյանը, Գարեգին Հովսեփյանը, Գառնիկ Ստեփանյանը, Աստուածաբան Մակարյանը, Վաչե Պարտիզոնցի և ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմի և ետպատերազմյան տարիներին ասպարեզ է իջնում ամալսարանավարտ գրականագետների մի մոտ սերունդ. Վաչե Նալբանդյան, Սուրեն Աղաբաբյան, Սարգիս Հարությունյան, Հրանտ Թաֆրազյան, Գարիկ Հովհաննիսյան, Հատրե Սալախյան, Մայիս Ավդալբեգյան, Լևոն Ասմարյան, Վահագն Մկրտչյան, Սերգեյ խարինյան, Էդվարդ Զրբաշյան, Պիոն Հակոբյան, Ալբերտ Արիստակեսյան և ուրիշներ. սկս 1950-ականներին այս շարքը համալրում են Սևակ Արզումանյանը, Ելենա Ալեքսանյանը, Արամ Գրիգորյանը, Կարլեն Դանիելյանը, Հարություն Ֆելեքյանը և ուրիշներ:

Հետագա տասնամյակներում գրականագիտության և գրաքննադատության ասպարեզում համալսարանի շրջանավարտներից հանդես են գալիս Ազատ Եղիազարյանը, Զալեն Ավետիսյանը, Վարազ Ներսիսյանը, Դավիթ Գասպարյանը, Ավիկ Իսախանյանը և այլ ու շատ ուրիշներ, որոնց հետազոտությունները հարստացնում են մեր գրականագիտությունը: Այս սերունդից ընթացիկ գրական կյանքին մեծ ուշադրություն է դարձրել հատկապես Ալեքսանդր Թոփչյանը, որը մասնավորապես և առանձին գրքերում վերլուծել ու արժեքադրել է երիտասարդ գրողներից շատերի ստեղծագործությունները, բազմաթիվ էջեր նվիրել են նրանց Էդոյանի, Սլավիկ Զիլոյանի, Հովհ. Գրիգորյանի, Արտեմ Հարությունյանի և այլ ամալսարանականների ինքնուրույն ու թարգմանական ստեղծագործություններին: Նույն կարելի է ասել նաև ավելի երիտասարդ գրաքննադատներ Սարգիս Փամոսյանի ու Էրիգոր Հակոբյանի մասին:

Երևանի համալսարանն ավարտած գրականագետներից շուրջ հարյուրը դարձել են իտությունների դոկտորներ ու պրոֆեսորներ, ՀԳԱԱ իսկական ու թղթակից անդամներ, իտության վաստակավոր գործիչներ, իսկ հիսուսից ավելի՝ թեկնածուներ ու դոցենտներ: Նրանց մեջ կան նախկին խՍՀՄ գրական մրցանակների, ինչպես նաև Հայաստանի պետական մրցանակի դափնեկիրներ և այլ բարձր տիտղոսներ կրողներ:

Ներկայումս Երևանի պետական համալսարանում աշխատող զրեթե բոլոր գրականագետներն ու լեզվաբանները (և ոչ միայն նրանք) նշել են երբեմնի սաները, որոնցից են Ալբերտ Ծարուրյանը, Գառնիկ Անանյանը, Լարիսա Մնացականյանը, Վազգեն Գաբրիելյանը, Արշակ Մադոյանը, Ժենյա Քալանթարյանը, Վազգեն Սաֆարյանը, Կիմ Աղաբեկյանը, Սամվել Մուրադյանը, Սեդրան Գրիգորյանը, Յուրի խաչատրյանը և ուրիշներ: Գրականագետների շրջանում ևս կան բանաստեղծներ, արձակագիրներ ու թարգմանիչներ, վեբեր գիտությունն ու գեղարվեստը կարողանում են զուգակցել միմյանց՝ այդպիսով պաստելով մեր արդի գրականության զարգացմանը: Նրանցից են՝ ակադեմիկոս Լևոն Մկրտչյանը, պրոֆեսորներ Վազգեն Գաբրիելյանը, Հենրիկ Էդոյանը, Արտեմ Հարությունյանը, դոցենտներ Ռոմանոս Սահակյանը, Հրաչյա Բալրամյանը և շատ ուրիշներ: Իրական-ստեղծագործական աշխատանքով են զբաղվում նաև պրոֆեսորներ՝ ֆիզիկոս Դովսեփ Երիցյանը, քիմիկոս Գանիել Գաբակյանը (Զեյթունց), երկրաբան Հովսեփ Սարգսյանը, իրավաբան Գեղամ Ղարախանյանը, դոցենտներ, տարբեր գիտությունների մեր-այացուցիչներ Հայկազ Ադամյանը, Էդրա Գրինը, Սվետլանա խանուսյանը, Մերուժան Կարությունյանը, Էդուարդ Հարությունյանը, Աշոտ Մաշուրյանը, Ալեքսանդր Սաֆարյա-

ընդ և այլու, ովքեր պարբերաբար հանդես են գալիս գրական մամուլում, տպագրում ժողովածուներ, կատարում թարգմանություններ և դրանով իսկ հարստացնում մեր գրական կյանքը:

Գրական-մշակութային աշխույժ կյանքով է ապրում համալսարանը հատկապես 1960-ականներից այս կողմ: Անցած չորս տասնամյակների ընթացքում մեր շահագործման հանձնված կենտրոնական մասնաշենքի շքեղ դահլիճում մեծամուկ գրողների ու մշակութային գործիչների հետ տեղի են ունենում հանդիպումներ ու ասուլիսներ: Համալսարանում այցելում Գ. Սարյանը, Հ. Օրբաքան, Ս. Կապուտիկյանը, Ս. խանգադյանը, Պ. Սևակը, Հ. Սահյանը, Գ. Էմինը, Հր. Մաթևոսյանը և այլ անվանի գրողներ: Գրական անմոռաց ցերեկայիններ են կազմակերպվում սփյուռքահայ ու օտարազգի գրողների ու արվեստագետների հետ: Վիլյամ Սարյանի, Արմին Վեգների, Կոստանդին Սիմոնովի, Մարիետա Օսթրոյանի, Միխայիլ Դուդինի, Դավիդ Սամոյլովի, Սերգեյ Շերվինսկու, Կայսին Կուլինի, Բորիս Օլեգովի հետ հանդիպումները մինչև այժմ էլ հիշվում են շատերի կողմից: Հիշարժան են և գրող ու անվանի գրականագետ Լևոն Մկրտչյանի մախաձեռնությամբ 1970-ական թվականներից համալսարանում հիմնադրված «Գրական չորեքշաբթիները», որոնք շարունակվում են մինչև այսօր: Այդ «չորեքշաբթիները» ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, հանդիպումներ հայ և օտարազգի անվանի գրողների, արվեստագետների ու թարգմանիչների հետ:

Նույն տարիներին էր, որ ճանաչված գրականագետ, բանաստեղծ, հայոց լեզվի պատմության ամբիոնի պրոֆեսոր Վազգեն Գևորգյանն ավարտեց Գրիգոր Նարեկացու «Մատենանոց գրքերգրության» պոեմի ու տաղերի աշխարհաբար թարգմանությունը, որոնք լույս տեսան ու վերահրատարակվեցին մի քանի անգամ մեծ համբավ բերելով թարգմանչին Նորա այդ թարգմանություններով Նարեկացին դարձավ ժողովրդի սեփականությունը Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ թարգմանությունները դյուրացրին մահ Նարեկացու երկերն այլ լեզուներով թարգմանելու գործը, որով էլ հայ միջնադարյան հանճարեղ բանաստեղծը դարձավ աշխարհի սեփականությունը: Թարգմանության ասպարեզում շուրջափնի է և ակադեմիկոս Էդ. Աղայանի, պրոֆ. Հ. Հակոբյանի և այլոց դերը, ովքեր ուսուարևտաեվրոպական ու արևելյան գրականություններից մի շարք նշանավոր երկեր են թարգմանել հայերեն:

Երևանի պետական համալսարանի գրական-մշակութային կյանքի պատկերը թելով լիլի, եթե չնշենք հրատարակչության դերն այդ ասպարեզում, որը փաստորեն ձևավորվել է Մայր Բուրի հիմնադրման հետ մեկտեղ, բայց պաշտոնապես վավերացվել 1927-ին: Անցած 70-ից ավելի տարիների ընթացքում համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել 3,5 հազարից ավելի գրքեր, որոնց մեծ մասը դեռևս չի կորցրել իր գիտական ու գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Երևանի համալսարանի հրատարակչության հունձքն առատ եղավ հատկապես վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում, երբ բազմաթիվ արժեքավոր մեմագրությունների, բառարանների ու դասագրքերի հետ մեկտեղ տպագրվեցին տասնյակ գրական հուշարձաններ, հիմք դրվեց «Ուսանողի գրադարան» մատենաշարին: Այդ մատենաշարով լույս տեսան համաշխարհային գրականության ընտիր էջերի հայերեն թարգմանությունները, ուսանողության և ընդհանրապես ընդ

թերցասեր հասարակայնության սեփականությունը դարձան Հին Արևելքի, Հունաստանի ու Հռոմի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Ամերիկայի, Իտալիայի, Ռուսաստանի, Վրաստանի և շատ այլ երկրների գրականությունների ընտիր մոտիվները, օտարալեզու հայ գրողների երկերը, որոնց թարգմանության ու կազմման աշխատանքներին ուսանողները և դասախոսները մույմպես մասնակցել են:

Երևանի համալսարանի գրական-մշակութային կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստեցին 1967 թ. այստեղ հիմնադրված «Բանբեր Երևանի համալսարանի» և «Երևանի համալսարան» (1993-ից՝ «Հանդես Երևանի համալսարանի») քառամսյա հանդեսները: Արանցից հատկապես առաջինն իր երեք տասնամյակների գոյության ընթացքում լուրջ դեր է կատարել հայ դասական գրողների գրական ժառանգության անտիպ էջերը գիտական շրջանառության մեջ դնելու, ընթերցող լայն շրջանների սեփականությունը դարձնելու գործում: Մյուս հանդեսը մույմպես գրական ասպարեզ է հանել ինչպես նախկին, այնպես էլ մեր օրերի համալսարանականների գրական երկերը, նրանց անտիպ արձակ ու չափածո գործերը, ինչպես և խրախուսել ուսանողների գրական փորձերը:

Համալսարանի գրական-մշակութային կյանքի մվաճումներից պետք է համարել «Աստղիկ» թարգմանչական տարեգրքի հրատարակությունը: Փաստորեն «Աստղիկը» մեր հանրապետության թարգմանչական անդրադիվ հանդեսն էր: Նրա առաջին պրակի լույսընծայումը 1988-ին իրականացրել է Երևանի համալսարանի հրատարակչությունը: Մինչև այժմ տպագրվել է 13 գիրք, որոնցից երեքը՝ մույմ հրատարակչությամբ: Նրա հիմնադրման գործում լուրջ ավանդ ունեն օտար լեզուների դասախոսներ, ճանաչված թարգմանիչներ Սոնա Սեֆերյանը, Ալինա Տոնոյանը, Նվարդ Վարդանյանը և մի խումբ ստեղծագործող ուսանողներ:

Ի սկզբանե համալսարանն ուսանողների շրջանից նորանոր խոստումնալից անուններ է հայտնաբերում և իր հրատարակչությունների միջոցով խրախուսում նրանց գրական քայլերը: Այսպես, 1924 թ. նրանց ստեղծագործությունները տպագրվել են «Նոր ուսանող» հանդեսի, 1930-ականներին՝ «Հարվածային ուսանող», իսկ 1950-ից սկսած՝ «Սովետական ուսանողություն» և «Երևանի համալսարան» թերթերի էջերում: Այս ամենից զատ, 1959 թ. սկսում է հրատարակվել «Ուսանողի քնար» գրական-գեղարվեստական ժողովածուն: Չորս գիրք տպագրվելուց հետո, 1965-ին, նրա հրատարակչությունը դադարում է, իսկ 1981 թ. նորից վերականգնվում, այս անգամ արդեն «Գրական համալսարան» անվամբ և ավելի լայն ծավալով ու ընդգրկումով: Մինչև այժմ լույս է տեսել «Գրական համալսարանի» հինգ պրակ, որոնց «Ուսանողի քնարի» հետ մեկտեղ կազմում են ինը գիրք: «Գրական համալսարանի» 9-րդ հոբելյանական հատորը լույս տեսավ վերջերս: Նրա առաջին «Պեզիա» բաժինը բացվում է Հր. Աճառյանի, Էդ. Զրբաշյանի, Գ. Զահուկյանի և շատ այլ անվանի գիտնականների գողտրիկ բանաստեղծություններով և ավարտվում արդեն չորս գրքի հեղինակ, Արցախի գրողների միության անդամ, պատանի բանաստեղծ Գեղամ Աղաջանյանի ստեղծագործությունների շարքով: Գեղամը՝ «արցախյան գույապալքարի մանուկ երգիչը», ինչպես բնութագրել են նրան, ստեղծագործել սկսել է յոթ տարեկանից: Նրա երգի ձայնը վաղուց է լսվում, նրա մարտաշունչ ոտանավորները շատերին են հուզել ու պալքարի կոչել: Թարթառի ափերին ծնված, բռնագաղթ, մահ ու ավեր տեսած, բայց Արցախը



Հայրենի պատերազմից ապստի ուսանում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսում: Ընչու է. դեռ երբեք են ցրա քայլերը. ոտանավորները դեռ հոկված չեն, հաճախ ունեն ակնհայտ թերություններ, բայց դրանք պարզ են ու անպա-  
հույճ, արցախյան զենքերի ու աղբյուրների պես վճիտ և հայրենի կարոտով ու ցասումով  
առկեցում, որոնք հուզում ու պայքարի են կոչում մարդկանց Արցախի անկախության ու  
ազատության համար:

Ինքնաշեն տեսանքը, «Գրական Բամբաստան»-ի էջերում ուսանողների կողքին տպագրվում են նաև դասախոսների ու գրական փորձ ունեցող մյուս Բամբաստանականների ինքնուրույն ու թարգմանական գործերը: Դա երիտասարդ ստեղծագործողների մոտ ամրապնդում է ինքնավստահությունը և միաժամանակ նպաստում նրանց կարողությունների դրսևորմանը: Այդ հրատարակություններն ինքնընտրված Բամբաստանի գրական-մշակութային կյանքի անբաժան մասն են կազմում և խթանում նրա աշխուժացմանը:

Այսպիսով, Երևանի պետական համալսարանն իր գոյության ութսուհինգ տարիների ընթացքում պատրաստել է մեր գրականությանն ու դպրության շատ ու շատ գործիչներ: Բավական է նշել, որ Հայաստանի գրողների միության ջարքերում 1934 թ. առ այսօր ընդ-գրկված շուրջ 600 անդամներից 250-ը համալսարանականներ են. արձակագիրներ ու բա-նաստեղծներ, դրամատուրգներ ու գրականագետներ, հրապարակախոսներ ու լրագրող-ներ, գիտության ու մշակույթի այլևայլ բնագավառների աշխատողներ: Բազմաթիվ հա-մալսարանականներ նաև այլ ստեղծագործական միությունների անդամներ են:

Ամեն տարի համալսարանը տալիս է հազարից ավելի շրջանավարտ և կատարում նույնքան էլ ընդունելություն: Շրջանավարտներից ոմանք կյանք են մտնում արդեն իսկ գրողի անուն հաճած, վստահ քայլերով, իսկ շնորհալի նորեկները, Հովհ. Շիրազի պատկերավոր լեզվով ասած, «մտքի հանճարեղ բրուտի» ձեռքերում «վայրենի կալի» պես «սափորվում» և նրա գրական ավագանում մկրտված՝ կրկին կյանք են մտնում: Եվ այդպես շարունակվում է համալսարանի գրական սերունդների հեթափոխությունը՝ ի շահ հայրենի գրականության և մշակույթի զարգացման և հարատևության:

## ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԵՊՀ ղոցներ, Գերագույն Հոգևոր Ճեմարանի դասախոս

## ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – 60

Մեր հոգեբանության մեջ արմատացած է ամեն նորածնից ակնկալել իր երկրին ու ժողովրդին պիտանի անձնավորություն դառնալը։ Անշուշտ, նույնպիսի ակնկալությամբ էին



60 տարի առաջ, 1944 թ. հունիսի 22-ին, Լենինական բաղաձուլ ավերում ծնունդը որդու, որը քրդկազի Հովհաննես Հովհաննիսյանի և փրապիզոնի Վարդանուշ Լուսպարոնյանի ընտանիքում ծնված ութ զավակներից հինգերորդն էր։ Եվ հաստատ կարելի է պնդել, որ այն ժամանակ որևէ մեկի մարմով էլ չէր անցնի, թե նորածնի մասին 60 տարի անց խոսելիս՝ նրան պետք է բնորոշեն որպես հայ պատմագրության մերօրյա լավագույն ուսումնասիրողներից մեկի...

1951-1961 թթ. սովորել և ավարտել է Լենինականի Վ. Մայակովսկու անվան N 5 միջնակարգ դպրոցը։ 1962-1970 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմության

ֆակուլտետում։ Ուսումնառությունն ընդմիջվել է գինձառայությամբ (ԽՍՀՄ զինված ուժեր, 1964-1967 թթ.):

1970-1973 թթ. կրթությունը շարունակել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում՝ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Պողոսյանի ղեկավարությամբ։

1975-1980 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կաբինետի վարիչ։

1976 թ. պաշտպանել է դիսերտացիա՝ «Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի աշխատություններում» թեմայով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

1976-1980 թթ. համալսարանի կարգով դասավանդել է Երևանի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետներում։ 1980-1984 թթ. եղել է դոցենտի պաշտոնակատար Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում։

1984 թ. ստացել է դոցենտի կոչում։

1984 թվականից առ այսօր Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ է։

1992-1993 թթ. դասավանդել է Համագգայինի Բնյութի Հայագիտական բարձրագույն դասընթացներում:

1995-1999 թթ. համալսելության կարգով դասավանդել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1999 թ. առ այսօր համալսելության կարգով դասավանդում է Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան):

1984-2004 թթ. եղել է մի շարք գիտական, գիտամեթոդական, ուսումնական խորհուրդների անդամ: Մասնակցել է հայագիտական բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների:

Պետրոս Հովհաննիսյանի ուսումնասիրությունները, որոնք գիտական և հանրամատչելի մասնաժամանակներում բազմիցս գրախոսվել ու արժանացել են ամենաբարձր գնահատականների, կարելի է բաժանել մի քանի մեծ խմբերի: Ուշագրավ մի խումբ են կազմում հայ պատմագիտության մեծերի կենսամատենագիտությանը նվիրված նրա ուսումնասիրությունները, որոնց մեջ հատկապես հիշատակության են արժանի Մովսես Խորենացու, Նիկողայոս Աղոնցի, Հակոբ Մանանդյանի և Ծափուր Աղայանի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատանքները:

Չափազանց կարևոր են նրա մասնակցությամբ կազմված ու խմբագրությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (հայտ. 1, Երևան, 1981), «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (Երևան, 2000), «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» (Երևան, 2001) հատորները, որոնք մեր ուսանողության համար այսօր ծառայում են իբրև անփոխարինելի ուսումնական ձեռնարկներ:

Պետրոս Հովհաննիսյանի պրպարտն աշխատասիրության բոլորիս համար անսպասելի արդյունքը եղավ փարիսեր առաջ Բնյութի Համագգայինի գրական դիվանում Նիկողայոս Աղոնցի կորած համարվող արխիվի հայտնաբերումը: Դրան հաջորդեցին մասնաժամանակները: Ներկայումս Պետրոս Հովհաննիսյանի աշխատասիրությամբ հրատարակության ընթացքում է գտնվում Նիկողայոս Աղոնցի քառասունհինգ հատորանոց լրագրությունը:

Հայկական հարցի ուսումնասիրության առումով բացառիկ կարևոր նշանակություն ունեցան Նիկողայոս Աղոնցի «Հայկական հարց» հատորի (կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հովհաննիսյանը, Երևան, 1996) և «Армянский вопрос. Генезис армян. Библпография литературы на русском языке (1877-1997)» (составители П. О. Оганесян, Э. А. Бабахан, Ереван, 1998) մատենագիտական տեղեկատվի հրատարակությունները, որոնք հորեկյարի աշխատությունների մեջ ուրույն խումբ են կազմում:

Պետրոս Հովհաննիսյանի գործունեության մեջ բացառիկ տեղ է գրավում նրա դասախոսական երկարամյա աշխատանքը: Վերջերս թղթապանակներին մեջ այլ նյութեր փնտրելիս ձեռքս ընկավ «Երիտասարդ պատմաբան» ուսանողական պաշտոնաթերթի 2000 թ. երրորդ համարը, որում գտնվում է նյութերից մեկը կրում էր «Հարցազրույց սիրելի դասախոս Պետրոս Հովհաննիսյանի հետ» վերնագիրը:



Այսօր Նայասփանում և Սփյուռքում կան մեծ թվով գիտության դոկտորներ և թեկնածուներ (այդ թվում փողերիս հեղինակը), որոնք սիրով ու հպարտությամբ են խոսում իրենց՝ Պեպրոս Հովհաննիսյանի տսանոցը եղած լինելու մասին:

Շնորհավորում ենք մեծարգո Պեպրոս Հովհաննիսյանի ծննդյան 60-ամյակը՝ ցանկանալով նորանոր հաջողություններ իր բեղմնավոր գիտական և դասախոսական գործունեության բնագավառներում:

*Խմբագրության կողմից - «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է բազմաթիվ գիտնականին ու դասախոսին՝ մաղթելով գիտական կարճակամ գործունեության և բարեկեցության և երկար տևողություն:*

*Ստորև տպագրելով հարգալից գիտնականի նոր հոդվածը, ակնկալում ենք նրան հաճախ հյուրընկալելու «Էջմիածին» ամսագրի էջերում:*

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԳԵՎՈՐԳՅԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ  
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 130-ԱՄՅԱԿԻՆ

ՊԵՏՐՈՍ Կ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

## ՀԱԿՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՄ

Գևորգյան ճեմարանի փառքը կերպով դասախոսներից է եղել ականավոր պատմաբան  
Հակոբ Համազասպի Մանանդյանը (1873-1952):



Հ. Մանանդյանը ստացել է փայլուն կրթություն<sup>1</sup>: Նա գերազանցությամբ ավարտել է Թիֆլիսի ռուսական I դասական գիմնազիան (1893): Բարձրագույն կրթությունը ստացել է Ենայի (Գերմանիա) համալսարանում սովորել է փիլիսոփայության ֆակուլտետում (1893 – 1897 թթ.): Միաժամանակ հեղինակ է Լայպցիգի ու Ստրասբուրգի համալսարանների արևելագիտական ու լեզվաբանական դասընթացներին: 1897 թ. ամռանը պաշտպանում է «Beiträge zur Albanischen Geschichte» խորագիրը կրող արեւնախոսությունը, որի համար նրան շնորհվում է փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան:

1898 թ. պարսից բանասիրությունից, լեզվից և պատմությունից էքսպերտ ընտրություններ է հանձնում Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում և ստանում հայ-պարսկական

բանասիրության թեկնածուի աստիճան կարգի դիպլոմ:

Հ. Մանանդյանի ուսումնասիրությունը Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի և Ս. Պետերբուրգի համալսարաններում հնարավոր եղավ իրականացնել Ա. Մանթաշյանի նշանակած թոշակով: Ինչպես բոլոր թոշակառուները, այնպես էլ Մանանդյանը հանձնառություն ունեին ուսումնական արտաքին հետք հեղինակաբանական Հովհաննիսյան և իրենց նվիրել հայ դպրոցին ու մշակույթին: Իր մեծ բարերարին տված խոստովանումը հավատարմորեն Մանանդյանը ընդունում է Գևորգյան ճեմարանի տեսչության հրավերը և տեղափոխվում Էջմիածին:

<sup>1</sup> Հ. Մանանդյանի կենսագրության մանրամասները տես Լ. Տ. Բարսեղյան, Վ. Ա. Հակոբյան, Հակոբ Մանանդյան, Երևան, 1974: Պ. Տ. Հովհաննիսյան, Հակոբ Մանանդյան, Երևան, 1981:

Վ. Մանանդյանը էջմիածին է գալիս 1899 թ. վերջերին: Այդ մասին «Արարապ» ամսագրում տպագրվում է հակիրճ հաղորդագրություն. «1899 թ. դեկտեմբերի վերջերին Մայր Աթոռ ժամանեց ճանապարհի յարանակալ Բաժնի հունարենի ուսուցիչ պր. Վ. Մանանդյանը, որն իր ուսումնական տարիքից է աշխատասեմանում և կրկին բնություն է տվել Ռուսաստանում: Պարոնը տոնելից (Շենդյան - Պ.Վ.) հետո սկսել է աշխատել իր դասերը»<sup>2</sup>: Բացի յսարանական բաժնի երեք դասարաններից, Մանանդյանը հին հունարեն է դասավանդում նաև դասարանական և հին փիլիսոփայության պարմություն՝ յսարանական բաժնիներում<sup>3</sup>: Տեղագայում յսարանական բաժնում դասավանդել է նաև հին հունական գրականության պարմություն, արևմտաեվրոպական գրականության պարմություն, գերմաներեն<sup>4</sup>:

Վ. Մանանդյանը Գևորգյան ճեմարանում դասավանդեց ողիղ հինգուկես տարի՝ 1900 թ. հունվարից մինչև 1905 թ. հունիս: Շնորհիվ իր մեղմ ու բարի բնավորության, յայն գիտական պարաստության՝ Մանանդյանը կարողացավ շատ արագ ձեռք բերել ճեմարանի դասախոսության սերն ու հարգանքը, առինքնել ուսանողությանը: Նրա ճեմարանական առաջին սաներից Ս. Վրացյանը ջերմորեն ու պատկառանքով է հիշում հունարենի և փիլիսոփայության պարմության իր ուսուցչին. «բարձրահասակ, բարեկազմ, համակրելի դեմքով, միշտ կոճկված ու լուրջ»: Ենն նա մարդամոտ չէր, բայց «հիսնամի ուսուցիչ էր»<sup>5</sup>:

Վ. Մանանդյանը ցանկացած առիթ բաց չէր թողնում սաների մեջ սեր ներարկելու հայրենի երկրի անցյալի պարմության նկատմամբ. դաստիարակել նրանց որպես ճշմարիտ հայրենասեր քաղաքացիների՝ միշտ շեշտելով ճեմարանի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ներկա իմացական կյանքում: Ս. Վրացյանը, որ մի տոնական ճաշկերտյթի առիթով ներկա է եղել Մանանդյանի հանդիպմանը սաների հետ, հիշում է նրա ճառը ողոված ճեմարանականներին. «Մեր սագղ տղեղ է, մեր սագղ ճնշված է, մեր սագղ թշվառ է: ճանապարհականներ, դուք սկսեք է պարաստելք ամոքելու սագղի ցավը: Ագղի հույսն ևք դուք»: Այնուհետև Վրացյանն ավելացնում է. «Մեր սրտից էր խոսում Մանանդյանը, որովհետև մենք էլ համարում էինք մեզ սագղի հույսը»<sup>6</sup>:

<sup>2</sup> «Արարապ» ամսագիր, 1900, № 1, էջ 22: Անշուշտ, սխալվում է Ա. Սիմոնյանը, երբ գրում է, թե Վ. Մանանդյանը և Ս. Տիգրանյանը 1895 թ. եռկամբերին միաեամուսակ նկան ճեմարան ուսուցչականության (տնն Ա. Սիմոնյան, Սիբական Տիգրանյանի և իր ընկերների հիշատակին, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1947, № 2, էջ 87, 91; № 4, էջ 97-98):

<sup>3</sup> Ս. Չթյան, էջմիածնի ճեմարանը, «Պայքար» տարեկիր, Բոստոն, 1955, էջ 198-200:

<sup>4</sup> Մաշտոցի անվ. Մաքենադարանի արխիվային բաժնի (այսուհետ՝ ՄԱԲ) Վ. Մանանդյանի ֆոնդում պահվում է անցյալական գրականության պարմությանը նվիրված Վ. Մանանդյանի ընդարձակ ձեռագիր տպագրություն (տնն ՄԱԲ, Վ. Մանանդյանի ֆոնդ, թղթ. 221, վավ. 8, թ. 1-300), որի մասին ընդհանուր գաղափար կարելի է կազմել Մ. Նալյանի հրատարակման միջոցով, տնն «Բուերի Հայաստանի արխիվների», 1972, № 3, էջ 117-128:

<sup>5</sup> Ս. Վրացյան, Կյանքի ողիներով, դեպքեր, դեմքեր, ապրումներ, հատ. Բ, Բեյրութ, 1960, էջ 54:

<sup>6</sup> Անդ, էջ 55:



Հարկանշական է նաև Մանանդյանի պաշտոնակիցներից Հր. Աճառյանի առաջին պալավորությունը՝ «Մանանդյանը լավ տիրապետում էր հրեք եվրոպական լեզուների և ռուսերենին: Բարձրաձայն, լավ մտածված և գեղեցիկ առողջամտությամբ մարդ էր խոսում հայերեն և ռուսերեն: Ունենալով վայելույթ արտաքին և բարձր հասակ, շարժերին սիրելի դարձավ: Մենք երբեք՝ Մանանդյան, Տիգրանյան և Աճառյան, ոչ միայն իրրեւ ազատամիտ երիտասարդներ, այլև իրրեւ հայագիտության սիրահատ սանձեր, շատ մտերիմ ընկերներ դարձանք: Մանանդյանը պարմաբուն և բանասեր լինելով՝ ինձ ավելի մոտիկ էր»<sup>7</sup>: Բացի նշված դասախոսներից, Սահանդյանը մտերիմ էր նաև Մեծն Կոմիտասի, բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանի, Գ. Տեր-Մարտիանի, Ա. Մանդիկյանցի և այլոց հետ: Նրան չափազանց գնահատում և արժեւորում էր նաև Ամենայն Հայոց Հայրիկը՝ Մկրտիչ Ա Խորիմյանը: Հ. Մանանդյանի կրթսեր նորայր Ա. Մանանդյանը հիշում է. «Խորիմյան Հայրիկը եղբորս շատ էր սիրում և միշտ, իր մոտ օրտարագգի այցելուներ գալու դեպքում, եղբորս կանչում էր իրրեւ թարգմանիչ»<sup>8</sup>:

Մանանդյանը սիրով էր մասնակցում ճեմարանի կյանքին: Մանկավարժական ու գիտական աշխատանքներից ազատ ժամերին նա կազմակերպում էր զանազան միջոցառումներ, համերգներ, թարերական ներկայացումներ: Նրա ջանքերով է, որ ճեմարանում ըստեղծվում է թարերական խումբ, որը հասարակության մեծ դասիչում ներկայացումներ էր տալիս դասախոսների և ուսանողների համար: Հարկապես մեծ հաջողություն է ունեցել նրա բեմադրած Հենրիկ Իբսենի «Դոկտոր Զրոկման կամ ժողովրդի թշնամի» դրաման, որը ցնցող պալավորություն է թողել հանդիսատեսի վրա<sup>9</sup>:

1902 թ. ամռանը Հ. Մանանդյանն ու Կոմիտասը կազմակերպել են լսարանական բաժնի ուսանողների հիշարժան ալցելությունը Անիի ավերակներ: Անիի Մայր Տաճարում Կոմիտասն իր ներգլխամբի հետ կատարել է Պատարագի երգեցիկ մասի արարողությունը: Հետագայում Մանանդյանը խոստովանել է, որ ինքը «եղեւ է թե՛ ռուսական կենտրոններում և թե՛ արտասահմանի մայրաքաղաքների օպերաներում, լսել է խոշորագույն ու առաջնակարգ երգիչների ու խմբերի համերգները, սակայն այդպիսի երգեցողություն, որ վիճակած է եղել իրեն լսել Անիի Մայր Տաճարում Կոմիտասի դեկավարությամբ, նա ոչ մի տեղ չի լսել»<sup>10</sup>:

1901-1903 թթ. Հ. Մանանդյանը գերմանացի հայագետ, պրոֆ. Ֆ. Ֆինկի և Ե. Գյանջեյանի հետ միասին նախաձեռնում է Ա. Հովհաննիսյանի նյութական օժանդակությամբ Մարբուրգում լույս տեսնող «Հանդես հայագիտության» (գերմաներեն և հայերեն լեզուներով) գիտական պարբերականի հրատարակումը և դառնում նրա խմբագիրներից մեկը<sup>11</sup>:

<sup>7</sup> Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 215:

<sup>8</sup> Ա. Մանանդյան, Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի մահվան հեղաձայն տարեկիցի առթիվ (հիշողություններ), տնե «Երթնամիկ» տնապիր, 1957, № 2-3, էջ 67:

<sup>9</sup> Ա. Մանանդյան, Նշվ. աղյ., էջ 67:

<sup>10</sup> Անդ, էջ 68:

<sup>11</sup> «Zeitschrift für Armenische Philologie» (այսուհետև՝ ZAPh), Հանդես գրական, պատմական, լեզվապալական և ազգապալական, № 1, 1902; № 2, 1903:

1902 թ. Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նա նշանակվում է «Պատմագիրք Հայոց» մատենաշարի հանձնախմբի անդամ:

Անշուշտ, Հ. Մանանդյանի համար էջմիածնական փորինների ամենագեղեցիկ ու հիշարժան իրադարձությունը նրա ամուսնությունն էր Ալ. Մանթաշյանի զարմուռի Վարվառա խանամիրյանի հետ: Հարսանյաց հանդեսը փեղի ունեցավ ճեմարանի մեծ դահլիճում: Հարսանյաց արարողության իր ներկայությամբ պատվել է Հայոց Հայրապետը, որն օրհնել է նորապսակ զույգին և մաղթել երջանիկ փորինների կյանք: Սեղանապետը Հովհ. Թումանյանն էր<sup>12</sup>, իսկ երաժշտական մասը ղեկավարում էր Կոմիտասը:

Հարսանիքին մասնակցում էին էջմիածնի միաբանության անդամները, ճեմարանի դասախոսները, հյուրեր Երևանից, Թիֆլիսից, Բաքվից, Մոսկվայից, Պետերբուրգից, Ալեքսանդրապոլից, Ախալցխայից:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Նրբիմյանի 1902 թ. հունվարի 23-ի կոնդակով Հ. Մանանդյանը նշանակվում է «Արարապ» ամսագրի խմբագրապետ, բազմափուլ հայագետ Գ. Տեր-Մկրտչյանի օգնական լծակից ունենալով ճեմարանի իր գործընկեր Ս. Տիգրանյանին: Հ. Մանանդյանը սրանձնում է ամսագրի հայագիտական բաժնի պատասխանավորությունը: Նա մեծ սիրով ու պարտքի գիտակցությամբ ձեռնամուխ եղավ «Արարապ»-ի բարի համբավը շարունակելու և նրա գիտական բովանդակությունն էլ՝ ավելի ճոխացնելու գործին: Այդ շրջանում է, որ «Արարապ»-ի էջերում տպագրվում են Ն. Արտեզի, Ա. Աբեղյանի, Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Գր. Խալաթյանի, Կ. Տեր-Մկրտչյանի, Հ. Թիրաքյանի, Ն. Աղբալյանի և այլոց բարձրարժեք ուսումնասիրությունները: Ամսագրի խմբագրական կազմի քանքերով այն հավակնում էր դառնալ լավագույն գիտական պարբերականը հայ իրականության մեջ:

Բնականաբար, Հ. Մանանդյանն իր հերթին աշխատում էր ամսագրի էջերում հանդես գալ նաև սեփական գիտական պարշաճ հրապարակումներով: Այսպես են տպագրվում նրա՝ էջմիածնի ձեռագրապահոցում կատարած առաջին գիտական պրպարումների արդյունք հանդիսացող ուսումնասիրություններն ու մի շարք մատենախոսականներ: Միայն «Արարապ»-ի 1902 թ. հունվար-մարտյան համարներում տպագրվում են նրա ութ գրախոսականներ, որոնք վերաբերում են գիտության ու գրականության փորձեր խնդիրներին նվիրված ութ գրքերի<sup>13</sup>: Այդ գրախոսություններից կցանկանայինք անդրադառնալ միայն մեկ-երկուսին, որոնք լավագույնս ներկայացնում են երիտասարդ մտավորականի հավատարմեքն ու նրա գիտական սկզբունքայնությունը, գրական մտքեղմունքն ու ճաշակը:

Այդ փորիններին մեծ թիվ էին կազմում օտարալեզու գեղարվեստական երկերի հայերեն թարգմանությունները, որոնք արհեստականորեն հրամցվում էին հայ ընթերցող հասարա-

<sup>12</sup> Մանանդյանը Հովհ. Թումանյանի հետ կապված իր հին և անկեղծ բարեկամությամբ: Թիֆլիս փեղ ավտիպությունը հետո (1905 թ.) Մանանդյանը հաճախ իր լիեռում բանաստեղծի բնակությունում և մասնակցում Վերնապետ միջոցառումներին: Հարկանշական է. Հ. Մանանդյանի կողմից ընծայագրված մի քանի գրքերի առկայությունը Հովհ. Թումանյանի գրադարանում: Դրանցից մեկը կրում է հետևյալ մակագրությունը. «Անձաբոլ Բարեկամ Հովհ. Թումանյանին Հ. Մանանդյանից», Ս. էջմիածին, 1904, 4-V, (տե՛ս Հ. Թումանյանի տուն-թանգարան, անձնական գրադարան):

<sup>13</sup> Տե՛ս «Արարապ», 1902, № 1, 19 72-75, 75-77, 77-78; № 2, 19 171-172; № 3-4, 19 335-342, 345-347:

կայնությամբ: Գողթնիք չէր, որ այդ թարգմանությունների մի զգալի մասը որևէ գեղարվեստական ու դաստիարակական արժեք չէր ներկայացնում: Այս վիճակից անհանգստացած Ն. Մանանդյանը փորձում է «Արարար»-ի միջոցով կողմնորոշել ոչ միայն ընթերցող-ինքին, առև թարգմանիչներին: Հարց էր ծագում ի՞նչ գրքեր պետք է թարգմանել հայ ընթերցողի համար, մանավանդ մանուկ ընթերցողի: Սա կարևոր հարց էր և ուներ ազգային-գաղափարախոսական նշանակություն: 1902 թ. լույս էր տեսել անգլիացի վիպասանուհի ԼՄարիա Կորեյլի «Մի մանկան եռգու պարմություն» սրեղծագործության հայերեն թարգմանությունը: Գրքին նվիրված գրախոսականում Ն. Մանանդյանն ընթերցողներին պարզաբանում է, որ այն «մեղուկն է ամենամեծ գրական պոսիտիվների առջև: Այս գրվածքում բացակայում է հոգեբանական ճշտությունը, կյանքի նկարագրությունը անհամապատասխան է իրականությանը և հերոսների դիմքերը միանգամայն շինծու են: Մի խոսքով մի մանկան այս պարմությունը գրական-գեղարվեստական անշնորհք արտադրություն է»<sup>14</sup>:

Գրախոսն ի վերջո առաջարկում է գրական-գեղարվեստական ոչ մի արժեք չունեցող նման գրքերի փոխարեն թարգմանել նվիրյալական գրականության շարք նշանավոր նրկեր, որոնք տակավին անձանթք են հայ իրականությանը. «Եթե թարգմանիչն ուտանձին նպատակ ունի՝ հայ ժողովրդին մատնանիչ անել քրիստոնեական վարդապետության վանությունը՝ նուրբ, աղոթարմիտ և խորը կերպով պատկերացրած նորագույն գրական երկերում ալեյի նպատակաստարմար կյիներ թարգմանել արդի գրականության քրիստոնեական ոգին և սկզբունքները կենդանի և իրական գծերով նկարագրող լավագույն և հայերի գրվածքներից մեկը. օրինակ՝ Լև Տոլստոյ (չթարգմանված երկերից), Պիեռ Լուրի, Ն. Զոդերման («Johannes»)<sup>15</sup>, Ն. Բրանդես («Brandes») և այլոց: Այսպիսով հայ ընթերցողը հասարակությունը մի նոր առիթ կունենա քրիստոնեության վեհությունը և սրբությունը նրբորեն գիտակցելու և կհասկանա որ ու կառվորեր վեպի անադիար տեղեկեցիկային հակառակ, որ «դրական փիլիսոփայության» և «հառաքյալի մության» կողմնակից լինելով հանդերձ կարելի է միևնույն ժամանակ լինել անկեղծ քրիստոնյա»<sup>16</sup>:

Ն. Մանանդյանը «Արարար»-ի էջերում բարձրացնում է Էլ ավելի մտաեղիչ մի այլ հարց: Լույս էր տեսել ռուս պարմաբան Ա. Անիսկով «Հայոց Եկեղեցու պարմությունը» (մինչև XIX դար) մենագրությունը<sup>17</sup>, որը թե՛ ռուսամասիրության եղանակի և թե՛ պարմական կյոթի և փաստերի ճշտության տեսակերից որևէ աղերս չունեցող գիտականության հետ. «Այս աշխարհության մեջ» պարզաբանում է Ն. Մանանդյանը, «բացակայում է բուհասիրական և պարմագիտական ոգին և ուղղությունը»<sup>18</sup>: Ն. Մանանդյանն այլ առիթ ունեցել էր «Արարար»-ի էջերում անդրադառնալու սույն պարմաբանի մեկ ուրիշ աշ-

<sup>14</sup> «Արարար», 1902, № 3-4, էջ 345:

<sup>15</sup> Խոսքը Ներման Զոդերմանի «Հովհաննես Մկրտիչ» (1898) ողբերգության մասին է:

<sup>16</sup> «Արարար», 1902, № 3-4, էջ 346-347:

<sup>17</sup> А. Анисков. История Армянской церкви (до XIX века). Константинополь, 1900, XI+306+VI стр.

<sup>18</sup> «Արարար», 1902, № 3-4, էջ 336:



խափության<sup>19</sup> հակաեայկական միփումների և վերհանել դրանք<sup>20</sup>։ Այժմ այս նոր գրքում Անինսկին էլ ավելի անգուսպ և անարդար հարձակումներ էր կատարում Հայոց Եկեղեցու և նրա հայրերի նկատմամբ։ Հեղինակի համար Հայոց Եկեղեցին և հայ ժողովուրդը Քաղկեդոնի ժողովից եկած դարձել են «*հերկերիկոսներ և աղանդավորներ, կույր, ֆանատիկոս, տգիտ, ամբարտաւան, խաւարամիտ և այլն։ Նովիան Օձնեցին ֆանատիկոս է, որովհետև մտածում է հերկերիկոսի նման*»։

Անինսկին հեթանոսականորեն ու ծրագրավորված հայ եղևորականությանն ու ընդհանրապես ամբողջ Հայաստանյայց Եկեղեցին վարաբանում և սն գույներով է ներկայացնում։ «*Հայ ժողովրդի մեծամասնությունն այսօր, - գայրացած պարզաբանում է հեղինակը, - աւարվածութանության նրբությունները չհաւկանալով՝ կուրորեն պաշտում է իր պապերի հաւապը*»<sup>21</sup>։

Պարմական նրնությունների նման կանխակալ ու միփումնավոր մեկնաբանությունը յուրաքանչյուր լրջամիտ ուսումնասիրողի համար անընդունելի է։ Անա թե ինչու Մանանդյանը քայլ առ քայլ մարնանշում է, որ հեղինակի ուսումնասիրության եղանակը ոչ զիտական է և ոչ էլ անաչառ, որ այն «*միտումնավոր ուղղությամբ կազմված և մեծ մասամբ՝ սխալ ու թերի պարմագրական փառերի վրա հիմնված մի նրկ է և մի ապացույց է, որ աւարվիզմը (հեթանոսում, հեթավոր նախնիներին բնորոշ հաղկանիշների դրսևորում - Պ.Հ.) գոյություն ունի նաև գիտական գրականության մեջ*»։ Մանանդյանը համոզված է, որ ապագա անաչառ ուսումնասիրությունները, «*գիտական աղաւարամիտությունը և ճշմարտասիրությունը, խղճի ազաւրության և կրոնական հանդորժականության լուսավոր լայն սկզբունքները հաղթելու և և կհաղթեն Անինսկիների այն խաւար սկզբունքները և հասկացողությունները, որոնք խոչընդոտ են անաչառության և գիտական աղաւարամիտության։ C'est une grande folie de vouloir Ulre sage tout seul՝ մեծ անմիտություն է, նրբ մարդ կարծում է, թե միայն ինքն է իմաստուն*»<sup>22</sup>։

Նույն մրահոգությամբ է առնցուն Հ. Մանանդյանի մեկ այլ գրախոսությունը, որ վերաբերում էր հայրնի հասարակական գործիչ Գ. Մելիք-Կարազոյանի աշխատությանը<sup>23</sup>։ Գիրքը նկիրված էր Արևմտյան Հայաստանում գործող գերմանական արաբեր մարդասիրական ընկերությունների գործունեությանը։ Գրախոսի կարծիքով, խոսքն Արևմտյան Հայաստանում զգուշությամբ ու նրբորեն արաբող ավերարանչական քարոզության մասին է։ Իրենք՝ գերմանական քարոզիչները չէին թաքցնում, որ հայերի շրջանում ավերարանչական քարոզության շնորհիվ ցանկանում են «*զարթնցնել հայ լուսավորչական Եկեղեցին, որ խեղդվել է աղաւթին ծեսերի մեջ*»։

Գրախոսության միջոցով Մանանդյանն ահազանգում էր հայ հասարակությանը, որ գերմանական ընկերությունները հայ որբերին կրթում են բողոքական Եկեղեցու ոգով և

<sup>19</sup> А. Аппапский, Древише армянские истории, как исторические источники, Одесса. 1899, 133 стр.

<sup>20</sup> «Արարար», 1900, № 2, էջ 85-86։

<sup>21</sup> А. Аппапский, История армянской церкви, стр. 137.

<sup>22</sup> «Արարար», 1902, № 3-4, էջ 342։

<sup>23</sup> Մելիք-Կարազոյանի, Գերմանական աղևորյան ընկերությունները Տաճկա-Հայաստանի համար, Թիֆլիս, 1901, 77 էջ։

նպատակ ունեն մեր ազգային Եկեղեցին «վերանորոգել» ավերարանականության սկզբունքների հիման վրա: Նրա եզրակացությունը միանշանակ է՝ անշուշտ. Գերմանիայում կան շատ բարեսիրտ անհատներ և իսկական մարդասիրական ընկերություններ. որ անշահախնդրորեն օգնում են հայ որբերին, մեր ժողովուրդը երախտապարտ է գերմանացիներին՝ այն բանի համար. որ նրանք հազարավոր որբեր և փառասլալներ ազատեցին մահվան ճանկերից: Իսկ ինչ վերաբերում է «Գերմանական օգնության ընկերությանը», ապա նրանից պետք է անմիջապես վերցնել որբերի հոգևոր կրթության գործը և հանձնել Հայ Եկեղեցու հոգևորականներին:

Մանանդյանը պարզորոշ ցույց է տալիս, որ գերմանական բոլոր ընկերություններն էլ Արևմտյան Հայաստանում գործում են ի նպաստ Գերմանիայի քաղաքական և փնտեսական շահերի, իսկ մարդասիրական, քրիստոնեական քարոզները շղարշ են, նրանց իսկական էությունը թաքցնելու միջոց: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանում Գերմանիայի քաղաքական շահերի եեռանկարներին, Հ. Մանանդյանը պարզաբանում է. «Տաճկահայերը թե՛ գերմանական քաղաքականությունից և թե՛ որոշ հայ գործիչների հակումներից դեպի եվրոպական այս կամ այն պետությունը, միմիայն վնասներ են տեսնել: Տաճկաստանի հայաբնակ նահանգների վերաբերմամբ վերջին և ազդեցիկ խոսքը անպայման միշտ Ռուսաստանինն է, որը նույնիսկ յուր քաղաքական շահերի տեսանկյունից պետք է գործող կերպով պաշտպանի մեր թշվառ տաճկահայ եղբայրների աղոթք դառնալը պանիսլամական այն վրտանգալիք քաղաքականության դեմ, որի սրամիտ և խորամուկ նպատակն է Ռուսաստանի սուսնամուկից երկիրը լցնել կրոնամուլ, վայրագ և կատաղի ավազակների խմբերով»: Հ. Մանանդյանի եզրակացությունը միանշանակ է. «Տաճկահայաստանի հայերի ողորդիչ ոլորտները թեթևացնելու համար տանկառն առժեքը կունենա Ռուսաստանի բարեկամությունը և պաշտպանությունը»<sup>24</sup>:

Հ. Մանանդյանի այս շրջանում «Արարար»-ում տպագրված գրվածքներից առանձնանում է «Մի դիպրոդություն հայոց ներքին կյանքի ուսումնասիրության վրա» չափազանց ուշագրավ հոդվածը<sup>25</sup>:

Այստեղ հայագետը հանգում է այն ճիշտ հետևության, որ եասարակության պատմական զարգացման վրա մեծ ներգործություն ունի տվյալ ժամանակաշրջանի «ստրեստայն գործողության և առողջունագործության աստիճանը»: Ելնելով դրանից՝ նա առաջարկում էր «յուրջ քննական վերաբերմունք դեպի հայ ժողովրդի ներքին կյանքը...: Այլուստ հայոց պատմությունը կննա միշտ առարաքին ունցքերի պատմագրական ժողովածու, քանի որ այդ բնագավառի վերաբերյալ մինչև այժմ պակասում են գիտական յուրջ ուսումնասիրություններ»: Այստեղ Մանանդյանը ժխտում է որոշ պատմաբանների այն տեսակետը, թե իբրեւ հայկական պետականությունը կործանվեց նախադարձերի անմիաբանությունից: Նշելով, որ այդ անմիաբանությունը մոգական գավազանի գործողամբ հանկարծակի չստեղծվեց, Մանանդյանը գրում է, որ դա բարոյական, իրավական և փնտեսական որոշ զարգացման շրջանում և աշխարհագրական ու քաղաքական

<sup>24</sup> «Արարար», 1902, № 1, 19 74-75:

<sup>25</sup> Անդ, 1902, № 2, 19 167-171:

որոշ պայմաններում անխոսափելի էր. «Հունաստանը՝ մեզանից ափսիս քաղաքուկըթված երկիր, կործանվեց մասամբ էլ այն պատճառով, որ չկաշրդացավ լուծել ազգային քաղաքական միություն մեծ խնդիրը»<sup>26</sup>:

Պալամազիական այս ճիշտ մտքերումը նկատի ունենալով է, որ «Մործ» ամսագրում փայտագրված գրախոսության անանուն հեղինակը պալամաբաններին կոչ էր անում հայոց պալամությունը շարադրել՝ հաշվի առնելով Մանանդյանի փեսակներնը<sup>27</sup>, հանգամանք, որ ինքը՝ Մանանդյանը, կարողացավ կապարել միայն փարիներ անց՝ 20-30-ական թվականներին, երբ արդեն դասախոսում էր Երևանի պետական համալսարանում և իրեն նվիրել էր Հայաստանի ներքին կյանքի պալամության հարցերի կապիտալ ուսումնասիրության խնդիրներին:

Մանանդյանի գործունեությունը Գևորգյան ճեմարանում պսակվեց նաև հայագիտական մի այլ մնայուն ձեռքբերումով: Նշանավոր հայագետ Գ. Տեր-Մկրտչյանի հանձնարարությամբ Մանանդյանը և Հր. Աճառյանը սկսում են զբաղվել XII-XIX դարերի հայկական վկայաբանությունների ուսումնասիրությամբ և շուտով ընթերցողի սեղանին են դնում «Հայոց նոր վկաներ» երկհատոր ժողովրդական<sup>28</sup>, իսկ մեկ փարի անց՝ բնահամամարական գիտական հրատարակությունը<sup>29</sup>: Ինչպես Աճառյանն է վկայում, գործը փնեց երկու փարի, որի ընթացքում գործընկերները թերթեցին Էջմիածնի գրապահոցի բոլոր 4000 ձեռագրերը<sup>30</sup> և ստեղծեցին 1155 թ. մինչև 1843 թ. հանուն հավաքի նահապակվածների պալամությունը: Այս նահապակվածները փոնելի սրբեր չէին, ուստի նրանց կենսագրությունը պաշտոնապես «Հայսմավորը»-ի մեջ չէր անցել, կենդեցական օրացույցում էլ չէին հիշարակվում: Այդ բացը լրացնելու մարահոգությամբ է, որ Մանանդյանն ու Հր. Աճառյանը ստեղծեցին հայոց նոր վկաներին նվիրված աշխատություն՝ ձեռագրերի բաղդատությամբ, անհրաժեշտ ծանոթագրություններով և ցանկերով: Գրական քննադատությունը չափազանց բարձր է գնահատել այս ժողովածուի հրապարակ գալը և մարաննշել նրա կազմողների բարեխիղճ և շնորհակալ աշխատանք<sup>31</sup>:

Էջմիածնում եղած գրեթե բոլոր փարիներին Մանանդյանը հեկոողակաւորեն զբաղվում էր նաև հունարան դպրոցի թարգմանությունների ուսումնասիրությամբ: Ինչպես հայտնի է, գրերի գյուտից բիջ անց, Սահակ-Մեսրոպյան դպրոցի հեղինակները ձեռնամուխ

<sup>26</sup> «Արարատ», 1902, № 2, էջ 171:

<sup>27</sup> «Մործ», 1902, № 4, էջ 231-235:

<sup>28</sup> Հայոց նոր վկաներ (Ժողովրդական հրատարակություն), Վաղարշապատ, 1902, հատ. Ա (1155-1485),

211 էջ, հատ. Բ (1486-1843), 328 էջ:

<sup>29</sup> Հայոց նոր վկաներ (1155-1843): Գիտական հրատարակություն՝ բազմաթիվ ձեռագրերի համամարությամբ, ընդարձակ փնդկություններով և ծանոթագրություններով, ձեռագրերի, նահապակների, հատուկ անունների ու օրար բառերի մանրամասն ցուցակներով և ցանկերով, Վաղարշապատ, 1903, 800 էջ:

<sup>30</sup> Ի դեպ, ձեռագրերին ի մոտո ծանոթանալու սույն հիմնադի առիթը Մանանդյանին հուշեց միմյանց բաղդատելու Հակոբ Կարենյանցի հրատարակած ձեռագրադասակի (1863) համարները ձեռագրերի նոր համարների նկատմամբ: ձեռագրերի հիմն համարների համամարական փնդկություն (տնն. A. Manandian, Die neue Numerierung der in Karentans Katalog verzeichneten Handschriften, ZAPh, 1903, Band 2, Heft 1, s. 29-40):

<sup>31</sup> Գ. Եկեղիարյան, փնդ. «Լուսն», 1904, № 3, մայիս-հունիս, էջ 222-223: «Մործ», 1904, № 5, էջ 147: A.

Mellet, Revue critique d'histoire et de littérature, Paris, 1904, t. 58, p. 459-460 և այլն:





թարգմանություններից առանձնացրեց նորայլաբունական ուղղությանը հետևող ներքոնշված գրվածքները և ապացուցեց, որ հենց դրանք են պատկանում Դավիթ Անհաղթի գրչին՝

- ա. «Սահմանք իմաստասիրության»,  
բ. «Վերլուծության Ներածությանն Պորփիրի»,  
գ. «Մեկնություն ի Վերլուծականն Արիստոտելի»:

Ներաբերելի է նշել, որ 1902 թ. Էջմիածնի մատենադարանում աշխատելու ժամանակ Հ. Մանանդյանը հայտնաբերեց փիլիսոփայական մի անհայտ ու անանուն բնագիր, որ կրում էր «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» խորագիրը: XIII դարին պատկանող սույն ձեռագիրը պակասավոր էր, բացակայում էին սկիզբն ու վերջին էջերը, նշված չէր հեղինակի անունը: Ներագառ ուսումնասիրությունները փաստեցին, որ թեև գրչագիրը տվյալ աշխատության միակ պահպանված ընդօրինակությունն է, սակայն հայտնի է դրա հունարեն ամբողջապես պահպանված բնագիրը: 1900 թ. Բեռլինում Ադոլֆ Բուսսեն հրապարակել էր այն, սակայն վերագրելով Էլիաս Իմաստասերին<sup>35</sup>: Հայերեն հայտնաբերված ձեռագիրը համեմատելով Արիստոտելի կաղնագործիքների Ա. Բուսսեի հրապարակության հետ՝ Մանանդյանը անմիջապես նկարեց դրանց նույնական լինելը և չխորանալով բանասիրական մանրամասնությունների մեջ՝ այն վերագրեց Էլիասին<sup>36</sup>: Բուսսեի հետևությամբ էլ նա նորահայտ բնագիրը հրապարակեց որպես Էլիասի հեղինակած երկ<sup>37</sup>:

Հունաբան դպրոցի առանձին հեղինակների ու շրջանների վերաբերյալ Մանանդյանի այս հետաքրքրությունը հետագայում ամփոփվեց ծավալուն մի մենագրության մեջ, որի մրափողացման գաղափարն ու իրականացման ուղղությամբ ձեռնարկված առաջին քայլերը կարարվեցին նրա գործունեության Էջմիածնական տարիներին<sup>38</sup>:

Հաջորդ աշխատանքը, որ այդ շրջանում տպագրեց Հ. Մանանդյանը, նվիրված էր Եվսեբիոս Կեսարացու «Ջրոնիկոն»-ին<sup>39</sup>: Հայտնի է, որ Եվսեբիոսի սույն երկասիրության հունարեն բնագիրը կորել է, նրանից պահպանվել են միայն առանձին քաղվածքներ: Փոխա-

<sup>35</sup> Eliac in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria, edidit Adolfsus Bussae, Berolm, 1900.

<sup>36</sup> Միայն տարիներ անց պրոֆ. Ս. Ս. Արևշաղյանը հմտալից ուսումնասիրությամբ ապացուցեց, որ սույն երկի վերաբերյալ Էլիաս Իմաստասերին գտել է, որևէ հիմքից: Ինչպես հայկական, այնպես էլ հունական սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ այն պատկանում է Դավիթ Անհաղթին (տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկասիրությունը փիլիսոփայական: Համահավաք բնական բնագրերը և աուտգրանքը Ս. Ս. Արևշաղյանի, Երևան, 1980 և այլն):

<sup>37</sup> Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի, րևմտյալ Էլիասի Իմաստասիրի: Ի յոյս Լաճ Հ. Մանանդյան, Ս. Պետրբուրգ, 1911, VIII+177 էջ: Տե՛ս նաև սույն գրքի գրախոսականները՝ Ն. Ադոլյան, «Նոր հոսանք» ամսագիր, Թիֆլիս, 1913, № 3, մայիս, էջ 617-620; Ն. Անիկյան, «Հանդես ամսօրնայ», 1913, № 4, էջ 246; Գ. Նահապետյան, «Բազմավայր», 1913, № 2, էջ 92-95; Ա. Վարդանյան, «Հանդես ամսօրնայ», 1912, № 11, էջ 684-686; A. Meillet, «Journal Asiatique», Paris, 1912, tome XX, p. 174-175.

<sup>38</sup> Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, տե՛ս «Հանդես ամսօրնայ», 1925, 1926, 1927, 1928: Տե՛ս նաև առանձին գրքով՝ Վիեննա, 1928, 299 էջ:

<sup>39</sup> Հ. Մանանդյան, Ջրովանքներ Եվսեբիոս Կեսարացու Ջրոնիկոնից մի հին ձևագրում, տե՛ս «Հանդես ամսօրնայ», 1905, № 1, էջ 15-19:

րենը հայրենի են լադիներեն և հայերեն թարգմանությունները: Մանանդյանի պնդմամբ հայերեն թարգմանությունը (V դար) լիովին փոխարինում է հունարեն բնագրին: Եվսերիոսը «Քրոնիկոն»-ի գրաբար տեքստը հրապարակել է Մ. Ավգերյանը՝ լադիներեն թարգմանության և հունարեն բնագրի պահպանված հարվածների հետ միասին<sup>40</sup>: Ահա այս հրապարակության միջոցով է, որ Եվսերիոսի «Քրոնիկոն»-ը դառնում է գիտական հանրության սովականությունը: Տպագրությունից որոշ ժամանակ անց հայտնաբերվում են Եվսերիոսի «Քրոնիկոն»-ի հայերեն այլ ձեռագրեր ևս, մասնավորապես Էջմիածնի ձեռագրապահոցի թիվ 1775 ձեռագիրը<sup>41</sup>: Այն գրվել է 1217 թ.: Մանանդյանը մանրամասն ուսումնասիրել է հիշյալ ձեռագիրը, որը, բացի Եվսերիոսից, պարունակում է նաև այլ բնագրեր, մասնավորապես իրեն քաջաձանթ Նոննոսի մեկնությունը: Ահա այս ձեռագրի 117բ-127բ թերթերում են գտնվում քաղվածքներ Եվսերիոսի «Քրոնիկոն»-ից: Այդ հարվածները խիստ եզակի էին և, ինչպես հավաստում է Մանանդյանը, «*արժեքավոր են այն տեսակետից, որ գաղափար են տալիս Էջմիածնի թիվ 1724 մայր ձեռագրի և Մ. Ավգերյանի լույս ընծայած բնագրի թերությունների մասին*»<sup>42</sup>: Նորահայր քաղվածքները հավասար էին Ավգերյանի հրապարակածի 250 տողին, իսկ այդ 250 տողում Մանանդյանը մատնանշում է 188 տարբերություն, որոնցից շատերը տպագրվածից առավել նախընտրելի էին:

Սա Մանանդյանի վերջին աշխատությունն էր, որ լույս էր տեսնում Գևորգյան Ճեմարանում պաշտոնավարելու ընթացքում: Շուրջով, 1905 թ. ամռանը, նա հրաժեշտ է տալիս ճեմարանին, իր սաներին, գործընկերներին, Մայր Աթոռին և ընտանեկան հանգամանքների բերումով տեղափոխվում Թիֆլիս, ուր նաև հրավիրված էր ուստական I և II գիմնազիանների վարչությունների կողմից որպես գերմաներենի և հայերենի ուսուցիչ:

Էջմիածնական տարիները անջնջելի և թանկ հիշատակներ թողեցին Մանանդյանի կյանքում: Այստեղ է, որ ճեմարանի և Մայր Աթոռի մարենտադարանի կամարների ներքո նա վերջնականապես ձևավորվեց որպես հայագետ: Այստեղ է, որ լույս տեսան նրա առաջին երկասիրությունները, և որոնք անմիջապես տեղ գրադեցրեցին հայագիտության ոսկե ֆոնդում: Ուր էլ որ եղավ Թիֆլիս, Դորպատ, Բաքու, Նյուսիսային Կովկաս, միշտ էլ ճեմարանը մնաց անհասանելի մի երազանք: Սակայն 1911 թ. անսպասելի և հիանալի առիթ եղավ վերադառնալու Գևորգյան Ճեմարան: Նա հրավեր ստացավ գրադեցնելու ճեմարանի տեսչի թափուր պաշտոնը<sup>43</sup>: Սակայն անմիջապես էլ ստիպված էր հրաժարվել այդքան հրապուրիչ առաջարկից, քանզի, ինչպես խոստովանում է անձնական նոթերից մեկում «*հացի խնդրի պատճառով է, որ հարկադրված գործում է իր հակումների և հակառակ*»<sup>44</sup>: Նույն շրջանում գրված մի այլ նամակում դարձյալ խոստովանում է. «*Երկար տարիների ընթացքում ես հաշտվել եմ պատրաստվեցի գիտական գործունեու-*

<sup>40</sup> Եռերի Պաժիկիևայ Կնոարադույ ժամանակաբ. Վենեդիկ, 1818:

<sup>41</sup> Այս մանրույթ Մառուցի անվան Մարենտադարանի թիվ 1904 գրչագիրը:

<sup>42</sup> Հ. Մանանդյան, Զաղվածքներ..., էջ 15:

<sup>43</sup> ՄԱԲ, Թղթ. 227, վավ. 319դ, թ. 8ա:

<sup>44</sup> ՏՆՆ Պ. Հ. Հովհաննիսյան, Հավոր Մանանդյան, էջ 11:



յաև, և ինձ լավեյի քան ցուփայի է, որ ստիպված եմ հրաժարվել գիտական ուշիտարանքի մասին ունեցած հրազանքի»<sup>45</sup>:



Ն. Մանանդյանի հակումներն ամբողջությամբ ու անմնացորդ դրսևորվեցին խորհրդային իշխանության տարիներին: 1920 թ. նա նշանակվում է Հայաստանի համալսարանի պատմագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, 1921 թ. ընտրվում է Երևանի պետական համալսարանի ռեկտոր, այնուհետև նշանակվում պատմության ֆակուլտետի դեկան, հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, նույն ամբիոնի պրոֆեսոր: 1939 թ. ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ, 1943 թ. հաստատվելով ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամների առաջին կազմում:

Այդ նույն թվականներին է, որ լույս են տեսնում հայ ժողովրդի պատմության հիմնահարցերին նվիրված նրա 100-ից ավելի հիմնարար աշխատությունները, որոնցից կարելի է առանձնացնել «О торговле и городах Армении» (ռուս.՝ 1930, 1954, անգլ.՝ 1965), «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» (1934), «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» (1936), «Տիգրան Բ և Հռոմը» (հայ.՝ 1940, 1972, ռուս.՝ 1943, ֆր.՝ 1963), «Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում» (1940), «Месроп Маштоц» (1940), «Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության» (հայր. Ա-Գ, 1945, 1952, 1957, 1960) և այլն:

Անկասկած, Ն. Մանանդյան-հայագետի գիտական վաստակի անբեկանելի կշռույթը հենվում է XX դարասկզբին Գևորգյան ճեմարանում և նրա շուրջը ստեղծված գիտական հզոր հիմնաքարի վրա, որն իր վրա է կրում նաև ճեմարանական այլ նվիրյալների գիտական ժառանգության ողջ ծանրությունը:

<sup>45</sup> ՄԱՐ, Թ-դթ. 227, վավ. 319ա:



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

## ՆՈՒՄԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանն ընթերցողներին է ներկայացրել Վազգեն Վեհափառի մասին իր հուշերից մի շարք հետաքրքիր և գեղեցիկ փոքրիկ պատմություններ, որոնք բերված են նաև կից ռումիներեն թարգմանությամբ<sup>1</sup>:

Գրքում գերեզման էին 18 լուսանկարներ, ուր Սրբազան Հայրը պատկերված է Վազգեն Վեհափառի եկեղեցիում: Առաջին լուսանկարը կատարվել է 1956 թվականին: Լուսանկարում պատկերված է Հին Վեհարանում Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի միաբանների ներկայությամբ հայրապետական սրբապատեհ կոնդակն ընթերցող երիտասարդ Տիրայր վարդապետը: Վերջին լուսանկարը 1994 թվականից է և ներկայացնում է աչքերը փակած Հայրապետի առջև խոնարհված Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանին:

Ինչպես հուշագրության սկզբում գրում է Սրբազանը, նա Վազգեն Վեհափառին ճանաչել է Կաթողիկոսի 1948 թվականից, երբ ապագա Հայրապետը Մայր Աթոռ էր եկել Գևորգ Զ Կաթողիկոսի երավերով: Տիրայր Սրբազանը նշում է, որ 1955 թվականի ազգային-նկեղեցական սրբագումար ժողովի, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Վազգեն Առաջինը, պարգևավորներից այսօր ողջ են ինքը ու ևս երկու հոգի:

Այս գրքի հուշագրական դրվագներից մեր առջև հառնում է հանդարտ, խռիմ և իմաստուն Հայրապետը: Սպորեն ներկայացնում ենք Տիրայր Սրբազանի հուշագրությունից «Օրմանյանի մատանու պատմությունը» դրվագը<sup>2</sup>:

«1964 թ-ին ուղիղ 40 տարի առաջ, Ա. Էջմիածնում Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը իմձ ձեռնադրեց եպիսկոպոս: Վեհարանում, պաշտոնական ճաշկերույթի ժամանակ մա իմձ ծվիդեց եպիսկոպոսական մի մատանի, որը պատկանել էր Գևորգ Զ Կաթո-

<sup>1</sup> Տե՛ս Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հուշերը Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասին (մահվան 10-րդ տարեկիցի առթիվ), ARARAT, 2004 թ., 59 էջ:

<sup>2</sup> Գիրքը գրված է արևելահայերեն և նոր ուղղագրությամբ:

ղիկոսին, զշելով նաև, որ լիցելով նրա քարտուղարն ու սիրելի սանը, այդ մատանուն են արժանի: Դա մի մեծ, ծանր մատանի էր, կանաչ գմրովստ քարով: Մատանին դժվար էր կրել, այն շատ ծանր էր: Երեք տարի անց, Վեհափառի կողմից հրավիրվեցի Վարդանանց տոնի կապակցությամբ պատարագելու և քարոզելու Ս. Էջմիածնում: Բազմաթիվ հյուրեր էին հրավիրված պատարագին: Պատարագից ու քարոզից հետո, պաշտոնական ճաշկերույթի ժամանակ, Վեհափառը պատմեց, թե ինչպես 1951 թ-ին երբ ինքը եպիսկոպոս ձեռնադրվեց, Գևորգ Զ Կաթողիկոսը նրան նվիրեց մի պարզ մատանի ու երբ նա վերադարձավ Կոստանցա քաղաքը իր անդրամիկ պատարագը մատուցելու, այնտեղ, տեղական թաղական խորհուրդը նրան նվիրեց մի այլ մատանի: Ու պատմեց այդ մատանու պատմությունը:

Մի օր, ծերունագարդ մի կին գնացել էր Կոստանցայի հայ ոսկերիչներից մեկի մոտ և ասել, որ ինքը Օրմանյան պատրիարքի հոգեզավակն է, իսկ իր ամուսինը Թուրքիայում հյուպատոս է եղել: Ու երբ նա հյուպատոսի իր պաշտոնավարությունը ավարտել է, Օրմանյան պատրիարքը ի նշան հրաժեշտի իրենց մի մատանի է նվիրել: Այժմ իրենք վերադարձել են իրենց ծննդավայրը՝ Կոստանցա: Մեծահասակ ծնողները ցանկանում են իրենց երկու աղջիկներին թողնել մի հիշատակ այդ մատանուց ու դրանից ուզում են պատրաստել երկու այլ մատանիներ նրանց համար: Ոսկերիչը, որը նաև թաղական խորհրդի անդամ էր, տեսնելով մատանին ու իմանալով, թե ում է այն պատկանել, կնոջը ասում է, որ աստու է այդ մատանին փչացնել ու առաջարկում է աղջիկների համար պատրաստի երկու այլ մատանիներ, ցույց տալով կանացի մատանիների գեղեցիկ նմուշներ: Նա նշում է միաժամանակ, որ այդ մատանին արժանի նվեր կարող է հանդիսանալ Վազգեն եպիսկոպոսի համար, որը շուտով այցելելու է Կոստանցա իր անդրամիկ պատարագը մատուցելու: Կինը ուրախությամբ ընդունում է առաջարկը: Երեկոյան թաղական խորհրդի ժողովին, ոսկերիչը ներկայացնում է մատանու պատմությունը, ասելով նաև, որ չորս աղամանդ պակասում են մատանուց (մոտ 20-22 քարեր էին զարդարում այդ մատանին): Թաղական խորհուրդը որոշում է կայացնում ավելացնել պակասող աղամանդները և Վազգեն եպիսկոպոսի անդրամիկ պատարագից հետո, պաշտոնական ճաշկերույթին այն նվեր մատուցել նրան: Եվ այսպես, պատարագից հետո, Օրմանյանի մատանին նվիրում են Վազգեն եպիսկոպոսին: Չորս տարի շարունակ Վազգեն սրբազանը կրում է այդ մատանին, մույժ այդ մատանիով գալիս է բազմելու նաև Լուսավորչի գահին:

Մատանու պատմությունը ներկայացնելուց հետո, Վեհափառը ներկաներին ասաց. «Ի վարձատրություն այս փառավոր պատարագի ու քարոզի, այս համբավավոր մատանին նվիրում են Տիրայր Սրբազանին, քանի որ այժմ նա՝ է հոմիգահայ թեմի առաջնորդը և որ հոմիգահայերն էին, որ այս մատանու այն չորս կորած աղամանդները ավելացրին ու մույժ հոմիգահայերն էին, որ այս նվերը մատուցեցին ինձ»: Ահա այսպես էս ստացա Օրմանյանի նշանավոր մատանին»:



## ՆՎԻՐՎԱԾ ՎԱԶԳԵՆ ՎԵՏԱՓԱՌԻ ԿՈՇԱՏԱԿԻՆ

Ի հիշարարակ Վազգեն Առաջինի վախճանման փաստամյակի, լրագրող Սիլվա Սուքիասյանն ի մի է հավաքել և առանձին գրքով հրատարակել Հայոց Հայրապետական Աթոռի 130-րդ գաեակալի մասին փարբեր փարիններին գրված իր հողվածները՝ դրանք գերեղելով «Մի դափնեճյող Վազգեն Ա-ի հիշարարակին» խորագրի ներքո:

Տեղինակը կարարել է նաե մի շար գեաեարելի աշխարարնը՝ դիմելով Վազգեն Առաջինի մրերմությունը վայելած արարբեր մրավորականների, որ իրենց հուշերը գրեն կամ պարմեն երջանկաիշարակ Հայրապետի մասին:

Հարկանշական է, որ նրանցից յուրաքանչյուրը Հայոց Հայրապետի մասին խոսում է՝ ինչ-որ րեղ դիարակելով իր մասնագիարական Էս-ի րեսանկյունից, որով մնկ անգամ ևս մեր առջև հառնում է իմասարուն ու բազմաշնորի Հայրապետի լուսավոր կերայարը: Էթն նկարիչ Հղվարդ Իսարենկյանը շեշարում է Վեհափառի՝ արվեսարի նրբին իմացությունը, ապար րենխնկական գիարությունների ներկայացուցիչ, 1980-ական թթ. Հայասարանի Նախարարների խորերդի Նախագահ Ֆաղեյ Մարգայանն ընդգծում է ձերունագարղ Հայրապետի վերլումձական մրաձողությունը, փասարների համադրման և ճիշար եգրահանգման հասնելու գարմանայի ունակությունը:

Սիլվա Սուքիասյանն անգամ դիմել է միջնորդավորված հուշագրությունը՝ Մարիիրոս Սարյանի խոսքը ներկայացնելով արվեսարաբան Շաեեն Խաչարրյանի պարմած հուշերով:

Գրբի երկրորդ բաժինը կազմում են Վազգեն Վեհափառի րարբեր աոիթներով գրված մի շարք գրությունները, որոնք վերաբերվում են այլևայլ հարցերի: Վավերագրերի արժեք ունեցող այդ գրությունները գրբի հեղինակը ներկայացնում է համապարասխան մեկնաբանություններով և իրեն բնորոշ պարկերավոր ոճով:

Գրբի երրորդ մասում Ս. Սուքիասյանը գերեղել է Վազգեն Վեհափառի հեր րարբեր րարիններին վարած իր հարցագրույցները, որոնցում այնպիսի հերաքրբի մանրամասնություններ կան մեր ազգային-եկեղեցական կյանքի այլևայլ հարցերի մասին, որ ժաղպավենին հանձնված այս խոսքերը ևս ինչ-որ րեղ ձեռք են բերում վավերագրերի արժեք:

Այս գիրքը, հեղինակի իսկ բնորոշմամբ, մի դափնեճյուղ է Վազգեն Առաջինի հիշարարակին և մի գեղեցիկ օրինակ, թե ինչպես պերք է ջանալ մոռացումից փրկել և պարմությանն ի պահ րալ մեր ազգային մեձություններին վերաբերվող յուրաքանչյուր մասունք և դրվագ:

## ՄՄԵՐՆԱՎՈՅՄՆ

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ

# ԱՆՆԱ ԱՐԵՎՈՍՏՅԱՆԻ «ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ՁԱՅՆԻՑ» ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ձայնը» կամ «Ձայնեղանակը» հին և միջնադարյան երաժշտական մի շարք մշակութային համար առանցքային նշանակության հասկացություն է: Արդի երաժշտագիտության բնութագրի տեսանկյունից բնակիս՝ այն ներկայանում է որպես երաժշտագիտական ուղղակի դրսևորումների մի համախումբ: Երաժշտա-տեսական բնույթի մի համալիր, որն ունի գեղագիտական, դավանաբանական, կրոնա-փիլիսոփայական ննթաբնույթներ և: Եթե այսօր, երաժշտական ուսումնասիրման գործընթացում, «Ձայն» հասկացության տեսական նշանակությունն ավելի կարևոր կարող է թվալ, ապա միջնադարյան մշակութային իրողությունները ճիշդ ըմբռնելու տեսանկյունից, նույնիսկ ընդհանրացված նրա գաղափարական իմաստավորվածությունն իր ժամանակի մեջ կարող է վճռորոշ լինել հենց նույն տեսական նշանակությունը ճշգրտելու, հասկացության այլ առնչություններն ու աղբյուրները երևակելու և, վերջապես, երաժշտության տեղն ու դերը ժամանակի մշակութային ընդգրկության համապատկերի մեջ ճիշդ պատկերացնելու առումով:

Ահա «Ձայն» հասկացության այդ շերտերի ուսումնասիրությանն է նվիրված ներկայացվող գիրքը:

Արվեստագիտության դոկտոր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Աննա Արևապետյանը 2003 թվականին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, «Կոմիտաս» հրապարակչության կողմից լույս ընծայեց իր «Հայ միջնադարյան «Ձայնից» մեկնություններ» աշխատությունը:

Հայ միջնադարյան երաժշտական մշակույթը ծայնեղանակի վերաբերյալ, հենող նյութից բացի, մեզ ժառանգություն է թողել խիստ սակավ տեսական դատողություններ և հասկացության գաղափարական մեկնությունների բավականին հարուստ և զարգացած ավանդույթ: Սակայն, մինչ այժմ այն լուսաբանվել է միայն մի շարք ուսումնասիրությունների բուն նյութականության առթևակ: Ցայսօր, երևույթի համապարփակ կերպով ուսումնասիրված չլինելը որքան որ փարփրանակ է թվում, նույնքան էլ արժեքավոր է դարձնում Ա. Արևապետյանի այս աշխատությունը, որպես գիտելիքների և ուսումնասիրության յուրաքանչյուր պակասի լրացում մեր երաժշտական միջնադարագիտության մեջ:

«Ձայնեղանակ» հասկացության ակունքների մասին դիտարկումը հեղինակը կատարում է հնագույն մշակութային շերտից մինչև հին հունական փիլիսոփայություն, ապա վաղ-քրիստոնեական շրջանի տեսական մտքի արտահայտություններ ներառող նյութի հիման վրա: Հայ միջնադարյան իրականության մեջ երևույթի բնադրված Ա. Արևապետյանը կատարում է «Ութնձայն» համակարգի պարմական զարգացման եռափուլ ընթացքը հստակեցնելով, ապա մեր մշակույթի մեջ շրջանառված և պահպանված բնագրերի վերլուծմամբ:

Բնագրերի ցանկն ընդգրկում է Կապադովկյան հայրերից մինչև Թովմա Մեծուիեցու ժամանակաշրջանը, ներառյալ V դարի Ս. Թարգմանիչների՝ Ս. Մահակ Հայրապետին և Ս. Մեսրոպ Մաշտոցին վերագրվող, ապա Մովսես և Սյրեփանոս Սյունեցիների, Անանիա Նարեկացու, Հովհաննես Վանականի, Վարդան Արևելցու, Գրիգոր Տաթևացու թողած մեկնությունները:

Միմյանց կողք-կողքի վերլուծելով այդ բնագրերը՝ հեղինակը ներկայացնում է հայ միջնադարյան երաժշտա-գեղագիտական-տեսական մտքի թե՛ զարգացման, թե՛ հարստացման ընթացքը՝ բննարկվող խնդրի շրջանակում: Խոսքը հնագույն բնապաշարական, առասպելական պատկերացումներից քրիստոնեական աշխարհընկալմանն անցնելու, ձայննդանակների գաղափարական մեկնությունները հայ միջնադարյան մեկնողական գրականությանն առավել լայն հունի մեջ դիտարկելու, մասնավորաբար՝ խորանների մեկնություններին գուցա հեռելու, ապա գուր լիբրառական որոշ դիտարկումներ հիշատակված գաղափարական համակարգի հետ համադրելու մասին է:


Ներագույն առանձին հանգույց է դարձել հայկական «Ձայնից» մեկնությունների և համաարևելյան նմանատիպ դրսևորումների համեմատությունը, ինչն ուսումնասիրությունը տեղադրվում է համեմատական երաժշտագիտության ոլորտը:

Աշխարհության գիտական փաստարկվածությանը հավելյալ կշիռ են հաղորդում հավելվածի բաժինները, ուր կարելի է գտնել նաև միջնադարյան քննարկվող մեկնությունների բնագրերը, աշխարհաբար թարգմանությամբ հանդերձ, որոնք գիրքը դարձնում են ոլորտի համար կարևոր սկզբնաղբյուր:

Ուսումնասիրությունն ունի ծավալուն և քաղաքական մարտնչականություն, որի կարևորագույն մասն են կազմում Մաշտոցի անվան Մարենադարանի ձևագրերը և մի շարք սկզբնաղբյուրներ:

Աննա Արևշատյանի «Հայ միջնադարյան «Ձայնից» մեկնություններ» գիրքը կարեոր ավանդ է հայ հոգևոր երգարվեստի ուսումնասիրման և ավելին՝ տեսական-գեղագիտական մտքի, միջնադարյան աշխարհայեցողական համակարգի ուսանձնափայտությունների հրապակեցման գործում:





## ՁԵՌԱՄԲ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՎԵՑ ԽԱՐԿՈՎԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Օգոստոսի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամնայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Ուկրաինայի հայոց թեմ կապարակու (Խարկովի) նորակառույց Ս. Հարություն եկեղեցու օծումը:

Վեհափառ Հայրապետին ողնկցում էին Ս. Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանը և Ս. Տիրան արևդա Պեթրոսյանը՝ որպես գավազանակիր:

Օղանավակայանում Նորին Սրբության գլխավորած պատվիրակությանը դիմավորեցին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը, հայ համայնքի, ինչպես նաև Խարկովի մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները:

Երեկոյան Հայոց Հայրապետը հանդիպեց տեղի հայ համայնքի անդամների հետ:

Հաջորդ օրը, առավոտյան, Նորին Սրբությունը հանդիպեց Խարկովի նահանգային վարչության ղեկավար Է. Կոշնարովի հետ, այնուհետև ծաղկեպսակ գեղեղեց Ուկրաինայի անկախության հրապարակում, որից հետո Հայոց Եկեղեցու պատվիրակությունը մեկնեց Պեթրովսկի վանք, ուր հանդիպեց Միքրոպոլիտ Նիկողիմին, և ապա ուղևորվեցին Ս. Հարություն եկեղեցի, ուր մինչ օծումը տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որի ընթացքում հավաքվածներին նախ դիմեց Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը: Սրբազան Հայրը Խարկովի հայությանը շնորհավորելով եկեղեցու օծման առիթով, շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանն այս առիթով տեղի հայությանը րված իր հայրապետական ույցելության համար:

Այնուհետև շնորհավորանքի խոսքեր ասացին Ուկրաինայի կրոնի գործերի պետական կոմիտեի նախագահ Վիկտոր Բոնդարենկոն, Խարկովի նահանգային վարչակազմի նախագահի տեղակալ Ալեքսանդր Սիդորենկոն, Խարկովի փոխքաղաքապետ Լեոնիդ Մորոկինը, Խարկովի հայ համայնքի վարչության նախագահ Սամվել Խոսնովիչյանը, Խարկովի Ս. Հարություն եկեղեցու ծխական համայնքի նախագահ Էդմիրա Տեր-Մարտիրոսյանը:

Այնուհետև հավաքվածներին հայրապետական իր պատգամն ուղղեց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը նախ փառք վերադրեց Բարձրալիք, որ կատարվեց նա մեկ հայկական եկեղեցու օծումը: Գարեգին Երկրորդը նաև իր ուրախությունը հայտնեց, որ եկեղեցու օծումը համընկնում է Ուկրաինայի անկախության օրվան և Խարկովի հիմնադրման

350-ամյակի հանդիսություններին՝ մաղթելով, որ այս եկեղեցին, վառ պահելով հավատը հայտնության սրբերում, միաժամանակ դառնա ևս մի վկայությունը երկու ժողովուրդների բաղնակամության և գործակցության, շնորհակալություն հայտնելով և այն ջերմ վերաբերմունքի համար, որ տեղի իշխանությունները ցուցաբերում են հայ համայնքի հանդեպ:

Նորին Սրբությունը վերջում իր գնահատանքը հայտնեց Ուկրաինայի հայոց թեմի ատաղնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բուխարյանին, խարկովի հայ համայնքի նախագահ Սամվել Խանդամիրյանին և բոլոր այն հայորդիներին, ովքեր իրենց նպաստն են քերել այս եկեղեցու կառուցմանը:

Այնուհետև կատարվեց նորակառույց եկեղեցու օծումը և մատուցվեց անդրանիկ Ա. Պատարագը:

Երեկոյան խարկովի Պուշկինի անվան թատրոնում տեղի ունեցավ ջաղաքի հայ համայնքի կազմակերպած հանդիսությունը, որի գեղարվեստական մասում հանդես եկան նաև Հայաստանից հրավիրված արվեստագետներ:

Օգոստոսի 25-ին Վեհափառ Հայրապետի գլխավորած պարվիրությունը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ա. Հարություն եկեղեցու, որի հիմնարկները կատարվել էր 2000 թ. հուլիսի 1-ին, օծման արարողությունը ներառված էր խարկովի հիմնադրման 350-ամյակի հանդիսություններին շրջանակում: Այն Արևելյան Ուկրաինայի առաջին հայկական եկեղեցին է: Նախատեսվում է եկեղեցական համալիրն ամբողջացնել նաև կիրակնօրյա դպրոցով և այլ շինություններով, որոնք կծառայեն հայ համայնքի հոգևոր-մշակութային կյանքի արդյունավետ կազմակերպմանը:

## ՄԵՄԻՆԱՐ-ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 21-23-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կոորդինացիոն Հիմնադրամի նախաձեռնությամբ Կոնգրեսի ունեցավ սեմինար-խորհրդաժողով «Կանաչ աստվածաբանություն» թեմայով:

Հուլիսի 21-ին և 22-ին սեմինարի մասնակիցները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծննդարանի և Սևանի Վազգենյան Դպրանոցի սաները, Երևանի պեպոսկան համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներն ունկնդրեցին Օքսֆորդի համալսարանի դասախոս պրոֆ. Դիմիտրի Օյկոնոմուի դասախոսությունները բնապահպանական խնդիրների վերաբերյալ ուղղափառ աստվածաբանության դիտանկյունից: Այս խնդիրների պարզաբանման էին նվիրված բանախոսի «Արարումը Հին Կտակարանում», «Արարումը Նոր Կտակարանում», «Ուղղափառություն և բնապահպանություն», «Նստ, պապկերություն», «Ուղղափառություն և բնապահպանություն», հայրաբանություն» թեմաներով դասախոսությունները:

Նույն խնդիրների բնաբարձման էր նվիրված հուլիսի 23-ի խորհրդաժողովը, որի աշխատանքներին միացան նաև Հայաստանում բնապահպանական խնդիրներով զբաղվող մի շարք հասարակական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խորհրդաժողովին բանախոսություններով հանդես եկան Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Հրաչ ավ. սրկ. Սարգսյանը, պրոֆեսոր Կարինն Դանիելյանը և Դիմիտրի Օյկոնոմու:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**



**ԴԱՄԱՐԱԿԱՆԱՅԻՆ ԿԱՐԴԱՆԻՆԻ ԹԵՄԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԱԽԱՐ**

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմում ապրիլ-հուլիս ամիսներին թեմակալ առաջնորդ Տ. Միսն եպս. Աղամյանի օրհնությամբ փեղի ունեցան ղսսախոսություններ «Ս. Գրքի ուսումնասիրությունը» թեմայով Էջմիածնի և հարակից գյուղերի հանրակրթական դպրոցների 55 ուսուցիչների համար, ովքեր արդեն մեկ փարի է. ինչ «Հայ Եկեղեցու պատմություն» են դասավանդում դպրոցներում: Հասախոսությունները կազմակերպվել էին Արմավիրի թեմի ու Հայաստանի Աստվածաշնչային ընկերության նախաձեռնությամբ ուսուցիչների կրթական գիտելիքներն առավել ամրապնդելու, նրանց՝ հոգևոր նոր լիցք հաղորդելու նպատակով:

Դատախառնություններով հանդես եկան Աստվածաշնչային ընկերության ծրագրերի պնդողներ Արշավիր Գաբուշյանը, Մխիթարյան միաբանությունից Սեդոկ Վրդ. Զամուկյանը, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս Գևորգ սարկավազ Ռոշյանը, վերապատվելի Մանվել Զինբաշյանը:

Հուլիսի 15-ին թեմակալ առաջնորդը մեծ հանդիսավորությամբ դասընթացների մասնակիցներին հանձնեց վկայականներ՝ իր օրհնությունը տալով մալուալ սերնդի քրիստոնեաբարոյական դաստիարակությամբ զբաղվող ուսուցիչներին:

Դասախոսություններն ավարտվեցին եհշարժան ուխտագնացությամբ՝ դեպի Ղազախստանի և Սանաանիի եռչակավոր վանքերը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

## ՄԵՄԻՆԱՐ ՔԱՏԱՆԱՅԻՑ ԼՍԱՐԱՆՈՒՄ

Օրերս Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քահանայից լսարանում կազմակերպել էր սեմինար՝ լսարանում ուսանող ապագա հոգևորականների համար: Սեմինարի նպատակն էր՝ հարստացնել ապագա հոգևորականների ունեցած գիտելիքները ԶԻԱՀ-ի մասին և նրանց փոխանցել Ռուս Ուղղափառ Եկեղեցու փորձը՝ այդ հիմանդրությամբ տառապալով մարդկանց ռեկոնստրուկցիայի հարցում:

Երկօրյա սեմինարին ղեկավարում էին ԵՏՍ Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի ղեկավար Կարեն Նազարյանը, «Արմենիկոմ» կնկարողների ներկայացուցիչ, լարորապետ հեղափոխական խմբի ղեկավար Տիգրան Դավթյանը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու արտաքին կապերի բաժնի աշխատակցուհի Մարգարիտա Նեկուբովան, բժիշկ Իրինա Կրուկովան և հոգևորական Մարինա Նիկիտինան՝ Մոսկվայից:

Ինչպես նշեց Մարգարիտա Նեկուբովան, ընդունված բարոյական չափանիշների արժեքկաման մեր ժամանակներում Եկեղեցու դերը բարոյական արժեքների վերականգնման հարցում անգնահատելի է: Մյուս կողմից՝ ԶԻԱՀ շատ վարակելիքներ, անբուժելի հիվանդության փաստին բախվելով, հաճախ վերափոխում են իրենց կյանքը և դիմում Եկեղեցու ռեկոնստրուկցիայի: Այս առումով Ռուս Ուղղափառ Եկեղեցին ԶԻԱՀ-ով հիվանդների հոգևոր և բարոյական աջակցության որոշակի փորձ արդեն ունի և պարզապես կարող է կիսել այն այլ Եկեղեցիների հետ:

«Արձագանքելով Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի համագործակցության ծրագրին, մեր ռուս հավատակիցները քրիստոնյային վայել պարտքի գիտակցումով, սիրով և անշահախնդրությամբ եկան Հայաստան և դասախոսեցին մեր ապագա հոգևորականների համար,՝ նույն է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի կողմից Կ. Նազարյանը: Վստահ եմ, որ այս սեմինարի ընթացքում ձեռք բերած գիտելիքները մեր ապագա հոգևորականներին պետք կգան իրենց հոգևոր և այդչափ պարասխանապատ ծառայության ժամանակ»:

Դասընթացի ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեմինարի կազմակերպիչներ ԵՏՍ Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի համակարգող պրն Կարեն Նազարյանին և Ռուս Ուղղափառ Եկեղեցու արտաքին կապերի բաժնի աշխատակցուհի Մարգարիտա Նեկուբովային:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց ԵՏՍ Հայաստանի Կլոր Սեղանի գործունեությունը, ապա կարևորեց Եկեղեցիների միջև նման կապերի հաստատման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում բոլոր Եկեղեցիներին՝ փոխանցելու միմյանց տարբեր ոլորտներում իրենց փորձառությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎՄՍԱԿԱՐԳ

## ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՆԱՅՈՑ ԹԵՄԷՆ

Գերմանիոյ հայոց Առաջնորդութեան Մշակութային Յանձնախումբը 8-16 Մայիս 2004 թուականին կազմակերպած էր հայկական մշակութային շաբաթ մը, առաւելաբար տեղ տալով հայ երաժշտութեան եւ թատրոնի:

Առաջին ձեռնարկը տեղի ունեցաւ 8 Մայիսին, Զեօլն քաղաքի Ֆոյըրվախը սրահին մէջ:

Մինչ ըսն հանդիսութիւնը Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ Գերշ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան թեմի երկարամեայ ազգային գործիչներէն Տոքս. Շաւարշ Յովասափեանին (Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի նախագահ), տոքս. Րաֆֆի Պերկեւեանին (Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի փոխնախագահ) եւ տոքս. Րաֆայէլ Բարսեւեանին (Գերմանահայ Բժիշկներու Միութեան նախագահ) կուրծքերը զարդարեց «Ս. Ներսէս Շնորհալի» բարձր շքանշաններով:

Հանդիսութեան բացման խոսքը ըսաւ Մշակութային Յանձնախումբի աւսնապետ Զործիոյ Պավայ: Այս Առաջնորդութեան Թեմական Խորհուրդի արեւնապետ Տոքս. Սարգիս Զինեան իր խօսքով ներկայացուց իւրաքանչիւր թեկնածուն կենսագրական գիծերը, Գերմանիա հաստատուելէ մինչեւ երկար տարիներու վրայ տարածուած աշխատանքներն ու հայ ժողովուրդին բերած ծառայութիւնները, միշտ ընդգծելով անոնց ցուցաբերած նուիրումն ու ազգային ոգին:

Իսկ առաջնորդ Սրբազանը յայտնելով իր ուրախութիւնն ու շնորհաւորանքը, շեշտեց, որ Հայ Եկեղեցին միշտ կողքին է իր ժողովուրդին ծառայողներուն եւ պատրաստ միշտ բարձր գնահատելու անոնց նուիրեալ գործունէութիւնը: Այս թեկնածուները մէկ մէկ բնւ հրաւիրելով յանձնեց անոնց շքանշաններն ու կոնդակները, որոնք կարդացուեցան Հոգշ. Տ. Սերովբէ վրդ. Իսախանեանի կողմէ:

Հանդիսութեան երկրորդ բաժինը կը կազմէր Մարտէլլի Գեղամ Պաղտասարեանի անւան երգ ու երաժշտութեան համերգը: Խումբի հայ ժողովրդական երգերէ բաղկացած երկու ժամուայ հոյակապ յայտագիրը ներկայացնելէ ետք անկաւրեղի եղաւ ներկայ ժողովուրդին բացաւորել, թէ համերգը լրացած է: Խումբը սրիպուեցաւ բազմաթիւ անգամներ վերստին իրենց փողերը գրաւել եւ ծափերու տարափին ներքեւ կրկնել այնքան հաճելի եռագն ու երգերը:

Համերգէն ետք կողքի սրահին մէջ կատարուեցաւ յարուս պատուասիրութիւն շքանշանակիրներուն, Գեղամ Խումբի անդամներուն եւ ներկայ ժողովուրդին ի պատիւ:

Յաջորդ օրը, 9 Մայիսին, դարձեալ նոյն սրահին մէջ Զարսուրուի քաղաքային թատրոնի խումբի կողմէ ներկայացուեցաւ «Գագանը Լուսնի վրայ» թատերախաղը, գերմաներէն լեզուով, բնագործեամբ Զրիստֆեր Մասսի:

Շատ սիրուած ու երկար ժամանակ Գերմանիոյ տարբեր քաղաքներուն մէջ ներկայացուած այս խաղի ատարիչն դերասաններու եւ ներկաներու միջեւ տեղի ունեցաւ հարցովործ եւ երկխօսութիւն, Սփիւղի եւ Յեղասպանութեան հետազոտութեան ինստիտուտի տնօրէն Տոքս. Միլիան Տապաղի ղեկավարութեամբ: Ներկաները իրենց հարցումներու պատասխանները սպանալէ բացի, անելի մանրամասն լուսաբանուեցան ներկայացուած նիւթի մասին:



Գերմանահայոց թեմը Գերմանիոյ փարածքին վրայ ունի 14 կազմակերպուած եկեղեցական համայնքներ, որոնցմէ: Տեսն նահանգի համայնքը, որուն կեդրոնը կը գտնուի Նա-նաու, 15 Մայիս 2004-ին փոխախմբեց իր կազմութեան 30-ամսակը: Նոյն օրը, երկնայեան, Ֆրանքֆորթի Զեմփինսկի անուն շքեղ հիւրանոցին մէջ տեղի ունեցաւ պարահանդէս մը, որուն մասնակցած էին տեղւոյն ժողովուրդը, համայնքի ու թեմական խորհուրդի ներկայացուցիչները, տեղւոյն եկեղեցւոյ վարչութեան գերմանացի անդամներն ու հոգևոր հովիւը, ինչպէս նաև թեմին առաջնորդը՝ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան՝ իր եկտ ունենալով շրջանի հովիւ: Արմ. Տ. Արմէն քեհյ. Մելքոնեանն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիտասարդ միաբաններէն հիւրաբար Գերմանիա գտնուող Տոգշ. Տ. Արշէն արք. Սանոսեանը:

Պարահանդեսէն առաջ խօսք առնող Տեսնի եկեղեցական համայնքի վարչութեան արեւնապետը Գեորգ Արկ. Պապասըզ, ներկայացուց համայնքի կազմութեան պատմութիւնը իր զանազան շրջաններու հանգրտաններով: Ապա խօսք առաւ գերմանացի հովիւը, որուն եկեղեցին կը գործածէ համայնքը: Ան ընդգծեց, թէ իր եկեղեցւոյ մէջ հայերը հիւր-ընկալել իրեն ուրախութիւն կը պատճառէ, քանի որ հայ ազգը քրիստոնէութիւնը ընդունող եւ առ այդ իր բնիկ երկրին մէջ տառապած ու հալածուած առաջին ազգերէն մէկն է: Որով տեսակ մը իր պարտքը կը համարէ իր կարելին ընել, որպէսզի օգնէ այս ժողովուրդին եւ չզգացնէ, թէ օտարութեան մէջ կ'ապրին:

Ապա խօսք առին յաջորդաբար Տ. Արմէն քահանան ու Սրբազան Տայրը, որոնք զնահա-տեցին վարչութեան քանքերը ամէն ղժուարութեան դէմ համայնքը տրքի պահելու պայքա-րին մէջ: Շնորհատրեցին համայնքի 30-ամսայ գոյութիւնը եւ մաղթեցին, որ ան գոյաբուէ տակաւին երկար տարիներ:

Յաջորդ օրը Տ. Արմէն քեհյ. Մելքոնեան յորելիական Ս. Պապարագը մատոյց եւ խօսեցաւ յաւուր պատշաճի բարոզ մը, հաւատարեւալներու հոծ բազմութեան մը ներկայութեան:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման 1700-ամսայ յորելիական ծիրին մէջ, Գերմա-նահայ թեմէն ներս Տայ Եկեղեցւոյ ու իր ժողովուրդին ծառայած նուիրեալ անձնատրու-թեանց պարգեւատրման հանդեսներէն մէկն ալ տեղի ունեցաւ Տամպուրկի մէջ. 23 Մայիս 2004-ին եւ այս առթիւ «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» բարձր շքանշանին արժանացաւ ՎՈԼՖ-ԿԱՆԿ ԿՈՒՍԹ:

Յարգելի զիտաշխարող եւ Գերմանիոյ կարեւորագոյն շաքաթաթերթերէն Շփիկէլ-ի եր-կար տարիներու քաղաքական խմբագիր Վոլֆկանկ Կուսթ բազմաթիւ գիրքեր ու յոդուած-ներ ունի հայկական հարցի վերաբերեալ: Իր «Տայոց Տեղաստանութիւնը - աշխարհի ամե-նահին քրիստոնեայ ժողովուրդին ողբերգութիւնը» անուն գիրքը 2002-ին լոյս տեսած է նաեւ Երեւանի մէջ հայերէնով: Իսկ նոյն հարցով, այս տարուայ վերջ կը ծրագրէ հրատա-րակել շուրջ 2000 էջէ բաղկացած իր կոթողական աշխատանքը, Լեւիսիոսի հրատարակ-ւած վաւերագրերու կեղծուած ու ջնջուած էջերը եւս ամբողջացնելով:

Տամպուրկի մէջ շքանշանի տրուելու հանդէսը պատրաստուած էր տեղւոյն մշակու-թային միութեան կողմէ շար խնամեալ յայտագրով մը:

Նոյն օրը շրջանի հովիւ Տոգշ. Տ. Սեբովքե վրդ. Իսախանեանի ձեռամբ Սուրբ Կերթրութ եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագէն երբ, եկեղեցւոյ համայնքային սրահին մէջ հաւաքուած էին գերմանացի եւ հայ հրաւիրեալները: Մշակութային միութեան վարչութեան

անդամներն օրիորդ թագուհի Մանուկեանի բարի գալուստի բացման խօսքեն յերայ 'Պրն Թորոս Մարեան ներկայացուց Վոլֆկանկ Կուսթի կենսագրականն ու կապարած աշխատանքները, մի ամ մի թուելով իր հրապարակություններուն, անձի նկարագրին ու հայերու եւ հայոց հարցին նկատմամբ իր ցուցաբերած ոգին:

Ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակի՝ Հոգ. Միքայել Հայր Սուրբին կողմէ հայերէն ու գերմաներէն թարգմանութեան ընթերցումէն ետք ատաջնորդ Սրբազանը ծափերու փարայիին ներքեւ կոմքը զարդարեց յարգելի գիտնականին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով:

Սրբազանը իր արտասանած խօսքին մէջ նախ բացատրեց Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի հայ ժողովուրդի պատմութեան մէջ կատարած դերը՝ զայն կապելով Կուսթի աշխատանքին, որ նոյնպէս հայ ժողովուրդին կը բերէ անգնահատելի ծառայութիւն, անոր ողբերգական պատմութեան մէկ շրջանին վրայ լոյս սփռելով իր հրապարակած գիրքերով ու յօդուածներով:

Հանդէսին փայլ տրուեցաւ Համպուրկի Դալիթ անուն քառեակի երաժշտական ելոյթով, որոնք հայ դասական երաժշտութեան եւ Պէթեռֆէնէն նմոյշներով հանդէս եկան:

Հանդէսը վերջ գտաւ մշակութային միութեան կողմէ պատրաստուած ճոխ հիւրասիրութեամբ մը:

19-21 մայիսին Մերովք վրդ. Իսախանեան յանուն Առաջնորդարանի իր մասնակցութիւնը բերաւ Գերմանիոյ օտարախօս հոգեւորականներու փարեկան հաւաքին, որ այս փարեկանի տունեցաւ Գերմանիոյ հարաւը գտնվող Rieneck գիւղաքաղաքին մէջ: Այս կազմակերպութիւնը, որին նախաձեռնողը եղած է Գերման-Անտարանական Եկեղեցին, բացի անտարանական եկեղեցականներէ, կ'անդամակցին նաեւ Ուղղափառ եւ Արեւելեան-Ուղղափառ Եկեղեցիներու ներկայացուցիչներ: Հաւաքներուն նպատակն է փարին անգամ մը միասնաբար խորհրդակցիլ փոքրամասնական օտարախօս համայնքներու դիմագրութեան խնդիրներու առնչութեամբ, ինչպէս նաեւ խօսիլ հովուական փոքրամասնութեանց մասին: Այս տարրուան հիմնական նիւթն էր «Ինքնութիւն եւ Համարկում» (Identität und Integration):

Երեք օրերի ընթացքին տեղի ունեցաւ աշխոյժ բանավեճ մը, որու ընթացքին այլեւայլ եկեղեցիներու ներկայացուցիչներ իրենց տեսակէտն ու դիրքորոշումը պարզեցին Կրօնական եւ Մշակութային Ինքնութեան մասին: Ծառայութեամբ հետաքրքիր խօսակցութիւն մը՝ «Համարկում» եզրի ըմբռնումի մասին՝ գերման մեծամասնութեան եւ օտարախօս փոքրամասնութեանց տեսակէտէ:

Քննարկումի նիւթ դարձաւ նաեւ նոր սերունդի ինքնութեան պահպանման հարցը:

Հաւաքի ընթացքին տեղի ունեցաւ նաեւ Միջեկեղեցական արարողութիւն մը:

12-13 Յունիսին Առաջնորդարանի համայնքին ներս տեղի ունեցաւ Գերմանահայոց թեմի փարեկան Պատգամատրական Ժողովը (ԹՊԺ), որուն մասնակցեցան Առաջնորդութեան կապուած 14 համայնքներու արեւնապետներն ու պատգամատրները, նաեւ թեմի եկեղեցական դասը:

22-23 Յունիս 2004-ին Վճարագրի Վարչապետ Սեդրակյանի Մարզարևան, նախարար և պետական փորձեր պաշտոնատարներու հետ երկու օրուայ աշխատանքային այցելութիւն մը փութաւ Պէտլին, յարկապետ Նայաստրանի ու Գերմանիոյ միջեւ փոխտեսական յարաբերութիւններու զարգացման ու գործակցութեան նպատակով:

22 Յունիսին բացման յանդիսութեան ներկայ էր առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պէքճեան՝ իր հետ ունենալով շրջանի հովիւ Տ. Սերովբէ վրդ. Իսախանեանն ու Պէտլինի Եկեղեցական Նամայնքի արքեպիսկոպոսի՝ Տիկին Սոնա Այբեր, ինչպէս նաեւ թեմական պատգամաւորները: Տեսարք ճանիք Չափարե ու Գեղամ Պէշիքթաշեանը:

Յաջորդ օրը Սրբազան Նայրը իր շքախումբով ներկայ գրնութեաւ նաեւ սկսած ժողովներու առաջին մասին:

Կիրակի, 27 Յունիսին, Զեօնի Ս. Սահակ - Ս. Մեսրոպ առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ ձեռամբ առաջնորդ Սրբազանի կատարութեաւ Սարկաւագական ձեռնադրութիւնը կիսատարկաւագ Սահակ Պրէքճեանի, որ շուրջ ամսէ մը ի վեր Գերմանիա կը գրնութի եւ փորձեր համայնքներու մէջ կը քարոզէ. հայ հաւատացեալներուն փալով հոգեկան բաւարարութիւն:

ձեռնադրութեան խորհրդակցական էր Նոզճ. Տ. Սերովբէ վրդ. Իսախանեան: Բացի հաւատացեալներու խորհրդամբ բազմութենէ, արարողութեան ներկայ գրնութեան նաեւ Զեօնի համայնքի հովիւ Տ. Նայագատ քինյ. Մարտիկեան, Նոզճ. Տ. Անուշաւան վրդ. Ժամկոցեանն ու հիւրարար Գերմանիա գրնվող եւ Մայր Աթոռի միաբաններէն Տ. Յովնան արեղայ Յակոբեան, Թեմական Խորհրդի եւ Մայր եկեղեցւոյ վարչութեան ներկայացուցիչները:

Նոզեպարար արարողութիւններէն ետք Սրբազան Նայրը փութաւ օրուան պատգամը, ի մասնաւորի անդրադառնալով Սահակ Սարկաւագի օրինակելի անձին, որ հոգեւոր կոչումով պատրաստ է ծառայելու Աստուծոյ եւ իր եկեղեցիին: Սրբազանը իր խօսքը աւարտեց՝ մաղթելով, որ Սահակ Սարկաւագ ի մօտը քահանայական ձեռնադրութիւնն ու ստանալով ծառայութեան կոչութիւն Գերմանիոյ հայ համայնքներուն մէջ:

Տարւոյս 10-17 Յուլիս 2004 թուականին Գերմանիոյ Պրէմէն քաղաքին մէջ փեղի ունեցաւ Միջազգային Երգչախմբային փառատօն-մրցոյթ մը, որուն ի շարք 80 երկիրներու ներկայացուցիչներու մասնակցեցեալ նաեւ «Տարօն» ազգագրական համոյթը Նայաստրանի Էջմիածին քաղաքէն: Մանուկ եւ պատանի 20 երգիչ-երգչուհիներ կազմուած երգչախումբը յաջող ելոյթներ ունեցաւ Փառատօն-Մրցոյթի ընթացքին՝ արժանանալով մասնակցներու գնահատանքին եւ յալով մրցանակներու:

«Տարօն» երգչախումբին Գերմանիա գալը եւ փառատօնին մասնակցիլը հնարաւոր դարձաւ նաեւ Գերմանիոյ հայոց Առաջնորդարանի անմիջական աջակցութեան շնորհիւ: Փառատօնին մասնակցութենէ գալը, երգչախումբը Առաջնորդարանի եւ Պրէմէնի եւ Նանաուի հայ համայնքներու կազմակերպութեամբ համերգներ փութաւ նշուած համայնքներուն մէջ՝ յուզումնալի պահեր պարգեւելով ներկայ հայորդիներուն: Երգչախումբը չորս օրեր վալկեց նշեալ համայնքներու հիւրասիրութիւնը:



ԱՄՆ ԱՐԵՖԵԼԵԱՆ ԹԵՄՈԲՄ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ «ԱՐԱՐԱՅ» ԿԵԴՐՈՆ»Ի ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

Շաբաթ, Յուլիս 24-ին, մօտ 700 ներկաներու մասնակցությամբ պաշտօնապես օրհնուեցաւ եւ բացումը կատարուեցաւ Առաջնորդարանի «Համագումարի եւ Երիտասարդապարտարանի» Կեդրոն»-ին, որ կը գտնուի Նիւ Եորք նահանգի Քեթցբիլզ անուանուող լեռներու մօտ:

Հակառակ նախորդ երկու օրերուն տեղացող զօրաւոր անձրեւին՝ Շաբաթ օրը շատ զեղեցիկ ու պայծառ օր եղաւ՝ ուրախացնելով հանդիսութիւնը կազմակերպողները:

Երիտասարդական սեփական կեդրոն մը ունենալու զազախարը առկա շնորհակցաւ 2000 թուականի Թեմական Պարագամաւորական Ժողովին, որ այս նպատակին համար եղան կարգ մը նուիրատուութիւններ: Կազմուեցաւ մասնաւոր յանձնախումբ մը, որ յարմար վայրի մը որոնումը կատարեց: Երկար փնտրութիւններէ ետք՝ կարելի եղաւ գտնել «Balsam Shade» անուանով արդէն իսկ յարմարաւէր վայր մը, որուն արժէքն էր մէկ միլիոն երկու հարիւր հազար տոլար: Այս վայրը ունի 65 արտաւար տարածութիւն, եւ ամէն տեսակի յարմարութիւն՝ լողաւազան, թէնիսի դաշտ, 200 սենեակներ, մեծ խոհանոց եւ ճաշարան: Նոյն շրջանին մօտ մէկ միլիոն տոլար հանգանակուեցաւ եւ 2004 թուականի Յունուարին վաճառման համաձայնութիւնը կնքուեցաւ:

Միևնչեւ բացման թուականը Յանձնախումբի անդամներ, Առաջնորդարանի պաշտօնեաներ եւ բազմաթիւ կամաւորներ, գրեթէ ամէն շաբաթավերջ, այցելեցին Կեդրոնը եւ անհրաժեշտ նորոգութիւնները կատարեցին:

Բացման հանդիսութիւնը սկսաւ Անդաստանի արարողութեամբ, որուն հանդիսապետութեամբ առաջնորդ Գեորգ Տ. Խաժակ արքեպիս. Պարսաման: Ներկայ էին տասնեակ մը հոգեւորականներ, սարկաւազներ, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի եւ Ծխական Խորհուրդներու արեւնապետներ ու անդամներ եւ բազմաթիւ ծխականներ՝ եկած հեռաւոր վայրերէ:

Արարողութեան երգեցողութեան մասնակցեցան Ս. Վարդան ճամբարի ճամբարորդները՝ ղեկավարութեամբ խմբավար Խորեն Մէլիսանճեանի:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքը սկսաւ նախ շնորհակալութիւն յայտնելով բոլոր ներկաներուն, որոնք եկած էին բաժնեւոր օրուան ուրախութիւնը, ապա ի մէջ այլոց ըսաւ՝ «Մեր Առաջնորդարանին համար այս օրը բացառիկ օր մըն է: Նոր սկզբնաւորութեան մը օրը: Երազներու իրականացման օրը: Խառնամանից եւ զեղեցիկ ապագայի մը տեսիլքի օրը: ... Հիմնելով «Արարար» Կեդրոնը՝ նոր հորիզոններ կը բացուին մեր Եկեղեցւոյ համար: Ամառնային ճամբարներ, կրօնական առանձնացումներ, երիտասարդական յայտագիրներ, եւ այլ ձեռնարկներ պիտի կազմակերպուին այս Կեդրոնին մէջ: ... Փառք կու տանք Աստուծոյ, որ պատասխանեց մեր աղօթքներուն եւ այսպիսի յարմարաւէր Կեդրոն մը շնորհեց:

